Էջմիածին

1966

ՌՆԺԶ
ԻԳ ՏԱՐԻ
Սեպտեմբեր–Հոկտեմբեր

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱ-7956

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Թ-Ժ

1966

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Պատմական այցելություն	3
Ռումին սրբազան եկեղեցու պետ Նորին Սրբություն Խուստինիան պատրիարքի Մայր Աթոռում	5
Վեհափառ Հայրապետի ուղեւորությունը Վիեննա	32
Հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության Երեքհարյուրամյակին նվիրված հանդիսություն Մայր Աթոռում	39
Եվրոպական եկեղեցու պատվիրակության այցը Մայր Աթոռ	52
Մենսուանի ընդունելություն ի պատիվ Գեր. Տ. Հիոն արքեպիսկոպոս Մանուկյանի	55
Ամերիկայի հայոց նորընտիր առաջնորդ Գեր. Տ. Թորգոմ Եպս. Մանուկյանի պաշտոնակալության հանդիսությունը	57
Եպիսկոպոսական ձեռնադրություն	59
Գեր. Տ. Գարեգին Եպիսկոպոս Գուզանճյան	61
Հոգեւոր ճեմարանի վերաբացումը	62
Աստվածաշնչի հայերեն տպագրության Երեքհարյուրամյակի և Բոլսուհասում հայոց բեմի եկեղեցական բանգարանի բացման հանդիսությունը	63
Ազգային-եկեղեցական կյանքը Սրբազանությունում	65
Հանգիստ Գեր. Տ. Մսմբրե արքեպիսկոպոս Սիրունյանի	67
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	69
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— Կոմիտասին հետ	71
Ալեքսանդրոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք)	79
Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ— Մեր ձեռագրական կորուստները	88
Հ. Ս. ՍՂԻԱԶԱՐՅԱՆ— Աշտարակ	94
Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ— Հուշամատյանների հետքերով	101
Ա. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ— Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակները ու բարերները	106
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	115

Խմբագրության հասցեն՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Redaction de la revue „Etchmiadzine", Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1966 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՋԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ԱՌՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն. Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գահակալության տասնմեկերորդ տարեդարձի բարեբաստիկ առիթով և Նրա եղբայրական, սիրալիր հրավերով, 1966 թվի սեպտեմբերի 29-ին, հինգշաբթի օր, Մ. Աթոռ Ս. Էջմիածին էր ժամանում ռումին օրթոդոքս եկեղեցու պետ, Ն. Սրբություն Ժուստինիան սրբազան պատրիարքը՝ իր շքախմբի անդամներով:

1958 թվի առաջին այցելությունից հետո Ն. Սրբության այս երկրորդ այցելությունն էր Մ. Աթոռ Ս. Էջմիածին, մի տարի անց այն անմոռանալի այցելությունից, որը Հայոց Հայրապետը 1965 թվականի հունիսին կատարել էր Ռումինիա, սիրալիր հրավերով Տ. Ժուստինիան սրբազան պատրիարքի:

Մ. Աթոռում պատմական օրեր եղան սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 6 օրերը, երբ երկու Հայրապետները, Իջման Սուրբ Սեղանի առաջ եղբայրական սիրով ողջագուրվեցին և վերանորոգեցին իրենց ուխտը՝ առավել ամրապնդելու ռումին օրթոդոքս և հայց. առաքելական եկեղեցիների և ժողովուրդների բարեկամական, եղբայրական կապերը, քրիստոնեական միության ոգով, սերտ համագործակցության ցանկությամբ:

Այս իմաստով, արդարև, հուզիչ ու անմոռանալի եղան ռումին և հայ եկեղեցական Պետերի ողջագուրումները: Նրանց եղբայրական համբույրը մի անգամ ևս ամրագործեց երկու ժողովուրդների և եկեղեցիների սիրո և բարեկամության հոգեկան կապերը:

Պաշտոնական առիթներով եկեղեցիներում և սեղանների շուրջ արտասանված ճառերը, ելույթները, խանդավառ ու ջերմ մթնոլորտում, վերածվեցին քրիստոնեական եղբայրության սրբազան տոնի և դաշինքի:

Ռումին օրթոդոքս եկեղեցու պետի Ս. Էջմիածին կատարած այցելությունը մեր օրերին, մեծ ճիգերի այս շրջանին, նշանակալից է, երբ աշխարհի բոլոր ժողովուրդների միջև ստեղծված է մերձեցման, փոխադարձ գնահատումի, հասկացողության, խաղաղ գոյակցության և միասնականության բարենպաստ մթնոլորտ, և երբ քրիստոնյա եկեղեցիները ևս, արդի կյանքի մեծ հրամայականի առաջ, դուրս են եկել իրենց դարավոր մեկուսացումից, մոտենում են միմյանց, փորձում են լեզու գտնել, բեղմնավոր հարաբերությունների նոր ուղիներ որոնել, միասին աղոթել և աշխատել հավաքական ճիգերով, էկումենիկ ոգով, հանուն ժողովուրդների ի Քրիստոս եղբայրության և աշխարհի խաղաղության:

Մեր օրերում և արդի եկեղեցական կյանքի պայմաններում, միջեկեղեցական նման հանդիպումներ և շփումներ օգտակար են և անհրաժեշտ՝ եկեղեցիների միջև իրարհասկացողության, համագործակցության, եղբայրության և սիրո մթնոլորտ ստեղծելու համար:

Այս մտածումների լույսի տակ ռումին օրթոդոքս եկեղեցու Հայրապետի այցելությունը Մ. Աթոռ Ս. Էջմիածին և մեր վերածնված հայրենիքը, սրտագին առիթ էր ստեղծում մի նոր և ավելի բարձր աստիճանի բարձրացնելու ռումին և հայ եկեղեցիների, ժողովուրդների և մշակույթների եղբայրական բարեկամությունը:

Երկու սրբազնագույն Հայրապետների սրտագին ողջագուրումները, կատարված պաշտոնական ընդունելությունները, միջեկեղեցական զրույցները, ուխտագնացությունները՝ դեպի վանքերն ու սրբավայրերը, փոխանակված անկեղծ արտահայտությունները, պայծառ ապացույցներն էին մեր օրերի քրիստոնեական եղբայրության:

Անկեղծ բարեկամության և քրիստոնեական սիրո ոգով ընթացան երկու եկեղեցիների Հովվապետների միջև զրույցները, որոնք միաժամանակ հաստատեցին՝ մեր օրերում քրիստոնեական աշխարհը հուզող բոլոր հարցերի շուրջ տեսակետների նույնությունը:

Հոկտեմբերի 6-ին, հինգշաբթի օր Վենետիկում համատեղ ստորագրված պաշտոնական հաղորդագրության մեջ նշվում է, որ **«Երկու Հովվապետները վերստին հայտնեցին իրենց համոզմունքը, որ բոլոր եկեղեցիների մերձեցումը, փոխադարձ ճանաչումը, սերտ համագործակցությունը ներկայացնում է այսօրվա աշխարհում խաղաղության, ազատության, ճշմարտության և փոխադարձ ըմբռնման ավետարանական պատգամի հոչակումը, որով իսկական քրիստոնյաները չեն կարող և պետք չէ լինեն պատերազմներ հրահրողների կողքին, որոնք ավերում և ոչնչացնում են երկրներ, քաղաքակրթության բարիքներ և սպանում անմեղ մարդկանց»:**

Անցյալում ռումին և հայ ժողովուրդների շուրջ վեց դարերի համատեղ կեցությունը Ռումինիայում, նրանց ճակատագրի հանգիտությունը, հանուն ազատության և պայծառ գալիքի նրանց մղած ազատագրական, հերոսական պայքարները, և մեր օրերում երկու ժողովուրդների հավաքական ջանքերն ու տքնությունները՝ իրենց նոր հայրենիքի բարգավաճման, բարօրության համար, ստիպում էին երկու հայրենանվեր և խաղաղասեր Հայրապետներին, մտահոգված Վիետնամի և աշխարհի մյուս մասերում ապառնացող պատերազմի վտանգից, միասին աղոթել **«բարի Աստծուն, համայն աշխարհի խաղաղության համար և իրենց եկեղեցիների անունից կոչ անել բոլոր քրիստոնյաներին և խաղաղասեր բոլոր մարդկանց, որպեսզի միացնեն իրենց ճիգերը, որպեսզի կասեցվի ամեն պատերազմ, որպեսզի մարդկությունը վերագտնի իր խղճի անդորրը և խաղաղ կյանքի ապահովությունը»:**

Ռումին պատրիարքի այցելությունը Մ. Աթոռ և Սովետական Հայաստան, հանդիսացավ գեղեցիկ առիթը հայ եկեղեցու, Մ. Աթոռ Ս. Էջմիածնի, նրա գահակալի և մեր վերածնված հայրենիքի հոգևոր, մշակութային, տնտեսական նվաճումների մասին անվերապահ հարգանքի և սիրո արտահայտությունների:

«Կգանք վերանորոգելու համար ռումին օրթոդոքս եկեղեցու գնահատանքը հայ եկեղեցու հավատի վառապանծ անցյալի հանդեպ»,— նշում էր Տ. Ժուստինիան պատրիարքը, ողջույնի իր խոսքի մեջ, սեպտեմբերի 29-ին, հինգշաբթի օր, Մ. Տաճարում,— «Եկեղեցի՝ որ հարազատ արտահայտությունը, մարմնացումն է՝ Արևելքում քրիստոնեական հնագույն և պատմական եկեղեցու: Այստեղ, հնադարյան և աստվածաշնչական այս օրհնյալ երկրում, կենդանի է Քրիստոսի հավատքը և պայծառ՝ հայ եկեղեցու պատմական կենտրոն Ս. Էջմիածնի հայրապետական Աթոռը՝ նվիրյալ աշխատանքով ի Քրիստոս մեր սիրեցյալ եղբոր Տ. Վազգեն Ա. Հայրապետին, որը այսօր քրիստոնեական եկեղեցու լուսամիտ հայրապետներից մեկն է ու քրիստոնեության սյուներից մեկը Արևելքում՝ Իր պատմական աթոռով, Իր եկեղեցիներով և Իր հավատացյալներով»:

Նորին Սրբություն ռումին պատրիարքը իր արտահայտությունների և ելույթների մեջ վկայում է նաև իր սիրո և հարգանքի մասին դեպի հայ ժողովուրդը և նրա վերածնված հայրենիքը: Ռումեն և հայ ժողովուրդները,— նշում էր նա,— հավասար եռանդով և նույն նվիրվածությամբ աշխատում են իրենց հասարակաց սոցիալիստական հայրենիքի բարգավաճման և ծաղկման համար, իրենց հայրենի կառավարությանց իմաստուն ղեկավարության ներքո:

«Թող աճի սերը հայ և ռումին եկեղեցիների և ժողովուրդների միջև, և բարեկամությունը՝ Սովետական Միության ժողովուրդների և ռումին ժողովրդի միջև, որպեսզի խաղաղությունը, որի համար պայքարում են միասին մեր երկու ժողովուրդները, հաղթանակի ողջ աշխարհում»,— եզրակացնում էր Ժուստինիան պատրիարքը հրաժեշտի պահին:

Արդարև, տոնական խանդավառության օրեր ապրեց Մ. Աթոռը՝ պատմական այցելությամբ ռումին օրթոդոքս եկեղեցու հոգևոր պետի:

1966 թվականի սեպտեմբեր 29-ից—հոկտեմբերի 6 օրերը, մի անգամ ևս նվիրագործեցին ռումին և հայ եկեղեցիների և ժողովուրդների մեր ապրած ժամանակներում քրիստոնեական եղբայրությունն ու դարավոր բարեկամությունը:

Ն. ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ՌՈՒՄԻՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի եղբայրական հրավերով, Ն. Ս. Օծության դահակալության տասնմեկերորդ տարեդարձի ուրախ առիթով, սեպտեմբերի 29-ին, հինգշաբթի օր, Մ. Աթոռ է ժամանում ռումին օրթոդոքս եկեղեցու պետ, Ն. Սրբություն Ժուստինիանը պատրիարքը, փոխադարձելով նաև Հայոց Հայրապետի 1965 թվականի հունիսին Ռումինիա կատարած այցելությունը։

Ն. Սրբության շքախմբի կազմում էին Արադի դեր. եպս. Թեոկտիստը, պատրիարքական փոխանորդ դեր. Վիսարիոն եպիսկոպոսը, պատրիարքարանի քարտուղարներ՝ Ի. Դաֆիու և Ն. Կազակու արժանապատիվ քահանա հայրերը։

Ռումին եկեղեցու պետին ուղեկցում էր նաև Ռումինիայի և Բուլղարիայի թեմի հայոց առաջնորդ, Տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, Բուխարեստի թեմական խորհրդի նախագահի տեղակալ, դոկտ. Դր. Բամբուկեանը և թեմականի անդամ, ժողովրդական նկարիչ Հր. Ավագյանը։

Ժամը 10 անց 20 րոպեին, ինքնաթիռը, որով ճամփորդում է հարգարժան Հյուրը Բուխարեստից մինչև Երևան, Մոսկվայի ճանապարհով երկար ու հանգիստ թռիչքից հետո, իջնում է օդանավակայան։

Քույր եկեղեցու հոգևոր պետին անձամբ դիմավորում է Հայոց Հայրապետը՝ շրջապատված իր շքախմբով, որի կազմում են՝ Տ. Հայկազուն, Տ. Կոմիտաս, Տ. Հուսիկ, Տ. Վահան սրբազանները, Տ. Մուշեղ, Տ. Գրիգոր, Տ. Ներսես, Տ. Նարեկ վարդապետները, ուխտավորաբար Մ. Աթոռ ժամանած Տ. Գարեգին ծ. վրդ. Գազանճյանը (Վաշինգտոն), Տ. Գյուտ ծ. վրդ. Նազարյանը (Փարիզ), Տ. Գևորգ ծ. վրդ. Կարապետյանը (Բելգրադ), Տ. Վազգեն վրդ. Քեշիշյանը (Մարսել), Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, ամենայն Հայոց կաթողիկոսի խմբագրական և Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, մայրավանքի պաշտոնեությունը, Երևանի թեմական խորհրդի, Եկեղեցական վարչության անդամները, քահանայից դասը և հավատացյալների հոծ բազմությունը։

Ինքնաթիռի կամրջակի վրա Ն. Սրբության ժուստինիան պատրիարքի հայանվեր դիմավորվում է ջերմ ծափահարություններով։

Հայոց աշխարհը բարի գալուստ է մաղթում եղբայրական ռումին ժողովրդի հոգևոր պետին։

Հուզիչ, թելադրական ու գեղեցիկ է պահը, երբ երկու եկեղեցիների պետերը՝ Ժուստինիան պատրիարքը և Վազգեն Ա Հայոց Հայրապետը դրկախառն ողջագուրվում են, և նրանց ի Քրիստոս սիրո և միության համբույրի մեջ մի անգամ ևս ներկայացվում են հայ և ռումին եկեղեցիների, երկու ժողովուրդների հոգևոր, մշակութային կապերը։

Հարգարժան Հյուրի ժամանումը ողջունում են նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր, եկեղեցական գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաֆյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Մ. Տաճարի զանգերը հանդիսավոր ու տոնական զողանջում են:

Երկու Հայրապետները ամպհովանու ներքո եկեղեցական թափորով ու «Հրաշափառ»-ով առաջնորդվում են Մ. Տաճարը, ուր մուտք են գործում «Ուրախ լեր, Ս. եկեղեցի» շարականի հնչյունների ներքո:

Իշման Սուրբ սեղանի առաջ երկու Հայրապետները իրենց երկրպագությունն ու ադոթքը անելուց հետո, առաջնորդվում են ատյան՝ «Էջմիածինն ի հօրէ» շարականի հաղթական հնչյունների ներքո: Ձախակողմյան դասում, ռումին օրթոդոքս եկեղեցու պետի համար պատրաստվել է մասնավոր գահ:

Տոնականորեն զարդարված Մ. Տաճարի կամարների տակ թնդում է «Փառք քեզ, Տէր Աստուած» քարող-մաղթանքը, որպեսզի «անփորձ ու անխռով պահպանեսցի քրիստոնէական եղբայրութիւնն մեր»: Մ. Տաճարում ներկա բոլոր հավատացյալները իրենց սրտաբուխ «ամէն»-ներով հաստատում, ամրապնդում են սիրո և եղբայրության այդ բարի ցանկությունները:

Հայոց Հայրապետը գահի վրայից ողջույնի և բարի գալստյան Իր եղբայրական խոսքն է ուղղում ռումին օրթոդոքս եկեղեցու սրբազան պետին.

«Փառք բարին Աստուծոյն այս լուսավոր օրվան համար, զոր կշնորհեն մեզի:

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր մեր Ժուստինիան պատրիարք, անսահման ուրախությամբ կընենք Ձեզի բարի եկաք մեր մեջ, հայոց բազմահազարամյա հողին վրա, Սուրբ Էջմիածնի կամարներուն ներքև:

Հայաստանյայց Եկեղեցին, մեր հավատացյալ ժողովուրդը, մենք բոլորս իրոք երջանիկ ենք, որ հաճեցաք Մեր եղբայրական հրավերը ընդունիլ և այցելել Մեզ երկրորդ անգամ ըլլալով, ի գլուխ պատկառելի պատվիրակության մը ռումեն օրթոդոքս սուրբ եկեղեցվո:

Մեր ուրախությունը, Մեր գոհունակությունը առավել ջերմագին է մանավանդ, որ Մեր հիշողության մեջ կենդանի է և վառ այն փառավոր ընդունելությունը, զոր վայելեցինք Մենք անցյալ տարի, երբ այցելեցինք Ռումինիա, իբրև հյուրը Ձերդ Սրբության և ռումեն օրթոդոքս եկեղեցիին: Մենք երբեք-երբեք պիտի չմոռանանք այն սքանչելի պահերը, զոր ապրեցանք Ձեր կողքին: Եվ այժմ, այստեղ Մեր տունին մեջ պիտի ջանանք ցույց տալու Ձերդ Սրբության Մեր խոր գնահատանքը և սերը, ինչպես և մեր եկեղեցվո սպասավորները և հավատացյալները իրենց երախտագիտությունը և հարգանքը: Այս բարձր այցելությունը, այս եղբայրական մեր հանդիպումը, անտարակույս, առիթ մը ևս պիտի հանդիսանա, որպեսզի առավել ամրապնդվին մեր եկեղեցիներու և ժողովուրդներու միջև բարեկամության և գործակցության կապերը, քրիստոնեական միության ոգիով, ինչ որ արդեն ավելի քան վեց դարերու ընթացքով մը ունի ռումեն երկիրներու հողին վրա:

Կնամավատանք, թե հաճելի է Աստուծո և օգտակար մեր եկեղեցիներուն համար, շարունակել հյուսել ոսկի թելը մեր քրիստոնեական եղբայրության:

Այս պահուս հույժ ցանկալի է Մեզի, ավելացնել նաև անկեղծ սիրո և հիացումի խոսք մը ռումեն ազգիվ և քաջակորով ժողովուրդին, և անոր վերածնած սքանչելի երկրին՝ սոցիալիստական Ռումինիայի, որ այնքան շինարար թռիչքով և ոգեկան ուժերով կկերտե իր համար իրապես ոսկի ապագա մը, այնպես, ինչպես երգած են երբեմն ռումեն ազգի բանաստեղծները:

Թող ապրի՛ և հավետ ծաղկի՛ խաղաղության մեջ կենսուրախ և աստվածաստեղ ռումեն ժողովուրդը և ռումեն օրթոդոքս սուրբ եկեղեցին:

Թող ապրի՛, թող երկար ապրի՛ Ռումինիայի ամենապատիվ Ժուստինիան Սրբազան պատրիարքը, որպեսզի մինչև խոր ծերություն շարունակե Իր սուրբ առաքելությունը իբրև բարի հովվապետ՝ ռումեն հավատացյալ ժողովուրդի և իբրև հզոր սյուն Քրիստոսի եկեղեցվո:

Ձերդ Սրբությո՛ւն, սիրեցյալ Եղբայր Մեր, այս մտածումներով և զգացումներով կողջունենք զՁեզ անխառն սիրով: Նույն սիրով կողջունենք նաև Ձեր պատկառելի շքախումբի անդամները՝ Նորին Սրբազնություն Վիսարիոն եպիսկոպոսը, Նորին Սրբազնություն Թեոկտիստ եպիսկոպոսը և արժանապատիվ քահանա հայրեր՝ Եռան Գաջիուն և Նիկոլայ Կազակուն:

Շատ ուրախ ենք նաև, որ Ձերդ Սրբության պատվիրակության հետ կուգա նաև մեր սիրելի Տիրայր եպիսկոպոսը, բարեջան առաջնորդը՝ Ռումինիո և Բուլղարիո մեր հավատացյալ հոտի, զոր կողջունենք հայրական սիրով և օրհնությամբ:

«զՇանապարհս քո, Տէր, ցոյց մեզ և զշաւիղս քո ուսո մեզ, առաջնորդեա մեզ ի

Տ. ԺՈՒՍՏԻՆԻԱՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԸ, ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. ԴԱԼԼԱՔՅԱՆԸ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ (Սեպտեմբերի 29-ին)

ճշմարտութեան քում և ուսո մեզ, զի դու ես Աստուած Փրկիչ մեր» (Սաղմոս, ԻԵ. 5):

Հայոց Հայրապետի խոսքի ռումիներեն թարգմանությունը ընթերցում է հայրենադարձ ռումինահայ, այժմ Երևանի օտար լեզուների ինստիտուտի դասախոս Կայծակ Ա-թանասյանը։

Նորին Սրբություն Տ. Ժուստինիան Սրբազան պատրիարքը, Հայոց Հայրապետի ողջույնի խոսքին պատասխանում է հետևյալ ճառով.

«Լցորմած Աստծո օգնությամբ, երկրորդ անգամ լինելով ոտք ենք դնում Հայաստանի ապրնջական հողի վրա՝ ութ տարի հետո Մեր առաջին այցելությունից, որ տեղի ունեցավ 1958-ի մայիսին, և մեկ տարի վերջ այն անմոռանալի այցելությունից, որ Ձերդ Վեհափառությունը կատարեց Ռումինիա, 1965-ի հունիսին։

Բարի գալստյան Ձեր մաղթանքների, որոնք հաճեցիք ուղղել Մեզ, ամբողջ սրտով պատասխանում ենք ասելով՝ «Բարի տեսանք, լի առողջությամբ»։

Ձեր օրհնյալ հողի վրա մեր անցկացրած օրերի հիշատակը, սիրալիր ընդունելությունը, որ արեցիք Մեզ, այն ժամանակ կատարած Մեր այցելության առթիվ, և Էջմիածնի ու շրջակայքի սուրբ վայրերը վերստին տեսնելու հաճույքը, ծանոթացումը պատմական և կրոնական նույնքան անվիճելի արժեք ներկայացնող ուրիշ վայրերի, այս առթիվ իրար հետ փոխանակված Մեր խոսքերի ջերմությունը, ինչպես նաև՝ անցյալ տարի Նորին Վեհափառությանդ կատարած այցելության առթիվ արտահայտված խոսքերը ի մասին մեր եկեղեցիները իրար միացնող կապերի և, վերջապես, երկուստեք արտահայտված բաղձանքը, որ նշվեց 1965-ի հունիսին, ռումին օրթոդոքս եկեղեցու և հայ առաքելական եկեղեցու կրոնապետներու հանդիպման առթիվ հրատարակված համատեղ հաղորդագրության մեջ, ի մասին «սովելի սերտ մի գործակցության՝ ժամանակակից մարդկության առաջդիմության և խաղաղ գործակցության համար, բազմացնելու համար շփումները և փոխադարձ ավելի լավ ճանաչման համար ռումին օրթոդոքս եկեղեցու և հայ եկեղեցու միջև, շփումներ, որոնք բանան ավելի բեղմնավոր հարաբերությունների ուղին», այս բոլորը, ամենասիրելի եղբայր, առիթ հանդիսացան մեծ հրճվանքով ընդունելու Նորին Վեհափառությանդ եղբայրական հրավերը՝ գալու և Ձեզ այցելելու ներկայիս, երբ Հայաստանի սուրբ եկեղեցու քահանայապետերը, սպասավորները ու հավատացյալները տոնում են, իբրև Ամենայն Հայոց կաթողիկոս, Ձեր գահակալության 11-րդ տարեդարձը։

Գալիս ենք, իբրև բանբերները ռումեն օրթոդոքս եկեղեցու, իբրև Սուրբ Սինոդի անդամներ, իբրև նրա սպասավորների և հավատացյալների բանբերներ՝ հայ առաքելական եկեղեցու հոգևոր դասին, ծառայողներին և հավատացյալներին ներկայացնելու համար խաղաղության և առողջության մաղթանքներ, երջանկության ու բարգավաճման մաղթանքներ։

Գալիս ենք, վերանորոգելու մեր եկեղեցու գնահատանքը հանդեպ հայ եկեղեցու հավատքի փառապանծ անցյալի, մի անցյալ, որ այնքան հուզիչ կերպով արտահայտված է 1964-ի Ապրուսի աստվածաբանների խորհրդակցության համատեղ հաղորդագրության մեջ, ուր ասվում է. «Մենք փոխադարձաբար իրար ճանաչում ենք իբրև եկեղեցու, նույն օրթոդոքս հավատքի մեջ տասնհինգ դարերի մեկուսացումը մեզ չշեղեց մեր եկեղեցու հավատքից»։

Գալիս ենք մի անգամ ևս նշելու մեր բարի հիշատակները հինգ դարերի ժամանակաշրջանի, երբ հայ եկեղեցին բացառապես մոտ է եղել ռումեն օրթոդոքս եկեղեցուն, իր այնքան ներկայացուցիչներով, կրոնավորներով և հավատացյալներով, որոնք պարտադրված՝ հայ ժողովրդի պատմության դժնդակ հանգամանքներից, մեր հայրենիքի հողի վրա գտան ապրնջականության ջերմ մի բույն, և իրենց կյանքը միահյուսեցին ռումին հավատացյալների ամենօրյա կյանքի հետ, նրանց կարելիություն ընծայելով՝ ընդհանուր գծերով ծանոթանալու Արևելքի քրիստոնյա եկեղեցիների հասարակաց հիմքին և գնահատելու նրանց արժեքն ու համանմանությունը։

Գալիս ենք. վերջապես, իրար ամրապընդելու, այն հույսով, որ ապագայում հնարավոր լինի իրագործելու լիակատար մի միություն մեր քույր եկեղեցիների միջև, և մինչ այդ՝ միասին ջանք թափելու, գտնելու նպատակով գործակցության նոր կարելիություններ գործնական հողի վրա, ժամանակակից մարդկությանը բերելու մեր օգնությունը, նրա կյանքի մեծ և անհետաձգելի հարցերում, ինչպես խաղաղությունը, զինաթափումը, ընկերային արդարադատությունը, ժողովուրդների հավասարությունը, նոր զարգացման մեջ եղող երկիրներին օժանդակելու գործը։

Այս եղբայրական զգացումներով և այս անկեղծ մտորումներով գալիս ենք այսօր այցելություն տալու Ձերդ Վեհափառության, հայ եկեղեցուն և Ձեր գեղեցիկ հայրենիքին՝ Հայաստանին։

Սրտանց շնորհակալություն ենք հայտնում Ձեր Վեհափառության, մեզ արած այս եղբայրական հրավերի համար և այն սիրո համար, որով ընդունեցիք Մեզ, իբրև հայ եկեղեցու հյուրերի:

Ձերմ շնորհակալություն ենք հայտնում Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության պատվարժան ղեկավարության, այն բարյացակամության համար, որով նա դյուրացրեց մեր այս այցելության իրագործումը:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր այս ներկաներին, որոնք Մեզ դիմավորեցին սիրով ու համակրությամբ և նրանց ենք ուղղում երջանկության մեր մաղթանքներն ու հայրական օրհնությունները:

Աղոթում ենք ամենազոր Աստծուն, որ օրհնի մեր այս հանդիպումը և բեղմնավորի այն՝ իրականացնելու մեր եկեղեցիների գործակցության ջանքերը, որոնք ապագայում պիտի կատարվեն ավելի սերտ և լիակատար միասնականության պայմանների մեջ»:

Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր եպս. Մարտիկյանը *ընթերցում է Տ. Ժուստինիան պատրիարքի ճառի հայերեն թարգմանությունը:*

Եկեղեցական արարողության ավարտին, հյուր ռումին պատրիարքն ու Հայոց Հայրապետը նույն հանդիսությամբ առաջնորդվում են Վեհարան, ուր առանձին հարկաբաժին է հատկացվում Մ. Աթոռի թանկագին Հյուրին և նրա շքախմբի անդամներին:

Մայր Աթոռը թանկագին Հյուրին գիմավորեց սրտաբաց և ամբողջ հոգով:

Սեպտեմբերի 29-ը, որպես անմոռանալի ոսկեղեն մի նոր էջ, այսուհետև կզարդարի ռումին և հայ եկեղեցիների և եղբայրական ժողովուրդների դարավոր պատմությունը, շնորհաբեր երկրորդ այցելությամբ քույր եկեղեցու հոգևոր պետի:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 30-ին, ուրբաթ.— *Առավոտյան ժամը 10-ին,* Տ. Ժուստինիան Սրբազան պատրիարքը, *և* Հայոց Հայրապետը, *իրենց շքախմբի անդամներով, այցելում են Մ. Տաճարին առանձին հայ եկեղեցական արվեստի գանձատունը և ավագ սեղանի ներքո պեղումների առթիվ հայտնաբերված հնությունները: Թանգարանի վարիչ* Տ. Նարեկ վրդ. Շահարյանը *տեղեկություններ է հաղորդում թանկագին հյուրերին, հայ եկեղեցական արվեստի ցուցադրված արժեքավոր նմուշների մասին:*

Մ. Տաճարում հյուրերը ծանոթանում են տաճարի շինության պատմության, ճարտարապետական կառուցվածքի առանձնահատկություններին, և վերջին տասը տարիների ընթացքում Տ. Վազգեն կաթողիկոսի օրոք կատարված վերանորոգչական աշխատանքներին:

Այնուհետև՝ երկու հայրապետները իրենց շքախմբերով այցելում են Էջմիածնի պատմական վանքերն ու սրբատեղիները, հայ ճարտարապետության գոհարը հանդիսացող Ս. Հռիփսիմեի տաճարը, կառուցված 618 թվականին, Կոմիտաս կաթողիկոսի օրոք, և Ս. Գայանեի տաճարը, կառուցված 631 թվականին, Եղբ կաթողիկոսի օրոք:

Ապա, երկու Հայրապետները այցելում են մայրավանքի շրջապատի մեջ Մ. Աթոռի տպարանը:

ՃԱՇԿԵՐՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ Տ. ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Հետ միջօրեի ժամը 3-ին, Վեհարանում, ի պատիվ Ն. Սրբություն Ժուստինիան Սրբազան պատրիարքի, տրվում է բարի գալստյան ճաշկերույթ:

Սեղանը օրհնում է Ն. Ս. Ժուստինիան պատրիարքը:

Ընդունելության ներկա են ռումին բոլոր հյուրերը, ռումինահայ թեմի ներկայացուցիչները, Հ. Ճ. Սիրունին, դոկտ. Բուլբուկյանը, *նկարիչ* Հր. Ավագյանը, *Մ. Աթոռի միաբանությունը, արտասահմանից ժամանած հյուր վարդապետները,* Դեր. Հոգ. Խորենը *և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, «Սիոն» ամսագրի խմբագիր* Ա. Դալալեյանը՝ *Երուսաղեմից,* Տ. Բոյաջյանը՝ *ԱՄՆ-ից, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, Մ. Աթոռի ղեկավար աշխատողները և այլ հրավիրյալներ:*

Ճաշկերույթին ներկա է նաև՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր, եկեղեցական գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաֆյանը:

Սեղանների շուրջ ստեղծվել է վանական, եղբայրական ջերմ մթնոլորտ:

Վեհափառ Հայրապետը *առաջին բաժակը առաջարկում է խմել Մ. Աթոռի թանկագին հյուրի՝* Ն. Սրբություն Ժուստինիան *պատրիարքի կենացը:*

Հայոց Հայրապետը իր խոսքի մեջ, հուզումով ոգեկոչում է Ռումինիայում իր մանկության և ուսանողական տարիները, իր դաստիարակներին և դասախոսներին, պետական համալսարանում և ուսումնական ֆակուլտետում և այն մթնոլորտը, որ ինքը կազմավորվեց հոգեպես և իմացաբանորեն, և որ այդ բոլորը անջնջելի դրոշմ են թողել իր վրա: Վեհափառ Հայրապետը ապա իր

խոսքը ուղղելով Ժուստինիան պատրիարքին, ասում է. «Ձեր Սրբության անձին մեջ մարմնավորված եմ տեսնում Ռումինիան, իր անցյալի ամբողջ պատմությամբ, իր եկեղեցիով, իր արվեստով ու մշակույթով և այսօրվա Ռումինիան իր պայծառ վերածնունդով»։ Այնուհետև Ն. Ս. Օծությունը կանգ առնելով եկեղեցիների միության հարցին շեշտում է, որ մեր օրերին քրիստոնեական եղբայրությունն ու սերը արտահայտվում են եկեղեցիների համագործակցության և փոխադարձ նման տյցելությունների մեջ։ «Մենք,—ասաց Հայոց Հայրապետը,—կշարունակենք եկեղեցական համագործակցություններ բերելու Մեր նպաստը, Մեր աղոթքներով ու աշխատանքներով, որովհետև այդ համագործակցությունը մեր ուրախության աղբյուրն է, և նրա մեջ ամրապնդվում են, բյուրեղանում՝ մեր դարավոր եղբայրական կապերը քրիստոնեական միության ոգով։ Մենք առաջ կընթանանք այդ ոգով և կամբապնդենք մեր եկեղեցիների ու ժողովուրդների բարեկամությունը»։

Այնուհետև՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր, եկեղեցական գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաբյանը, հանուն Հայաստանի կառավարության, ողջունելով Ժուստինիան պատրիարքին, ծանրանում է անցյալում ռումին և հայ ժողովուրդների հերոսական պատմության՝ օսմանյան բռնակալության դեմ նրանց միատեղ մղած ազգային-ազատագրական պայքարի դրվագների վրա, շեշտելով, որ անցյալում հայոց աշխարհից հալածական, փախստական հայության բեկորներ ջերմ, եղբայրական ասպնջականություն, երդիկ, հաց ու արև գտան ռումին հողի վրա, որով և կովվեց միացյալ պայքարում և աշխատանքում ռումին և հայ ժողովուրդների դարավոր բարեկամությունը։ Պ. Կ. Դալլաբյանը եզրակացնում է իր խոսքը ասելով. «Ռումինիայի և նրա ազնիվ ժողովրդի հանդեպ հայ ժողովրդի վաղեմի և մեծ համակրանքը վերաճել է եղբայրական սիրո և բարեկամության ջերմ, անկեղծ զգացմունքի։ Անցան բռնակալները, մնացին ռումինացին ու հայը, որոնք այսօր իրենց հերոսական պայքարով, իրենց աղտաագրված հայրենի հողի խաղաղ ու ապահով պայմաններում, ժողովուրդների համերաշխ ընտանիքում կերտում են իրենց լուսե ապագան»։

Ընդունելության ժամանակ Ժուստինիան Սրբազան պատրիարքին ողջույնի և բարի դալստյան սրտագին խոսքեր են ուղղում նաև Մ. Աթոռի լուսարարապետ, Տ. Հայկազուն արքեպս. Աբրահամյանը, Ռումինիայի և Բուլղարիայի թեմի հայոց առաջնորդ, Տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, Բուխարեստի հայոց թեմական խորհրդի նախագահի տեղակալ, Բուխարեստի համալսարանի դասախոս դոկտ. Դր. Բամբուկեյանը, Երևանի համալսարանի պրոֆ. Դր. Մեսենիկյանը։

Վերջում շնորհակալության խոսք է ասում Տ. Ժուստինիան պատրիարքը, Հայոց Հայրապետին ուղղած՝ Ս. Էջմիածին այցելելու եղբայրական, սիրալիր հրավերի համար, օդանավակայանում և Մայր Տաճարում սրտագին դիմավորության և ջերմ հյուրասիրության համար, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր, հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Դալլաբյանին, Հայաստանի հանրապետության կառավարության՝ Հայաստան այցելելու առթիվ ցույց տված ուշադիր և սիրալիր վերաբերմունքի համար և բոլոր խոսողներին՝ իրենց հուզիչ ողջույնի խոսքերի համար։ Ապա, Ն. Սրբություն ևս կանգ է առնում ռումին և հայ եկեղեցիների, ժողովուրդների եղբայրական հարաբերությունների վրա, ռումինական ժողովրդական ավանդություններից բերված դրվագներով շեշտելով, որ պատմության դիրքն են անցել անցյալում երկու ժողովուրդների կյանքում ուղեկցող երբեմնի դժվարություններն ու դժբախտությունները, ու այսօր էլ երկու եկեղեցիները ստեղծված բարենպաստ պայմաններում, նվիրվել են հոգևոր առաքելության, ժողովրդի քրիստոնեական դաստիարակության և հայրենասիրական, խաղաղասիրական աստվածահաճո աշխատանքներին, իսկ ռումին և հայ ժողովուրդները՝ պարծանքով ու ազգային արժանապատվության զգացմունքով կանգնել են արժանավոր ու բազաբակիրթ ազգերի շարքում։

Ընդունելությունը վերջանում է խմբովին երգված «Տերունական աղոթք»-ով։

ԱՅՑ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

Նույն օրը, երեկոյան ժամը 6-ին, Հայոց Հայրապետն ու Ռումինիայի Սրբազան պատրիարքը հույրը, իրենց շքախմբով, այցելում են Հոգևոր Ճեմարան։

Երկու հայրապետների մուտքը Ճեմարանի հանդիսությանց սրահը, ոգջունվում է դասախոսական կազմի, ուսանողության և բոլոր ներկաների սրտագին ծափահարություններով։

Պատվո սեղանի շուրջ տեղ են գրավում երկու հայրապետները՝ շրջապատված եպիսկոպոսներով։

Հանդիսության ներկա են Միաբանությունը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող վարդապետներն ու աշխարհականները, Գեր.

Հոգ. Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, դասախոսական կազմը, պաշտոնեությունն ու այլ հրավիրյալներ։

Ճեմարանի երգչախումբը հանդիսության բացումը կատարում է «Որք զարդարեցին» թարգմանչաց շարականով։

Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը, հանուն դասախոսական կազմի և ուսանողության, երկու հայրապետների շնորհաբեր ներկայությունը ողջունում է հետևյալ ուղերձով.

«Մեզ համար մեծ պատիվ է բարիգալուստ մաղթելը Ձերդ Սրբության այս այցելության համար Մայր Աթոռ Ս. Էջմիածին և հատկապես՝ Հոգևոր Ճեմարան։ Հակառակ, որ ութ տարի է անցել Ձեր առաջին այցելությունից, բայց մենք երբեք չենք մոռացել Ձեզ։ Հոգևոր Ճեմարանը, իր գոյության առաջին օրից սկսած, հայ եկեղեցու կյանքում բախտորոշ դեր է խաղացել։ Այստեղ Ս. Էջմիածնում է, որ Ս. Սահակ և Ս. Մեսրոպը հինգերորդ դարում գիր ու գրականություն են ստեղծել և 406-ից 440-ական թվականներին Աստվածաշունչն են թարգմանել ու դարձրել հայ ժողովրդի սեփականությունը։ Ե դարը հայ գրականության Ոսկեդարն է հանդիսացել։ Հետագա դարերի ընթացքում բազմաթիվ հոգևոր դպրության կենտրոններ են հիմնվել Հայաստանի չորս ծագերում և արտասահմանում, միշտ Ս. Էջմիածնի Հոգևոր այս ճեմարանից ստանալով իրենց հոգևոր սնունդը և առաջնորդությունը։

Դժբախտաբար, անցյալում այս կրթական հաստատության կյանքի ուղին դժվարին է եղել, նման մեր ժողովուրդի կյանքի ճանապարհին։ Մեր երկրի վրայով անթիվ անհամար թշնամի բանակներ են անցել՝ հռոմեական, պարսկական, արաբական, թաթարական, մոնղոլական, սելջուկյան, մեծլուքյան ու օսմանյան՝ իրենց ահավոր խժդժություններով։ Բայց երբե՛ք, երբե՛ք չի հանգել այս հայ հոգևոր կրթարանի կրակը։

Այսօր, Աստուծո օգնականությամբ և շնորհիվ ազգիս Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի հայրական հոգատարության, մեր Հոգևոր Ճեմարանը իր նվիրական դերն է կատարում հայ իրականության մեջ, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի։ Այս հարկի տակ ունենք նաև արտասահմանցի սաներ, տեղացիների կողքին։ Արտասահմանում ունենք մոտ երկու միլիոն հայեր, որոնք իրենց հոգեկան ծարավը հագեցնելու համար այս Միածնաէջ հաստատությանն են նայում։ Վաղը մեր սաները Աստուծո Ս. Սեղանին սպասարկողներ են դառնալու՝ ծառայելու համար Աստծուն և հայ ժողովրդին։

Քաղցր պարտականությունն ունեմ, Ձերդ Սրբության և Ձեր պատվարժան շքախումբի անդամներին բարիգալուստ մաղթելու, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության անունից։ Ձերդ Սրբության այցը նոր եռանդով ու նոր հույսերով է լցնում մեր սրտերը։ Վստահ ենք, որ Ձեր այցը մեր քույր եկեղեցիների միջև նոր ջերմություն, սեր ու եղբայրություն կներշնչի։ Այս դարը էկումենիզմի դար է, սիրո, միության ու եղբայրության դար. մարդիկներն բաժանարար, այսօր չքացել են, և մարդիկ ավելի լուսավոր հեռանկարներ են հետապնդում։

Վստահ ենք և հավատում ենք, որ գալիք տարիները կլինեն մեր ղույդ եկեղեցիների համար մտերմության, սերտ հարաբերության ու գործակցության տարիներ։ Սիրով պիտի փափագեինք այս հարկի տակ ունենալ ռումին աստվածաբանական ինստիտուտի դասախոսներ, իսկ մենք էլ սիրով պիտի փոխադարձեինք, Ձեր օրհնությամբ։

Ավելի մոտիկից ճանաչենք իրար, որպեսզի ավելի սիրենք իրար։ Այդ սիրով Քրիստոս վստահաբար կգա բազմել մեր մեջ։

Բարի՛ եկաք, հազար բարով, Ձերդ Սրբություն»։

Տեսուչի ճառի ռումիներեն թարգմանությունը կատարում է Կայծակ Աբանասյանը։

Այնուհետև, Ճեմարանի երգչախումբը, եկեղեցական երաժշտության դասատու Տ. Արսեն վարդապետի ղեկավարությամբ, կատարում է «Եկեսցէ, Տէր», «Լոյս փառաց բանդ» և «Ուրախ լե՛ր, Մայր լուսոյ», շարականները։

Մ. Աթոռի միաբան Տ. Գևորգ վրդ. արտասանում է, ռումիներեն լեզվով, ռումին նշանավոր բանաստեղծ Միխ. Էմինեսկուի «Իղձ մ՝ ունիմ դեռ» գողտրիկ բանաստեղծությունը։ Ա լսարանի ուսանող Հ. Նալբանդյանը արտասանում է նույն քերթվածի հայերեն թարգմանությունը (Հ. Ճ. Սիրունի)։

Ճեմարանի երգչախումբը երաժշտության դասատու Խորեն Հակոբյանի ղեկավարությամբ կատարում է Ճեմարանի քայլերգը, «Ով Հայոց աշխարհ» և «Հարսանեկան երգ» խմբերգերը։

Ա լսարանի ուսանող Ա. Գալստյանը դաշնամուրի վրա նվագում է Ա. Բաբաջանյանի «Էքսպրոմտ»-ը։

Հանդիսության վերջում Ճեմարանի տեսուչ վարդապետը խնդրում է Տ. Ժուստինիան պատրիարքի օրհնությունը հոգևոր կրթական սույն հաստատության, նրա մշակների և ուսանողության վրա։

Ծափահարությունների մեջ խոսք է առնում Տ. Ժուստինիան Սրբազան պատրիարքը և դիմելով ուսանողության, ասում է.

«Սիրելի ուսանողնե՛ր, սրտանց շնորհակալություն՝ մեր Հոգևոր Ճեմարան այցելության առթիվ, տեսուչ Տ. Ներսես ծ. վարդապետի հուզիչ ուղերձի և զեղեցիկ ու բովանդակալից ծրագրի համար, որը կատարվեց փայլուն հաջողությամբ։

«Կուզենայի այս առթիվ Հոգևոր Ճեմարանի ուսանողներիդ ուշադրությունը հրավիրել այն ուղու վրա, որ ընտրել եք՝ ծառայելու Քրիստոսին և նրա արյունով փրկված ժողովրդին։ Հոգևոր ծառայության ուղուց բացի, այլ բարձր ծառայություն չկա մարդու համար, որովհետև եկեղեցու հոգևոր սպասավորը ծառայում է նախ Աստծուն և ապա իր նմաններին։ Եկեղեցու սպասավորները իրենց ամենօրյա աշխատանքով ու ուղղությամբ օգնում են մարդկությանը, ընթանալու առաքինության աստվածահաճո ճանապարհով։ Հոգևորականի այդ առաքելությունը դժվար է, բայց՝ քաղցր, եթե նա հասկանում է իր կոչումը։ Ոսկերերան Ս. Հայրապետը քահանայի սիրտը նմանեցնում է ծովի ալեկոծությանը։ Հաճախ քահանան իր պարտքը կատարելիս հանդիպում է դժվարությունների, նեղությունների, տառապանքների, բայց եթե նա սիրով իր կյանքը նվիրել է Աստծուն, նա վարանելու և վախենալու ոչ մի պատճառ կարող է ունենալ։

Դուք, սիրելի ուսանողնե՛ր, այստեղ՝ այս սուրբ մթնոլորտում, Ս. Էջմիածնի լույսի ու փառքի մոտիկ, Վաղդեն Հայրապետի շնչի ու նայվածքի ներքո և ձեր դասախոսների ղեկավարությամբ, բոլոր պայմանները ունեք, դառնալու համար տիպար, նվիրյալ պաշտոնյաներ Աստծուն։ Նախ դուք լցվեցեք Աստծու հավատքով, որպեսզի մի օր, երբ կոչվեք առաքելության, կարողանաք այդ հավատքը ամրապնդել մարդկանց հոգիների մեջ։

Սրտանց ամենայն բարիք և օրհնություն ձեզ բոլորիդ, ձեր սուրբ աշխատանքների հաջողության ճանապարհների վրա»։

Տ. Ժուստինիան Սրբազան պատրիարք հոր խոսքը ջերմորեն ընդունվեց բոլոր ներկաների կողմից։

Այնուհետև Սրբազան պատրիարքը Հոգևոր Ճեմարան իր այցելության որպես հուշ, Ճեմարանի հոգևորական դասախոսներից Տ. Հայկազուն և Տ. Վահան սրբազանների կուրծքը զարդարեց ռումինական եղիսկոպոսական դանակով, իսկ Տ. Ներսես ծ. վարդապետի, Տ. Գրիգոր, Տ. Արսեն վարդապետների, Ճեմարանի վերակացուներ՝ Տ. Հովհաննես քհ. Մարուքյանի, Տ. Նշան քհ. Բեյլերյանի կրծքերը՝ ռումինական վարդապետական լանջախաչով։

Ճեմարանի աշխարհական դասախոսների կրծքերը զարդարվեցին ռումին պատրիարքության կրծքանշան՝ սուրբ խաչով։ Սրբազան պատրիարքը բոլոր դասախոսներին նվիրեց նաև ռումինական սրբանկարներ և արծաթազօծ փոքր կանթեղներ։

Հանդիսությունը վերջանում է Տ. Ժուստինիան պատրիարքի օրհնությամբ։

Մինչ Հայոց Հայրապետն ու մեծահարգ հյուրը իրենց շքախմբով հեռանում էին Ճեմարանից, երգչախումբը խրոխտ ու խանդավառ հնչեցնում էր ռումինական պատրիարքական մաղթերգը՝ ռումիներեն լեզվով։ «Կեցցե, կեցցե, Տ. Ժուստինիան պատրիարք»։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔ ԵՎ ԴԱՌՆԻԻ ԱՎԵՐԱԿՆԵՐ

Հոկտեմբերի 1-ին, շաբաթ.— Առավոտյան ժամը 10-ին, երկու Հայրապետները ավտոմեքենաներով և իրենց շքախմբերի ընկերակցությամբ ուխտի են գնում Գեղարդա վանքը։

Պատմական սրբավայրի մեծ դարպասի առաջ երկու հայրապետներին դիմավորում են Այրարատյան թեմի փոխանորդ Տ. Վահան եպիսկոպոսը, վանահայր Տ. Վաղարշակ Մահանա Բաղումյանը, քահանա հայրերը՝ խնկով ու մոմավառությամբ։

Պատմական վանքի զանգերի ուրախ զողանջի ներքո երկու հայրապետները «Հրաշափառ»-ով մուտք են գործում եկեղեցի։ Արարողության ավարտին, Տ. Կոմիտաս Եպիսկոպոսը Տ. Ժուստինիան պատրիարքին ու նրա շքախմբի անդամներին տեղեկություններ է հաղորդում Գեղարդա վանքի կամ Այրիվանքի շինության պատմության, եկեղեցական այլ կառույցների, ճարտարապետության, Գեղարդա հոգևոր, բարձրադույն տիպի դպրոցի, վանքի եկեղեցական շենքերը շինել տվող Պռոշյանց իշխանների և հայ եկեղեցական մասնավորության մեջ Գեղարդա վանքի կատարած մշակութային մեծ դերի մասին։

Թանկագին հյուրերը հանգամանորեն ծանոթանում են Գեղարդա վանքի պատմական, եկեղեցական հուշարձաններին, խաչքարերին։

Այնուհետև մեքենաները ուղղվում են դեպի Գառնիի ավերակները։ Այստեղ Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի և պատմության ինստիտուտը պեղումներ է կատարում։ Տեղվույն վրա ճարտարապետական գիտությունների թեկնածու,

Գառնիի ավերակների մեջ

ճարտարապետ Ա. Սահինյանը, որը ղեկավարում է այդ պեղումները, երկու հայրապետներին ու շքախմբի անդամներին հանգամանորեն ծանոթացնում է Գառնիի ամրոցի, հեթանոսական տաճարի, քրիստոնեական եկեղեցու և հարակից շինությունների պատմության հետ։

Հյուրերը հիացմունքով դիտում են Հայաստանում հելլենիստական և քրիստոնեական մշակույթների համադրումը հանդիսացող այս միակ պատմական կոթողը և հրաժեշտ են առնում խորը տպավորությամբ։

Հետ միջօրեի, Վեհարանի սեղանատանը հյուրերը մեծարվում են հատկապես այս առթիվ պատրաստված ավանդական ճերիսայով։

Երեկոյան ժամը 6-ին, երկու հայրապետները Մ. Տաճարում ներկա են լինում կիրակմտի ժամերգության։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ Մ. ՏԱՃԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 2-ին, կիրակի.— Այսօր Վեհափառ Հայրապետի գահակալության 11-րդ տարեդարձն է։

Տոն է Մ. Աթոռի և հայ Եկեղեցու համար։

Աշնանային ջերմ ու ոսկյա արևը ոսկեգոծել է Արարատյան դաշտը ու բոլորի սրտերը։

Հայրենի բնությունը ևս իր ուրախությունն ու հրճվանքը միախառնել է Մ. Աթոռի հանդիսությանը։

Ժամը 11-ն է։ Մ. Տաճարի զանգերը զողանջում են հանդիսավոր ու ցնծագին։

Հայոց Հայրապետը Վեհարանում հայրապետական լրիվ զգեստավորման մեջ, ոռմին ուղղափառ եկեղեցու պետ, Ն. Սրբություն Ժուստինիան սրբազան պատրիարքի հետ, ամպհովանու տակ, եկեղեցական թափորով, շարականով, աղոթքով ու խնկով առաջնորդվում է Մ. Տաճար, հավատացյալ հոծ բազմության ուրախության, բարեմաղթությանց արտահայտությունների ներքո։

Մ. Տաճարը ևս լցվել է հավատավոր բազմությամբ։ Դասերում տեղ են գրավել բազմաթիվ ուխտավորներ՝ Հյուսիսային և Հարավային Ամերիկաներից, Ֆրանսիայից, Լիբանանից, Սիրիայից։ Այստեղ են նաև պաշտոնական եկեղեցական, աշխարհական անձնավորություններ, հյուրեր։ Զախակողմյան դասում, իր դահի վրա է Ժուստինիան պատրիարքը, շրջապատված իր շքախմբի անդամներով։

ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ԳԱՌՆԻՈՒՄ

Տ. Յուստինիան պատրիարքը, Հայոց Հայրապետը և շքախմբի անդամները Գառնիում

Օրվա հանդիսավոր Ս. պատարագը մատուցում է Հայոց Վեհափառ Հայրապետը։

Ս. Սեղանին սպասարկում են Տ. Կումլուսուս *և* Տ. Տիրայր *եպիսկոպոսները,* Տ. Գարեգին, Տ. Գյուտ *ծայրագույն վարդապետները,* Տ. Վազգեն *և* Տ. Արսեն *վարդապետները, սարկավագների խումբը։*

Ս. Պատարագի ընթացքում երգեցողությունը կատարում է Մ. Տաճարի երգչախումբը։

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզում է պատարագիչ Վեհափառ Հայրապետը։

«Քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք՝ հաւատովք ի Յիսուս Քրիստոս, և ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս» (Գաղ. Գ. 27)։

«Միաձնաէջ այս Սուրբ Տաճարի մեջ մասնավանդ, կզգանք ներկայությունը մեր Տիրոջ Հիսուսի հիշատակին, Անոր ոգեղեն շնորհաբաշխ ներկայության։ Այն ժողովուրդը, որ շատ դարեր առաջ, քրիստոնեության արշալույսին, Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով Միածին Որդվույն էջքը տեսավ իր Մայր Հողին վրա և հավատաց Անոր, նույն այդ ժողովուրդը այսօր ալ ի սիյուռս աշխարհի, կշարունակե մնալ հարազատ վկան և երկրպագուն նույն լուսե տեսիլքին։

Փա՛ռք մեր հայրերու Աստծույն և Փրկչին մեր ամենուզոր։ Փա՛ռք մեր լույս հավատքին կենարար։ Եվ երանի՜ բոլոր անոնց, որոնք հավատարիմ մեր լուսաբնակ նախնյաց ուխտին, յրենց ապրումներով և իրենց գործերով կշարունակեն մեծ առաքելությունը, որ իմաստ և ոգեկան գեղեցկություն կուտա հայ ժողովուրդի գոյության և կյանքին։

Հայոց ազգի այդ մեծ առաքելության վեմը և մեկնակետը, սիրելի՛ ժողովուրդ, այս Սուրբ Տաճարն է՝ ամենայն հայոց Սուրբ Էջմիածինը, բարձրացած հայոց մայր հողին վրա՝ Արարատի փեշերուն։

Հայե՛ր, հարազատ զավակնե՛ր Մեր, ուր որ ալ գտնվիք աշխարհի ճամփաներուն վրա, ձեր աղոթքի նվիրական ժամուն, պահ մը գոնե ձեր հոգին բացե՛ք սուրբ Էջմիածնի խորհուրդին սուջև և վերանորոգեցե՛ք ձեր հայրերու կենաց ուխտը՝ մնալու մշտարթուն հարազատ որդիները Ս. Լուսավորչի լույս երազին, և այդ երազեն մարմին առած այս լույս տաճարին, հավիտենական Ս. Էջմիածնին։

Մենք երջանիկ ենք, որ Աստուծո ողորմությամբ կոչված ենք լուսարարը ըլլալու մեր ազգի այս Սրբություն Սրբոցին և մեր տկար ուժերով, ահա ավելի քան տասը տարիներ է, որ կտքնինք, Մեր նվիրյալ գործակիցներուն հետ միասին, Մեր պարտքը կա-

Ս. Գեղարդի վանքում

տարել ավելի և ավելի պայծառացնելու, զորացնելու և փառավորելու համար զայն:

Անցյալ տարի, երբ լրացան տասը տարիները Մեր գահակալության, Մենք Աստուծո և մեր ժողովուրդին առաջ վերանորոգեցինք Մեր ծառայության և աշխատանքի ուխտը: Այսօր Մենք կգտնվինք մեր գործունեության երկրորդ տասնամյակին առաջին տարվույն ավարտին և գոհություն կուտանք Բարձրյալին, որ արժանի կդարձնե Մեզ շարունակելու Մեր սկսած գործը, նույն եռանդով, նույն ներշնչումներով և նույն լավատեսությամբ:

Մեզի այնպես կթվի, թե բնավ պիտի չտկարանանք, բնավ պիտի չհոգնինք, բնավ պիտի չծերանանք, ինչքան ատեն որ ապրինք և աշխատինք Ս. Էջմիածնի համար:

Մենք հպարտ ենք, որ Հայրապետն ենք եկեղեցիի մը և ժողովուրդի մը, որ Ս. Էջմիածինը ստեղծեցին ու զայն պահպանեցին դարե-դար, իբրև իրենց «ամէն բանէ վեր»-ը:

Կանցնին դարեր, կանցնին սերունդներ շարան-շարան, կուգան նոր ժամանակներ և սերունդներ, բայց նույն Ս. Էջմիածինը, սիրտը հայ եկեղեցիին, միշտ կբաբախե նույն կենդանի շունչով, նույն ջերմությամբ, բոլորին բաշխելով միևնույն Աստծույն, հայուն Աստուծույն շնորհներն ու օրհնություններն անսպառ:

Այսօր ալ, սիրելի՛ զավակներ, մեր Ս. Էջմիածինը կա՛ ու կմնա հաստատուն վեմը և վավերական խորհրդանիշը մեր ժողովուրդի լույս հավատքին և անոր բոլոր սրբություններուն: Ս. Էջմիածինն է, որ մեր օրերուն ալ կշարունակե հանդիսանալ այն ոգեկան շաղախը, որ ի մի կձուլե հոգիները բոլոր հայերուն, ապահովելով միությունը հայ հավատացյալ ժողովուրդին, և հետևաբար՝ Հայաստանյայց եկեղեցիին: Ս. Էջմիածինն է նաև, որ կհանդիսանա աստվածապարգև կամուրջը Հայաստանի հավատացյալ ժողովուրդի և արտերկրի Մեր պանդուխտ զավակներուն միջև: Այդ կամուրջը գերագույն երաշխիքն է սփյուռքի հայության պահպանման և գոյատևման: Ահա թե ինչու Մենք կմնանք միշտ աղոթող, որ հստակ և ուղիղ կերպով հասկցվին այս ճշմարտությունները և Ս. Էջմիածնով՝ Հայաստանյայց եկեղեցին մնա մեկ ու անբաժան, և հայ հավատացյալ ժողովուրդը՝ միասնական: Մենք կհավատանք և կսպասենք, որ այս նվիրական

Մայր Տաճարում Տ. Ժուստինիան պատրիարքը արտասանում է ողջույնի իր խոսքը (հոկտ. 2)

նպատակի իրագործման ճամփուն վրա, մեզի զորավիգ կանգնին մեր նվիրապետական աթոռները, մեր թեմական առաջնորդները, հայ եկեղեցիի բոլոր ուխտապահ սպասավորները և համայն մեր հավատացյալ ժողովուրդը, միշտ և ամեն տեղ:

Հանուն մեր բոլոր սրբություններուն, պետք է անխախտ ու ամուր պահպանվին և պաշտպանվին միությունն ու դարավոր կանոնները հայ եկեղեցվո և հոգևոր հաղորդակցությունը Մ. Աթոռ Ս. Էջմիածնի և արտասահմանի հայ եկեղեցիներու հավատացյալներու միջև:

Հայ ժողովուրդը Ս. Էջմիածնով, Ս. Էջմիածինը հայ ժողովրդով, այժմ և հավիտյան: Ա՛յս է իրավ և խոր զգացումը համայն հայ ժողովուրդին և անոր ուխտապահ ու պայծառատես հոգևոր սպասավորներուն:

Թող Աստված իր լույսը սփռե՛ մեր ճանապարհին վրա և մարտակից մնա մեզի ամենուս, որպեսզի բոլորս հավատարիմ մեր ուխտին, անշեղ ու անհոգնաբեկ մեր պարտքը կատարենք:

«Զճանապարհս քո, Տէր, ցոյց մեզ և զշաւիղս քո ուսո մեզ և առաջնորդեսո մեզ ի ճշմարտութեան քում» (Սաղմոս. ԻԴ. 5):

Մեր գահակալության տասնամեկերորդ տարեդարձի հանդիսությանց, մենք հույժ երջանիկ ենք ողջունելու մեր մեջ ռումեն օրթոդոքս եկեղեցվո հովվապետ, Նորին Սրբություն Ժուստինիան պատրիարքը և իր շքախմբի անդամ բարձրաստիճան սրբազան հայրերը, որոնք կուգան Մեզի բերելու իրենց սուրբ եկեղեցիին և հավատացյալ ժողովուրդին բարի զգացումները: Մեր անհուն գոհունակությունը կհայտնենք այս ուրախ առիթով և կաղոթենք, որ Տերը քաջառողջ երկար կյանք պարգևե մեր սիրեցյալ Եղբորը՝ Նորին Սրբություն Ժուստինիան պատրիարքին, որպեսզի իրեն հատուկ իմաստությամբ, քաջակորով եռանդով և բարձր հեղինակությամբ, շարունակե առաջնորդել ռումեն ժողովուրդը, փայլուն, պանծալի հաջողություններով:

Հայ և ռումեն եկեղեցիներու բարեկամությունը վեց դարերու պատմություն մը ունի, ռումեն հյուրընկալ հողին վրա, ուր մեր հալածական ազգի զավակները, անցյալի մեջ, գտած են միշտ կյանքի ապահովություն և բարի պայմաններ ռումեն ասպնջական ժողովուրդի ծոցին մեջ: Հայ եկեղեցին ու ժողովուրդը ջերմապես երախտապարտ են ռումեն ժողովուրդի այս եղբայրական ազնվահոգի վերաբերմունքին համար, որ ռումեն երկիրներու պատմության փառքի տիտղոսներեն մին կհանդիսանա:

Այսօր, երբ քրիստոնեական բոլոր եկեղեցիները համակված են միության ու եղբայրության լուսավոր հեռանկարներով, մենք, հանուն հայ եկեղեցվո, մեր մտածումներով ու կենդանի գործով երջանիկ ենք սուսավել ամրապնդելու՝ դարավոր բարեկամության ու գործակցության կապերը մեր եկեղեցիներու միջև:

Բարվոք է, որ եղբայրացած քրիստոնյա եկեղեցիներ, միասին աղոթեն ու գործեն, Աստուծո փառքին համար, մարդոց և ազգերու կյանքի հոգևոր ու բարոյական շինության համար, աշխարհի խաղաղության համար: Քրիստոսի սուրբ Ավետարանով, մեր ժողովուրդներուն և համայն աշխարհին բաշխենք՝ ավելի լույս, ավելի արդարություն, ավելի խաղաղություն:

Աղոթքի այս սուրբ պահուն, երբ ներկա է մեր մեջ ռումեն եկեղեցվո և ժողովուրդի հովվապետը, սիրով և երախտագիտությամբ մեր մտածումը կուղղվի դեպի ռումեն բարի երկիրը, մեր սքանչելի ծննդավայրը, և սրտի բովանդակ ջերմությամբ կաղոթենք, որ Աստված միշտ խաղաղության և բարության մեջ պահե զայն և միշտ իր հովանիին ներքև պահպանե ռումեն օրթոդոքս եկեղեցին և համայն ռումեն ժողովուրդը, որպեսզի ան իր ճակտի քրտինքով, իր ստեղծարար տաղանդով և բոցավառ հայրենասիրությամբ, կերտե իր լուսափայլ ապագան, շարունակելով իր առաքելությունը աշխարհի քաղաքակրթության պատմության մեջ:

Սուրբ Էջմիածնեն և Մեր սրտեն ողջույն և օրհնություն ռումեն հայրենիքին և աստվածասեր ժողովուրդին:

Օրհնությո՜ւն, բյուր օրհնությո՜ւն նաև ձեզի բոլորիդ, հավատացյալ զավակներ մեր, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

«Այսուհետև զօրացարուք Տէրամբ և կարողութեամբ զօրութեան նորա»: «Եւ ի վերա ամենայնի առէք զվահանն հաւատոյ»:

Եվ շնորհք և խաղաղություն Փրկչին մերո Հիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ այժմ և հավիտեան: Ամեն»:

Ապա, Վեհափառ Հայրապետը, ի նշան եղբայրական սիրո, Ժուսթինիան Ս. պատրիարքին նվիրում է հայրապետական ոսկյա ասա, որի վրա փորագրված են Ս. Էջմիածին և ռումին պատրիարքական նշանը:

Հայրապետական քարոզի ավարտին, լուսարարապետ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը *Ս. Սեղան է առաջնորդում* Տ. Ժուստինիան պատրիարքին, *որը իր ողջույնի գրավոր խոսքի առաջին մասում ծանրանալով այսօրվա աշխարհի պայմաններում ևս եկեղեցու կատարելիք մեծ առաքելության և աշխարհը հուզող արդի բազմապիսի հարցերի լուծման բնագավառում եկեղեցու բերելիք մեծ նպաստի վրա, շեշտում է անհրաժեշտությունը քրիստոնեական եկեղեցիների համագործակցության և միասնության.*

«..... Արդարև, մեր եկեղեցիի ծոցին մեջ գոյություն ունի միշտ հարաճուն հետաքրքրություն մը հանդեպ հայ եկեղեցիի: Դեռևս մոտավորապես մեկ դար սուաջ, հայկական եկեղեցիի պատարագը բազմաթիվ անգամներ թարգմանված են ռումիներենի, իսկ մեր աստվածաբանները, ներկայիս ուսումնասիրություններով և տեղեկատու հոդվածներով կջանան մեր մեջ ծանոթացնել հայկական եկեղեցիի պատմությունը, պաշտամունքը, կազմակերպությունը և աստվածաբանական գրականությունը: Նույնինքն մեր այս այցելությունը այստեղ, կհամարենք մեկ նոր արտահայտությունը այն կապերուն, որոնք հաստատված են մեր եկեղեցիներուն միջև և միաժամանակ՝ մեկ նոր քայլ մեր եկեղեցիներու և ժողովուրդներու փոխհանդիպման և մերձեցման ճամփուն վրա:

Գիտենք և համոզված ենք, որ ոչ քաղկեդոնական արևելյան եկեղեցիները ևս ներկայիս ոգևորված են նույն տիեզերականացման շունչով, փոխադարձ ճանաչողության և կապերու սերտացման բաղձանքով, նախ՝ իրենց միջև և ապա քիրստոնեական ուրիշ եկեղեցիներու և դավանություններու հետ: Ոչ քաղկեդոնական եկեղեցիներու սատվածաբաններու 1964 օգոստոսի անպաշտոն խորհրդակցությունը, որ տեղի ունեցավ Ադիսուսի մեջ և որուն հաջորդեց այս եկեղեցիներու ներկայացուցիչներու համագումարը, 1965 հունվարին, Ադդիս-Աբեբայի մեջ, այս ուղղությամբ կատարեցին սկզբնավորություն մը, որ կհուսանք շարունակվի լավ արդյունքներով, քրիստոնեական միության սրբազան դատին համար: Մեր երկու կողմերու պարտականությունն է՝ շարունակել այս խոստմնալից սկզբնավորության ջանքերը, ամրապնդելու համար բոլոր քրիստոնյաներու փոխադարձ կապերն ու միությունը: Առանց պարծենալու երջանիկ ենք, հաստատելով, որ ռումեն օրթոդոքս եկեղեցին և հայ եկեղեցին, այս ուղղությամբ, կգտնվին մյուս եկեղեցիներու առաջին շարքին վրա: Միաժամանակ վստահ ենք, թե տիեզերականացման ջանքերու համար այս ճամփուն վրա կատարված ամեն քայլ կհանդիսանա ոչ միայն խթան մը և շանյթ մը քրիստոնեական միության համար, այլ նաև ժողովուրդներու բարեկամության և մերձեցման համար, որ կատարե ամբողջ մարդկության ձգտումներուն՝ դեպի միություն, խաղաղություն և գոյակցություն

երկրագնդի բոլոր ժողովուրդներուն միջև:

Ոգևորված այս մտածումներով և զգացումներով, մեր սիրելի հյուրընկալներուն, հայ եկեղեցվո Հայրապետին՝ Նորին Վեհափառություն Վազգեն Առաջինին, կղերին և հայ եկեղեցիի հավատացյալներուն կբերենք ռումեն օրթոդոքս եկեղեցիի հավատացյալներուն և կղերին սիրալիր և քրիստոնեական եղբայրության ողջույնը:

Ամենայն հայոց եկեղեցիի այս կեդրոնին մեջ միասին փառաբանելով զորությանց և ողորմության Աստվածը, բոլորս միասին աղոթենք Անոր, որ ամրապնդե մեր մարդկային տկար ջանքերը, մեր քայլերը, մտածումներն ու սրտերը՝ ուղենշելով դեպի բոլոր քրիստոնյա եկեղեցիներու միության ճամփան, որ խաղաղության, բարեկամության և աշխարհի բոլոր ժողովուրդներու միջև բարի հասկացողության ճամփան է:

Աստված թող օրհնե՛ մեզ իր ողորմությամբ և մարդոց հանդեպ ունեցած սիրով, այժմ և միշտ և հավիտյան, ամեն»:

Ժուստինիան պատրիարքի խոսքի հայերեն թարգմանությունը ընթերցում է Տ. Տիրայր եպս. Մարտիկյանը:

Նորին Սրբությունը, իր խոսքի ավարտին, Հայոց Հայրապետին նվիրում է մի էմալապատ սաս և մի խաչկալ:

Հավարտ Ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի դահակալության 11-րդ տարեդարձի առթիվ, Մ. Տաճարում կատարվում է Հայրապետական մաղթանք:

Մ. Տաճարի երգչախումբը, ի պատիվ Տ. Ժուստինիան պատրիարքի, ռումիներեն լեզվով կատարում է նաև «Պատրիարքական մաղթերգը»:

Այնուհետև, երկու հայրապետները ամպհովանու տակ, եկեղեցական թափորով, հոծ բազմության խանդավառ արտահայտություններ մեջ, օրհնելով բոլորին, առաջնորդվում են Վեհարան:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՀԱՍՐԱՀՈՒՄ

Եկեղեցական թափորը «Որ դշնորհս» շարականի երգեցողությամբ բարձրանում է Վեհարանի հանդիսությանց մեծ դահլիճը և կանգ է առնում Գահասրահում:

Հայոց Հայրապետը բազմած դահի վրա, Իր դահակալության 11-րդ տարեդարձի առթիվ ընդունում է եկեղեցու և իր ժողովրդի շնորհավորանքները: Իր դահի վրա է բազմել նաև Տ. Ժուստինիան Սրբազան պատրիարքը, որը եկել է մասնակցելու հայ եկեղեցու ուրախությանը:

Մ. Տաճարի լուսարարապետ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, հանուն Մ. Աթոռի միաբանության, Գեր. Հոգ. խորհրդի և ներքին թեմերի, սրտագին շնորհավորում է Վեհափառ Հայրապետի դահակալության 11-րդ տարեդարձը, մաղթելով, որ Նրա սուրբ, շինարար ձեռքերում միշտ ծաղկյալ մնա հայրապետական իշխանության դավազանը՝ ի պայծառություն Մ. Աթոռ Ս. Էջմիածնի, և հայ եկեղեցու, ի բարօրություն հայրենյաց և հայ ժողովրդի:

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, ջերմորեն շնորհավորելով Հայոց Հայրապետի դահակալության առնը, ասում է.

«Ընդունված կարդ է, որ նման հանդիսավոր օրերին հավաքված հյուրերը շնորհավորում են հորելյարին, ուստի թույլ տվեք ինձ էլ մեր հանրապետության կառավարությանն առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորելու Նորին Սրբության՝ Վազգեն Առաջինին, Նրա դահակալության տասնմեկերորդ տարեդարձի առթիվ:

Հոդագունդը մեր ժամանակներում ապրում է ուժերի գերազույն լարման մի շրջան, երբ դանդաղ երկինքների տակ ապրող ժողովուրդների ու մարդկության համար ընդհանրապես բնութագրական է միևնույն ընդհանրական դաղափարը: Այդ ընդհանրական դաղափարը ազնիվ նպատակների իրագործման համար միասնության իրականացման դաղափարն է:

Բացառություն չի կազմում հայ ազգը նաև, թեպետ մի փոքր մասն է մարդկության ամբողջական թվի համեմատ: Դժխեմ բախտի քմահաճ խաղով աշխարհի չորս ծագերում ցրված հայությունը, պատմության տրամաբանության բերումով, իր ազգային դիմագիծը պահպանելու, որպես ազգություն իսկ իր գոյությունը շարունակելու մտահոգությամբ միասնության է ձգտում: Քրոնաջան, պարզապես հերոսական մաքառում է դնում սփյուռքում հայապահպանության նպատակի համար: Դպրոցներ, ակումբներ, մշակութային աներ, մամուլ, գիրք ու գրականություն, եկեղեցի զինվորագրված են այդ նպատակին: Սակայն միասնության համար պայքարի դաղափարը պարապ շատախոսություն կլինի, եթե այն գրկվի իր կենսական բովանդակությունից: Միասնությունը ինքնանպատակ չէ: Յուրաքանչյուր ասողջ մտածող հայ միասնության դաղափարը ընկալում է որպես միասնություն՝ հանուն ազգային գոյապահպանության: Յուրաքանչյուր ասողջ մտածող, հայ ազգային գոյապահպանության վճռական կովանը ու խարիսխը

Գահասրահում Վեհ. Հայրապետը շնորհավորություններ է ընդունում

տեսնում է իր մայր հայրենիքի, հայկականությամբ ծաղկուն Սովետական Հայաստանի մեջ։ Ուստի աղգային միասնության միակ ձևը և եղանակը՝ հայրենիքի, Սովետական Հայաստանի շուրջ միասնության նշանաբանի տակ կարելի է իրագործել և աղգային գոյատևահպանության համար պայքարում սփյուռքահայության դեպի միասնության ճիգերը հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հետ կապերի ամրապնդման ճանապարհով կարող են պտղաբերել միայն։

Տագնապալի օջախներ են ստեղծվել երկրագնդի զանազան կետերում, իսկ նրանցից մեկում՝ Վիետնամում, իմպերիալիստների ձեռամբ գենոցիդ, մի ամբողջ ժողովրդի սպանությունն է գործադրվում։ Ժողովուրդները զանազան, անկախ մաշկի գույնից, մարդիկ՝ տարբեր մտածելակերպի, հավատի ու գաղափարաբանության, որ բարի կամք ունեն՝ միասնության են ձգտում։ Բայց միասնություն՝ հանուն խաղաղության, միասնություն՝ ընդդեմ իմպերիալիզմի ու գաղութատիրության։

Ձերդ Սրբություն,

Դուք Ձեր անձնական ուժերը և Ձեր գլխավորած Հայաստանյայց առաքելական եկեղեցու ուժերը ամբողջովին նվիրաբերել եք հայրենիքի շուրջ հայ ժողովրդի միասնության և աշխարհիս խաղաղասիրական ուժերի միասնական շարքերի ամրապնդման գործին։ Այս դրության վկայությունն է Ձեր տասնմեկումյա գործունեությունը։

Նույն այդ իրողությունն է փաստում Ռումինիայի ուղղափառ եկեղեցու պետի, Նորին Սրբություն Ժուստինիան պատրիարքի ներկայությունը այստեղ, Ձեր կողքին։ Հանուն խաղաղության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման, երկու եկեղեցիների միասնության ցույց,— այս է, մեր կարծիքով, տարողությունը Ձեզ՝ Նորին Սրբության տված պատմական այցելության։ Սույն պաշտոնական առիթով թույլ տվեք ողջունել Նորին Սրբություն Ժուստինիան պատրիարքին և Նրան ուղեկցող հողևորականներին, ներկայացուցիչներին, այն երկրի, որը բախտակից է եղել մեզ դարերի շառավիղներում և հինգ հարյուրամյակներ շարունակ իր ծոցի մեջ փայփայել է, սնուցանել, աճեցրել մեր ժողովրդի տարաբախտ մեկ բեկորը։

Ձերդ Սրբություն,

Ձեր գահակալության տասներկուերորդ տարվա շեմին ցանկանում եմ Ձեզ բաջառողջություն և հայրենի երկրի ջինջ, ջերմ և անսպառ արև»։

Հանուն սփյուռքի մեր թեմերին և ի մասնավորի Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի, Տ. Տիրայր Եպս. Մարտիկյանը, որպես առաջնորդի, ակնածանոք և երախտագիտությամբ արտահայտում է որդիական սեր, հավատարմություն և նվիրում դեպի Մ. Աթոռ Մ. Էջմիածինը և նրա արժանընտիր դահակալը։

Հանուն Երուսաղեմի հայոց պատրիարքության և Ամերիկայի հայոց թեմի, Տ. Գարեգին ծ. վրդ. Դազանճյանը շնորհավորում է Հայոց Հայրապետի դահակալության տոնը, շեշտելով, որ Երուսաղեմի հայոց պատրիարքական Աթոռը, նրա գահակալը և զինվորյալ միաբանությունը, Ամերիկայի տիրախնամ թեմը իր եկեղեցական, ազգային բոլոր կազմակերպություններով Մ. Աթոռի և նրա առաքելաշավիղ Հայրապետի հետ են, նրա եկեղեցանվեր և հայրենաշեն բոլոր ձեռնարկների մեջ։

Հանուն հայ մատավորականության, ողջույնի խոսք է ասում վաստակավոր ու ծանոթ մատավորական Հ. Ռ. Սիրունին։

«Շահ Աբբաս, ինչպես կոչումն են, հազար դժանությամբ խլելե հետո իրենց հայրենի բույներեն հայ բազմություններ և բոնի զետեղելե հետո զանոնք իր ստեղծած նոր կայսրության մեջ, ուզեց, որ անոնք դառնան իր հյու հպատակները, ուրեմն այնուհետև միմիայն իր հողին համար, մոռնան հեռավոր իրենց օջախները։

Ու ան դահ մը մտածեց իր երկիրը փոխադրել էջմիածնա քարերը՝ անոնցմով տաճար կանգնելու համար հայերուն իր հողին վրա, կարծելով, որ անոնք այդդեսով կմոռնան իսպառ իրենց հին հայրենիքը և իրենց հողին այլևս կկապեն իրեն ու իր պետության։

Պարսիկներու մեծաղոր արքան չէր գիտեր, ավա՜ղ, ինչպես չէին գիտցեր իրմե առաջ շատ շատ շահ Աբբասներ և ինչպես չպիտի գիտնային դեռ շատեր իրմե հետո ալ, թե հայ ժողովրդի հոգին հնար չէր երբեք խլել իր բույնեն, որքան ալ ավերակի վերածեին Հայոց Աշխարհը, ու որքան ալ փորձեին քարի վրա չթողուլ քարը։

Հայ ժողովուրդի հոգին դիտի մնար անսասան։ Ուր ալ երթար ան, որ ափին վրա ալ նետեր զայն դաժան ճակատագիրը, իր հոգին կոչած պիտի մնար միշտ իր հեռավոր սրբություններուն։

Էջմիածինը կխորհրդանշեր այդ սրբությունները։

Բայց էջմիածինը իր քարերը չէին։ Այդ քարերուն տակ հայոց բովանդակ պատմությունը կհանդչեր, իր տխուր ու փառաշուք դրվագներով, իր վերելքներով ու իր սուզերով, իր ավանդություններով։ Ու ոչ մեկ բռնապետ զանոնք հափշտակել պիտի չկրնար։

Դիշա է, դժնդակ օրեր անցուց էջմիածին ինքն ալ հաճախ, ինք ևս տարտգիր եղավ, ու ման եկավ հայ ժողովուրդի ճակատագրին հետ մեկտեղ։ Բայց հայ հոգին չլքեց երբեք իր սրբավայրը, կառչած մնաց նվիրական այդ օջախին, ուր հեռավոր դարերը զո՞ էին մատուցեր իրենց Աստուծուն, և ուր հայ ժողովուրդը իր Քրիստոսն էր երբեր գտեր հետ։ Դարեր շարունակ էջմիածինը հայ սրբություններուն պատսպարանը մնաց այսպես, ու հուստուս ջահ՝ թափառական հայ բեկորներուն։ Անոր հառնցին իրենց աչքերը անոնք, որ կհեծեին սարիության մեջ՝ հայրենի հողին վրա, ինչպես և անոնք, զոր ազատները ցրվեր էին աշխարհի չորս հովերուն։ Հազար կայծակ ճայթեցավ էջմիածնի գլխուն ալ, ու հազար փոթորիկ ծեծեց անոր դոները։ Բայց հայ ժողովուրդը հույսը չզատեց երբեր անկե. արորված հազար դարշապարներու տակ՝ իր դարավոր երազներուն պատանեշ դարձուց զայն, ու անոր հովանիին տակ, հայրենիքի մը կարոտավոր ապրեցավ։

Ու հիմա, երբ ան այլևս հայրենիք ունի, դարձյալ աչքերը հառած կոչահե անոր։ էջմիածինը հիմա ևս կապ մը կմնա ընդմեջ մայրենի հողին ու անոր նժդեհ զավակներուն, ու անոր կամարներուն տակ հայ սփյուռքը ողջագուրվիլ կու դա դարերուն հետ ամեն օր։

Հայ ժողովուրդը, Վեհափա՜ռ, այդ դարերուն մեջ սրբության պահակ է կարգած հիմա Զեզ։ Այս նվիրական վայրերը Զեր դուրդուրանքին հանձնելով՝ քարեր չէ, որ ավանդ կձգե Զեզի, այլ սրբությունները, զորս դարերը փոխանցած են իրարու։

Տասնմեկ տարիները, զորս կթողուք ետև, երաշխիքն են այդ դուրդուրանքին։ Երկու ենդամ է, ահա, որ ակնհայտեց կու դամ ելլալ ես այն ջերմեռանդության, որով հայ սփյուռքը հաղորդվել կու դա հին օրերու նվիրականության, որոնք կծաղկին հայրենի երկինքին տակ։

Տոնական այս պահուն ի՞նչ մաղթանք կրնամ Զեզի ընել։ Ամենքը երկար կյանք և առողջություն մաղթեցին արդեն Զեզի։ Թույլ տվեք, պարզապես, կորով բաղձամ Զեզ, որպեսզի անխոով մնաք խութերուն առջև։ Ու անոնք միշտ պիտի ըլլան, քանի հայ հոգին դեռ կխարխափե մութին մեջ՝ սարիության այնքան դարերե հետո, ու քանի չար հովերը կփորձեն սողոսկիլ հայ եկեղեցիին ներս։ Ամուր մնացեք բոլոր վտանգներուն դեմը, դարերը ուժ տան թող Զեզի, հայրենի հողը Զեզ բաջություն պարգևե, ու հովանի ըլլա

թող Զեզի Ալեոր Հսկան, որ կՀսկե և միշտ պիտի Հսկե մեր վրա»։

Հանդիսության վերջում շնորհակալության և օրհնության խոսք է ասում Հայոց Հայրապետը։

Ն. Ս. Օծությունը մի անգամ ևս ողջունելով ռումեն ուղղափառ եկեղեցու պետ, Ն. Սրբություն Տ. Ժուստինիան պատրիարքի ներկայությունը ջերմ շնորհակալություն է հայտնում նրան, որ ընդունել է եղբայրական իր հրավերը և եկել է Ս. Էջմիածին, միասին աղոթելու երկու եկեղեցիների և ժողովուրդների բարօրության, ի Քրիստոս սիրո և միության համար։

Հայոց Հայրապետը իր դգացված, սրտագին շնորհակալությունն է հայտնում ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր, հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանին, նրա շնորհավորանքների համար։

Հայոց Հայրապետը իր հայրական շնորհակալությունն է հայտնում իր գահակալության 11-րդ տարեդարձի առթիվ՝ գահասրահում արտասանված մյուս պաշտոնական խոսքերի, ամեն կողմից ստացված բազմաթիվ շնորհավորական հեռագրերի և գրությունների համար, և օրհնելով ազգն ու եկեղեցին, ժողովուրդն ու հայրենիքը, բարեմաղթում է խաղաղություն աշխարհին, սեր և միություն՝ քրիստոնեական բոլոր եկեղեցիներին, Աստուծո վայոքին և մարդկության երջանկության համար։

Գահասրահում հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ժամը 4-ին Գեր. Հոգ. Խորհուրդը, ի պատիվ Հայոց Հայրապետի գահակալության 11-րդ տարեդարձի, կազմակերպում է ճաշկերույթ, որն անցնում է ջերմ, սրտագին մթնոլորտում։

Ընդունելության ներկա է ռումին ուղղափառ եկեղեցու պետ, Ն. Ս. Ժուստինիան պատրիարքը, ինչպես նաև՝ Տ. Թեոկտիստ, Տ. Վիսարիոն եպիսկոպոսները, Դաջիու և Կազակու քահանաները։

Հյուրերի թվում է հնդիկ գիտնական և հասարակական գործիչ, դոկտ. Զատուրջին։

Հրավիրյալների թվում են նաև ուխտավորաբար Մ. Աթոռում գտնվող Տ. Գևորգ, Տ. Դյուտ, Տ. Դարեգին, Տ. Վազգեն վարդապետները, Տիգրան Բոյաջյանը, Ա. Դալայանը, դոկտ. Գր. Բամբուկեյանը. նկարիչ Հր. Ավագյանը, երաժշտագետ Թոմաջան, ուխտավորներ՝ տեր և տիկին Կ. Ս. Ալթունյաններ, Բեյրութից՝ հայ եկեղեցասիրաց տիկնանց միության հինգ անդամներ և ուրիշներ։

Սեղանին մասնակցում են Մ. Աթոռի միաբանությունը, Գեր. Հոգ. Խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմը, Ճեմարանի դասախոսները, պաշտոնեություն, մտավորականներ, արվեստագետներ և այլ պաշտոնական անձինք։

Ընդունելության ներկա են նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր եկեղեցական գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը և տեղակալ՝ Ս. Հովհաննիսյանը։

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։ Մ. Աթոռի բարիքներով զարդարված սեղանների շուրջ ստեղծում է քրիստոնեական եղբայրության ջերմիկ մթնոլորտ։

«Զի՝ բարի, զի՝ վայելուչ, զի՝ գեղեցիկ, զի բնակեսցեն եղբարք ի միասին»։

Վեհափառ Հայրապետի գահակալության 11-րդ տարեդարձի բարեբաստիկ առիթով. լուսարարապետ Տ. Հայկազուն արքեպս. Արբահամյանը բաժակ է բարձրացնում Մ. Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության և նրա արժանընտիր գահակալի կյանքի արևշատության համար։

Միաբերան ու հանդիսավոր հնչում է Մ. Աթոռի հիմնը՝ «Էջմիածին ի Հօրէ» շարականը։

Վեհափառ Հայրապետը խանդավառ մթնոլորտում բաժակ է բարձրացնում Ժուստինիան պատրիարքի կենաց՝ ջերմագին և սրտաբուխ մաղթանքներով։

Հյուր ռումինացի հոգևորականները երգում են պատրիարքական մաղթերգը՝ ներկաների ծափահարությունների ներքո։

Վեհափառ Հայրապետը երկրորդ բաժակն առաջարկում է խմել ի դեմս ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր, հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանի՝ հայրենի բարեխնամ կառավարության հայրենանվեր գործոց հաջողության, խնդրելով, որ պ. նախագահը բարեպատեհ առիթով հայրենի կառավարության ղեկավարների մոտ թարգմանը լինի Հայոց Հայրապետի հարգանաց։

ՀՍՍՀ Մինիսարների սովետին առընթեր, հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, ընդունելության ժամանակ խոսք առնելով, շնորհակալություն է հայտնում Հայոց Հայրապետին՝ շեշտելով, որ իբեն ուղղված հարգալիր խոսքերը հասցեագրված են հայրենի կառավարության և որ ինքը սիրով կվոխանցի նրանց՝ Հայոց Հայրապետի հարգանքն ու բարեմաղթությունները։

ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ ԵՎ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆ,
Լ. ԽԱՉԻԿՅԱՆԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ

Վեհափառ Հայրապետը երրորդ բաժակը բարձրացնում է Ժուստինիան պատրիարքի շքախմբի անդամների կենաց, «որոնցից սմանք,— ասում է նա,— վաղուց ինձ ծանոթներ և բարեկամներ են Ռումինիայից, ինչպես՝ Արադ քաղաքի նախ. Թեոկտիստոս տիպար և բարի հոգևորականը, որի հանդեպ միշտ տածել եմ եղբայրական զգացմունքներ, պատրիարքական փոխանորդ Վիսարիոն եպիսկոպոսը՝ ռումին եկեղեցու կարևոր գեմքերից մեկը, անմիջական գործակիցը Տ. Ժուստինիան պատրիարքի, և որի հետ ծանոթացա անցյալ տարի, երբ այցելեցի Ռումինիա, նրան ճանաչեցի և սիրեցի որպես լուրջ հոգևորականի։ Ինձ նույնպես շատ սիրելի և հին ծանոթներ են երկու քահանա։։ հայրերը, որոնք իմ բարեկամներն են Ռումինայից, և որոնք կարևոր դեր են կատարում ռումին պատրիարքարանում՝ վայելելով Ն. Սրբություն Ժուստինիան պատրիարքի վստահությունը»։

Տ. Թեոկտիստ եպիսկոպոսն իր շնորհակալության խոսքի մեջ նշում է, որ ինքն առաջին անդամն է, որ ոտք է դնում աստվածաշնչական այս սուրբ հողի վրա, որ շատ կարևոր դեր է կատարել քրիստոնեական կրոնի հաղթանակի համար, և նրա սրբավայրերը, վանքերն ու տաճարները պարծանքն են քրիստոնեական աշխարհի, սրբավայրեր, որոնք խոսում են քրիստոնեական կրոնի պատմական կարևորության մասին Հայաստանում։

«Մեր սրտերում վառ կմնան,— եզրակացնում է ռումին եպիսկոպոսը,— մեր ստացած տպավորությունները Ս. Էջմիածնից, Հայոց Հայրապետից, Միաբանությունից և հոգևոր, մշակութային կենտրոն հանդիսացող վանքերից և հայոց աշխարհից»։

Վեհափառ Հայրապետը ջերմորեն ողջունում է նաև ներկայությունը հնդիկ դիպլոմատ և հասարակական գործիչ, պրոֆ Զատուրվի, նրան ներկայացնելով բոլոր հյուրերին։ Հնդիկ դիպլոմատը շնորհակալության և երախտագիտության ջերմ խոսք է ուղղում Հայոց Հայրապետին և բոլոր ներկաներին։

Ռումինահայ թեմական խորհրդի նախագահի տեղակալ, դոկտ. Գր. Բուտրուկեանը իր դրավոր ելույթի մեջ թարգմանն է հանդիսանում ռումինահայ հայրենասեր և հավատավոր ժողովրդի որդիական սիրո և հավատարմության զգացմունքներին դեպի Մ. Աթոռ Ս. Էջմիածինն, նրա գահակալը և վերածնված հողը հայրենի։

Ամերիկայի հայոց թեմի պատգամավորական ժողովի ատենապետ Տ. Բոյաջյանը Վեհափառ Հայրապետին է ներկայացնում Ամն-ի տիրախնամ թեմի, առաջնորդ սրբազան հոր, եկեղեցական ազգային մարմինների և համայն հավատացյալ ժողովրդի սերն ու հարգանքը, երախտագիտությունն ու շնորհավորությունները, շեշտելով ,որ Ս. Էջմիածնի Իջման Սեղանից ճառագած լույսի և Ս. Լուսավորչի օրհնության ներքո է ապրում ամերիկահայությունը։

Վեհափառ Հայրապետի գահակալության 11-րդ տարեդարձի հանդիսությունը վերջանում է Ն. Ս. Օձության «Պահպանիչ»-ով։

Երեկոյան ժամը 8-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում երկու հայրապետները իրենց շքախմբերով, միաբանության անդամներով և այլ հրավիրյալներով դիտում են «Էջմիածին» կինոնկարը, նվիրված 1963 թվականի մեռոնօրհնության հանդեսին։

ՉՐՈՍԱՊՏՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՍԵՎԱՆ

Հոկտեմբերի 3-ին, երկուշաբթի.— Առավոտյան ժամը 10-ին երկու Հայրապետները իրենց շքախմբերի անդամներով և ուխտավորաբար Մ. Աթոռում գտնվող հոգևորական և աշխարհական հյուրերով, դրոսապատույտի են մեկնում դեպի Սևան։

Արարատյան դաշտի չքնաղ և պայծառ աշնանային օրերից մեկն է։ Հաճելի ուղևորությունից հետո մերենները կանգ են առնում Սևանի ափին, Նորաշեն վիլլայի առաջ, որտեղ հյուրերի պատվին տրվում է ճաշկերույթ. հետ միջօրեի ժամը 2-ին, ջերմ, եղբայրական մթնոլորտում։

Հյուրերը, այնուհետև, այցելում են Սևանի պատմական վանքերը, ստորերկրյա հիդրոկայանը և դրոսապատույտ են կատարում լճի վրա։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Հոկտեմբերի 4-ին. երեքշաբթի.— Առավոտյան ժամը 11-ին երկու հայրապետները, իրենց շքախմբերով, Երևանում այցելում են Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց մատենադարան։

Մատենադարանի տնօրեն, ՀՍՍՀ Գիտ. ակադ. թղթակից անդամ Լ. Խաչիկյանը ջերմորեն դիմավորում է Ժուստինիան պատրիարքին, Վազգեն Ա Հայոց Հայրապետին և ընկերակցող անձնավորությանց։

Նախ լսում են Մաշտոցյան մատենադարանի տնօրեն Լևոն Խաչիկյանի զրույցը նվիրված Մատենադարանի ստեղծման, ձեռագրերի հավաքման և ուսումնասիրման աշխատանքներին։ Ապա բարձրապատիվ հյուրերը հրավիրվում են դիտելու Մատենադարանի ցուցասրահը, ուր ռումիներեն լեզվով

Սևանա լճի ափին։

բացատրություններ է տալիս Մատենադարանի ավագ գիտական աշխատող, պատմական գիտությունների թեկնածու Սուրեն Քոլոնջյանը։ Հյուրերը, մեծ հետաքրքրությամբ և հիացմունքով դիտելուց հետո հայ միջնադարյան ձեռագրերն ու մանրանկարները, հրավիրվում են դիտելու նաև այս այցելության առթիվ ստեղծված նոր բաժինը, որը նվիրված է Ռումինիայում գրված հայերեն ձեռագրերին։ Նրանք տեսնում են ԺԵ—ԺԹ դարերի Ջետատես Ալբըյում, Սուչավայում, Յաշում, Բուրիլայում, Տըրգու Մուրեշում և Գեոլա հայաքաղաքում գրված հայերեն ձեռագրերը։

Բարձրապատիվ հյուրերը լարված հետաքրքրությամբ դիտեցին նաև ցուցասրահի նախասրահում այս առթիվ բացված ճոխ ցուցահանդեսը, որը նվիրված էր հայ և ռումին ժողովուրդների դարավոր եղբայրական կապերի պատմությանը։ Այստեղ ցուցադրված էին Մոլդովայի Ալեքսանդր Բարի իշխանի 1401 թ. տված հրովարտակը, որով Սուչավայում հիմնվեց Մոլդովայի հայերի հոգևոր առաջնորդական աթոռը։ Հայ եկեղեցու խորհուրդների ռումիներեն հնագույն թարգմանությունները (1850, 1895) ռումին հայագետներ Նիկոլա Յորգայի, Վլադ Բընըցեանուի և ուրիշների հայագիտական գործերը, հայերենից ռումիներեն և ռումիներենից հայերեն կատարված թարգմանություններ և այլն։

Վերջում Ն. Ս. Ժուստինիան պատրիարքը, Մատենադարանի այցելուների մասյանում գրում է հետևյալ տողերը.

«Այցելեցինք հայ մշակույթի սկզբնավորմանը նվիրված մի մեծ և թանկարժեք գանձարան։ Բաժանվեցինք հիացումի զգացմունքներով դեպի այսօրվա Հայաստանի գիտության և մշակույթի մարդիկ, որոնք նախաձեռնել են այս հաստատությունը, պահպանելու համար անգին այս գանձերը՝ ձեռագրեր, մանրանկարներ, հազվագյուտ արտադրություններ և այլն, և դրել Հայաստանի և ամբողջ աշխարհի ուսումնասիրողների տրամադրության տակ»։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ Վազգեն Ա-ն, այս առթիվ գրեց հետևյալը.

«Երջանիկ ենք, որ այսօր այցելեցինք Ս. Մեսրոպի անվան մատենադարանը, մեր սիրելի եղբոր և բարձրաստիճան պետ՝ Ն. Սրբություն Տ. Ժուստինիան պատրիարքին հետ Ռումինիս, մի անգամ ևս մեր հիացմունքը հայտնելով այս նվիրական հաստատության ղեկավարության»։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ՀՐ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հոկտեմբերի 4-ին, Երեքշաբթի.—*Հետ միջօրեի ժամը 13 անց 30-ին, ռումինական ուղղափառ եկեղեցու պետ Ն. Սրբություն* Ժուստինիան Սրբազան պատրիարքը, *ընկերակցությամբ* Տ. Թեոկտիստ, Տ. Վիսարիոն *Եպիսկոպոսների,* Տ. Դաֆիու, Տ. Կազակու *քահանա հայրերի, քաղաքավարական այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Հր. Մարգարյանին՝ Երևանում, նախագահական պալատում։*

Այցելության ժամանակ Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա կաթողիկոսը *ռումինական օրթոդոքս եկեղեցու պետին ներկայացրեց Հր. Մարգարյանին։*

Հայոց Հայրապետին ընկերակցում էին Գեր. Հոգ. խորհրդի տանտերտեր և Մ. Տաճարի լուսարարապետ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյան, *Գեր. հոգ. խորհրդի անդամ և Վրաստանի հայոց թեմի առաջնորդ* Տ. Կոմիտաս Եպիսկոպոս Տ. Ատեփանյան, *Ռումինիայի և Բուլգարիայի թեմերի առաջնորդ* Տ. Տիրայր Եպս. Մարաիկյան *և գավազանակիր* Տ. Արսեն վրդ. Բերբերյան։

Ընդունելության ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր, հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Պ. Գալլամյան։ *Ընդունելությունը անցնում է ջերմ մթնոլորտում։*

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 4-ին, Երեքշաբթի.— *Հետ միջօրեի ժամը 3-ին, ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհուրդը, ի պատիվ* Ժուստինիան Սրբազան պատրիարքի, *պաշտոնական ճաշկերույթ է կազմակերպում «Երևան» հյուրանոցում։*

Ճաշկերույթին մասնակցում էին Ժուստինիան պատրիարքի շքախմբի անդամները, Տ. Թեոկտիստ, Տ. Վիսարիոն *և եպիսկոպոսները,* Տ. Դաֆիու *և* Տ. Կազակու *քահանա հայրերը։*

Ընդունելության ներկա էր նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, *շրջապատված իր շքախմբի անդամներով, որոնց թվում՝* Տ. Հայկազուն, Տ. Կոմիտաս, Տ. Հուսիկ, Տ. Վահան, Տ. Տիրայր *Սրբազանները,* Տ. Գարեգին, Տ. Գևորգ, Տ. Գյուտ, Տ. Ներսես *ծ. վարդապետները,* Տ. Վազգեն, Տ. Արսեն *վարդապետները, Գեր. Հոգ. խորհրդի անդամները, սփյուռքից հյուրեր՝ պրոֆ. Հ. Ա.* Սիրունին, Տիգրան Բոյաջյանը *(ԱՄՆ), դոկտ.* Գր. Բամբուկեյանը *(Բուխարեստ), նկարիչ* Գր. Ավազյանը *(Բուխարեստ) և «Սիոն» ամսագրի խմբագիր* Ա. Գալայջյանը *(Երուսաղեմ)։*

Հրավիրյալների թվում էին ՀՍՍՀ Լուսավորության մինիստր Շ. Սիմոնյանը, *Մշակույթի մինիստրի տեղակալ* Ս. Գասպարյանը, *Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ* Վ. Համազասպյանը, *Հանրապետության խաղաղության պաշտպանության կոմիտեի նախագահ, գրող* Ն. Զարյանը, Լ. Խաչիկյանը, *Համալսարանի պրոֆ.* Բ. Առաքելյանը, Մ. Բաբլոյանը, *բանաստեղծ* Գևորգ Էմինը, *դիտ. աշխ.* Ուրեն Քոլանջյանը *և ուրիշներ։*

ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր, հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Պ. Գալլամյանը *առաջին բաժակն առաջարկում է խմել սրվա թանկագին հյուրի կենաց, շեշտելով, որ «սա զեղեցիկ մի առիթ է մեզ համար բաժակ բարձրացնելու ռումինական օրթոդոքս եկեղեցու Ժուստինիան պատրիարքի կենաց, ցանկանալով նրան բաջառողջություն, կորով և երկար կյանք, ինչպես նաև՝ ռումին ազնիվ ժողովրդին բարեօրություն և աշխարհի ժողովուրդներին խաղաղություն։ Մեզ բաջ ծանոթ է, որ Տ. Ժուստինիան պատրիարքը մեծ աշխատանք է տանում հանուն խաղաղության։ Խաղաղության դատը սրբազան գործ է։ Ռումինական օրթոդոքս եկեղեցին գործուն մասնակցություն է բերում խաղաղության պայքարին, համայն աշխարհում։ Ցանկանում ենք Ձեզ, Ժուստինիան պատրիարք, ամենայն կորով, խաղաղության դատը ամուր պահելու համար Ռումինիայում։*

Այս առիթով հաճելի մի պարտականություն ունեմ կատարելու։ Հանուն մեր մայրաքաղաքի քաղաքապետ Գր. Հասրաթյանի, որը հիվանդության պատճառով, ցավոք, բացակայում է այսօր այս սեղանից, Ձեզ հանձնելու Երևան քաղաքի բանալին։ Սա երկրորդ դեպքն է, երբ այդ բանալին տրվում է բարձրաստիճան մի հոգևորականի։ Առաջինը Ամենայն Հայոց կաթողիկոսն է, որ ստացավ այդ»։

Պր. Գալլաբյանը ներկաների խանդավառ ծափերի ներքո, Հայաստանի մայրաքաղաքի

բանալին հանձնում է Ժուստինիան պատրիարքին, որն այն ընդունում է շնորհակալության, երախտագիտության զգացմունքներով։

Ճաշկերույթի ժամանակ բաժակաճառեր արտասանեցին՝ Վեհափառ Հայրապետը, խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի նախագահ Ն. Զարյանը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի բաժնի վարիչ Դր. Բեքմեզյանը, Տ. Վազգեն վրդ. Քեշիշյանը։

Վերջում Տ. Ժուստինիան պատրիարքը հանդես եկավ հետևյալ ճառով.

«Թույլ տվեք, խնդրեմ, արտահայտելու այն բացառիկ ուրախությունը, որ ես և ինձ ուղեկցող ռումին օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը ունենք միասին լինելու և միասին ապրելու այս հիշատակելի վայրկյանները մեր կյանքում։

Եկանք Ձեր գեղեցիկ երկիրը՝ Սովետական Հայաստան, որտեղ ապրում է մի ժողովուրդ, որի անխոնջ աշխատասիրությունը ծանոթ է մեզ։ Եկանք որպես հյուր հայ պատվական եկեղեցու՝ Նորին Վեհափառություն Վազգեն Ա ծայրագույն պատրիարքի և կաթողիկոսի գահակալության 11-րդ տարեդարձի առիթով շարունակելու հարաբերությունները ռումին օրթոդոքս եկեղեցու և հայ եկեղեցու մերձեցման համար։

Գնահատելով հայ եկեղեցին որպես հարազատ արտահայտությունը, ողջ մարմնացումը, և հնագույն քրիստոնյա ավանդապահներից մին, և դրանով միացած ուղղափառության հետ, որին մաս է կազմում նաև ռումին օրթոդոքս եկեղեցին՝ ուրախ ենք տեսնելու մերձեցման աճը մեր եկեղեցիների, և նրանց միջև գոյություն ունեցող այնքան բազմաթիվ և կարևոր նմանությունները։ Փոխադարձ այցելությունները մեր և Նորին Վեհափառության միջև գալիս են ծառայելու այս նպատակին։

Այսպիսով մենք լրացնում ենք մեր ժամանակների մի հրամայականը, որ պահանջում է բոլոր քրիստոնյաներից՝ ավելի լավ ճանաչել միմյանց և միացնել ջանքերը՝ նեցուկ լինելու ժամանակակից մարդկությանը, եղբայրական իր ձգտումների մեջ մշակելու համար բարեկամություն, ստեղծելու համար նոր կյանք, բարօրություն և երջանկություն՝ ի շահ ամբողջ մարդկության։

Մերձեցման իդեալը և համագործակցությունը, որ ոգևորում է այսօր աշխարհի հետզհետե ավելի լայն շրջանակները, որպես մեր ժամանակների սգին, օրե-օր գրավում է նաև քրիստոնյա եկեղեցիներն ու իր հավատացյալները, ինչպես և բոլոր դավանանքների հավատացյալներին։

Բոլոր եկեղեցիները հետզհետե ավելի գիտակից են դառնում իրենց պարտականությունների մեջ՝ ավելացնելու միասնական ամուր գործակցությամբ իրենց հարատև ճիգերն ու ջանքերը խաղաղության առաջնորդման գործի համար, ինչպես և ժողովուրդների փոխադարձ հասկացողության մեջ՝ մասնակցությամբ լավագույն և գիտակից մարդկանց։

Մեր ջերմագին շնորհակալությունը բերում ենք Սովետական Հայաստանի պետական ղեկավարության մեր պատվիրակության հանդեպ ցույց տրված հարգանքի համար այս ընդունելության առիթով։

Ի սրտե շնորհակալություն կհայտնենք կրոնից պետական կոմիտեին, մեր պատվին կազմակերպած հյուրասիրության համար և բարյացակամ բարեկամության համար, որով շրջապատեցին մեզ։

Մասնավոր շնորհակալություն ենք հայտնում ի Քրիստոս մեր եղբոր՝ Նորին Վեհափառություն ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Վազգեն Ա-ին, իր հրավերին համար, որով այցելեցինք հայոց եկեղեցին և այն ամենի համար, որ տեսանք այս առիթով հայ եկեղեցու մեջ և հայ ազնիվ ժողովուրդի հին և հյուրասեր երկրում։

Մաղթում ենք Նորին Վեհափառության և Սովետական Հայաստանի ղեկավարներին՝ հայ ժողովրդի՝ նրա վերելքի ճանապարհին բարօրություն, կատարյալ հաջողություն և երջանկություն։

Թող կեցցե՛ և աճի՛ սերը հայ եկեղեցու և ռումին օրթոդոքս եկեղեցու միջև, և բարեկամությունը՝ Սովետական Միության ժողովուրդների և ռումին ժողովրդի միջև, որպեսզի խաղաղությունը, որին համար պայքարում են միասին, հաղթանակի ամբողջ աշխարհում»։

Ռումինական օրթոդոքս եկեղեցու պետի պատվին տրված ճաշկերույթն անցնում է ջերմ, բարեկամական մթնոլորտում։

Երեկոյան ժամը 8-ին երկու հայրապետները, իրենց շքախմբերով և հյուրերով, ներկա են լինում Երևանի հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում՝ Հայաստանի պետական երգչախմբի և պարի անսամբլի համերգին։

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նոյեմբերի 5-ին, չորեքշաբթի.— Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը և Ժուստինիան Պատրիարքը իրենց շքախմբի անդամներով այցելում են Երևանի Ս. Սարգիս եկեղեցին, ուր հավաքված հա-

Ն. ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԻՐ ԾՔԱԽՄԲՈՎ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ

վատացյալների հոծ բազմությունը ջերմորեն դիմավորում է նրանց։

Երկու հայրապետները, եկեղեցու դանդերի զողանջների ներքո, եկեղեցական թափորով և «Հրաշափառ»-ով, առաջնորդվում են եկեղեցի։

Արարատյան թեմի փոխանորդ Տ. Վահան եպս. Տերյանը, հանուն Երևանի թեմական խորհրդի, հոգևորականության, եկեղեցական վարչության ու հավատացյալների, Տ. Ժուստինիան պատրիարքին ողջունում է հետևյալ ուղերձով.

«Այսօր Հայաստանի մայրաքաղաքի Մայր եկեղեցու զանգերը քաղցրալուր զողանջով ավետում են, որ Երևան է ժամանել Ռումանիայի օրթոդոքս եկեղեցու հայրապետը՝ նորին Սրբություն Ժուստինիան պատրիարքը՝ իր շքախմբով։

Երջանիկ և բախտավոր եմ՝ հավատացյալներիս, քահանայից դասի, թեմական-եկեղեցական խորհրդների, զպրոց-դասերի անունից, բարի գալստյան սրտաբուխ խոսք ասելու Ձեզ, Ձեր այցելության առիթով։

Խորը հնություն ունի ռումին և հայ եկեղեցիների և ժողովուրդների բարեկամությունը։ Անցյալում Ռումինիան իր գիրկը բացել է եղբայրորեն, հալածական մեր ժողովրդի բեկորների առաջ։ Մենք երախտապարտ ենք ռումին հողին և ժողովրդին և նրա հարուստ մշակույթին։ Եվ այսօր, սրտի խորունկ բերկրանքով ողջունում ենք ռումին ուղղափառ եկեղեցու Սրբազան պատրիարքի օրհնաբեր ներկայությունը այս սուրբ եկեղեցու կամարների տակ՝ իր շքախմբի անդամների հետ։

Մենք սիրում ենք ռումին հողը, որովհետև այնտեղ է ծնվել, սնվել ու դաստիարակվել մեր բոլորիս սիրելի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, որին ես այս ուրախ առիթով բարի գալուստ ենք մաղթում։

Թող հավերժ կենդանի մնա ռումին և հայ եկեղեցիների եղբայրական համագործակցությունը, թող աճի և ամրապնդվի ռումին և հայ ժողովուրդների պատմական բարեկամությունը նոր թափով և նոր հեռանկարներով»։

Ժուստինիան Սրբազան պատրիարքը Տ. Վահան եպիսկոպոսի ողջույնի խոսքին պատասխանում է, ասելով՝ «Երախտապարտ ենք Տ. Վազգեն Ա կաթողիկոսին, որ առիթը ընծայեց մեզ այցելելու էջմիածին և Սովետական Հայաստանի մայրաքաղաք՝ Երևան, և նրա մայր եկեղեցին։

Ռումին օրթոդոքս եկեղեցու հավատացյալների, մեր եկեղեցիների և քահանաների ողջույնն ու հարգանքն ենք բերել Երևանի եպիսկոպոսներին, քահանայից դասին, հավատացյալներին և անձամբ մեր օրհնությունն ու բարեմաղթությունները։ Երեկ, հանդիսավոր իրադրության մեջ, ստացա Հայաստանի կրոնից նախարարի ձեռքից Երևանի բանալին։ Դա սրեկ բերդի կամ քաղաքի սովորական բանալին չէ, այլ հոգիներ բացող բանալի։ Եկել ենք այս աստվածաշնչական հողը, ամրապնդելու երկու եկեղեցիների, երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը, որը խորն արմատներ ունի։ Մենք եկել ենք մեր այցելությամբ սատարելու մեր օրերին այդ բարեկամության և՛ ավելի ամրապնդմանը։

Հայաստանում իմ այցելած վանքերի մեջ ես տեսա հայ ժողովրդի կենդանի հավատքը դեպի Քրիստոս։ Պատմական այդ սրբավայրերը եղել են նաև հայ մշակույթի վառ օջախներ։ Հայ ժողովուրդն իր հավատքի ուժով դիմացել է դարերի փորձություններին, ինչպես ռումինացիները օսմանցիների դեմ։ Մենք հինգ հարյուր տարի մարտնչել ենք օսմանյան բռնակալության դեմ։ Մեր հայրենի հողը ոռոգվել է մեր նահատակների սուրբ արյունով։ Ի վերջո, սակայն, հաղթանակել է մեր ժողովուրդը։ Թշնամին ծնկի է եկել, ու մենք ազատագրվել ենք։ Ազատագրվել է և ռումինական հողը։ Անցյալում հայ և ռումին ժողովուրդների ճակատագրի ընդհանրությունը պատմական փաստ է։ Այսօր էլ մեր երկու ժողովուրդները համանման ձգտումներով միասին ընթանում են սոցիալիզմի գրոշի ներքո ու կերտում իրենց լուսավոր ապագան։

Վերածնված Հայաստանը դարդանում է բոլոր բնագավառներում, ինչպես Ռումինիան։ Մենք հաջողություն ենք մաղթում բոլորին և կոչ ենք անում, որ միասին աշխատենք երկու ժողովուրդների համագործակցության համար։ Այս հույսով Աստուծո օրհնությունն եմ հայցում մեր բոլորիս վրա»։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Այնուհետև, երկու հայրապետները, իրենց ուղեկիցներով ուխտի են գնում Ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարան-եկեղեցին։

Ճանապարհին երկու հայրապետները այցելում են Շահումյանի շրջանում Երևանի մետաքսի կոմբինատ, ուր աշխատում են շուրջ 3500 բանվոր-բանվորուհիներ։

Կոմբինատի գլխավոր ինժեներ Նորիկ Ստեփանյանը, այլ դեկավարների հետ ջերմորեն դիմավորելով հյուրերին, ծանոթացնում է նրանց գործարանի աշխատանքներին և արտադրությանը։

Ապա Հայոց Հայրապետն ու ռումին պատրիարքը, շքախմբի անդամներով, մեկնում են Օշական՝ անցնելով Եղիվարդի, Աշտարակի գեղեցիկ և հովասուն այգիների միջով։

Օշականում, եկեղեցու մուտքի առաջ, երկու հայրապետները «Հրաշափառ»-ով մուտք են գործում եկեղեցին, ուր Գրիգոր վրդ. Եղիայանը հարգելի հյուրին դիմում է ողջույնի խոսքով, պատմական տեղեկություններ տալով Ս. Մեսրոպի և Ս. Սահակի մեծ գործի մասին։

Այնուհետև երկու հայրապետները իջնում են Ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանը՝ իրենց ուխտն ու աղոթքը կատարելու։

Հյուրերը Վեհափառ Հայրապետի առաջնորդությամբ հանգամանորեն ծանոթանում են եկեղեցում վերջին երկու տարիների ընթացքում կատարված որմնանկարչական (ֆրեզկո) աշխատանքների հետ, հայտնելով իրենց հիացմունքը։

ՈՂՋԵՐԹԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ

Հոկտեմբերի 5-ին, շաբաթի.— Հետ միջօրեի ժամը 3-ին, Վեհարանում, ի պատիվ ռումին օրթոդոքս եկեղեցու պետ, Ն. Սրբություն Ժուստինիան պատրիարքի և նրա շքախմբի անդամներին, տրվում է ողջերթի սեղան։

Ճաշկերույթին ներկա են Մ. Աթոռի միաբանությունը, Գեր. Հոգ. Խորհրդի անդամները, ուխտավորաբար Մ. Աթոռում գտնվող հոգևորական և աշխարհական հյուրեր։

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը և ապա ասում. «Այսօր հավաքվել ենք այս սեղանի շուրջ ողջերթ մաղթելու ռումին ուղղափառ եկեղեցու պետ, Ն. Սրբություն Ժուստինիան պատրիարքին և նրա շքախմբի անդամներին։ Մի շաբաթ առաջ բացառիկ ուրախությամբ դիմավորեցինք Նորին Սրբությանը, իսկ այժմ բաժանումը մի քիչ տխրությամբ է պղտորում մեր զգացմունքները։ Բայց այդ իրական բաժանում չէ, այլ մեր ապրումների ու գործակցության շարունակությունը, իրարմե հեռու, բայց միշտ միասին, մենք պիտի շարունակենք մեր եկեղեցաշեն և խաղաղասիրական գործունեությունը։

Մենք հին բարեկամներ ենք՝ որպես եկեղեցի և ժողովուրդ։ Բարեկամներ ենք նաև անձնապես։ Ամեն մի հանդիպում ամրապնդում է մեր՝ ի Քրիստոս եղբայրությունն ու միությունը։ Այս պահին ևս խորապես հուզված եմ, և իմ բառերը տկար են՝ արտահայտելու իմ զգացմունքները։

Սիրեցյալ եղբայր մեր, Զեզ մաղթում եմ քաջ և տևական առողջություն, մինչև ի խոր ծերություն, շինարարական Ձեր մեծ գործերը շարունակելու թափ. անսպառ եռանդ՝ եկեղեցիների գործակցության ու խաղաղության ի նպաստ Ձեր տարած աշխատանքներում։ Սուրբ գործ է խաղաղության ծառայելը։ Ձեր անձով այդ գործը նվիրականացվեց և Աստծու օգնությամբ այն փառավոր հաջողությամբ պսակվեց։ Աստված միշտ գորավիգ է լինում բոլոր նրանց, որ աշխատում են աշխարհի խաղաղության համար։

Սիրո, բարեկամության և մեր ապագա գործակցության վերաբերյալ ասված խոսքերը մենք պիտի աշխատենք կյանքի կոչել, միասնական աղոթքով ու աշխատանքով։

Այժմ, խնդրում եմ Նորին Սրբության, Մեր հայրապետական ողջույնն ու օրհնությունները տանել ռումին ուղղափառ եկեղեցու հոգևորականության, հավատացյալ ժողովրդին և բարեմաղթությունները՝ վերածնված Սոցիալիստական Ռումինիային։

Թող Աստված օրհնի մեր՝ ի Քրիստոս եղբայրությունն ու համագործակցությունը»։

Ընդունելության ժամանակ թանկագին հյուրին և շքախմբի անդամներին ողջերթի, սիրո և եղբայրության սրտառուչ խոսքեր ասացին նաև Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, Տ. Գևորգ և Տ. Գյուտ ծ. վարդապետները։

Վաստակավոր բանասեր-պատմաբան ու ծանոթ մտավորական Հ. Ճ. Սիրունին, ողջերթի սեղանին, ռումիներեն լեզվով ընթերցեց բովանդակալից ուղերձ, որի հայերեն թարգմանությունն է հետևյալը.

«Համեստ հայ մտավորական, որ ավելի քան չորս տասնամյակ իր բոլոր ճիգերը վատնեց փոխադարձաբար իրար ճանչցնելու համար հայ և ռումեն ժողովուրդները, և ամրապնդելու համար հոգեկան կապերը երկու ժողովուրդներու միջև, երջանիկ եմ ուրիշ որևէ մեկեն ավելի՝ տոնական այս օրերուն մեջ, երբ կհանդիպին երկու ժողովուրդներու ազգային եկեղեցիները՝ հանձինս իրենց գերագույն ղեկավարներուն։

Երկու ժողովուրդներու հանգիստությունը, զոր շուրջ վեց տասնամյակ առաջ ի վեր հանեց մեր ականավոր բարեկամն ու ռահվիրան Նիկոլա Յորգա, իր «Հայերն ու ռումենները,— պատմական զուգակշիռ» երկով ոչինչ ունի զարմանալի։

Արդարև, երկու ժողովուրդներու կենակցությունը ավելի քան վեց դար չէր կրնար զայն չստեղծել, և չթրծել եղբայրությունը մեր

զույգ ժողովուրդներու միջև, որոնք իրարու կապված որքան հասարակաց հեռավոր ծագումով մը, նույնքան և հասարակաց ճակատագրով մը իրենց պատմության ընթացքին, իրենց հոգեկան կապերը ավելի ամրապնդելու իրենց հավաքական տքնությամբ ռումեն երկիրներու բարգավաճմանը համար, ըլլա ռումեն հայրենիքի դժվար օրերուն, ըլլա ռումեն ժողովուրդի բաղձանքներուն իրականացման առեն։

Ձևաղված ԺԴ դարու առաջին կեսեն սկսյալ, Մոլդովայի մեջ, ուր իշխանապետության կաղմությունը հայ համայնք պիտի գտներ, ինչպես կշեշտեն նույնինքն ռումեն պատմաբանները, շրջապատված տեղացի ժողովուրդին կողմե ջերմ ասպնջականությամբ մը, հայերը գիտցան իրենց կարգին՝ թանկագին աշխատակցություն մը բերել իրենց որդեգրած հայրենիքին բարգավաճման համար, կյանքի բոլոր մարդերուն վրա։

Երկասիրության մը մեջ, զոր պատրաստելու վրա ենք այս պահուս, և որ «Հայ Եկեղեցին Արևելեան Եւրոպայի մէջ» խորագիրը պիտի կրե, փորձած ենք ներկայացնել հայության դարավոր կյանքը նույն շրջանի երեք երկիրներուն, այսինքն՝ Լեհաստանի, Մոլդովայի և Տրանսիլվանիոյ մեջ, երկիրներ, ուր ղեռաղված հայ գաղութները կապված էին հիշատակովը հասարակաց ծագումի մը, որ փառավոր և դժբախտ Անիեն կու գա, և, միևնույն առեն, իրենց բարքերով, ավանդություններով և բարբառով։

Մեր աշխատության սովոր մասը նվիրված է, սակայն, այն վեց դարերուն, զոր հայ Եկեղեցին ապրեցավ ռումեն ժողովուրդին ծոցին մեջ, պարզ այն պատճառով, որ մինչ հայերը՝ ինչպես Լեհաստանի, նույնպես և Տրանսիլվանիոյ մեջ իրենց նախնիքներու հավաքը կորսնցուցին ցավալի պարագաներու տակ, անոնք դայն պահպանեցին ռումեն երկիրներու մեջ, կատարյալ ազատությամբը, սկսյալ 1350-են, երբ Բոտոշանի մեջ կկանգնեին իրենց առաջին եկեղեցին։

Այս ազատությունը իրենց թույլ տվավ ադոթատեղիներ կանգնել, նույն դարուն երկրորդ կեսին իսկ, ուրիշ վայրերու, ինչպես՝ Ձեթաթեն Ալբայի, Յաշի, Սուչավայի մեջ ազատություն, որ նվիրագործվեցավ Ալեքսանդր Բարի իշխանին՝ 1401 հունիսի համբավավոր հրովարտակովը, որ հայ եպիսկոպոսություն մը կհաստատեր Սուչավայի մեջ՝ անոր հողևոր իրավասությանը տակ դնելով Մոլդովայի հայ եկեղեցիները։

Եվ այդ օրեն սկսյալ, ծաղկեցան հայ համայնքները ռումեն երկիրներու մեջ իրենց եկեղեցիներու շուրջ, կատարյալ հանդուրժողությամբ մը, որ հաղվադեպորեն խաթարվեցավ դարերու ընթացքին, ինչպես՝ Շթեֆան Ռառեշ իշխանին սարքած հիմար հալածանքին առեն 1551-ին, կամ անհաճո այն շրջանին, զոր հայերը ապրեցան հույն ծագումով ֆեներցի իշխաններու օրով։ Եվ, սակայն, ռումեն օրթոդոքս եկեղեցին դեմքեր տվավ իր իսկ ծոցեն, որոնք նշանավոր դարձան իրենց քրիստոնեական ոգվով, ինչպես Ռոմանի գիտնական եպիսկոպոսը Մելիքսեդեկ, որ հայ եկեղեցվո պատմական դերը պարզեց և օգնեց, որ անհետանան վերջնապես անհեթեթ առասպելները հայ եկեղեցվո շուրջ և վերստեղծվին եղբայրարար հին կապերը երկու եկեղեցիներու միջև։ Պիտի հաջորդեր ռումեն օրթոդոքս եկեղեցվո Սինոդին իմաստուն որոշումը 1876-ին, որ կնվիրագործվեր մեկ անգամ ընդ միշտ այս քրիստոնեական եղբայրությունը, ու պիտի հետևեին բարյացակամ հետաքրքրությունները ռումեն ուրիշ հոգևորականներու, որոնք խղճմտորեն պիտի լուսաբանեին հայ եկեղեցվո պատմական դերը, հեղինակավոր ուսումնասիրություններ ռումեն մեծ պատմաբան Նիկոլա Յորգային, որ ավելի ևս պիտի ընդգծեր բացառիկ արժեքը այդ դերին, մինչև որ ռումեն Սինոդի որոշումեն 90 տարի հետո, ժուստինիան պատրիարքն ինքն իսկ, Բուքրեշի Դոմնիցա Բալաշա եկեղեցվո մեջ պիտի արտասաներ անցյալ տարի իր պատմական ճառը, հանդիսավոր վկայություն մը բերելով ի նպաստ հայ եկեղեցվո անցյալին, և շաղախելով անգամ մը ևս կապերը երկու քույր եկեղեցիներու միջև։

Հանդիսավոր այս պահուն չեմ կրնար չհիշատակել թանկագին հիշատակը հայ ժողովուրդի մեծ բարեկամին՝ Նիկոլա Յորգային, որուն անունը վերջերս ոգեկոչեց հայ ժողովուրդը ևս իր եղերական մահվան 25-րդ տարելիցին առթիվ։ Յորգան եղավ, որ ինչպես հայ ժողովուրդին նվիրված իր երկասիրությանց, նույնպես իր հոդվածներուն մեջ առիթ առիթ, այնքան հեղինակորեն վերլուծեց հայ ժողովուրդին անցյալը, ի վեր հանելու համար ծառայությունները, զորս ան մատուցած էր քաղաքակրթության իր դարավոր կյանքին մեջ, չմոռնալով նաև դերը, զոր խաղացած էր հայ եկեղեցին։

Նիկոլա Յորգայի առաջին հոդն եղավ՝ ցույց տալ հայ եկեղեցվո ազգային նկարագիրը, ծանրանալով այն փաստին վրա, թե հայերը տոտջին ժողովուրդն եղեր էին, որ քրիստոնեությունը որդեգրեր էին իբրև պաշ-

տոնական կրոն Դ դարու սեմին, և ապացուցանելով, որ հայերը մեկուսացած մնալով քրիստոնեական եկեղեցին խոովող պայքարներեն, չթողուցին, որ հայ եկեղեցին կորսընծնե ազգային իր նկարագիրը։

Ըստ Յորգայի, հայերու բացակայությունը Քաղկեդոնի ժողովեն, պետք է վերադրել այն սրտմտության, զոր այդ պահուն հայերը կրգային նենգ Բյուզանդիոնի հանդեպ, որ հակառակ իր խոստումներուն, մենակ թողուցած էր հայերը քրիստոնեության թշնամիներուն դեմ։ Եվ եթե հայերը ներկա չէին այդ ժողովին մեջ, նույն այդ պահուն իրենց արյունովն էր, որ կպաշտպանեին Քրիստոսի կրոնը, մինչ Քաղկեդոնի մեջ հավաքվողները, կրսե Յորգա, զայն կփորձեին պաշտպանել բանաձևերով։

Ինչ կվերաբերի դերին, զոր հայ եկեղեցին խաղաց, ջախջախվելեն հետո հայ ժողովուրդի հույսերուն վերջին ապաստանին, որ Կիլիկյան Հայաստանն էր, ե հայերուն փախուստեն հետո իրենց հայրենի երկրեն, նախախնամական կգտներ զայն Յորգա այն պատճառով, որ հայերը, զրկված իրենց անկախութենեն, տրորված հափշտակիչներու լուծին տակ, և ցրված աշխարհի չորս անկյուններուն մեջ, պիտի չքանային վերջնապես, եթե գոյություն չունենար իրենց եկեղեցին, ինչպես նաև՝ չըլլային իրենց ավանդությունները, որոնք պահպանվեցան այդ եկեղեցվո հովանիին տակ։

Եվ հիմա, որ բոլոր քրիստոնյա եկեղեցիներու միջև եղբայրությունը հրամայական պահանջը դարձած է մեր աղրած ժամանակներուն, հայ եկեղեցին ևս կբաղձա ուրիշ որևէ եկեղեցիե ավելի անկեղծ կերպով. եղբայրության մը, որ գար չքացնելու ցավալի անհասկացողությունները եկեղեցիներու միջև, ապահովելով ամենուն ծտղկիլ իրենց ազգային ավանդությանց շրջանակին մեջ։ Հայ եկեղեցին, որ կոչված է բոլորովին բացառիկ առաքելության մը հայ ժողովուրդի ծոցին մեջ, կարիք ունի ուրիշ որևէ եկեղեցիե ավելի, պանծացնելու զանոնք, և իրականացնելու պատմական իր առաքելությունը, պահելով իր ուրույն տեղը եկեղեցիներու մեր ընտանիքին մեջ»։

Ճաշկերույթի ընթացքում Արաղ քաղաքի եպիսկոպոս Թեոկտիսա սրբազանը շնորհակալության, երախտագիտության խոսքեր է ասում Հայոց Հայրապետին, հանուն Ժուսթինիան պատրիարքի շքախմբի անդամներին, իրենց հանդեպ ցույց տրված ուշադրության, սիրալիր վերաբերմունքի համար, շեշտելով, որ հայ և ռումին եկեղեցիների երկու հայրապետների գործակցությունը սիրո մի վառ օրինակ է բոլորի համար. «Նրանք,— ասում է ռումինացի հյուր Սրբազանը,— սիրո սերմեր են ցանում, և մենք ճաշակում ենք սիրո սերմերը՝ Բուխարեստում՝ անցյալ տարի հուլիսին, և այստեղ Ս. Էջմիածնում։ Եղբայրական այդ սերը մեզ երախտապարտ է թողնում։ Մենք մեզ հետ միասին կտանենք մեր հավատացյալ ժողովրդին ավետարանական սիրո արտահայտություն եղող մեր տպավորություններն ու հուշերը Ս. Էջմիածնից, Վազգեն Ա կաթողիկոսից, հայ ժողովրդից և Հայաստանից»։

Վեհափառ Հայրապետը, շքախմբի անդամներին նվերներ հանձնելով, ասում է. «Ողջերթի այս սեղանին հաճելի պարտականությունը ունեմ մեր ռումինացի սրբազաններին և քահանա հայրերին համեստ հիշատակներ նվիրելու։ Կարևորը ինքը նվերը չէ, այլ այն զգացումը, որով այն տրվում է։ Սրբազանները թող բարի լինեն ընդունելու հայկական եկեղեցական արվեստի ոճով շինված այս ձեռաց խաչերը նրանցով օրհնելու իրենց հավատացյալներին, և ասելու, որ Հայաստանի եկեղեցու հայրապետը միաժամանակ իր օրհնությունն է ուղարկում ռումին հավատացյալներին»։

Ողջերթի սեղանին խոսք է առնում նաև Ժուսթինիան Սրբազան պատրիարքը և ասում. «Խորին շնորհակալություն մեր սիրելի եղբոր՝ Ն. Սրբություն Վազգեն Ա պատրիարք-կաթողիկոսին, ողջերթի այս սրտառուչ ընդունելության համար։

Ս. Էջմիածին ենք եկել որպես հյուրերը Ն. Սրբության։ Մեր հյուրընկալության օրերը անցան սիրո, եղբայրության մթնոլորտում։ Մեր չափով և կարողությամբ աշխատեցինք, որ խորանա մեր միջև եղած սերը։ Այստեղ Վազգեն կաթողիկոսը մեզ ներկայացրեց հայ եկեղեցու երիտասարդ հոգևորականներին, որոնք վաղվա հույսն են ձեր եկեղեցուն։ Համոզված ենք, որ այդ երիտասարդները կանեն այն, ինչ սպասվում է նրանցից։ Երիտասարդությունը մեծ ուժ է և գրավականը՝ գալիք հաջողություններու։

Մեկնում ենք Ս. Էջմիածնից լավագույն տպավորություններով։ Շնորհակալություն աղնիվ, սիրալիր հյուրընկալության համար։ Խորին և ուժեղ տպավորություն ենք ստացել պատմական վանքեր, հուշարձաններ այցելելիս։ Այդ սրբավայրերում եռում է եկեղեցական, հոգևոր կյանքը, Վազգեն Ս պատ-

ԵՐԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ՈՂՋԱԳՈՒՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ (Հոկտեմբերի 2-ին)

րիարք կաթողիկոսի սրբազան ջանքերի շնորհիվ։ Հայաստանում Նոում է նաև ժողովրդի նոր, սոցիալիստական կյանքը բոլոր բնագավառներում։ Մեծ ուրախություն ենք ստացել նաև հայ ժողովրդի օրեօր բարգավաճող կյանքի պայմաններից։ Ահա՛ թե ինչու մեր սիրո աղբյուրը առիթը գտավ է՛լ ավելի խորանալու։

Մեկնում ենք և երբ հասնենք մեր հայրենիքը, մեր ժողովրդին կպատմենք Ձեր եկեղեցուց, Ձեր հայրենիքից ստացած մեր ուրախությունները։

Շնորհակալություն, սիրելյալ եղբայր մեր, Ձեր ցույց տված չափազանց սիրալիր, ջերմ հյուրասիրության համար, հանուն մեր երկու եկեղեցիների համագործակցության, սիրո և միության, որին ձգտում ենք՝ Դո՛ւք և մե՛նք»։

Այնուհետև երկու հայրապետներին ստորագրության համար ներկայացվեց՝ ռումին պատրիարքի Ս. էջմիածին կատարած պատմական այցելությունը նվիրագործող հետևյալ հուշագրությունը՝ ռումիներեն և հայերեն լեզուներով.

«Աստուծոյ ողորմութեամբ Մենք Վազգէն Ա Պատրիարք Կաթողիկոս Ամենայն Հայոց, և Ժուստինիան Պատրիարք Ռումինական Օրթոդոքս Եկեղեցւոյ, այսօր կիրակի 2 հոկտեմբեր 1966-ին, ողջագուրուեցինք Սուրբ էջմիածնի կամարների տակ, ի վկայութիւն ի Քրիստոս սիրոյ և եղբայրութեան մեր Եկեղեցիների միջև։

«Եղիցի լոյս Տեառն Աստուծոյ ի վերայ մեր» Ամէն»։

Ողջերթի սեղանը վերջացավ խմբովին երգված «Տերունական աղոթք»-ով։

Ի ՊԱՏԻՎ ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ՝ ՀԱՄԵՐԴ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 5-ին, չորեքշաբթի.— *Երեկոյան ժամը 7-ին, Վեհարանում, ի պատիվ Մ. Աթոռի հյուր Տ. Ժուստինիան սրբազան պատրիարքի, տրվում է համերգ, որին իրենց շնորհալի մասնակցությունն էին բերել՝*

Հայֆիլհարմոնիայի երիտասարդ մաեստրոներ՝ *ա. ջութակ՝ Լևոն Մամիկոնյան, բ. ջութակ՝ Մարտին Երիցյան, ալտ՝ Արթուր Սուլթանյան, թավջութակ՝ Ֆելիքս Սիմոնյան։ Ծրագրում՝ Հենդել-Սալամանյան՝ «Պասակալիա», Կոմիտաս՝ «Ալ այլուղա», «Ձիներ ես», «Երգինքն ամպել ա», «Վաղարշապատի պար», Կոնստ. Օրբելյան՝ «Հայկական պար»։*

Երևանի սաղիոկոմիտեի երիտասարդ երգչուհի Ռուբեն Մարեսյանի ծրագրում կային հետևյալ երգերը. Մ. Եկմալյան՝ «Լոեց, ամպերը եկան, ծածկեցին երկինքը», Արամ Մերանդուլյան՝ «Լեռներ հայրենի», Արմեն Տիգրանյան՝ «Անուշ» օպերայից Սարոյի մենները (արիա) և ժողովրդական երգ՝ «Հորովել»։

Վաստակավոր արտիստուհի Վարդուհի Վարդերեսյանը *խորը հուզումով ռումիներեն լեզվով արտասանում է Ս. Ներսես Շնորհալուց «Աղօթք վասն ննջեցելոց» «թարգմ. Գր. Ավագյանի), Ս. Գր. Նարեկացուց երկու հատված «Աղերս առ Ս. Աստուածածին» և «Խոստովանութիւն» (Նարեկից, Վեհափառ Հայրապետի թարգմանությամբ)։*

ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Գուրգեն Աղամյանը *(թավջութակ) և դաշնակահարուհի* էլեոնորա Աղամյանը *հանդես են գալիս հետևյալ ծրագրով. Շուման՝ «Անուրջներ», Գ. Աղամյան՝ «Էլեգիա» (նվիրված Վեհափառ Հայրապետի գահակալության 11-րդ տարեդարձին), Կոմիտաս՝ «Էս առուն» (թավջութակի և դաշնամուրի համար, մշակումը Գ. Աղամյանի), Դումիտրեսկու՝ «Ռումինական պար», Գ. Աղամյան՝ «Սերենադ» և «Արտաշատի պար»։*

Դաշնակահարուհի էլեոնորա Աղամյանը կատարում է երկու կտոր՝ «Պար» և «Էքսպրոմտ», իր ստեղծագործությունները։

Մ. Տաճարի երգչախումբը, *իր գեղարվեստական ղեկավար Խորեն Հակոբյանի ղեկավարությամբ, հանդես է գալիս հետևյալ ծրագրով. Մագթերդ Ժուստինիան պատրիարքի (ռումիներեն լեզվով), մագթերդ հայրապետական՝ «Ամեն հայի սրտից բխած» Մ. Եկմալյան՝ «Սուրբ, սուրբ», Ջայկովսկի՝ «Տէր ողորմեա», ռումին ժողովրդական երգ՝ «Մորարում»։*

Համերգն անցնում է խանդավառ մթնոլորտում, շատ փայլուն հաջողությամբ։

Վերջում երկու հայրապետները իրենց գոհունակությունն են հայտնում համերգի բոլոր մասնակիցներին՝ շնորհավորելով յուրաքանչյուրի կատարողական բարձր արվեստը։

Տ. ԺՈՒՍՏԻՆԻԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՀՐԱՒԵՐՏ Ի ԱՌՆՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ

Հոկտեմբերի 6-ին, հինգշաբթի.— *Այսօր առավոտյան ժամը 12-ին, Տ. Ժուստինիան Սրբազան պատրիարքը, մի շաբաթ Մ. Աթոռի հյուր լինելուց հետո, լավագույն տպավորություններով և հուշերով, հրաժեշտ է առնում Վեհափառ Հայրապետից, Միաբանությունից և իր շրախմբով մեկնում Մոսկվա։*

Ժամը 11-ին, երկու Հայրապետները իրենց շքախմբերով հավաքվել են Վեհարանի ընդունելության դահլիճը։

Երկու Հայրապետները, հանդիսավոր արարողության մեջ, ստորագրում են հետևյալ հաղորդագրությունը, որպես վկայություն իրենց ողջագուրման և ի Քրիստոս սիրո իրենց եղբայրության.

«Տիրոջ ողորմությամբ Ռումինիոյ պատրիարքը՝ Նորին Սրբություն Տ. Տ. Ժուստինիանը, ընդունելով եղբայրական հրավերը Ամենայն Հայոց կաթողիկոս, Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա-ի, սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 6-ը այցելեց Հայաստան և Մ. Աթոռ Ս. Էջմիածին, ուղեկցությամբ ռումեն օրթոդոքս եկեղեցվո մի պատվիրակության, բաղկացած՝ Ն. Սրբություն Արատի եպս. Թեոդոսիսի, Ն. Սրբազնություն, պատրիարքական փոխանորդ Տ. Վիսարիոն եպիսկոպոսի և Արժանապատիվ Տ. Ի. Գաջիու, Պատրիարքական վարչական տնօրեն և Տ. Կազակու, Ն. Սրբություն պատրիարքի քարտուղար քահանա հայրերի։ Պատվիրակությանը ընկերակցում էր նաև Ռումինիոյ և Բուլղարիոյ Հայոց առաջնորդ, Ն. Սրբազնություն Տ. Տիրայր եպիսկոպոսը։ Այս աստվածահաճո առիթով Տ. Տ. Ժուստինիան պատրիարքը և Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը եղբայրական սիրով ողջագուրվեցին Իջման Ս. Սեղանի առաջ և վերանորոգեցին իրենց ուխտը՝ առավել ամրապնդելու դարավոր բարեկամության կապերը ռումեն օրթոդոքս և Հայաստանյայց առաքելական եկեղեցիների միջև քրիստոնեական միության ոգով և առավել սերտ գործակցության ցանկությամբ։ Ջերմ սիրով նրանք աղոթեցին երկու քույր եկեղեցիների անսասանության և հայ ու ռումեն ժողովուրդների բարօրության ու երջանկության համար, որոնք այսօր խաղաղ կիրքով զարգանում են իրենց հայրենիքների պայծառ արևի տակ։

ՀՍՍՀ Գերագույն սովետի Նախագահության Նախագահի տեղակալ Հրաչյա Մարգարյանը, ներկայությամբ ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր, հայ եկեղեցվո գործերի խորհրդի նախագահ պրն. Կ. Դալլաքյանի, հոկտեմբերի 4-ին ընդունեց Նորին Սրբություն Տ. Ժուստինիան պատրիարքին և Նորին Սրբություն Տ. Վազգեն Ա կաթողիկոսին, իրենց շքախմբի անդամներով։ Տեսակցությունը անցավ բարեկամական ջերմագին մթնոլորտում։

Նորին Սրբություն Ժուստինիան պատրիարքը իր շքախմբով այցելեց մի շարք պատմական վանքեր ու եկեղեցիներ՝ Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Գեղարդ, Օշական, Երևանի Ս. Սարգիս եկեղեցին, Սևանի Բերակդող հին եկեղեցիները, Գառնիի հեթանոսական տաճարի ավերակները, ինչպես նաև՝ Մատենադարանը, Սևանի հիդրոկայանը և Երևանի արհեստական մետաքսաթելի կոմբինատը։

Վեհափառ Հայրապետի մատուցած Ս. պատարագը, որը սպասարկվում էր հայ եկեղեցու սրբազան եւ եպիսկոպոսներով և հոգեշնորհ հայրերով, և որին ներկա եղավ ռումեն օրթոդոքս եկեղեցվո պատվիրակությունը, գլխավորությամբ՝ Նորին Սրբություն Ժուստինիան պատրիարքի, եկավ Նորից հաստատելու ռումեն օրթոդոքս և հայ եկեղեցիներին ընդհանուր քրիստոնեական հոգևոր տնօրարանի առկայությունը։

Անկեղծ բարեկամության և Քրիստոսի սիրո ոգով ընթացած երկու եկեղեցիների հովվապետների միջև զրույցները, հաստատեցին տեսակետների լիակատար նույնությունը մեր օրերի քրիստոնեության վերաբերվող հարցերում։ Երկու հովվապետները վերստին հայտնեցին իրենց համոզմունքը, որ բոլոր եկեղեցիների մերձեցումը, վերադարձ ճանաչումը և սերտ համագործակցությունը ներկայացնում է այսօրվա աշխարհում խաղաղության, աղաստության, ճշմարտության և փոխադարձ ըմբռնման տվնատարանական պատգամի հռչակումը, որով իսկական քրիստոնյաները չեն կտրող և չպետք է լինեն պատերազմներ հրահրողների կողքին, որոնք ավերում և ոչնչացնում են երկրներ, քաղաքակրթության բարիքներ և սպանում անմեղ մարդկանց։

Մտահոգված այն ընթացքից, որ ստացել է Վիետնամի, ինչպես նաև՝ աշխարհի ուրիշ մասերի պատերազմները, երկու հովվապետները աղոթեցին բարի Աստծուն համայն աշխարհի խաղաղության համար և իրենց եկեղեցիների անունից կոչ են անում բոլոր քրիստոնյաներին և խաղաղասեր բոլոր մարդկանց, որպեսզի միացնեն իրենց ճիգերը, որպեսզի կասեցվի ամեն պատերազմ, որպեսզի մարդկությունը վերագտնի իր խղճի անդորրը և խաղաղ կյանքի ապահովությունը։

Նորին Սրբություն Ժուստինիան պատրիարքը Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին հրավիրեց այցելելու ռումեն օրթոդոքս եկեղեցին 1968 թվականին, Նորին Սրբության գահակալության 20-րդ տարեդարձի առթիվ։ Նորին Սրբություն Վազգեն Ա

կաթողիկոսը հաճույքով ընդունեց այս հրավերը»։

Այնուհետև, երկու Հայրապետները առաջնորդվում են Մ. Տաճար՝ Իջման Ս. Սեղանի առաջ մի անդամ ևս իրենց քրիստոնեական ուխտը կնքելու և աղոթելու։

Ժամը 12-ին մերենաների շարասյունը ուղղվում է դեպի Երևանի օդանավակայան։

Ժուստինիան պատրիարքին անձամբ ճանապարհում է Հայոց Հայրապետը, շրջապատված Մ. Աթոռի միաբաններով, թեմական առաջնորդներով, Գեր. Հոդ. խորհրդի անդամներով։

Տ. Ժուստինիան պատրիարքին ճանապարհում են նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր, հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը և տեղակալ՝ Ս. Հովհաննիսյանը։

Ժամը 10-ին, ինքնաթիռը ողջերթի բարեմաղթություններով և ծափերի ներքո բարձրանում է երկնք՝ ուղղություն վերցնելով դեպի Մոսկվա։

Բարի ճանապարհ քույր եկեղեցու հոգևոր պետ, Ն. Սրբություն Ժուստինիան պատրիարքին և նրա շքախմբի անդամներին։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԻԵՆՆԱ

ՈՒՂՈՒՆՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ գոհունակությամբ ընդունելով Վիեննայի Հայոց եկեղեցու վարչության հրավերը, որոշեց կրկին անգամ այցելել Վիեննա՝ անձամբ տանելու Ավստրիայի հյուրընկալ հողի վրա ապրող իր հոգևոր զավակներին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կենարար օրհնությունը՝ համայնքի նոր եկեղեցու կառուցման երջանիկ առիթով։

Հուլիսի 20-ին, շաբաթի.— Մայր Աթոռից մեկնելուց՝ առաջ, Վեհափառ Հայրապետը առավոտյան առաջնորդվում է Մայր Տաճար՝ աղոթելու բարեհաջող ուղևորության համար։ Լուսարարապետ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, բարի ճանապարհ է մաղթում Նորին Ս. Օծության՝ հանուն միարանության։

Նորին Ս. Օծությանը բարի ճանապարհ մաղթելու համար օգանավակայան են եկել Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամները, մայրավանքի պաշտոնեությունը, Արարատյան թեմի թեմական, եկեղեցական խորհուրդների անդամները, քահանայից դասը՝ փոխանորդի ղեկավարությամբ։

Վեհափառ Հայրապետին ճանապարհում է նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Ժամը 9-ին ինքնաթիռը, բարեմաղթությունների ներքո, անջատվում է հայրենի հողից ու բարձրանում երկնք՝ ուղղություն վերցնելով դեպի Մոսկվա։

Սույն ուղևորության ժամանակ, որպես դավադանակիր, Վեհափառ Հայրապետին ուղեկցում է Հոգևոր Ճեմարանի տեսուչ հոգեշնորհ Տ. Նեբսես ծ. վրդ. Պոգոսպալյանը։

Առավոտյան ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը ժամանում է Մոսկվա։ Վնուկովոյի օդակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորում են Ռուսաստանի Հայոց առաջնորդ և Մոսկվայի հոգևոր հովիվ գերաշնորհ Տ. Պարգև եպսկ. Դևորգյանը, եկեղեցական խորհրդի անդամները և այլ անձինք։

Հայոց Հայրապետին դիմավորում է նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Մակարցևը։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

Հուլիսի 23-ին, շաբաթ.— Առավոտյան ժամը 9.30-ին Մոսկվայի Շերեմետևոյի միջազգային օդանավակայանում, Վեհափառ Հայրապետին դեպի Վիեննա ճանապարհում են գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոսը, Մոսկվայի Հայոց եկեղեցու հոգևորականությունն և եկեղեցական խորհրդի անդամները։

Հայոց Հայրապետին ճանապարհում է նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահի տեղակալ Պ. Մակարցևը։

Ինքնաթիռը երեք ժամվա ապահով և հանդիստ թռիչքից հետո, իջնում է Վիեննա։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ժամանումը Վիեննա սրտապին ողջունում

են հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Նեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, եկեղեցու վարչության անդամները, նախագահ Սարգիս Կարապետյանի ղեկավարությամբ, և ամբողջ հայ համայնքը՝ որդիական երախտագետ զգացմունքներով։

Հայոց Վեհափառ Հայրապետի ժամանումը ողջունում են նաև Վիեննայի Մխիթարյան Միաբանության անդամները՝ ի գլուխ ունենալով արբահայր գերապայծառ Սրապիոն վրդ. Հապոզյանը։

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վիեննայի «Իմպերիալ» պանդոկը։

Երեկոյան ժամը 7-ին Վարչությունը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպում է ընդունելություն, որն անցնում է ջերմ, հայրենասիրական մթնոլորտում։

Ընդունելության ժամանակ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, հանուն Վիեննայի հայ գաղութի, ողջունում է Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելությունը հետևյալ ուղերձով.

«Ամենայն Հայոց Հայրապետին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա. Շնորհազարդ և Սրբազնագույն Կաթողիկոսի ի Վիեննա բարեբաստիկ այցելության առնչությամբ, եթե ըսենք, որ «մեծ ուրախություն է մեզ համար»՝ հավանորեն տկար լինի մեր բացատրությունը. եթե ըսենք «մեծ մխիթարություն է», թերևս աղոտ ըլլա մեր միտքը. եթե ըսենք «մեծ պատիվ է»՝ գուցե սովորական նկատվի մեր խոսքը։ Այլ եթե հայտնենք, որ Նորին Սրբության բարձր ներկայությունը մեծ ուրախություն, մխիթարություն և պատիվ կբերե վիեննահայ գաղութիս, թերևս մոտավոր կերպով դրսևորած կըլլանք մեր հոգեկան ապրումները։

Երկրորդ անգամն է, որ Ամենայն Հայոց մեծ Հովվապետը այցի կու գա իր մեկ փոքրիկ հոտին՝ Ավստրիո հայության։ Ինչպես նախորդ՝ 1961 թ. ամառը, վստահորեն այս առթիվ ևս մեծ Հովվապետը այնպիսի նոր խանդավառություն, հայրենասիրություն, եկեղեցասիրություն և դրական տրամադրություն պիտի ներշնչե իր պանդուխտ դավակաց, որ մենք երկար ատեն մեր սրտերուն մեջ պիտի կրենք ջերմությունը այդ կենսաբեր շունչին։

Հայ եկեղեցվո պատմության իմ ձեռնարկին մեջ (Բեյրութ, 1957 թ.) 1441 թվականին Մայր Աթոռո ի Սուրբ Էջմիածին փոխադրության հետևող ժամանակները կոչած եմ «Վերակենդանության շրջան», և Վազգեն Վեհափառ կաթողիկոսի համար արձանագրած, թե՝ նա պիտի հանդիսանա նոր վերածնունդի մը կերտիչը։ Ուրախալի է հաստատելն՝ որ այդ նախատեսությունը իրականացման ճամփուն վրա է՝ ի փառս և ի պայծառություն հայ եկեղեցվո ու ժողովրդյան։ Արդարև, շուրջ տասը տարիներու կարճ ընթացքին, Վեհափառ Տերը կազմակերպեց Հոգևոր Ճեմարանը, նորոգեց Մայրավանքն ու այլ եկեղեցիներ, վերակառույց և շքեղորեն զարդարեց Վեհարանը, հաստատեց տպարան, բովանդակալից դաբձուց «Էջմիածին» ամսագիրը, արտասահմանի հայության սիրուն վերակալեց Սուրբ Էջմիածնի և հայրենիքի հետ, և հայ եկեղեցվո վարկը առավել ևս բարձրացուց սատը շրջանակներու մեջ։ Սրտագին ու ջերմորեն կշնորհավորենք Նորին Սրբության հաջողությունները, և մեր բաժակները բարձրացնելով՝ իրեն կմաղթենք արևշատություն և գործոց բեղմնավորություն»։

Վիեննահայ եկեղեցական վարչության նախագահ Ս. Կարապետյանը Վեհափառ Հայրապետի ներկայությունը ողջունում է հետևյալ ուղերձով.

«Վեհափառ Տե՛ր, անհուն և անսահման է մեր գաղութին մեջ տիրող հրճվանքը շարաթե մը ի վեր, երբ ան իմացավ, թե Ձերդ Ս. Օծությունը ընդունած է գաղութիս հրավերը, որով երկրորդ անգամ ըլլալով բախտավոր առիթը կու տաք մեզի Ձեր Հայրապետական օրհնություններուն արժանանալու։

Վեհափառ Տե՛ր, թեև հոգեպես շատ ընկրճված եմ, բայց բախտավոր կրգամ ինքդինքս, բարձր պաշտոնը ստանձնելու, մեր եկեղեցական վարչության և բոլոր գաղութին անունով Ձեզի բարի գալուստ մաղթելու և խոր երախտագիտությամբ մեր շնորհակալությունները հայտնելու Ձեր շնորհաբեր այցելության համար։

Գեղեցիկ դուզադիպություն մրն է. հինգ տարիներ առաջ, ճիշտ հուլիսի այս օրերուն, և այս հարկին տակ, երբ մեզ տխրեցնող հրաժեշտի և բաժանումի ժամերը կմոտենային, այսօր նույն հարկին տակ հավաքվեցանք, Ն. Ս. Օծությանդ բարի գալուստը ողջունելու, ավելի ևս երջանիկ, հոգվով և սրտով ավելի պնդորեն կապված Ս. Էջմիածնա Մայր Աթոռին և մեր հարգանքը բերելու անոր արժանավոր գահակալին։

Այս հինգ տարիները անգործ և անտարբեր չանցան մեր գաղութային կյանքին մեջ։

Մեր ամենուն սիրտերուն մեջ միշտ թարմ և վառ մնացին Ձեր առաջին շնորհաբեր այցելության անմոռանալի օրերուն տպավորությունները։ Ձեր հոգեշունչ խոսքերը, Ձեր խրատները պատգամներու նման տպավորվեցան մեր միտքերուն մեջ։ Դեռ մեր ականջներուն մեջն են Նորին Վեհափառությանդ այն իմաստալից խոսքերը՝ եկեղեցիի մը կարիքին նկատմամբ։ Երբ Դուք մեր համեստ

մատուռը տեսաք, թելադրեցիք և կրկնապես շնչտեցիք հայկական եկեղեցիի մը կարևորությունը Վիեննայի համար։ Եկեղեցիի մը կառուցումը, անկասկած, շատ դժվար դործ է, բայց անկարելի չէ։

Այս կարգի ծրագիրներ հաճախ խոսակցության առարկա եղած էին մեր գաղութին մեջ, բայց մնացած էին միշտ երազներ։

Ստկայն, Վեհափառ Տե՛ր, այն հույսը, այն ոդեորությունը, որ Դուք ներարծարծեցիք մեր մեջ, բարեբեր հողի վրա ինկան։

Մենք հավաքվեցանք և լուրջ աշխատանք կատարեցինք այս նվիրական գործին համար։ Հուսահատության վայրկյաններ ալ շատ անգամներ ունեցանք, բայց չդադրեցանք երբեք դիմադրելու ամենուն, հետեելով հավատարմորեն Ձեր թելադրություններուն։ Համոզված էինք, թե ուր համերաշխություն, միություն և լուրջ աշխատանք կա, հոն պետք է ժպտի նաև բախտը։ Եվ ան ժպտեցավ մեզի մասնավորապես և ճիշտ ժամանակին։

1964 28 հունիս կիրակին մեր գաղութին պատմության ամենանշանակալի օրը կըլլար, որովհետև այդ օրը հանդիսավոր արարողությամբ հիմնաքարը կդետեղվեր Ս. Հռիփսիմե եկեղեցվո։

Արդեն երկու ամիսեն ի վեր սկսած են աշխատանքները եկեղեցիի շինության, և կհուսանք Ն. Ս. Օծությանդ հովանիին տակ, մինչև տարվույն վերջը կանգուն տեսնել Ս. Հռիփսիմե եկեղեցին իր հայկական կաթողիկեով։

Կողբանք սրտանց մեր վեհանձն բարերարուհի տիկին Դրիգի մահը։ Կողբանք նաև մեր բարերարներեն Մկրտիչ Քսկանյանի մահը։

Իբրև լավ հայեր միշտ կապված պիտի մնանք Մ. Աթոռ Ս. Էջմիածնին, անոր ադժանավոր գահակալին և մեր Մայր Հայրենիքին, Տիրոջմե հայցելով ձեզ համար՝ առողջություն և արեշատություն, պայծառություն հայ եկեղեցվո համար և բարօրություն Հայրենյաց համար»։

Ընդունելությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և աղոթքով։

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՅՈՑ Ս ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՄԱՏՐԱՆ ՄԵՋ

Հուլիսի 24-ին, կիրակի.— Առավոտյան ժամը 10-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վիեննայի հայոց Ս. Աստվածածին եկեղեցին, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով։ Եկեղեցում հավաքված Վիեննայի հայկական ողջ համայնքը, սրտագին ուրախությամբ է ընդունում իր սիրելի հովվապետին։ Այսօր նրանց համար ուխտի, հոգևոր մխիթարության, աղոթքի և աղգային հպարտության օր է։ Ս. պատարագին ներկա են նաև Հ. Կղեմես և Հ. Գաբրիել Մխիթարյան հայրերը։

Օրվա հանդիսավոր Ս. պատարագը մատուցում է հոգ. Տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը։ «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը և իր այցելության շնորհաբեր առթիվ, հայրական ողջույն և հայրապետական օրհնություն է տալիս թվով փոքր, բայց սրտով ու հավատքով մեծ՝ Վիեննայի հայ համայնքին։ Հայոց հայրապետը իր քարոզ-պատգամով կոչ է անում՝ համախմբվել մեր Ս. եկեղեցու շուրջ, Մայր Աթոռի շուրջ, ապրել հայության ձգտումներով, երազներով, որպես եկեղեցի և ժողովուրդ։

Նորին Ս. Օծությունը իր քարոզի վերջում թելադրում է՝ միշտ այսպես համախմբված լինել հոգևոր հովվի և վարչության շուրջ, որոնք համայնքի մեջ օգտակար, շինարար աշխատանք են տանում։ Վեհափառ Հայրապետը հատկապես այս առթիվ անդրադառնում է Վիեննայում հայկական նոր եկեղեցու շինության ձեռնարկին, իր դնահատանքի և քաջալերանքի ջերմ խոսքն ու բարեմաղթություններն ուղղելով Վիեննայի հայոց հոգևոր հովիվ Տ. Մեսրոպ վրդ. Գբիզորյանին, եկեղեցու վարչության ատենապետ Սարդիս Կարապետյանին, որն վարչության իր գործակից ընկերներով ձեռք ձեռքի տված, բազում դժվարություններ հաղթահարած, նվիրումով և հավատքով, աշխատում են կյանքի վերածել Վիեննայի հայկական համայնքը՝ եկեղեցական մի նոր շենքով օժտելու աստվածահաճո գործը։

Այնուհետև՝ Վեհափառ Հայրապետը, ի նշան օրհնության, հոգ. Տ. Մեսրոպ ծ. վարդապետին է հանձնում Ս. Էջմիածնից բերված և հայկական ոճով քանդակված մի խաչքար, այն հետագայում նորակառույց եկեղեցում դետեղելու համար։

Ս. պատարագի ավարտին ժողովուրդը մոտենում է և համբուրում Ս. Աջը Հայոց Հայրապետին, որն աջահամբույրի ընթացքում Ս. Էջմիածնից բերված խաչիկներ է բաժանում բոլոր ներկաներին, որոնք երկյուղած ջերմեռանդությամբ ու ծնրադիր՝ ստանում են դրանք մասունքի նման։

Կեսօրին, Վեհափառ Հայրապետի պատվին, գաղութի անունից, ճաշկերույթ է տրվում Շտրաուսի անվան այգու ճաշարանում։

Երեկոյան ժամը 9-ին Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպվում է ընդունելություն, որն անցնում է հայկական, սրտագին մթնոլորտում։ Ընդունելության

ներկա է լինում նաև Վիեննայի Մխիթարյան Միաբանության ընդհանուր արքեպիսկոպոս Հ. Սրապիոն վրդ. Հապոդյանը, միաբանության չորս վարդապետներով։

Ընդունելության ժամանակ խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և բարի լուրեր է հաղորդում ներկաներին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր, եկեղեցական, շինարարական գործունեության և Մայր Հայրենիքի մշակութային կյանքի մասին, խորապես խանդավառելով բոլորին՝ հայրենասիրական իրավ զգացմունքներով և ազգային հպարտությամբ։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՒՄ Է ՎԻԵՆՆԱՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻՆ

Հուլիսի 25-ին, Երկուշաբթի.— Վեհափառ Հայրապետը այսօր առավոտյան ժամերին, հյուրանոցի իր հարկարաժնում, բարեհաճում է ընդունել այլ երկրներից ժամանած մի շարք ազգայինների այցելությունը, որոնք լսել էին Նրա Վիեննայում գտնվելու մասին և եկել էին ողջունելու Հայոց Հայրապետին և իրենց որդիական հարգանքը մատուցելու։

Երեկոյան, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, ժամը 8-ին, դումարվում է Վիեննայի հայոց եկեղեցական վարչության նիստը, ուր քննության են առնվում Վիեննայում հայկական նոր եկեղեցու շինության հետ կապված հարցեր։

Խորհրդակցությանը մասնակցում են Վիեննահայ եկեղեցական վարչության անդամները՝

Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյան—հոգևոր հովիվ, Սարգիս Կարապետյան—ատենապետ, Նուբար Վարեյան—փոխ-ատենապետ, Հակոբ Թարյան—ա. ատենադպիր, Լևոն Սահակյան—բ. ատենադպիր, Սիմոն Արման—դանձապահ, Արամ Ութուջյան—դանձապահ, Բյուզանդ Ասլանյան—խորհրդական, Արշավիր Գավալճյան—խորհրդական, Դր. Երվանդ Զադեյան—հաշվեքննիչ, Դր. Մանֆրեդ Վարդյան—հաշվեքննիչ։

Ժողովում տեղի է ունենում մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցում են բոլոր ժողովականները։ Այնուհետև՝ նոր եկեղեցու շինության հետ կապված հարցերը լուծվում են բարեհաջող կերպով, խանդավառ մթնոլորտում։

Ժողովում խոսք է առնում նաև Վեհափառ Հայրապետը, և ընդառաջելով նախապես իրեն եղած խնդրանքին, այս առթիվ հանդիսավոր կերպով հաստատում է Վիեննայի նոր եկեղեցու շինության համար 14000 անգլիական ֆունդ ստերլինգ տրամադրելու իր խոստումը։ Լոնդոնում վախճանված Մ. Աթոռի բարերարուհի, հանգուցյալ տիկին Ռոզ Հոլիսիմն Դրիզի կտակից։ Այդ կտակը, ինչպես հայտնի է, ամբողջապես կտակվել է Ս. Էջմիածնի օգտին, Մ. Տաճարի բարեկարգության համար։

Վիեննահայ եկեղեցական վարչությունը անսահման երախտագիտությամբ է արձանագրում հայրապետական այս պարգևը։ Նիստը փակվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով։

Հուլիսի 26-ին, Երեքշաբթի.—Առավոտյան ժամերին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել մի շարք այցելություններ՝ Վիեննայի հայոց առաջնորդարանում։

Կեսօրին, Վիեննահայ եկեղեցական վարչության նախագահ Սարգիս Կարապետյանը, Ստամբուլից հյուրաբար ժամանած տեր և տիկին Պահարյանները՝ նրա հարազատները՝ Վիեննայի նորակառույց Դոնաուտուրն աշտարակի ճաշասրահում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, ընդունելություն են կազմակերպում, որն անցնում է ընտանեկան, մտերմիկ մթնոլորտում։

Ճաշի ժամանակ Վեհափառ Հայրապետը հուզումով է ոգեկոչում Սարգիս Կարապետյանի նորոգ հանգուցյալ կողակից տիկին Աննա Կարապետյանի բարի հիշատակը և «Հոգւոց» արտասանելով մխիթարում՝ հանգուցյալի հարազատներին։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՅՐԵՐԻ ՎԱՆՔՈՒՄ

Հուլիսի 26-ին, Երեքշաբթի.— Երեկոյան ժամը 4-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելում է Վիեննայի Մխիթարյան հայրերի վանքը։

Հայոց Հայրապետին վանքի մեծ դարբասի առաջ ջերմորեն դիմավորում է աբբահայր գերապայծառ Սրապ. Հապոդյանը շրջապատված միաբանության անդամներով։ Վանքի եկեղեցում Վեհափառ Հայրապետը աղոթելուց հետո, առաջնորդվում է աբբայարան, ուր Նրան ողջունում է սրտագին Մխիթարյան հայրերի հարգարժան Մեծավորը։

Հանդիպմանը ներկա էին նաև Հռոմից հյուրաբար եկած Լևոնյան վարժարանի տեսուչ Հ. Տ. Ներսես ծ. վրդ. Սեթյանը՝ մի խումբ աշակերտներով, որոնք ի պատիվ Հայոց Հայրապետի հայկական երգեր են երգում, մեծ հուզում պատճառելով Նորին Ս. Օծության։

Ընդհանուր խանդավառության և ջերմ մթնոլորտում խոսք է առնում Հայոց Հայրապետը՝ իր գոհունակությունն ու շնորհակալությունն հայտնելով սրտագին ընդունելության համար շեշտելով, որ այս երկրորդ անգամն է, որ քաղցր ապրումներով մուտք

Հայոց Վեհափառ Հայրապետը և նախագահ Ֆրանց Լոնեսս, (Վիեննա, հուլիս 27)

է գործում աղոթքի և աշխատանքի այս հարկը, ապա իր հայրապետական խոսքը ուղղում է հատկապես Մխիթարյան հայրերի երիտասարդ սերնդին, և Լևոնյան վարժարանի ուսանողության, հորդորելով, որ նրանք բոլորը, իրենց կրոնական ուխտի վրա հաստատ ու ամուր մնան, և նվիրվեն ամենայն լավատեսությամբ, հոգևոր առաքելության, համոզված լինելով, որ մեր օրերին և հետագային մարդիկ և հավաքականություններ միշտ ծարավը պիտի ունենան Աստուծո խոսքին, և իրենց հոգու մխիթարությունը պիտի հայցեն Քրիստոսի եկեղեցուց։ Այնուհետև Վեհափառ Հայրապետը ավելացնում է, թե հայ հոգևոր մշակը, ո՛ւր էլ որ լինի, ի՛նչ պայմաններում էլ գործի, իր նվիրական առաքելությունը պետք է համարի նաև անաղարտ և կենդանի պահպանումը հայ ժողովրդի հայկական հոգուն ու նկարագրին մեր մեծասքանչ հայոց լեզվին, հայ արժեքների և հայրենիքի վերածննդյան կենարար շնչին, սփյուռքի հայության բոլոր տարածքների վրա։

Հայոց Հայրապետի կրոնաբույր և հայրենաշունչ խոսքը խորապես տպավորվում են ուսանողության սրտի և մտքի վրա։

Հանդիսության վերջավորության՝ Վեհափառ Հայրապետը աջահամբույրով խաչիկներ է բաժանում ուսանողներին և նկարվում Մխիթարյան հայրերի, դասախոսական կազմի և ներկա ուսանողության հետ։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՑ ԵՈՆԱՍԻՆ

Հուլիսի 27-ին, շաբաթի.— *Առավոտյան ժամը 10-ին* Վեհափառ Հայրապետը Վիեննայում, նախագահական պալատում, պաշտոնական այցելություն է տալիս Ավստրիայի հանրապետության նախագահ Ֆրանց Եոնասին։

Նորին Ս. Օծությանը ընկերակցում են Վիեննայի հայոց հոգևոր հովիվ հոգ. Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, հոգ. Տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը, Վիեննահայ եկեղեցական վարչության նախագահ Ս. Կարապետյանը և Էդուարդ Փափազյանը՝ որպես թարգման։

Հայոց Հայրապետի և հանրապետության նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ սրտագին մթնոլորտում։ Փոխանակվում են ողջույնի խոսքեր։ Ավստրիայի հանրապետության մեծարգո նախագահը զրույցի ընթացքում գնահատանքի խոսքեր է ուղղում հայ եկեղեցու և ավստրիահայ գաղութի մասին, գովելով հայ ժողովրդի ձեռներեցու-

թյան ոգին, աշխատասիրությունը, ավստրիական հայրենիքի հանդեպ նրանց նվիրվածությունը։

Վեհափառ Հայրապետը իր պատասխան ճառում դովքն է անում ավստրիական սքանչելի ու գեղածիծաղ հայրենիքին, նրա պատմական հուշարձաններին ու տաղանդավոր ժողովրդին, որոնք մարդկությանը տվել են մեծ արվեստագետներ՝ հատկապես երաժշտության ասպարեզում, որոնք մնայուն արժեքներ են հանդիսանում համայն մարդկության համար։

Հայոց Հայրապետը շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, իր խոսքն ավարտում է սրտագին բարեմաղթությամբ և օրհնությամբ, որպեսզի ավստրիացի ազնիվ ժողովուրդն ու նրա հայրենիքը ապրեն միշտ խաղաղության ու բարօրության մեջ։

Հրաժեշտի պահին Վեհափառ Հայրապետը, որպես հուշ իր այցելության, մեծարգո նախագահին նվիրում է Էջմիածնի Մայր Տաճարի արծաթյա ափսե-նկարը, հայկական ոսկերչական արվեստի քանդակներով զարդարված։

Հուլիսի 27-ին, չորեքշաբթի.— Առավոտյան ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ հոգ. Տ. Ներսես ծ. վրդ. Պողատյանի, այցելում է Վիեննայում սովետական մեծահարգ դեսպան Ի. Բուլգանինին։

Վեհափառ Հայրապետի և Սովետական Միության բարձրապատիվ դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ ու սրտագին զրույց։

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ՝ ՍԻ ԽՈՒՄԲ ԾԱՆՈԹ ԱԶԳԱՅԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Վեհափառ Հայրապետը իր առաքելությունը Վիեննայում ավարտած լինելով, պատրաստվում էր մեկնել մի քանի օրից, դեպի Չեխոսլովակիա՝ Կարլովի Վարի, առողջարանում հանգստանալու և որոշ բուժում ընդունելու համար։

Վեհափառ Հայրապետի Վիեննա գտնված օրերին, հետզհետե այստեղ էին ժամանում՝ Եվրոպայում իրենց արձակուրդը անցկացնող բազմաթիվ ազգայիններ, ինչպիսիք էին՝ Հյուսիսային Ամերիկայից Հ. Բ. Ը. Միության նախագահ մեծահարգ Ալեքս Մանուկյանը իր հարգելի տիկնոջ հետ, Կալիֆոռնիայից, Լոս-Անջելոսի Հայոց եկեղեցու վարչության ատենապետ Ժան Քյուրքչյանը, Լոնդոնից՝ Ս. Սարգիս եկեղեցու խնամակալության և Աբգարյան ֆոնդի ատենապետ Սարգիս Քյուրքչյանը իր հարգելի տիկնոջ հետ, նույնպես Լոնդոնից՝ Ազգային եկեղեցական վարչության անդամ Ջ. Մկրյանը՝ Լիբանանից՝ հասարակական գործիչ տիար Բարունակ Թովմասյանը իր հարգելի տիկնոջ հետ, նույնպես Լիբանանից՝ ազգային բարեբար տիար Սրվանդ Դեմիրճյանը, և այլ ազգայիններ, որոնք եկել էին ողջունելու Հայոց Հայրապետին և խորհրդակցելու նրա հետ՝ հայ եկեղեցին ներկայիս հուզող մի շարք հրատապ հարցերի շուրջ։

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը հարմար գտավ իր մոտ հրավիրելու Երուսաղեմի Հայոց պատրիարք Ամենապատիվ Տ. Եղիշե Արքեպիսկոպոս Պատրիարքին, որն սիրով ընդունելով հայրապետական հրավերը, փութաց Ավստրիա ժամանել հուլիսի 29-ին, ուրբաթ օր՝ ընկերակցությամբ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ աբեղ. Տ. Շահե Եպս. Անանյանի։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԶԱԼՑԲՈՒՐԳՈՒՄ

Վիեննայի Հայոց Եկեղեցու Վարչությունը ծրագրել էր Վեհափառ Հայրապետին մի քանի օրով հյուրասիրել Զալցբուրգ քաղաքում։

Նորին Ս. Օծությունը գոհունակությամբ է ընդունում այդ հրավերը, և հուլիսի 28-ին, հինգշաբթի, իր շքախմբով և վերոհիշյալ ազգայինների ընկերակցությամբ, մեկնում է Ավստրիայի այդ գեղեցիկ քաղաքը, մի քանի օր հանգստանալու համար։

Վեհափառ Հայրապետը հյուրասիրվում է Հոթել Վինկլերում։

Հուլիսի 29-ին, ուրբաթ.— ժամանում է նաև Տ. Եղիշե պատրիարքը՝ Շահե եպիսկոպոսի հետ։

Զալցբուրգում գտնված օրերին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով ներկա եղավ «Մոցարտեում» դահլիճում կամերային երաժշտության համերգին և «Ֆեստշպիլհաուզ» դահլիճում Բեռլինի սիմֆոնիկ նվագախմբի մեծ համերգին։

Օգոստոսի 3-ին, չորեքշաբթի.—Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով, պաշտոնական այցելություն է տալիս Զալցբուրգի քաղաքապետ դոկտ. Լեխներին։ Ընդունելության ներկա են լինում նաև տեգի համալսարանի ռեկտորը, հողնորականության բարձրաստիճան ներկայացուցիչներ, աստվածաբանության դասախոսներ։ Սույն այցելությանը Վեհափառ Հայրապետին ուղեկցում են նաև Ալեքս Մանուկյանը և Զալցբուրգ բնակվող Գ. Գյուղենյանը։

Նույն օրը, հետ միջօրեի, ժամը 2-ին, Վեհափառ Հայրապետը մասնավոր հրավերով այցելում է Զալցբուրգի շրջակայքում, Շարֆլինգում բնակվող Դրիգոր Գյուղենյանի վիլլան՝ օրհնելով նրա սեղանի աղն ու հացը։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՐԱԺԵՇՏ Է ԱՌՆՈՒՄ ՎԻԵՆՆԱՅԻՑ

Օգոստոսի 3-ին, շաբաթ.—*Վեհափառ Հայրապետը Զալցբուրգից վերադառնում է Վիեննա՝ իր շքախմբի հետ։*

Մինչև Վիեննայից իր մեկնումը, Ն. Ս. Օծությունը զբաղվում է գաղութի ազգային-եկեղեցական գործերով և բարեհաճում է ընդունել մի շարք այցելություններ։ Այդ թվում Ներսես Զորապի, որն իր անձնական ինքնաշարժը դրել էր Վեհափառ Հայրապետի տրամադրության տակ և Վիեննայի հայ համայնքի նախկին ատենապետ Արմենակ Վարդյանի իր ազնիվ տիկնոջ հետ։

Օգոստոսի 7-ին, կիրակի.— *Վեհափառ Հայրապետը Վիեննայից մեկնում է Պրագա՝ ընկերակցությամբ Տ. Ներսես ծ. վարդապետի և վիեննահայ Եկեղեցական վարչության ատենապետ Ս. Կարապետյանի։*

Հայոց Հայրապետին Վիեննայի երկաթուղային կայարանում ճանապարհում են Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը և Եկեղեցական վարչության անդամներ, ծափերի ու բարեմաղթությունների ներքո։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՊՐԱԳԱՅՈՒՄ

Օգոստոսի 7-ին, կիրակի.— *Առավոտյան ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը ժամանում է Պրագա։*

Հայոց Հայրապետին դիմավորում են Չեխոսլովակիայի կրոնական գործերի ներկայացուցիչը, օրթոդոքս եկեղեցու հոգևորականներ, և Պրագայում բնակվող կինոռեժիսյոր Հայկ Մարտիրոսյանը։

Օգոստոսի 8-ին, երկուշաբթի.— *Մշակութային մինիստրության կրոնական գործերի նախագահ դոկտ. Հրուզան, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպում է ընդունելություն, բարեկամական ջերմ մթնոլորտում, որին մասնակցում են դոկտ. Պենեշը, դոկտ. Նովակը, Պրագայում սովետական դեսպանատան առաջին քարտուղար Իվաշչենկոն, տիկին Գրանա Լիբուշեն և այլ պաշտոնական անձինք։*

Վեհափառ Հայրապետը և դոկտ. Հրուզան ճառեր են փոխանակում։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՐԼՈՎԻ ՎԱՐԻ ԱՌՈՂՋԱՐԱՆՈՒՄ

Օգոստոսի 11-ին, հինգշաբթի.— *Վեհափառ Հայրապետը ժամանում է Կարլովի Վարի՝ որոշ ժամանակով հանգստանալու և բուժումներ ընդունելու համար։*

Ն. Ս. Օծությունը Կարլովի Վարիում մնում է մինչև սեպտեմբերի 3-ը։

Նույն այդ ժամանակաշրջանում Կարլովի Վարիում հանգստանում էին տեր և տիկին Արամ Խաչատրյանները, տեր և տիկին Բարունակ Թովմասյանները, տեր և տիկին Ս. Քյուրքչյանները, Ս. Կարապետյանը և ուրիշներ։ Վեհափառ Հայրապետի հրավերով Կարլովի Վարի է ժամանում նաև Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գեր. Տ. Սեբովբե արքեպիսկոպոս Մանուկյանը՝ բուժման համար։

Սեպտեմբերի 3-ին, շաբաթ.— *Վեհափառ Հայրապետը մեկնում է Կարլովի Վարիից Պրագա։ Նույն օրը, միջօրեին, Չեխոսլովակիո օրթոդոքս եկեղեցու մետրոպոլիտ, Նորին Սրբազնություն Դորոթեյը ի պատիվ Վեհափառ Հայրապետի կազմակերպում է ճաշկերույթ, որին մասնակցում են նաև կրոնական գործերի նախագահի տեղակալ՝ Կտրել Շնեյդերը և այլ բարձրաստիճան հոգևորականներ։*

Վեհափառ Հայրապետը, Դորոթեյ մետրոպոլիտը և Կարել Շնեյդերը ճառեր են փոխանակում։

Սեպտեմբերի 4-ին, կիրակի.— *Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Տ. Ներսես ծ. վարդապետի, ժամանում է Մոսկվա։ Շերեմետևոյի միջազգային օդակայանում Հայոց Հայրապետին դիմավորում են՝ Տ. Պարգև եպիսկոպոսը և ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահի տեղակալ Պ. Մտկաբցևը։*

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սեպտեմբերի 7-ին, հինգշաբթի.— *Երեկոյան ժամը 6-ին, շուրջ հիսնօրյա բացակայությունից հետո, Մ. Աթոռ է վերադառնում Վեհափառ Հայրապետը։*

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մ. Տաճար, ուր լուսարարապետ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, հանուն միարանության, բարի գալուստ է մաղթում Ն. Ս. Օծության։

Վեհափառ Հայրապետը Իր պատասխան խոսքում ողջունում է բոլորին և համառոտակի խոսում Վիեննա կատարած Իր այցելության մասին և, օրհնելով միարանության անդամներին, առաջնորդվում Վեհարան։

Բարի գալուստ մեր թանկագին Վեհափառ Հայրապետին։

ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Այս տարի լրացավ հայերեն Աստվածաշնչի Ոսկանյան առաջին տպագրության երեքհարյուրամյակը։

Պատմական ու հիշարժան այդ տարեթիվը, որպես հայ մշակույթի տոն, նշելու համար, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի *մարտ 11 թվակիր սրբատառ կոնդակը հրահանգում էր հոկտեմբերի 8-ին, շաբաթ օր, Սրբոց Թարգմանչաց տոնախմբությունը և «Հայ մշակույթի օր»-վա հանդիսություններ նվիրել Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրության երեքհարյուրամյակին։*

Վեհափառ Հայրապետի կոնդակի հրահանգով, բոլոր հայ եկեղեցիներում կատարվեցին հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոններ, ի հիշատակ Հոսկոր Դ. Ջուղայեցի հայրապետի, որի հրամանով կատարվում էր Ամստերդամի Ս. Էջմիածնի անվան տպարանում Աստվածաշնչի տպագրությունը, և Ոսկան վրդ. Երևանցու, որի անմիջական հսկողությամբ և աշխատանքով գլուխ էր բերվում այդ մեծ գործը։

Հայ մամուլը ևս ջերմորեն անդրադարձավ համազգային այդ հոբելյանի կատարմանը։

Մ. Աթոռում հոկտեմբեր 8 և հոկտեմբեր 9 օրերը նվիրվել էին ԺԷ դարում մեր մշակութային կյանքում մեծագույն իրադարձություն հանդիսացող Աստվածաշնչի տպագրության երեքհարյուրամյակի հանդիսությանը։

Հոկտեմբերի 8-ին, շաբաթ.— *«Տօն Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց». Մ. Տաճարում Ս. պատարագ է մատուցվում։ Ս. Մեսրոպի. Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթի, Նարեկացու, Շնորհալու անմահ անունների հետ հիշվում է նաև Մ. Աթոռի համեստ միաբան, «նուաստ յամենից ե. յետնեալն անձամբ եւ գիտութեամբ»* Ոսկան վրդ. Երևանցին։ *«Աղաչեմ զձեզ, եղբարք, ճանաչել զվարդապետս ձեր» (Ա. Թեսալ Ե. 12) հրահանգում էր Պողոս Առաքյալ։*

Հոկտեմբերի 9-ին, կիրակի.— *Հայ մշակույթի օրվա տոնի առթիվ Մ. Տաճարում մատուցվում է հանդիսավոր Ս. պատարագ։*

Ս. պատարագին ներկա է Վեհափառ Հայրապետը, ներկա են ուխտավորներ, մտավորականներ և հավատացյալների հոծ բազմություն։

Ժամ Ս. պատարագի, «Հայր մեր»-ից առաջ, Մ. Տաճարի ավագ սեղանի բեմից Տ. Արսեն վրդ. Բերբերյանը ընթերցում է ի լուր ժողովրդյան, Ամենայն Հայոց Հայրապետի 1966 թվականի մարտ 11 թվակիր կոնդակը «Նոյն միասնութեամբ, այլ եւ ցնծութեամբ ու աղնիւ հպարտութեամբ» նշելու, փառավորելու «հայ ժողովրդի հոգեւոր նուաճումներին մին հանդիսացող Ս. Գրքի առաջին տպագրությունը»։

Հավարտ Ս. պատարագի, Մ. Տաճարում Հայոց Հայրապետի հանդիսադրությամբ կատարում է հանգստյան պաշտոն, ի հիշատակ Հակոբ Դ. Ջուղայեցու և Ոսկան Երևանցու լուսաբնակ հոգիներին, և հայ մշակույթի բոլոր հին ու նոր վաստակավորների հիշատակին։

Ժամը 4-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետը հայ մշակույթի օրվա առթիվ, բարեհաճում է իրեն սեղանակից դարձնել Մ. Աթոռի միաբանությանը, մի շարք մտավորականների և ուիտավորաբար Մ. Աթոռում գտնվող հոգևորական և աշխարհական հյուրերին, որոնց թվում՝ տեր և տիկին Կ. Ա. Ալթունյաններին, Հր. Նասիպյանին։

Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետը իր բարձր ուշադրության արժանացնելով Մ. Աթոռիս բարերարներ՝ բեյրութաբնակ պ. Կարապետ Ալթունյանի, պ. Երվանդ Դեմիրչյանի և Մոնակոյից պ. Մուշեղ Ճիհերճյանի եկեղեցանվեր, հանրօգուտ ծառայությունները, նրանց շնորհում է Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշան։ Պ. Կարապետ Ալթունյանը, որը ներկա է, երախտագետ զգացմունքներով և աջահամբույրով ստանում է Վեհափառ Հայրապետից բարձր պարգևը՝ ներկաների ջերմ ծափերի և շնորհավորության ներքո։

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Երեկոյան ժամը 7-ին, Վեհարանի ընդունելությանց դահլիճում, տեղի է ունենում հանդիսավոր նիստ, նվիրված հայերեն առաջին Աստվածաշնչի տպագրության երեքհարյուրամյակին։

Հանդիսության նախագահում է Վեհափառ Հայրապետը:

Նախագահության սեղանի շուրջ տեղ են գրավել ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր, հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը, Տ. Կումիտաս, Տ. Տիրայր *եպիսկոպոսները,* Տ. Դարեգին *ծ. վարդապետը, ակադ.* Ա. Ղարիբյանը, *պրոֆ.* Հ. Ճ. Սիրունին, *ամերիկահայ մտավորական* Տ. Բոյաջյանը, *Բուխարեստի պետհամալսարանի դասախոս դոկտ.* Դր. Բաւբուկեյանը:

Հանդիսության ներկա էին Մ. Աթոռի միաբանությունը, Գեր. Հոգ. խորհրդի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագրական և Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմերը, վանքի պաշտոնեությունը։

Հյուրերի թվում են ծանոթ և հարգված մտավորականներ, արվեստագետներ, Երևանի Մ. Մաշտոցի անվան ձեռագրաց մատենադարանի տնօրեն ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Լ. Խաչիկյանը՝ *մի խումբ գիտաշխատողներով, պետարխիվայի վարչության պետ* Ա. Հարությունյանը՝ *գիտաշխատակիցների իր խմբով, Արվեստի թանգարանի տնօրեն* Ս. Մելիքսեթյանը, *դրոֆ.* Վ. Առաքելյանը, *երաժշտագետ* Թումանան *(ԱՄՆ-ից), երաժշտագետ* Ռ. Ադայանը, *դիրիժորներ՝* Օնսն Դուրյանը, Հովհաննես Զեքիյանը. *պրոֆ.* Մեղնիկյանը. *ճարտարապետներ՝* Միք. Մազմանյանը. *կոնստ.* Հովհաննիսյանը. Բաղդիկ Արզումանյանը *և ուրիշներ։*

Հանդիսությունը սկսվում է ՀՍՍՀ պետական հիմնի նվագով և «Որք զարդարեցին» թարգմանչաց շարականի երգեցողությամբ, որը կատարում է Ճեմարանի երգչախումբը։

Հանդիսության բացումը կատարում է Գեր. Հոգ. խորհրդի անդամ Տ. Կումիտաս *եպս.* Տ. Ստեփանյանը, *շեշտելով օրվա հոբելյանի պատմական, հոգևոր մեծ նշանակությունը մեր մշակույթի պատմության մեջ, հարգանքի, երախտագիտության սրտագին պարտքը հատուցելով Հակոբ Դ. Ջուղայեցի լուսամիտ կաթողիկոսին, Ոսկան վրդ. Երևանցուն, որի վաստակի անգնահատելի արգասիքը հանդիսացավ այդ դարագլուխ կազմող մշակութային մեծ ձեռնարկը։*

Օրվա գլխավոր բանախոսն էր Երևանի պետհամալսարանի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, մատենագետ Ռաֆայել Իշխանյանը, *որը «Ոսկանյան Աստվածաշնչի տպագրություն» թեմայի շուրջ հանդես եկավ դիտական, բովանդակալից բանախոսությամբ։*

«Այսօր մենք նշում ենք պատմական մի այնպիսի իրադարձության տարեդարձ, որի նշանակությունը մեծ է եղել հայ հոգևոր ու մշակութային կյանքում և, մասնավորապես հայկական տպագրության պատմության մեջ։

Իրոք, այս բնագավառում երկու շատ կարևոր նշանախեցեր կան՝ մեկը հայ տպագրության սկզբնավորումը Վենետիկում, մյուսը՝ Ս. Էջմիածնի անվան տպարանի հիմնադրումն ու Աստվածաշնչի հրատարակումը Ամստերդամում։ Եթե 16-րդ դարի սկզբներին Հակոբ Մեղապարտի ջանքերով սկիզբ առավ հայկական տպագրությունը, ապա 1660-ական թվականներին Ոսկան Երևանցին լույս ընծայեց հայ հին տպագրության գլուխ-գործոցը, նրա մեծագույն նվաճումն ու լավագույն արգասիքը, այն է՝ առաջին հայերեն տպագիր Աստվածաշունչը։

Չորս տարի առաջ մենք նշում էինք հայկական տպագրության 450-ամյակը, իսկ այս տարի լրանում է հայերեն Աստվածաշնչի տպագրության 300-ամյակը։ Այս երկու տարեդարձները միմյանց հետ հիշատակելը պատահականություն չէ, քանի որ նրանք ամենանշանավորն են հայ հին տպագրության (1512—1800 թթ.) մեջ, ինչպես մեր հին տպագրության ամենանշանավոր դեմքերն են՝ Հակոբ Մեղապարտն ու Ոսկան Երևանցին։ Եթե Հակոբ Մեղապարտի ջանքերով սկիզբ դրվեց հայոց տպագրությանը,

տպա Ոսկան Երևանցին հրապարակ հանեց այդ տպագրության ամենակարևոր և ամենախորը արդասիքը՝ առաջին հայերեն տպագիր Աստվածաշունչը։

Հանրահայտ է Աստվածաշնչի կատարած գերը քրիստոնյա ազգերի և, մասնավորապես, հայոց կյանքում։ Այդ գրքի թարգմանությամբ և գլխավորապես այդ թարգմանության նպատակով սկիզբ առավ սահակ-մեսրոպյան դպրությունը, և ապա հայ հոգևոր ու մշակութային կյանքի մեջ տմենուրեք Աստվածաշունչը հսկայական գեր ունեցավ։ Դժվար է գտնել միջնադարյան հայ արվեստի ու գրականության, փիլիսոփայության ու իրավագիտության, պատմագրության ու վարքագրության մի գործ, մի ստեղծագործություն կամ աշխատություն, որի վրա այս կամ այն կերպ չլինի Աստվածաշնչի ազդեցությունը։ Հասկանալի է, որ է՛լ ավելի էր Աստվածաշնչի գերը հայ հոգևոր ու եկեղեցական կյանքում։ Վերջապես, Աստվածաշունչը իբրև հայոց կրոնի կարևորագույն գիրքը ոչ քրիստոնյա ազգերով շրջապատված հայ ժողովրդին ազգային ինքնապահպանման մեծ ուժ ու կորով էր տալիս։

16—17-րդ դարերում հայ կյանքի համար մի այդպիսի կարևոր գրքի մեծ պակաս կար։

Ոսկանյան Աստվածաշնչի հրատարակման ժամանակից մեզ բաժանում է երեքհարյուրամյակ, մեկ ու կես հարյուրամյակ էլ՝ այն բաժանված է Հակոբ Մեղապարտի օրերից։ Եվ այդ 150 տարիների ընթացքում շատ հայ մտավորականների, հայ տպագրիչների եռանդանքն է եղել՝ լույս ընծայել Աստվածաշունչը մայրենի լեզվով և միայն Ոսկան Երևանցուն ու նրա օգնականներին հաջողվեց իրականացնել այդ երազանքը։

Աստվածաշնչի նման մեծածավալ և շատ բարդ բնագրով գիրք հայերեն տպագրելը չափազանց դժվար գործ էր։ Դրա համար անհրաժեշտ էր ոչ միայն գգալի դրամ, այլ նաև համեմատված և տպագրության համար պատրաստ մի բնագիր, սեփ էին հայերեն տառատեսակների շատ թե քիչ հարուստ հավաքածու, մանավանդ հայերեն գրքեր տպագրելու լուրջ փորձ, ինչպես նաև շատ գրագետ, հմուտ և, որ կարևորն է, գործին լիովին նվիրված, խանդավառ մարդիկ։

Միջնադարում հայ եկեղեցին հայության հոգևոր ու մշակութային կենտրոնն էր, իսկ պետականությունից զուրկ ժամանակաշրջանում հայության համար եկեղեցին ինչ-որ չափով նաև պետության գերն էր ստանձնում։ Եվ հասկանալի է, որ հայկական տպագրության ընդավառում էլ հայոց եկեղեցին էր հիմնական նախաձեռնող ուժը։ Հայ հին տպագրիչները սկսած Հակոբ Մեղապարտից, Աբգար Դպիրից ու Հովհաննես Տերգնցուց մինչև Խաչատուր Կեսարացին ու Ոսկան Երևանցին, եղել են հայ եկեղեցու ներկայացուցիչներ։ Մեծ է եղել էջմիածնի կաթողիկոսների, ինչպես նաև՝ Կ. Պոլսի մի շարք պատրիարքների գերը հայ հին տպագրության զարգացման գործում։

Եթե Եվրոպայում տպագրությունը անհատների նախաձեռնությամբ զարգացավ իբրև շահավետ մի գործ, եթե Ռուսաստանում պետության, անձամբ Իվան Սևնչի որոշմամբ ու հովանավորությամբ հիմնադրվեց տպագրական գործը, ապա հայոց տպագրության հովանավորը եղել է էջմիածինը, ըստ որում հայ հին տպագրիչների աշխատանքը ոչ թե շահ ստանալու միջոց է եղել, այլ հայրենասիրության, ազգին ու էջմիածնին ծառայելու նվիրաբերում։ Այսօր հատկապես նշելու են Հակոբ Դ. Ջուղայեցու ջանքերը հայոց տպագրության ասպարեզում։ Ուշագրավ է, որ հոլանդական աղբյուրները, Ամստերդամի հայկական տպարանի հիմնադրումը և այնտեղ հայերեն գրքերի տպագրումը գլխավորապես կապում են Հակոբ Ջուղայեցու նախաձեռնության հետ, գրելով. «Հայաստանի պատրիարք Հակոբ Դ-ն արվեստի և գիտության սիրահար մի մարդ, 1656 թվականին լսելով, որ Վենետիկի և Ջուլֆայի տպարանների տառերը մաշվել են ու անգործածելի դարձել, իր սարկավագ Մատթեոս Մուրեցուն ուղարկեց Հոլանդիա, որպեսզի այստեղ լավագույն տառեր պատրաստել տա»։

Ընդհանրապես, երբ կարդում ենք Ամստերդամի հայկական տպարանին վերաբերող վավերագրերը, հին հիշատակարանները, զարմանում ենք այն մեծ կամքի, տոկունության և համառության վրա, որ ունեցել են այդ տպարանի հիմնադիրներն ու աշխատողները։

Իր մասին Ոսկանն այսպես է գրում. «Ես նուաստ յամենից և յետնեալս սենձամբ և գիտութեամբ ի մէջ մանկանց եկեղեցոյ տէր Ոսկան բանի սպասաւոր յերկրէն Արարատեայ ի գիւղաքաղաքէն Երևանայ հրամանաւ հաւոյն և կաթողիկոսին տեառն Յակոբու եկեալ յԱմստէրդամ ձեռնարկի մատենոյս աստուածայնոյ»։ *Մի այլ տեղ նա ասում է, որ ինքը ստղագրական գործին է դիմել* «Տեսնելով զպակասութիւն ազգին մերոյ հայկազնեայց ի կողմանէ ամենից զոց յաւէտ հարկաւորաց»։

Երբ Ոսկան Երևանցին հասնում է Ամստերդամ, Ս. Էջմիածնի տպարանում արդեն հինգ գիրք տպվել էր։ Այդ նշանակում է, որ տպարանը բավական փորձ էր ձեռք բերել Աստվածաշնչի տպագրության դժվարին գոր-

Ոսկանյան Աստվածաշնչի առաջին էջը

ծը իրականացնելու համար։ Ոսկանը Ամստերդամում նախ շարունակում և ավարտում է ապարանի վեցերորդ գրքի, այն է՝ առաջին Շարակնոցի տպագրությունը, որ հայտնի դարձավ իբրև Ոսկանյան շարակնոց, և որը մի շատ բարձրաճաշակ հրատարակություն է։ Այնուհետև, նախքան իր հիմնական գործին անցնելը, Ոսկանը տպագրում է երկու գիրք ևս։

Հասկանալի է, որ ութ հայերեն գիրք լույս ընծայած տպարանը մեսրոպատառ տպագրության լուրջ փորձ էր կատարել։ Հիշենք, որ նախքան այդ, դեռևս ոչ մի քաղաքի հայկական տպարանում չէր հաջողվել այդպիսի քանակով գրքեր տպագրել։ Փորձից բացի տպարանն ուներ անհրաժեշտ տպագրական պիտույքներ, տպատառեր, պատկերների փորագրված տախտակներ և այլն։

Մյուս կարևոր նախադրյալը՝ Աստվածաշնչի տպագրության համար՝ պատրաստ բնագիրը նույնպես Ոսկանն ուներ։ Հայաստանից նա իր հետ բերել էր Աստվածաշնչի այն ձեռագիրը, որի վրա երկար աշխատել էր։ Ոսկանը լրացնում է այդ ձեռագիրը մի քանի բնագրով, որ ինքն է թարգմանում լատիներենից, տնատում գիրքը և լիովին պատրաստում տպագրության։ Դրամի հարցում բացի իր ունեցածից և եղբոր օգնությունից, Ոսկանին առանց որևէ փոխհատուցման օգնում են երեք ուրիշ ջուղայեցիներ, որոնց անունները արժե այսօր հիշել, նրանք էին՝ Ստեփանոս Խոնենցը, Պետրոս Տեր-Ավագյանցը և Թեոդորոս Քրոշնենցը։

1666 թվականի մարտի 11-ին Ոսկանը, իր աշակերտների՝ կարապետ Անդրիանացու և Օհան Երևանցու հետ սկսում է Աստվածաշնչի տպագրությունը, որ տևում է 2 տարի 7 ամիս, այն է՝ մինչև 1668 թվականի հոկտեմբերի 13-ը։

Ոսկանյան Աստվածաշունչը նախ պատկառելի է իր մեծ ծավալով, այն բաղկացած է մոտ 1500 երկսյուն էջից կամ 3000 սյունակից։ Միայն այդ գիրքը իր տպագրական ծավալով ավելի մեծ է, քան նախքան Ս. Էջմիածնի անվան տպարանը ամենուրեք հայերեն տպագրված բոլոր գրքերը միասին վերցրած։

Ոսկանյան Աստվածաշունչը հրապուրում է նաև իր մաքուր, խնամքով կատարված տպագրությամբ, անթերի սրբագրությամբ։ Սյունակները հաճելի են ընթերցանության համար, խորագրերը, լուսանցքային ծանոթագրությունները շարված են ճաշակով։ Տպագրության որակի տեսակետից նույնպես Ոսկան Երևանցու այս հրատարակությունը դերազանցեց մինչ այդ եղած հայոց բոլոր տպագրություններին։

Հայ մշակույթի շատ գործիչներ, հայ գրքի պատմության մոտ կանգնած մարդիկ՝ Լեոն, Հ. Գարեգին Զարբհանալյանը, Թեոդիկը, Հ. Արսեն Ղազիկյանը, Գարեգին Լեոնյանը և ուրիշներ, բավական էջեր են նվիրել Ոսկանյան Աստվածաշնչին, շատ բարձր գնահատել նրա արժանիքները։ Այդ հրատարակությունը բարձր ղնահատական է ստացել նաև եվրոպական մի շարք բանասերների կողմից։

Թեև շատ հաղվագյուտ, բայց լինում են նաև Ոսկանին ու նրա մերձավորներին քննադատողներ։ Օրինակ՝ ինչ-որ չափով Ոսկանին մեղադրում են հայերեն Աստվածաշնչի յոթանասնից դասական թարգմանությունից բնագրային, լեզվական շեղումներ անելու համար, մանավանդ լատինական Վուլգատային հետևելու կապակցությամբ։ Երբեմն էլ ոչ բավականաչափ հաջող են համարում ոսկանյան հրատարակության մեջ գործածված նկարները և այլն։ Նման դիտողություններն ամբողջովին անտեղի են և մանավանդ անարդար։ Նախ նկարների մասին։ Պետք է ասել, որ այդ նկարների փորագիր տախտակները գնել է ոչ թե Ոսկանը, այլ Մատթեոս Ծարեցին, որը հայտնի էր նաև իբրև նկարիչ։ Ընդհանրապես ճիշտ չէ 300 տարի առաջ հեռավոր Ամստերդամում հայերեն գրքեր ստեղծող անձնագոհ մարդկանցից պահան-

ջել, որ նրանք իրենց հրատարակության մեջ կերպարվեստի գլուխ-գործոցներ դնեն, բայց ճիշտ չէ նաև նրանց օգտագործած նկարները ոչ բարձրորակ համարելը։ Ոսկանյան Աստվածաշնչի մեջ օգտագործված են նշանավոր հոլանդական նկարիչ Հենրիկ Գոլցիուսի լավագույն աշակերտներից մեկի՝ Քրիստոֆել Վան Զիխեմի փորագրությունները, որոնք արված են այնպիսի մեծ վարպետների գործերից, ինչպիսիք են՝ նույն Գոլցիուսը, Ռաֆայելը, Ալբբեխտ Դյուրերը և ուրիշներ։ Պետք է ասել, որ Քրիստոֆել Վան Զիխեմի փորագրությունները բավական սիրված են եղել Հոլանդիայում և բազմիցս տպագրվել են տարբեր հոլանդական հրատարակությունների մեջ։ Այդպիսով, ոչ մի հիմք չկա այդ պատկերները բարձրորակ չհամարելու։

Այնուհետև, համեմատությունը ցույց է տալիս, որ Աստվածաշնչի հայկական դասական բնագրից կատարված բնագրային շեղումները բնավ էլ մեծ չեն, Ոսկանի հրատարակած բնագրից, նրանք ավելի շատ վերաբերում են արտաքին ձևին՝ կտակարանների գրքերի դասավորությանը, տնատմանը և այլն։ Լեզվական շեղումները, լատինաբանությունները այնքան էլ մեծ տոկոս չեն կազմում և հիմնականում պահպանված է մեսրոպյան գեղեցիկ հայերենը։ Իսկ եղած ոչ մեծ շեղումներն էլ պետք է բացատրել այն բանով, որ նախապես (դեռևս Հայաստանում) Ոսկանը Աստվածաշնչի բնագիրը պատրաստում էր կաթոլիկ Իտալիայում տպագրելու համար և պետք է հարմարեցներ լատինական բնագրին, ապա ավելի հեշտ էր այդ բարդ ու մեծածավալ գիրքը տպագրության պատրաստել աչքի առաջ ունենալով Վուլգատայի բազմիցս տպագրված բնագիրը։

Թե որքան մեծ էր Ոսկանի աշխատանքը, և որքան բարձրորակ էր նրա Աստվածաշունչը իր տպագրական ու բնագրային հատկություններով, ցույց է տալիս նաև այն փաստը, որ երկար ժամանակ այդ հրատարակությունը համարվում էր օրինակելի։ Պատահական չէ, որ Ոսկանյան Աստվածաշնչից հետո կատարված այդ գրքի հրատարակությունները (1705, 1733, 1817, 1817 թթ.) ոսկանյան հրատարակության սոսկական արտատպություններն էին։ Կ. Պոլսի 1705 թվականի տպագրության մեջ կարդում ենք. «Ի յորիեակէ ճնոյ տպեցեալ լուսաւոր ճոգի Ոսկան վարդապետի, յար և նման, ոչ աւելի և ոչ նուազ»։ Իսկ Մխիթար Սեբաստացին Աստվածաշնչի վենետիկյան իր հրատարակության մեջ (1733 թ.) խոսելով Ոսկանյան Աստվածաշնչի մասին, գրում է. «Իսկ այժմ ճոյնն լաւագոյն թղթովք... վերստին ապաւգրուբեամբ ի լոյս ածեալ»։ Ոսկանյան բնագրի արտատպություններ էին նաև 1817 թվականի Պետերբուրգի և Սիրամփուրի հրատարակությունները։

Այսպիսով, Ոսկան Երևանցին իր մեգվաջան, տառապալից աշխատանքով ոչ միայն հրատարակել է 1666-ի առաջին Աստվածաշունչը, այլև պատճառ է եղել, հիմք է ստեղծել այդ գրքի հաջորդ հրատարակությունների համար։

Աստվածաշնչի առաջին հրատարակությունը հայ տպագրության մեջ շրջադարձային կետ էր։ Մեսրոպատառ տպագրության որակը, նշանակությունը նոր աստիճանի բարձրացավ։ Ոսկան Երևանցին, փաստորեն, հայ տպագրության պատմության մեջ խաղաց այն դերը, ինչ Ալդո Մանուցիոսը իտալական, Էտյենները՝ ֆրանսիական Էլզևիրները՝ հոլանդական տպագրության պատմության մեջ։

Ոսկան վարդապետը հոգ էր տարել ոչ միայն Աստվածաշնչի բարձրորակ տպագրության, այլև նրա արտաքին ձևավորման նկատմամբ։ Մի շարք օրինակներ նա հանձնել էր Հոլանդիայի գեղագետ-կազմարար Ալբերտ Մանգուսին՝ նրան տալով կազմերի գրոշմվածների հայկական զարդեր ու պատկերներ։ Ներկայումս Եվրոպայի մի քանի դրադարաններում, իբրև շատ թանկագին ցուցանմուշներ, պահվում են Ոսկանյան Աստվածաշնչի օրինակներից՝ Ալբերտ Մանգուսի շքեղ կազմերով։ Ի դեպ, դրանցից մեկը՝ Փարիզի տղղային դրադարանում պահվող, Աստվածաշնչի այն օրինակն է, որը Ոսկանը հատուկ ուղերձով ուղարկել է Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս 14-րդին։

Աստվածաշնչի ոսկանյան հրատարակությունը ուշագրավ էր նաև մի այլ կողմից, այն է՝ որ նա տպագրվել է այն ժամանակվա համար շատ մեծ տպաքանակով։ Ենթադրում են, որ ամբողջական տպաքանակը պետք է հասած լինի 5000-ի։ Դրանով Ոսկան Երևանցին, ըստ էության, լուծում էր Հայաստանում հազվագյուտ գարձած Աստվածաշնչի հարցը։ Այն արդեն կարող էր դառնալ նաև ընթերցանության գիրք՝ աշխարհիկ մարդկանց մեջ։ Ոսկանյան Աստվածաշնչի տպաքանակի հիմնական մասը Զմյուռնիայի միջոցով թափանցել է Հայաստան։ Եվ պատահական չէ, որ թե՛ Արևելյան, թե՛ Արևմտյան Հայաստանում Ոսկանյան Աստվածաշունչը շատ տարածված է եղել։ Այժմ էլ այդ հրատարակությունից հետո լույս տեսած շատ գրքերից մատենադիտական հազվագյուտ օրինակներ են պահպանվել, իսկ Ոսկանյան Աստվածաշնչի օրինակները Հայաստանի դրադարաններում բավական առատ են։

Խոսելով Ոսկանյան Աստվածաշնչի մասին մենք կամա-ակամա խոսում ենք Ոսկանյան տպարանի վերաբերյալ ընդհանրապես, և նշելով հայերեն առաջին տպագիր Աստվածաշնչի հրատարակման երրորդ դարեդարձը, մենք պատշաճն ենք համարում նաև Ս. Էջմիածնի անվան տպարանի աշխատանքին առհասարակ։ Ուստի, արժե երկու խոսքով էլ հիշել այդ տպարանի խաղացած դերը հայ մշակույթի պատմության մեջ։

Մինչև Ս. Էջմիածնի անվան տպարանի աշխատանքը, հայկական տպագրությունը ժամանակի մեջ իրարից անջատ տպագրական մի շարք փորձերի շարան էր։ Այսպես. մոտ երկու-երեք տարի է աշխատել Հակոբ Մեղապարտի տպարանը, հրապարակ հանելով հինգ գիրք, այնուհետև 50 տարվա ընդմիջում է լինում մինչև որ 1565-ից սկսվում է աշխատել Աբգար Թոխատեցու տպարանը։ Սրա աշխատանքն էլ տևում է 4 տարի, ապա գալիս է 15 տարվա ընդմիջում։ 1584—1587 թվականներին Հովհաննես Տերոնցու և Սուլթանշահ Աբգարյանի ջանքերով լույս են տեսնում երեք հայերեն հրատարակություններ, ապա տիրում է հայ տպագրության մոտ 30-ամյա դադար, մինչև որ 1616 թվականին սկսում է աշխատել Լվովի հայոց տպարանը՝ տպագրելով երեք գիրք։ Այնուհետև, ավելի քան 20 տարվա դադարից հետո է սկսում աշխատել Նոր-Ջուղայի հայկական տպարանը, որը վեց տարում՝ մինչև 1647 թվականը, տպագրեց չորս գիրք։ (Հովհ. Անգյուրացի՝ Սաղմ.— 1642, «Յիսուսորդի», 1643, Հովհ. Ջուղայեցի՝ Սաղմ.— 1644)։ Ոսկանյան տպարանը Ամստերդամում, Լիվոռնոյում և Մարսելում անընդմեջ աշխատեց ավելի քան 25 տարի, հրատարակելով մոտ 40 անուն հայերեն գրքեր։ Այս երկարակեցությունն ու բեղմնավորությունը աննախադեպ էին հայ տպագրության անցած 150 տարիների ընթացքում։ Սա, անշուշտ, արդեն տպագրական փորձ չէր, այլ առաջին իրոք անընդմեջ աշխատող հայկական տպարանի բեղմնավոր աշխատանք։ Բայց շատ ավելի կարևոր էր այն, որ ոսկանյան տպարանի փակումով էլ չդադարեց հայկական տպագրությունը։ Ոսկան վարդապետի աշակերտները 17-րդ դարի վերջերին Ս. Էջմիածնի անվան տպարաններ հիմնեցին Լիվոռնոյում և Կ. Պոլսում, իսկ Ոսկանի լավագույն աշակերտներից մեկը՝ Մատթեոս Վանանդեցին, 1685 թվականին հիմնադրեց Վանանդեցիների հայերեն տպարանը Ամստերդամում, որը նույնպես մեծ դեր կատարեց հայոց մշակութային կյանքում։ Այլ խոսքով, Ոսկանյան տպարանի շնորհիվ ստեղծվեց հայկական հարատևող տպագրությունը, որն այլևս չդադարեց՝ հասնելով մինչև մեր օրերը։

Ոսկանյան տպարանի մյուս կարևոր արժանիքն այն էր, որ կրոնական, եկեղեցական գրքերի հրաշալի հրատարակությունների հետ լույս ընծայեց նաև բավական քանակով աշխարհիկ գրքեր, այդ թվում մայրենի լեզվի դասագրքեր, առակների ժողովածու (Աղվեսագիրք), Մովսես Խորենացու Աշխարհացույցը, Առաքել Դավրիժեցու «Պատմություն»-ը։ Ըստ որում այս վերջինն առաջին հայերեն տպագիր գիրքն էր, որ լույս տեսավ հեղինակի կենդանության օրոք (1669)։

Այնուհետև, Ս. Էջմիածնի անվան տպարանին է պատկանում նաև առաջին աշխարհաբար գիրքը տպագրելու պատիվը։ Այդ գիրքը լույս տեսավ 1675 թվականին, և կոչվում է «Արհեստ Համարողութեան»։ Դա մի թվաբանական-հաշվապահական ձեռնարկ է հայ առևտրականների համար։ Գրքի լեզուն այնպիսի աշխարհաբար է, որ կարող է համարվել ժամանակակից հայոց լեզվի թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ ճյուղերի զարգացման վաղ շրջանի նմուշը։

Ոսկանյան տպարանը հայոց մեջ ստեղծեց ոչ միայն բարձր տպագրական արվեստով հրատարակված գրքեր, այլև սկիզբ դրեց հայերեն պատկերազարդ գրքին։ Մինչ այդ հայերեն շատ քիչ գրքերում գրված էին մի քանի պատկեր միայն, այնինչ ոսկանյան հրատարակություններում պատկերների քանակը հաճախ հասնում էր մի քանի տասնյակի, իսկ Աստվածաշնչի մեջ կա 159 պատկեր։ Վերջապես, կարևոր եղավ Ս. Էջմիածնի անվան տպարանի դերը նաև հայերեն տպագիր տառերի մշակման ու զարգացման գործում։ Այժմ մեր տպարաններում գործածվող ամենատարածված հասարակ բոլորագիրը ամենից ավելի նման է Ս. Էջմիածնի անվան տպարանի տառերին։

Ոսկանյան տպարանը ունի նաև այլ արժանիքներ, բայց անկասկած է, որ նրա աշխատանքի պսակը, նրա հաջողության գագաթը մնում է հայերեն առաջին Աստվածաշնչի լույս ընծայումը, որը և ընդունում են բոլոր բանասերները։

Այսօր Ոսկանյան Աստվածաշնչի 300-ամյա տարեդարձին չի կարելի չհիշել նաև այն գերը, որ կատարել են՝ Հոլանդիան և նրա գավակները հայոց տպագրության գործի զարգացման ասպարեզում։ Նախ աղատամիտ Հոլանդիայում մեծ հնարավորություն ստեղծվեց մի հայկական տպարանի հիմնադրման ու աշխատանքի համար։

Եվրոպական մի շարք երկրներում օրենքով արգելված էր ոչ միայն օտարերկրացիների համար գրքեր տպագրելը, այլ նաև նրանց

տպագրական պարագաներ տրամադրելը, նրանց համար տաճար վերադարձը։ Մինչդեռ Հոլանդիայում հայերը կարողացան օգտվել հոլանդական մի չարք վարպետների աշխատանքի պտուղներից։ Քրիստոֆել Վան Ջիխեմի նկտրները զարդարեցին հայերեն գրքերի ներսը, իսկ Ալբերտ Մանդուսի նկարները՝ նրանց արտաքինը։ Ս. Էջմիածնի տպարանում առաջին գրաշարները նույնպես հոլանդացիներ էին, սրանցից հայերը տպագրական արվեստ սովորեցին։ Էլ ավելի մեծ էր Լյուկերների հայտնի տպարանի վարպետ Քրիստոֆել Վան Դիկի ծառայությունը, որին Մատթեոս Ծարեցին հայերեն տառերի մի շարք գծագրեր տվեց պատվիրելով տպատառերի հայրեր և մայրեր։ Ահա թե ինչ էր գրում Կարապետ Անդրիանոցին այդ վարպետի մասին. «Այլ և յիշեսցիս զեռանեարեղ արուեստաւորն զՏոն Տիմ...., որ և բազմահնար ջանիւ կերպացոյց զպոզվատեայ և պղնձի տառիցս»։

Ամստերդամի հայկական տպարանի հիմնադրումն ու աշխատանքը, Աստվածաշնչի տպագրությունն այնտեղ հայ և հոլանդական ժողովուրդների բարեկամական կապերի մի հրաշալի դրվագ է, և հայ ժողովուրդը երախտապարտ է հեռավոր Հոլանդիային, որ հնարավորություն ընձեռեց գերված ու խոշտանգված Հայաստանի դավակների համար մայրենի լեզվով գրքեր հրատարակել։

17-րդ դարը շատ ծանր է եղել Հայաստանի համար։ Պետականությունից զրկված, արտաքին օգնության հույսը կտրած, հայ հայրենիքը բաժան-բաժան էր եղել ասիական բռնակալ պետությունների իշխանությունների միջև, որոնք անընդհատ պատերազմներ էին մղում հայոց հողի վրա՝ ասպատակելով երկիրը։ Հայաստանում, Էջմիածնում, այդ ժամանակ տպարան ստեղծելու մասին խոսք լինել չէր կարող, մինչդեռ հայ գիրն ու գիրքը ամենահոր դենք էին հայության ձեռքին՝ օտարներին դիմադրելու համար։ Եվ ապա Էջմիածինը, որին ապավինել էր հայ ժողովուրդը, դտնում է միջոցը, իր տպարանը հիմնելով հեռավոր Հոլանդիայում։ Հակոբ Ջուղայեցու այդ մտահղացումը և դրա իրականացումը մեծ խորհուրդ ունեն հայության մշակութային նաև քաղաքական կյանքի պատմության մեջ։ Ինչպես հարյուրամյակներ առաջ Վռամշապուհ արքան և Սահակ կաթողիկոսը Մեսրոպ Մաշտոցին ուղարկեցին Ասորիք՝ հայոց տառեր ստեղծելու առաքելությամբ, այնպես էլ Հակոբ Դ կաթողիկոսը Մատթեոս Ծարեցուն և Ոսկան Երևանցուն ուղարկեց Եվրոպա՝ հայ գիրքը կորստից փրկելու, այն տպագրական արվեստի միջոցով բազմացնելու և Սահակ-Մեսրոպյան գրությունը նոր շունչ հաղորդելու առաքելությամբ։

Երկու դեպքում էլ Էջմիածնի նախաձեռնությամբ ու հոգատարությամբ և նրա սահնի ձեռքով կատարվեցին ազգապահպան մեծ գործեր։

Եվրոպայում հայոց անընդմեջ տպագրության ստեղծումը անձնուրացություն, նաև զոհեր պահանջեց։ Հայ հոգևորականն ու աշխարհիկ հայրենասերները չխնայեցին ոչ գրամ, ոչ իրենց հանգիստը և ոչ նույնիսկ՝ կյանքը։ Մատթեոս Ծարեցին և Ոսկան Երևանցին եղան այդ գործի նահատակները։

Այսօր մենք մեր ջերմ սիրո և ամենախոր հարգանքի խոսքն ենք ասում երեքհարյուրամյակ տարաջ օտար աշխարհում ազգանվեր, մեծ գործ կատարած մեր հայրենակիցներին։ Մեր պարտքն է հիշել, թե ինչպիսի մաքառումներով, զոհողությունների և զոհերի գնով է պահպանվել հայերեն գիրքը և նրա հետ հայ գիրն ու լեզուն։

Բայց ամենամեծ հարգանքը մեր այդ նախնիների նկատմամբ կլինի այն, որ հիշելով նրանց, մենք էլ գորավիգ լինենք հայ գրքին, հայ գրին ու լեզվին, որով և կենդանի է մեր փոքրիկ ժողովուրդը աշխարհի հարյուրավոր ազգերի օվկիանոսում։ Զորավիգ լինենք, որպեսզի հայ նոր սերնդի մեջ մանկուց ներարկվի մայրենի լեզվի ու մեսրոպյան գրի նկատմամբ անվերապահ նվիրվածություն, որպեսզի հայ մանուկը անպայման մայրենի լեզվով սկսի իր թոթովանքը և մեսրոպյան տառերով՝ իր գրաճանաչությունը, որպեսզի միշտ ծաղկի Սահակ-Մեսրոպյան մշակույթը։ Ահա այսօր այս է ամենից առաջ և ամենից ավելի մեզ հիշեցնում Ոսկանյան Աստվածաշնչի փառաղարդ 300-ամյակը»։

Հանդիսության ընթացքում ողջույնի խոսքով հանդես եկավ տկադ. Ա. Ղարիբյանն ու ասաց.

«Հայ ժողովուրդը իր պատմության ընթացքն անցել է արյունոտ ուղիներով ու անհամար զոհերով, և չնայած դրան, պահպանվել է և հասել Սովետական Հայաստանի իր պայծառ օրերին։ Ինչո՞վ բացատրել այս առեղծվածը. չկան նրա տարեկիցները և նրանց նվաճողները՝ Հռոմը, Բյուզանդիան, Ասորեստանը և շատ շատերը։ Մեզ թվում է, որ դա պետք է բացատրել երեք հիմնական հատկություններով, որոնք են.

ա) ուժեղ արտահայտված ինքնություն.

բ) անձնվեր հայրենասիրություն.

գ) անհաղ ձգտում դեպի առաջադիմությունը։

Մեր ինքնության ցայտուն արտահայտությունն այն է, որ մենք ստեղծեցինք

պահլավների նման պետականություն, բայց մեր ազգային կնիքը դրինք այդ պետականության վրա, ընդունեցինք քրիստոնեություն, բայց նրան տվինք մեր ազգային բնույթը, այդ պատճառով մեր եկեղեցին միշտ եղել է ազգային և ազգասեր։ Մեր առաջադիմության ցայտուն ապացույցն այն է, որ մենք ստեղծեցինք մեզ համար գիր ու գրականություն դեռ հին դարերում, միջնադարի խավար պայմաններում մենք զարգացրինք մեծ առևտուր՝ ստեղծելով Դվին, Անի, Արծն հրաշք քաղաքները։ Մենք առաջիններից մեկը յուրացրինք տպագրության գործը այն ժամանակ, երբ մենք չունեինք իսկ սեփական պետականություն և օտարներից՝ ազատ հայրենիք։ Մինչդեռ մեզանից ավելի մեծ ազգեր ունենալով և՛ պետություն, և՛ հայրենիք, մեզանից ավելի ուշ և գիր ու գրականություն ստեղծեցին, և տպագրություն իսկ ուշ որդեգրեցին։ Մեր ժողովրդի անկոտրում հայրենասիրության ցայտուն դրսևորումն այն է, որ մենք, գրկվելով պետականությունից, մեր ազգային ամբողջականությունը զենքով ու բանակով պաշտպանելու հնարավորությունից, ազգային գրերի գյուտը կատարեցինք՝ դարձնելով գիր ու գրականությունը մեր ժողովրդի պահպանման միջոց։

16, 17, 18-րդ դարերը մեր ժողովրդի պատմության ամենախավար դարերն էին, նա հեծում էր թուրքական և պարսկական մղձավանջային ճնշման տակ։ Եվ մենք այդ ժամանակ օգտագործեցինք տպագրության գործը, որպեսզի լուսամիտ գործերով և առաջադեմ միջոցներով պահպանենք մեր ժողովրդի գոյությունը։ 1666 թվականին Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ Ոսկան վարդապետ Երևանցու իրագործմամբ Աստվածաշնչի տպագրությունը ամենից առաջ կրոնական նպատակներ հետամտելուց բացի, հետապնդում էր ազգապահպանման նպատակներ։ Այն ժամանակվա համար արտասովոր 5000 տպաքանակը Աստվածաշունչը դարձնում էր ժողովրդական ընթերցման գիրք, որը մեծապես կնպաստեր հայ կրոնի և հայերեն լեզվի, այսինքն՝ այդ դարերում հայ ժողովրդի ինքնության հատկանիշների պահպանմանը։ Բացի այս, այսպիսի քանակի Աստվածաշունչը կնպաստեր գրաբար լեզվի յուրացմանը շատերի կողմից, որովհետև Աստվածաշնչի լեզուն ոչ միայն կատարյալ է, այլև ամենամատչելի գրաբարն է։ Աստվածաշնչի տպագրությունը հայ գրի մշակույթի հաղթանակն էր, ուստի նրա 300-ամյակի նշումը ներշնչում է մեզ հպարտություն, որովհետև այդ դարում գաղութներում այդպիսի ծավալուն գիրք հրատարակելը կարող էր լինել միայն մեծ հավատքի և մեծ հայրենասիրության արգասիք։

Գրի հանդեպ հայկական սերը այսօր մեր սովետական հայրենիքում դրսևորվում է աննախընթաց չափով և անկաշկանդ։ Հայրենի կառավարության օժանդակությամբ և խնամքով ստեղծվում են գիտության, գրականության, արվեստի նոր կոթողները ու հրատարակում բազմաքանակ աշխատություններ ու գործեր։ Հայաստանն այժմ հրատարակում է շուրջ 15 միլիոն տպագրական օրինակներ, որով մեր երկրի յուրաքանչյուր բնակչին ընկնում է տարեկան 1 տպագրված գիրք։ Մեր ազատ երկրում անկաշկանդ բազմապատկելով լույս ու գիտություն բերող գրքերի տպագրությունը, երախտագիտությամբ հիշում ենք մեր հին տպագրիչներին՝ Ոսկան Երևանցուն, Ավետիք Ղլճեցուն և ուրիշ շատ ու շատերին։ Թող անմահ մնա նրանց հիշատակը»։

Ուխտավորաբար Մ. Աթոռում գտնվող «Սիոն» ամսագրի երիտասարդ խմբագիր Ա. Գալայճյանը ողջույնի իր խոսքում ասաց.

«Տասնյոթերորդ դարու, ինչպես նախորդ և հետագա հարյուրամյակներու հայ ժողովուրդի պատմության դժվարին և տառապալից սև օրերուն, ամենեն լուսավոր և, միաժամանակ, արդյունաշատ ճիգ մըն է գործունեությունը Ոսկան Երևանցի վարդապետին, որ իրրև նոր ժամանակներու սևեռաբիբ Մեսրոպ Մաշտոց, կրցավ խորապես դգալ պահանջքը տպված գիրին ու դիրքին, և որ նման հեքիաթներու հերոսին, թափառեցավ երկրե-երկիր ու ծովե-ծով՝ հանուն լույսի և զարթոնքի։

Ինած, պատանության և երիտասարդության թանկագին տարիները անցուցած Նոր-Ջուղայի հայկական մթնոլորտի մեջ, հովանիին տակ Ս. Ամենափրկիչ վանքի ուսումնասեր ու գիտուն վանահայր Խաչատուր Կեսարացիի, Ոսկան վարդապետ ապահովաբար ծանոթ էր տպագրական այն աշխատանքին, որ ամենեն նախնական միջոցներով հառաջ կտարվեր վերոհիշյալ վանքին մեջ։ 1641-են սկսյալ, քանի մը տարիներու ընթացքին հոն տպված դիրքերը՝ «Հարանց վարք», «Խորհրդատետր», «Ժամագիրք»՝ իրենց անարվեստ պարզության ու թերություններուն մեջ իսկ սքանչելի փաստերն էին ցեղային մեր ներքին ընդունակություններուն, որոնցմով կարելի ըլլար տպարան սարքել, մամուլ ու դիր շինել, մելան ու թուղթ պատրաստել արհեստավորներու շնորհիվ, որոնք ոչ մեկ ծանոթություն ունեին նման բաներու։ Ապա, էջմիածնի Մայրավանքին մեջ, Երևանցի լսած ըլլալու էր Վենետիկի և Հռոմի մեջ դործող օտար տպա-

բաններու մասին և թերևս տեսած ալ այդ օրերուն շքնչ նկատվող հրատարակություններ, որոնք իր մեջ կրնային արթնցուցած ըլլալ ապահով հիմերու վրա հաստատված հրատարակչություն մը ունենալու և հայ գրքի կանոնավոր տպագրություն սկսելու հանդուգն ծրագիրը։ Ծրագիր մը, որ երկար տարիներե ի վեր վափաղն ու երազը եղած էր բյուրավոր տառապանքներու մեջ գալարվող հայ ժողովուրդի նույնքան վշտահար այլ ծառայության և լուսավորության կրակեն բռնված մեր կաթողիկոսներուն։

Հակոբ Զորրորդ Ջուղայեցի կաթողիկոսեն կոչված, հեռավոր Ամստերդամի մեջ Մատթեոս Մարեցիի կողմե հաստատված և նյութական ապահով պայմաններու մեջ գտնվող տպարանին գործերը ստանձնելու և իր միջոցներով հայթայթելու անոր բաղում ծախսերը, Ոսկան վարդապետի կյանքը դարձավ անվերջ մաքառում մը բյուր խոչընդոտներու և դժվարություններու դեմ, որոնց առջև կարծր կամքերն ու ամենեն ամրախարիսխ վճռականություններն անգամ պիտի ընկրկեին։ Պայքարեցավ հանուն հայ գիրքին ու հայ խոսքին, որպեսզի այլևս երբե՛ք, երբե՛ք հայը չըլլար աղերսող ու իր հոգեկան սնունդը օտարներեն աղաչող։ Աստվածաշունչ էինք ուզեր, տպարան էինք տենչացեր, և մեր դեմ հանվեր էին ծով մը խոչընդոտ ու արգելք։ Բախեց բաղմաթիվ դռներ, մերժվեցավ բազմաթիվ անգամներ, ինչպես եղեր էր ճակատագիրը իր նախնիներուն, որոնք հույսի ու ակնկալության առագաստներով եկեր էին ափ առնել Հռոմի կամ Վենետիկի սեմերուն և լույսի կայծ մը, շող մը աղերսեր քարմարգոց քա՛ր խղճմտանքներեն։ Ո՛չ, դյուրին ու հեղասահ չէր եղած կյանքը հայ մշակույթին. անցեր էր տառապանքներու մեջեն և իր մանկական դեգերումներուն թե երիտասարդի հաստատագնաց քայլերուն հետևեր էին արյուն ու ավեր։ Նույն ձևով ալ դժվար եղավ և տառապալի՝ հիմնադրումը ամստերդամյան այդ հեռավոր տպարանին, որ ամենակարևոր հանգրվան մը պիտի հանդիսանար մեր մշակույթի պատմության հաղարամյա ճամփուն վրա։

Ոսկան Երևանցիով ձև ու մարմին հագավ անկերպարան ու սաղմնային վիճակի մեջ գտնվող, թեև դար մը կյանք ապրած հայ տպագրությունը։ Գիրքը, հին օրերու թանկագին այդ անտեսանելին, հանվեցավ դուրս դարաններու և դադտնածածուկ խորշերու ստվերներեն ու տարվեցավ բաղմությունների հասողության։ Հայ գիրը, երկնված՝ մեզ վահանելու ձուլման և հավետ կորուստի տապարներուն դեմ, այժմ ևս իրրև արյուն և իրրև ոգի եկավ զինել մեզ և գոտեպնդել, ինքնագիտակցության և դարթոնքի կենսահորդ սարսուռը տարածել մեր էություններեն ներս, որպեսզի մեր ցեղի գոյության զարտվոր այլ հողմածեծ նավը կարենար զիմանալ ու դալ հասնել խաղաղության և համասփյուռ լույսի այս ափերը։

Տպվեցավ Սաղմոս, և անոր հետ՝ քերականություն և «Ազվեսագիրք», տպվեցավ Մաշտոց, ու անոր քովն ի վեր՝ Առաքել Դավրիժեցիի սքանչելի «Պատմություն»-ը։ Բայց մանավանդ կոթողեցավ առաջին տպագիր հայ Աստվածաշունչը, երկու տարիներու տքնաջան ու քրտնաթոր ճիգի արդյունք այդ հրաշալին, որ եղավ փառքը համեստ այդ վարդապետին ու հպարտությունը մեր ժողովուրդին։

Օրերը և պայմանները անդութ դանվեցան իրեն հանդեպ։ Հալածվեցավ և թափառեցավ, միշտ իր սիրելի զիրքերուն, ձեռագիրներուն և տպարանին հետ։ Հեռացավ մինչև Մարսելիա, մինչև ափերը Միջերկրականի, այլ ճակատագիրը, հոյահալոց սև այդ ուրվականը եկավ գինք դտնել ու տապալել, անծանոթ երկինքի մը տակ՝ նույնպես անծանոթ ձգելով իր վերջին հանգության ափ մը փոսը։

Իր գործը այն արագավազ առուն էր, որ լեռներեն էջքի իր ուղիին վրա դարնվեցավ ժայռ-խոչընդոտներու այլ անցավ, որ իրեն համար նոր հուներ փորեց և հասավ բաց գաշտերուն և, որ հետզհետե ճյուղավորվելով, հետզհետե իր մեջ ընդունելով բազմաթիվ ու բազմազան գետակներ ու հարկատուներ, ի վերջո եկավ-հասավ Սովետական մեր հոյակապ Հայաստանի լայն ու խորունկ ծովին։ Ու տակավին Ոսկան Երևանցի հանդիսացավ վոխանցոգն ու ոյահապանը ցեղային մեր այն ոգիին ու առհասարակ ընդծին կարողություններուն, որոնց շնորհիվ, Մեսրոպյան օբերեն սկսյալ, փոքր մեր ածուն ծաղկաղարդվեցավ հիշատակի և դրի արժանի գործերով։ Սուրբ Մեսրոպով ու թարգմանիչներով սկզբնավորված հայասպահպան ճիգին շարունակությունը եղավ Երևանցիի գործունեությունը, և հետևաբար որքան արդար ու ճիշտ նորին Սուրբ Օծության հրտհանդը՝ թարգմանիչներու տոնին հետ ու նույն օբը հանդիսավորապես նշելու երեքհարյուրամյակը Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրության, և միաժամանակ դնահատանքի ենթարկելու իրավ վաստակը Ոսկան Երևանցի վարդապետին։

Քիչ են առիթները, երբ մեզի տրված ըլլա ուրախության և հպարտության անխառն զգացումներով վեր հանել հիշատակը մեր ոյատմության պատկանող դեմքի մը կամ դեպքի մը։ Երեքհարյուրամյակի այս հանդիսությունը մին է այդ բացառիկ պարագանե-

ռեն, երբ կրնանք դոհ և հպարտ սիրտերով անդրադառնալ շքեղ իրագործումի մը, և մեր անմահներու պանթեոնին տանիլ անուն հայ տպագրության մեծ երախտավորին՝ Ոսկան վարդապետ Երևանցիին։

Կանգնած վերազարթնած Հայաստանի սրբազան հողին վրա, հովանիին տակ մեծ երախտավորին այնքան սիրելի Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարին, մեր սիրտերը միայն մեկ իղձ ու մաղթանք կրնան ունենալ, այն, որ հայ ցեղը վերստին երիտասարդացման իր այս գեղեցիկ օրերուն ծնի և աճեցնե այնպիսի զավակներ, որոնք մեր կյանքին մեջ մեկական նոր Ջուղայեցիներ և Երևանցիներ ըլլան, ի բարօրություն հայ եկեղեցիին, հայ ժողովուրդին և Սովետական փառապանծ Հայաստանին»։

Ծանոթ մտավորական Հ. Ճ. Սիրունին հանդես եկավ հետևյալ ելույթով.

«Տոներն եղեր են, որպեսզի հայ ժողովուրդը հին օրերու վերապրումին մեջ պահ մը մոռնա իր առօրյա խոնջեքը, ու թարմացած սրտով ու մտքովն՝ ավելի կորով ղգա վերելքի իր նոր ճիգին մեջ։

Ու դարեդարձերը, որոնցմով հարուստ եղավ վերջին կես դարը, անոր համար առիթներ դարձան անցյալը ոգեկոչելու և կազդուրվելու, վերստին ճամփա ելլելե առաջ։

Առաջինը դարեդարձերուն, որ 1913-ին հայ ժողովուրդը միացած գտավ իր երկյուղածության և իր պաշտամունքին մեջ, 1500-ամյակն էր տառերու գյուտին։

Անոնք, որ այդ օրերը ապրեցան, չեն կրնար առանց հուզմունքի հիշել բացառիկ այն ոգևորությունը, որով բռնկած էին հայ ժողովրդի բոլոր խավերն ու հատվածները, և որ կու գար մեզ բոլորս սրտապնդել ճակատագրական պահու մը։ Հայկական դատը դարձյալ սեղան էր եկեր այդ տարին, նոր երագներով օրորելու համար մեզ, և հպարտությունը, որ մեր հոգին համակեր էր ոգեկոչելու ատեն մեծ գյուտը, մեզ մղեց ավելի մեծ վստահությամբ նայելու վաղվան։

Ու առանց պատճառի չէր, որ երբ տոնի կվերածեր հայ ժողովուրդը տառերու գյուտը, կցեր էր անոր ուրիշ դարեդարձ մըն ալ՝ չորս հարյուրամյակը հայ տպագրության։ Թվական մըն էր տդ, որ կխորհրդանշեր նոր հորիզոնը, զոր հայ հոգին բացեր էր իրեն, և լույսի ծարավը, որ անգամ մը ևս սկսեր էր տոչորել զայն, խավար այդ գարուն, ստրկության իր այդ սև օրերուն մեջ։

Մարգոց ծարաված հոգին օազիսներ շարունակեց փնտրել հայ պատմության մեջ, լուսավոր պահեր, որոնք զարդաբեր էին զայն և որոնք պիտի գային զորավիգ դառնալ իրեն նոր օրերու տքնության պահուն։ Աստվածաշունչի հայերեն թարգմանությունը, որ տառերու գյուտին առաջին արգասիքն էր եղեր և որուն նույնպես 1500-ամյակը տոնեցինք 1935-ին, հպարտության նոր պահ մը եղավ, որ կու գար հայ սփյուռքը անդամ մը ևս միացնել իր երկյուղածությանը մեջ վաստակին առջև մեծ սերունդի մը՝ Սահակի և Մեսրոպի ձեռնասուններուն։

Դարեդարձեր տոնեցինք անկե հետո ալ։ Ավարայրը, որ փառքով և պտրծանքով պճներ էր մեր պատմությունը և որ իր 1500-ամյակը կլրացներ 1951-ին, հայ ժողովուրդը նույնպես եղբայրացուց վայրկյան մը՝ հիշելու ատեն սրբազան կռիվը, զոր Վարդանանը մղեր էին՝ պաշտպանելու համար անկախությունը հայ ժողովուրդին, և անոր հետ մեկտեղ հոգեկան դանձը ոսկեդարին, որ առաջին մեծ փորձն էր եղեր հայ հոգին աղատագրելու։

Ուրիշ դարեդարձեր, վերջին կես գարուն, վերածվեցան նույնպես համազգային տոներու։ «Վասունցի Դավիթ»-ը, 1939-ին, վրկեցինք հազարամյա հեքիաթներու մշուշեն, պատմության մեջ զետեղելու համար զայն և պանծացնելու համար անոր մեջ հայ ժողովուրդի դարավոր ճիգը՝ թոթվելու բոլոր լուծերը, և 1963-ին Նարեկի սուրբը կանչեցինք իր գերեզմանեն՝ աղաղակելու համար աշխարհին, թե ինչպես կրցած է հայ հոգին մագլցիլ հանճարներու բարձունքը։ Իսկ 1963-ին, երբ կլրանար 1600 տարին, հորմե հետե իր աչքերը լույսին էր բացեր Տաբոնի Հացեկաց համեստ գյուղին մեջ Մեսրոպ Մաշտոց՝ հայ ժողովուրդը ծունկի եկավ վերստին հիշատակին առջև սուրբերու մեծագույնին, որ լույս էր պարգևեր իրեն.

Հայերեն Աստվածաշունչի առաջին տպագրությունը ևս հրաշալի դեպք մըն էր մեր պատմության մեջ, և արդար էր, որ նշվեր և ան։ Հպարտության նոր առիթ մըն է ահա ան մեզի, որովհետև ան կպանծացնե ոսկի կամուրջը, որ Մեղապարտ Հակոբեն մինչև Ոսկան կերկարի, և անկե կու գա մինչև մեզի, ամբողջ երեք գար լույս ցանելով իր ճամփուն վրա։

Տոնելով բոլոր այս դարեդարձերը, հայ ժողովուրդը իր հաղթանակներն է, որ կտոնախմբե կարգով, լույսի ծարավը, որ տոչորած է զայն բոլոր դարերուն, և մանավանդ իր ճիգերն ու մաքառումները՝ հանուն իր հոգեկան անկախության։

Դարեդարձերով չեն սպառիր, սակայն, մեծ բոպեները մեր անցյալին մեջ։ Անոնցմով լեցուն է մեր պատմությունը իր ամեն քայլափոխին։ Հարյուրամյակներ չորոնենք միայն մեր պատմության մեջ և ոչ ալ կանգ առնենք մեծ դեմքերու և մեծ գեպքերու վրա

լոյ։ Տարվան մեջ որդեղրենք օր մը, որ խորհրդանշե հայոց պատմության բոլոր լուսավոր վայրկյանները, և բոլոր անոնք, որ իրենց հոգին քամած են, որպեսզի չցամքի կանթեղին յուղը։

1927-ին նման փորձ մը բրինք, որոնելով տարվան մեջ օր մը, որ ոգեկոչեր մեր անցյալին բոլոր աղվոր պահերը։ Այդ օրը Թարգմանչաց տոնն եղավ, ու սկսանք տոնախմբել դայն մեր բազմաթիվ դաղութներուն մեջ, մոռնալու համար տարին գոնե օր մը մեր վեճերն ու ոխը, ու եղբայրանալու մեր հպարտության և երկյուղածության մեջ։

Ու հիմա ժամ է տղղային տոնի վերածելու դայն։

Թարգմանչաց տոնը թող խորհրդանշան մը բլլա մեզ համար։ Ան տոնը չբլլա միայն մտավորականներու խտնդավառ հույլին, որ ոգեորության տենդոտ շրջանի մը հայ լեզվին վերածեց ինչ-որ շքեղ կդտներ օտար մարին մեջ։ Տոնն բլլա որքան այն դմայլելի ճիգին, որ ամբողջ սերունդ մը ոգեորեց հայ հոգին ձերբազատելու համար իր կապանքներեն, նույնքան ե այն բոլոր տքնության, որոնցմով շատ մը սերունդներ մաքառեցան դարեդար՝ ձև ու կերպարանք տալու համար հայ ժողովուրդի հոգեկան ստեղծագործության, օտարեն խլելով ինչ որ մարդկային միտքը հորիներ էր պերճ ու վսեմ, և անցնելով դայն հայ հոգիին բովեն, օտարեն նպաստ մուրալով, բայց բյուրիցս դայն հատուցանելով։

Տոնն թող բլլա ան բովանդակ հայ մշակույթին։ Տոնը այն մեծ տքնության, որ Թարգմանության Թաղուհին ստեղծեց և հայ եկեղեցին պճնեց իր սքանչելի շարականներով, դարերու մշուշին մեջեն փառքեր որոնեց հայ ժողովրդին համար և հայ մտքին հորիզոն բացավ, իր հոգին չ՚ուշաբեց իմաստություն կորզելու համար բնության մեծ խորհուրդներեն և թևածեց անոնցմե ալ անդին, Արարիչը իր խուցը բերավ և խոսքի նստավ անոր հետ։

Տոնը Խորենացիին, Եղնիկին և Եղիշեին, Կորյունին ու Փարպեցիին, Ագաթանգեղոսին ու Փավստոսին, Մանդակունիին, Դավիթ Անհաղթին, ու դեռ շատերուն, որոնք Սահակին ու Մեսրոպին շունչը փոեցին ամբողջ դարու մը վրա, ու ջահը տվին հաջորդ դարերուն, որպեսզի հետդհետե պատմության մեջ հայտնվին Անանիան ու Սեբեոսը, Սյունեցին ու Ասողիկը, Օձնեցին ու Տաթևացին, ու դան դեռ շարան-շարան փառավոր դեմքեր իրենց դարը պճնելու համար, որպեսզի հայ հոգին Նարեկացիին հետ դաղաթանա, ու քաղցրանա Շնորհալիին հետ։

Տոնն բլլա թող Տրդատին ու Մանվելին, ու համեստ, բայց հոյակապ այն վարպետներուն, որոնք կոթողներ կանդնեցուցին հայ հոգին վրա ու դիմացուցին դանոնք դարերուն, Թափառեցան աշխարհե-աշխարհ ու հայ հոգին նշխարի պես բաժնեցին բոլոր ժողովուրդներուն։

Տոնն բլլա թող Ռոսլինին ու Պիծակին, ու այն ամենուն, որոնք ճրագի մը վտիտ լույսին տակ դույներուն կյանք տվին ե գոհարներ հանձնեցին մաղաղաթներուն։

Տոնն բլլա անոնց, որոնք վտնքերու խուցը բաշված, իրենց հոգին բացին տեսիլքներու ու թռիչք տվին իրենց մտածումներուն։

Տոնն բլլա թող դույդ երդնկացիներուն, Ագթամարցիին ու Թլկուրանցիին, Ֆրիկին ու Սյունեցիին և բոլոր անոնց, որոնք վանքերուն պատուհան բացին ու իրենց տաղերով խառնվեցան կյանքին և իր հուդումներուն։

Տոնն բլլա թող դմայլելի մեր աշուղներուն՝ Քուչակեն մինչև Սայաթ-Նովա, որոնք սիրո և կարոտի իրենց երդերով ման եկան հայոց դյուդերը և քաղցրացուցին հայ պանդրխտությունը։

Տոնն բլլա թող Մեղապարտ Հակոբին ու բոլոր անոնց, որոնք տքնեցան ու տառապեցան իրեն պես, որպեսզի գիրք տան հայուն ե չթողուն, որ աշխարհը դայն գլե անցնի։

Տոնն բլլա Հերտցիին ու Ամիրդովլաթին և նաև անոնց, որոնք գիտության ճամփան ևս բացին հայուն։

Տոնն բլլա և մեծ Կոմիտասին ու իր սրբազան առաքելության, որ հայ երդը փրկեց ու դայն սիրցուց մեզ և օտարներուն։

Սակայն բլլա թող տոնը և անոնց, որոնք բնավ անուն չունեցան, բայց իրենց մտքին հնքը և աչքերուն լույսը տվին, որպեսզի հավերժական դառնա հայ հոգին, դարե-դար անցնի՝ գոհար ցանելով իր ճամփուն վրա, խրոխտ և հպարտ հասնի և մեզի՝ երակներուն մեջ խլրտելու համար մարդոց մեր օրերուն ալ, և ոգեորե դանոնք բարձունք մագլցելու իրենց նոր ճիգին մեջ։

Ամենստ մտավորականը, որ ձեզ կխոսի, մեկն եղավ բախտավորներեն, որոնք մոտեն ապրեցան խանդավառ օրերը 1913 տարվան։

Հիմա սրբազան այս անկյունին մեջ, ուրկե դարերը անցան՝ լույսի հետքեր ցանելով, հայրենի այս հոգին վրա, ուր հայ ժողովուրդը լույսի ծարավով բռնկած է վերստին անդամ մը ևս կվերապրի ան հին օրերու ոգեորությունը, որ, ավա՜ղ, պիտի խեղդվեր շուտով՝ հաղիվ բուռե մը տեսած։

Ան մեկն եղավ նաև անոնցմե, որոնք ասկե քառասուն տարիներ առաջ հայ մշակույթի առաջին տոնը սարքելու մտածումն ունեցան համեստ հայ դաղութի մը մեջ, որ Ռումա-

Պրոֆ. Հ. Ժ. Սիրունին

նիան էր, և կհանդգնի ինքդինք թարգմանը կարծել այս պահուս բազմաթիվ եղբայրակիցներու, բաղձալով, որ Թարգմանչաց այս տոնը հայ մտքի դարավոր ճիգին խորհրդանշանը դառնա այլևս ցմիշտ։

Խոսքը Ձերն է, Վեհափառ, Դուք, որ հազիվ թե պատանի, լույսի տոնին նվիրված գեղոնն արտասանեցիք քառասուն տարիներ առաջ, տեր կանգնեցեք հիմա տոնին, ու ըրեք, որ ան նվիրականանա իբրև մեծագույնը տոներուն ու դարե-դար անցնի, որպեսզի աշխարհ չմոռնա, թե այս փոքր ժողովուրդը իր հոգին ճմլեց սերունդներուն մեջ՝ իր շուրջը լույս սփռելու համար»։

Աստվածաշնչի տպագրության երեքհարյուրամյակի հանդիսության վերջում Վեհափառ Հայրապետը օրհնության խոսք ասաց, շեշտելով, որ «Արևմտյան պատմաբաններ ասել են, որ հայ ժողովրդի գոյությունը պատմության առեղծվածներից մեկն է։ Արդարև, մեր ժողովուրդն անցյալում ապրել է դժբախտ կյանքի պայմանների մեջ, ու ստույգ է, որ գոյություն չէր ունենար և կանցներ պատմության թանգարանը, եթե չունենար ապրելու բացառիկ կենսունակություն և ստեղծագործելու հանճար։

Եվ ա՛հա այսօր կա՝ մեր ժողովուրդը անցյալի այնքան ողբերգություններից ետո, կենդանի է նա, ապրում է և ստեղծագործում՝ իր հայրենիքում, ամրապնդում իր պետականությունը և արագ քայլերով առաջ է ընթանում կյանքի բոլոր բնագավառներում։

Նույնքան առեղծված է նաև մեր մշակույթի գոյությունն ու զարգացումը։

Այսօր նշում ենք հայերեն տպագրված առաջին Աստվածաշնչի երեքհարյուրամյակը։ Դա հայկական մշակույթի համար մեծ նվաճում է, կոթող, մեծ հանգրվան, երբ մեր ժողովուրդը մի մեծ ոստում կատարեց մշակույթի ասպարեզում. դեպի առաջ, դեպի վեր։

Այսօր, երախտապարտ սրտով, աղնիվ հպարտությամբ ոգեկոչում ենք հիշատակը, տեսիլքով բոցավառված Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսին, Ոսկան Երևանցի վարդապետին և նրանց անմիջական գործակիցներին, որոնք իրագործեցին այդ հրաշքը մեր մշակույթի պատմության մեջ։

Փա՛ռք և օրհնությո՛ւն նրանց մեծ գործին և սուրբ հիշատակին։

Այս պահուս մեր հայացքը ուղղվում է նաև դեպի մեր ներկան, մեր մշակույթի արգի մշտարթուն պահապաններին և մեր ժիր մշակներին, որոնք մեր օրերում նոր և հրաշալի նվաճումներ են կենսագործում մեր մշակույթի զարգացման ասպարեզում։

Մենք, որպես եկեղեցի և ժողովուրդ, հպարտ ենք մեր հին և նոր մշակույթի նվաճումներով՝ լինի հայրենի հողի վրա, թե սփյուռքի տարածքի վրա։ Մեր մշակույթի մեր օրերի առաջընթացը կատարվում է հսկայաքայլ, ինքնատիպ նոր ձևերի մեջ։

Այս լուսավոր առիթով, Մենք, խոր գնահատանքով ու երախտապարտ զգացումներով, ուզում ենք հիշել մեր գիտնականներին, մեր բանաստեղծներին ու գրագետներին, մեր արվեստագետներին, մեր կրթական մշակներին և հայ մշակույթի բոլոր վաստակավորներին, որոնք վավերական տաղանդով և հայկական սուրբ ներշնչումներով, հիների նման մի նշխար հացով և մոմի վառ լույսի տակ, կերտում են նոր արժեքներ ու հարստացնում հայ ազգային մշակույթի գանձարանը։

Բայց մենք այս պահուն չենք կրնար չհիշել, նույն երախտապարտ սրտով նաև մեր հայրենի պետական իշխանությունը՝ Սովետական Հայաստանի իշխանությունը, որ հովանավորող և քաջալերող հզոր ուժն է մեր օրերի հայ ազգային մշակույթի զարգացման ու ծաղկման։ Այդ ոգին տիրական է, Մենք անձամբ դիտենք այդ, մեր հայրենի կատա-

վարության բարձրագույն պատշտոնատարներից մինչև ամենահամեստ պետական դործիչը։ Արդարություն պետք է անել մեր վերածնած մայր հայրենիքին և նրա աղդաշեն կառավարության։

Փա՛ռք մեր ապրող, շնչող, իր նոր կյանքն ու մշակույթը կերտող հայ ժողովրդին։

Վերջացնելուց առաջ խդճի մի պարտք ունենք կատարելիք։ Այսօր հայ մշակույթի օրվա բարեպատեհ տոհթով ուզում ենք մասնավոր հիշել մեդ բոլորիս սիրելի, բազմավաստակ բանաստեղծ, պատմաբան ու դրագետ Հ. Ճ. Սիրունու պատկառելի վաստակը։ Նա քչերից մեկն է, եթե ոչ միակը, Վարուժանի, Սիամանթոյի և մեր մյուս նահատակ մտավորականների սերնդից, որ ահա մոտ 60 տարի է, Կ. Պոլսում և ապա Ռումինիայում, աննահանջ կորովով ու նվիրումով, հաճախ դժվարին պայմանների ու տտոապտնքների մեջ, ծառայում է հայ մշակույթին և մեր ժողովրդին, իր մաքի լույսն է բաշխում պտակառելի դրական-դիտական աշխատությունների։ Ի վարձատրություն Հ. Ճ. Սիրունու մեր մշակույթին մատուցած ծառայություններին, այս տտհուս Մենք նրա կուրծքը պիտի դորդարենք Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարդի շքանշանով՝ մաղթելով նրան քաջառողջություն և բեղուն դործունեություն, տակավին երկար տարիներ, հայ մշակույթի ծառայության պայծառ ճանապարհին վրա»։

Վեհափառ Հայրապետը ներկաների ծափերի տարափի ներքո, վաստակավոր մտավորականի կուրծքը դարդարում է հայ եկեղեցու մեծագույն շքանշանով։

Հ. Ճ. Սիրունին երրորդ հայ մտավորականն է, որ հանդուցյալ Արշակ Ալրոյաջյանից և պրոֆ. օր. Սիրարփի Տ. Ներսիսյանից հետո, արժանանում է այդ բարձր հայրապետական դնահատության։

Արժան և իրավ։

Տասը բոպե ընդմիջումից հետո սկսվում է Աստվածաշնչի տպագրության երեքհարյուրամյակին նվիրված հանդիսության երկրորդ մասը՝ զուտ դեղարվեստական ծրագրով։

Նյութի է, ունենում Հայաստանի պետական կամերային անսամբլը, դեղարվեստական դեկավար՝ Զարեհ Սահակյանց, մենակատար՝ ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դավնեկիր Գոհար Գասպարյան. առաջին ջութակ՝ Զարեհ Սահակյանց, Հմայակ Դուրգարյան, Ռուբեն Պոդոսյան, Գայանե Գրիգորյան, Գևորդ Ավետիսյան, Կոնստանդին Բաղդասարյան, Կարապետ Հայրապետյան, Մանուկ Գալստյան, Լադո Սեյրանյան։ Երկրորդ ջութակ՝ Վիլյամ Մաաուրյան, Լևոն Գալստյան, Բենիամին Գինոսյան։ Թավջութակ՝ Ալբերտ Մաթևոսյան, Սարգիս Ավետիսյան, Պավել Բժիկյան, կոնտրաբաս՝ Հայկ Մհերյան։ Դաշնակահարուհի՝ Ադդա Սահակյանց։

Կամերային անսամբլի ծրագրում կային հետևյալները.

Կոմիտաս վարդապետ՝ «Գութանի երգ», «Լռովա հորովել», «Զինար ես», «Հոյ նապան իմ»։

Ալեքսանդր Հարությունյան՝ սիմֆոնետայի Բ. և Գ. մասը, Վիվալդի «Կոնչերտո կրոսսո» (ութ մինոր, երկու ջութակի և թավջութակի համար, երեք մասից բաղկացած։ Մենակատարներ՝ Զ. Սահակյան, Կոնստ. Բաղդասարյան և Ա. Մաթևոսյան)։

ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի, պետական մրցանակի դավնեկիր Գոհար Գասպարյանը բոլոր ներկաներին մի անգամ ևս գերեց իր բարձր կատարողական արվեստով։ Մեծ արվեստագետուհու երգացանկում կային հետևյալները.

Կոմիտաս վարդապետ՝ «Քելե, քելե», Սդրադելլա՝ եկեղեցական արիա։ Պաիսիելլո՝ վարիացիաներ։ Բախ-Գունո՝ «Ավե Մարիա»։ Կանաչյան՝ «Օրոր»։

Համերգի վերջում Վեհափառ Հայրապետը ջերմորեն շնորհավորում է երիտասարդ արվեստագետներին և մեծատաղանդ երգչուհի Գոհար Գասպարյանին՝ իրենց դմայլելի համերգի համար։

Աստվածաշնչի տպագրության 300-ամյակի հոբելյանական հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պտհդանիչ»-ով։

ԵԹՈՎՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Վեհափառ Հայրապետի հրավերով հոկտեմբերի 22-ին, շաբաթ օր գիշերվա ժամը 12-ին Մ. Աթոռ Ս. Էջմիածին է ժամանում եթովպական եկեղեցու պատվիրակությունը, որը Մոսկվա էր այցելել ռուս պրովոսլավ եկեղեցու պատրիարք Ն. Սրբություն Ալեքսիի հրավերով։

Պատվիրակության կազմում էին Աքսումի Տ. Հովհաննես արքեպիսկոպոսը (պատվիրակության ղեկավար), Հարրարի Տ. Աբրահամ եպիսկոպոսը, Ադիս-Աբեբայի Ս. Պողոս Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Միքայել Նիսու վարդապետ, Եթովպիայում միսիոներական շարժման ղեկավար Տ. Մադեին Հովհաննես վարդապետը;

Պատգամավորությանը ուղեկցում էին Մոսկվայից Մինսկի Տ. Անտոնի արքեպիսկոպոսը և ավագ սարկավագ Նիկոլա Դմիտրիևը։

Երևանի օդանավակայանում, հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, քույր եկեղեցու հարգարժան պատվիրակությանը դիմավորում են Տ. Հայկազուն և Տ. Կոմիտաս սրբազանները, միաբան հայրեր։

Իշման Ս. Սեղանի առաջ իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, Տ. Հովհաննես արքեպիսկոպոսը իր շքախմբի անդամներով և ուղեկիցներով առաջնորդվում է Վեհարան, ուր ընդունվում է Հայոց Հայրապետի կողմից։

Ողջույնի, բարի գալստյան ջերմ արտահայտություններից հետո, քույր եկեղեցիների ներկայացուցիչները հյուրընկալվում են Վեհարանում։

Հոկտեմբերի 23-ին, Լիրակի, պատվիրակությունը Մ. Տաճարում ներկա է լինում եպիսկոպոսական ձեռնադրության և հայրապետական Ս. պատարագին։

Հայոց Հայրապետը Իր քարոզի մեջ ջերմորեն ողջունում է եթովպական քույր եկեղեցու պատվիրակության և նրա ընկերակցող անձանց ժամանումը Մ. Աթոռ, սրտագին բարեմաղթություններ անելով քրիստոնեական եկեղեցիների համագործակցության, ի Քրիստոս սիրո, եղբայրության և միության համար։

Հավարտ Ս. պատարագի, հարգարժան հյուրերը առաջնորդվում են Վեհարան, ուր պրույց են ունենում Հայոց Հայրապետի հետ, ջերմ, եղբայրական մթնոլորտում։

Ժամը 4-ին, Վեհարանի սեղանատանը եթովպական պատվիրակության և նրան ուղեկցող անձանց պատվին տրվում է պաշտոնական ճաշկերույթ։

Ընդունելությանը ներկա են Մ. Աթոռի միաբանությունը, Գեր. Հոգ. խորհրդի անդամները, ուխտավորներ ԱՄՆ-ից, որոնց թվում՝ տեր և տիկին Հ. Նազարյանը, տեր և տիկին Զ. Հալաջյանը՝ Հ. Բ. Ը. Միության Նյու-Յորքի տեղական մասնաճյուղի նախագահ, Խ. Զուլաճյանը՝ Հ. Բ. Ը. Միության Ֆրեզնոյի տեղական մասնաճյուղի ատենապետ, Հ. Քյուրքյանը՝ Հ. Բ. Ը. Միության Լոս-Անջելոսի տեղական մասնաճյուղի ատենապետ, Ա. Ֆեներճյանը՝ Նյու-Յորքի հայոց նոր կառուցվող եկեղեցու ճարտարապետական հանձնաժողովի ատենապետ, տիկին Վերժինե Ֆեսճյանը՝ Նյու-Յորքի հայոց նոր կառուցվող եկեղեցու Օժանդակ Տիկնանց հանձնաժողովի անդամ և ուրիշներ։

Ընդունելության ներկա է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր, հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը։

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։ Լուսարարապետ Տ. Հայկազուն սրբա-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՊԻՍԿՊԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

պանը առաջին բաժակը առաջարկում է խմել Մ. Աթոռի պայծառության և նրա գահակալի կենաց օրվա ձեռնադրության շնորհների և հոգևոր ուրախության բարեմաղթությունների ներքո։

Հայոց Հայրապետը, խոսք առնելով, իր գոհունակությունն է հայտնում եթովպական եկեղեցու պատվիրակության Մ. Աթոռ ժամանման ուրախ առիթով և շեշտում, որ «այսօրվա ճաշը նվիրված է մեր թանկագին հյուրերի պատվին, որոնք եկել են հեռավոր Եթովպիայից։ Մենք շատ ուրախ ենք սույն այցելության համար։ Մեզ համար հոգևկան անհրաժեշտություն է՝ փոխադարձ կապ պահել եթովպական քույր եկեղեցու հետ, ամեն տարի կամ երկու տարին մեկ անգամ նման փոխայցելություններ կատարելով։ Եթովպական եկեղեցին պատմական և քույր եկեղեցի է մեզ համար։ Այսօր, էկումենիկ շարժման այս օրերին մեր երկու եկեղեցիների հարաբերությունները շարունակում են լինել նույնքան սիրալիր, եղբայրական, համագործակցության և միության ոգով։ Մեզ ոչինչ չի բաժանում եթովպական եկեղեցուց։ Այս զգացմունքը խորացավ մեր մեջ մանավանդ, երբ 1965 թվի հունվարին այցելեցինք Եթովպիա։ Աղդիս-Աբեբայում Ն. Վեհափառության Հայլե Սելասիե կայսրը Մեզ ընդունեց ջերմ, եղբայրական հարգանքով և սիրով։ Մենք լավագույն հիշողություններ ենք պահել պատմական այդ օրերից և միշտ պիտի աղոթենք նորին Վեհափառության առողջության և Եթովպիայի բարօրության համար։ Մենք պիտի աղոթենք նաև Եթովպիայի տղնիվ, բարեպաշտ ու հավատացյալ ժողովրդի առաջընթացի համար։

Այս հանդիսավոր առիթով Մենք բաժակ ենք բարձրացնում եթովպական եկեղեցու բարձրապատիվ ներկայացուցիչների կենաց, գլխավորությամբ Աքսումի Տ. Հովհաննես արքեպիսկոպոսի։

Ձեզ բոլորիդ քաջառողջություն և ձեր աստվածահաճո գործերին հաջողություն։ Միաժամանակ Մենք կցանկանայինք, որ նորին Սրբազնությունը թարգմանը լիներ Մեր եղբայրական հարգանաց և սիրո՝ Ն. Սրբություն Եթովպիայի սրբազան պատրիարքի և նրա տեղապահ ամեն. Տ. Թեոֆիլոս արք. ի մոտ, վստահեցնելով նրանց Մեր անկեղծ, բարեկամական զգացմունքների մասին։ Մեզ համար, Մ. Աթոռիս համար մեծ ուրախություն պիտի լիներ ողջունել Ն. Սրբությունը այստեղ, հայ եկեղեցու պատմական ու դարավոր այս սուրբ հողին վրա։

Թող կեցցե եթովպական եկեղեցին, թող կեցցե Եթովպիայի սրբազան պատրիարքը, կեցցե նաև հավատքի պաշտպան, քրիստոսասպսակ Հայլե Սելասիե կայսրը»։

Հայոց Հայրապետի սիրալիր խոսքերին պատասխանելով Աքսումի Տ. Հովհաննես արքեպիսկոպոսն ասաց. «Այսօր ուրախության մեծ օր է բոլորիս համար, ինչպես ասում է սաղմոսերգուն՝ «զի՛ բարի, զի՛ վայելուչ, զի՛ գեղեցիկ, զի՛ բնակեսցեն եղբարք ի միասին»։ Գալիս ենք հեռավոր Եթովպիայից, բերելով մեր եկեղեցու և մեր հավատացյալների ողջույնն ու հարգանքը հայ եկեղեցուն, նրա գահակալին, հոգևորականությանը և հավատացյալներին։ Մենք հին բարեկամներ ենք։ Մեր երկու եկեղեցիների և ժողովուրդների բարեկամությունը դարերի հնություն ունի։ Շատ հայ վանականներ գործել են Եթովպիայի եկեղեցու համար։ Մեր վանականներից ոմանք այցելել են հայոց աշխարհը, ամրապնդելով երկու եկեղեցիների բարեկամությունը։ Այդ պատմական եղբայրությունը նոր բովանդակություն է ստանում մեր օրերին, վերջերս Հայոց Հայրապետի, Եթովպիա կատարած շնորհաբեր այցելությամբ։ Մեր եկեղեցին, մեր հոգևորականությունն ու հավատացյալ ժողովուրդը լավ հիշողություններ են պահել 1965 թվի Հայոց Հայրապետի մեզ տված պատմական այցելությունից։ Մեր կայսրը շատ պատվեց ու մեծարեց Հայոց Հայրապետին, նախ նրան անձնապես, որպես տիրայր հոգևորականի, ինչպես նաև՝ որպես պատմական և հնագույն քրիստոնեական եկեղեցու Գերագույն Պետի, եկեղեցի, որ մոտ է մեր սրտին, մեր խոհերին, որպես միաբնակ քույր եկեղեցու։ Մենք էլ համաձայն ենք Ն. Սրբություն Հայոց Հայրապետի հետ, երբ նա նշում էր, որ մեր եղբայրությունը, որ հին է, ընթանում է նոր ուղիներով։ Մենք ցանկանում ենք և աղոթում, որ հայ և եթովպական եկեղեցիների համագործակցությունը է՛լ ավելի ամրապընդվի Քրիստոսի փառքի համար, նրա սուրբ եկեղեցու տոաքելության համար, մեր երկու ժողովուրդների ծոցում, ինչպես նաև՝ ամբողջ աշխարհում։ Հայ և եթովպական եկեղեցիների եղբայրության և համագործակցության կենաց բաժակ եմ բարձրացնում»։

Այնուհետև Հայոց Հայրապետը բաժակ է առաջարկում Ն. Սրբություն Ալեքսի պատրիարքի կենաց, ասելով. «Արդարև, որքան ճիշտ է ասել սաղմոսերգուն եղբայրության մասին։ Մենք այդպես էլ դդում ենք մեր եղբայրությունը եթովպական եկեղեցու հետ։ Բայց մեր ուրախությունն աճում է, երբ մեզ հետ ուրիշ եղբայրներ էլ են լինում։ Մեզ հետ են այսօր նաև ռուս ուղղափառ եկեղեցու մեր եղբայրները, որոնք մեր սրտին միշտ շատ մոտ են։ Հայ ժողովրդի պատմության

մեջ և կյանքում ռուս բարի ժողովուրդը կատարել է մեծ և կարևոր դեր։ Մեր եղբայրությունը ռուս եկեղեցու և ժողովրդի հետ խորը արմատներ ունի։ Ահա թե ինչու, երբ մենք ռուս եղբայրների հետ ենք լինում, միշտ հիշում ենք անցյալը, ներկան ու նաև ապագան։ Այս զգացմունքներով Մենք ջերմորեն ողջունում ենք ներկայությունը Մինսկի Տ. Անտոնի արքեպիսկոպոսին։ Այս առթիվ Մեր մտածումը կգնա նաև դեպի Մեր ի Քրիստոս սիրեցյալ եղբայր Ն. Սրբություն Ալեքսի պատրիարքը, որին Մենք սիրում ենք անկեղծ սիրով և ջերմորեն։ Նա շուտով 89 տարեկան կլինի։ Մեր բոլորի սրտագին մաղթանքն է, որ նշենք Ն. Սրբության հարյուրամյակը, ի փառս Քրիստոսի եկեղեցուն և աշխարհի խաղաղության։

Կեցցե ռուս պրովոսլավ եկեղեցին և նրա պատրիարք Ալեքսին»։

Հայոց Հայրապետի սրտառուչ խոսքերին պատասխանում է Տ. Անտոնի արքեպիսկոպոսը, երախտագիտության և շնորհակալության ուղերձով, ասելով. «Շատ ուրախ եմ, որ ներկա եմ այս հույժ կարևոր և եղբայրական սեղանին։ Երբ ես սովորում էի Հոգևոր Ճեմարանում, մեր դասախոսները մեզ ասում էին, թե հայ եկեղեցին առաքելական է և ամենահին եկեղեցիներից մեկը։ Դեպի հայ եկեղեցին իմ մեջ զարթնել է խորունկ հարգանք և սեր ուսանողության տարիներից, որը հետագայում, իմ շփման հետ հայ եկեղեցու և հայ հոգևորականության հետ՝ Գևորդ Զ-ի և Վազգեն Ա-ի օրոք վերածվել է խորունկ հարգանքի և երախտագիտության զգացմունքների։

Արևային է ձեր երկիրը, և հոգին՝ հայ ժողովրդի։ Արևը կյանքի, կենսունակության աղբյուրն է։ Ահա թե ինչու այստեղ, այս աստվածաշնչական երկրում ամեն անկյուն արևոտ է, պայծառ, և ամեն սիրտ՝ ջերմ, մարդկային։ Բայց ես կարծում եմ, որ Հայաստանի արևը այսքան պայծառ չէր լինի, եթե Միածինը իր փառքով և լույսով իջած չլիներ ա՛յս հողի վրա և հայ հոգիների մեջ։ Քրիստոսի լույսին ջերմությունն ու ազդեցությունն է զգացվում այստեղ, ամեն քայլափոխին, հայ ժողովրդի նոր նվաճումների մեջ։ Աճում են նաև մեր քրիստոնեական եղբայրության հոգևոր կապերը քրիստոնեական այլ եկեղեցիների հետ, որոնք ապրում են Քրիստոսի նույն լույսի և հավատքի մեջ։ Թող Աստված աճեցնի իր լույսն ու հավատքը բոլոր սրտերի մեջ, բոլոր հորիզոնների տակ, մարդոց եղբայրության համար»։

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը սեղանակիցներին ներկայացրեց նորապսակ Տ. Գարեգին եպիսկոպոսին, բարեմաղթություններ անելով նրա ապագա առաքելության հաջողության համար։

Վերջում որդիական երախտագիտության, շնորհակալության ջերմ խոսք ասաց Տ. Գարեգին Եպիսկոպոսը, խոստանալով, որ կարդարացնի Հայոց Հայրապետի բարձր վստահությունը իր բոլորանվեր ծառայությամբ։

Եթովպական եկեղեցու պատվիրակության պատվին կազմակերպված ընդունելությունը վերջացավ խմբովին երգված «Տերունական աղոթք»-ով։

Երեկոյան ժամը 8-ին հյուրերը Վեհարանում դիտեցին «Էջմիածին» կինոֆիլմը։

Հոկտեմբերի 24-ին հարգարժան հյուրերը այցելեցին Մ. Տաճարի եկեղեցական արվեստի թանգարանը, ապա Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի տաճարները, Զվարթնոցի ավերակները, մայրաքաղաքի տեսարժան վայրերը և Օշականի Ս. Մեսրոպի եկեղեցին ու դամբարանը։

Հոկտեմբերի 25-ին, երեքշաբթի օր, եթովպական եկեղեցու պատվիրակությունը, Տ. Հուսիկ եպիսկոպոսի և Տ. Գրիգոր վրդ. Եղիայանի ընկերակցությամբ, ուխտի գնացին Ս. Գեղարդի վանքը։

Ճանապարհին հյուրերը այցելեցին նաև Գառնիի ավերակները։

Երեկոյան ժամը 7-ին հարգարժան հյուրերը այցելեցին Հոգևոր Ճեմարան, ուր ուսանողության կողմից ընդունվեցին ջերմորեն։

Տեսուչ, հոգ. Տ. Ներսես ծ. վրդ. Պողոսպալյանը բարի գալուստ մաղթեց հյուրերին։

Ուսանողները, ի պատիվ հյուրերի, կատարեցին մի շարք կրոնական և հայրենասիրական խմբերգեր։

Վերջում Աքսումի Տ. Հովհաննես արքեպիսկոպոսը ուսանողությանը տվեց իր պատգամն ու օրհնությունը։

Հոկտեմբերի 26-ին, չորեքշաբթի.— Առավոտյան ժամը 11-ին հյուրերը այցելեցին Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց մատենադարան։

Ժամը 1-ին եթովպական եկեղեցու պատվիրակությունը և նրան ընկերակցող անձինք հրաժեշտ առին Հայոց Հայրապետից, ու մեկնեցին Մոսկվա։

Օդանավակայանում հարգելի հյուրերին ճանապարհեցին՝ Լուսարարապետ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի գլխավորությամբ՝ Ս. Աթոռի միաբանությունը։

Հյուրերին բարի ճանապարհ մաղթեց նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր՝ հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Սուրեն Հովհաննիսյանը։



ՄԵԾԱՐԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ի ՊԱՏԻՎ ԳԵՐ. Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

Ամերիկայի հայոց թեմական խորհրդի կարգադրությամբ վերջերս մեծարանքի ընդունելություն է կազմակերպվում՝ ի պատիվ ԱՄՆ-ի հայոց նախկին առաջնորդ գեր. Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի՝ որպես թեմական հարգանքի արտահայտություն և գնահատություն Սրբազանի երկու շրջանով կատարած առաջնորդական արդյունաշատ գործունեության։

Ընդունելությունը տեղի է ունենում հունիսի 10-ին, երեկոյան, Լոնգ Այլենդի Սրբոց Նահատակաց Եկեղեցու նորաշեն դպրոցի հանդիսասրահում՝ մասնակցությամբ բազմաթիվ հոգևորական և աշխարհական հրավիրյալների։

Սեղանը օրհնում է Սիոն Սրբազանը։ Թեմական խորհրդի դանձապահ Ժորժ Բաշյանը բացատրում է օրվա ձեռնարկի նպատակն ու նշանակությունը։ Այնուհետև՝ սեղանը ղեկավարում է դոկտ. Հակոբ Ներսոյանը։

Ընդունելության ժամանակ երախտագիտության, շնորհակալության ջերմ խոսքեր են արտասանում արժ. Տ. Առնտել քահ. Գասպարյանը՝ Թեմական խորհրդի ատենապետը, Տիգրան Բոյաջյանը՝ Թեմական պատգամավորական ժողովի ատենապետը, Սուրեն Մանվելյանը՝ առաջնորդարանի դիվանապետը, Տ. Շահե եպս. Աճեմյանը՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի դիվանապետը, որը հյուրաբար գտնվում էր Նյու-Յորքում, և Հայ Ավետարանական Համայնքի հովիվ վեր. Սենեքերիմ Սյուլահյանը։

Ընդունելության ժամանակ ընթերցվում են նորընտիր առաջնորդ Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյանի խնդակցական հեռագիրը, վեր. Անդրանիկ Պետիկյանի և եկեղեցիների Ազգային խորհրդի նամակները, ինչպես նաև՝ բազմաթիվ նամակներ և հեռագրեր՝ ուղղված Սրբազանին։

Ընդունելության ընթացքում Սիոն Սրբազանին նվիրում է թեմի կողմից ադամանդակուռ, ոսկրուխտյա եպիսկոպոսական մի մատանի, և ապա մարմարյա մի հայկական խաչ, որը կրում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետևյալ մակագրությունը՝ «Սիրո ողջույն գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսին՝ անկեղծ գնահատանքով»։ Այնուհետև ընթերցվում է Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության հետևյալ հեռագիրը, որն ունկնդրվում է հոտնկայս.

«Ջերմ ուրախությամբ և գնահատանքով կողջունենք Սիոն արքեպիսկոպոսի առաջնորդական, չինարար, հավատարիմ գործունեության շրջանը, մաղթելով անոր արեշատություն՝ շարունակելու իր նվիրյալ ծառայությունը Հայ Եկեղեցվո և ժողովրդին։ Սուրբ էջմիածնեն սիրո ողջույն և օրհնություն Սիոն Սրբազանին»։

Ընդունելության ավարտին, ներկաների ջերմագին ծափերի ներքո, խոսք առավ Տ. Սիոն արքեպիսկոպոսը և ասաց.

«Ավելի քան յոթուկես տարի առաջ, երբ մենք, ձեր հրավերով, Հարավային Ամերիկայեն եկանք ստանձնելու համար թեմական առաջնորդի ծանր պաշտոնը, մեր առաջին քարոզին մեջ հայտարարեցինք՝ կրկնելով Տերունական խոսքը, թե՝ «ոչ եկի պաշտոն առնուլ, այլ պաշտելու։ Չեկանք ծառայություն ուզելու կամ ընդունելու համար, այլ եկանք ծառայելու համար։

Եվ կհուսամ, թե մեր խոստումը հարգեցինք և իբրև եկեղեցական մեր ուխտին հավատարիմ մնացինք, որչափ որ կարելի է մարդկորեն։

Այս երեկո կեցած ձեր առջև վերջին անգամ, թեթևցած ծանր բեռն, հոգևոր գոհունակությամբ, հանգիստ խղճով և բարեկամական սիրով վերջին ողջույնը կու տամ ձեզի։ Իբրև վերջին բարեկամական թելադրություն, եթե կուզեք պատգամ, երեք խոսք ունիմ.

Առաջին. այն համերաշխական ոգին, որով դիս հրավիրեցիք յոթուկես տարի առաջ, դա-

լու և այս թեմը ձեզի հետ միասին կազմակերպելու և Հայաստանյայց եկեղեցին պայծառացնելու,— և ես չանցի այն խոստումը կատարել, կթելադրեմ և կխնդրեմ, որ նույն համերաշխական գործակցությունը, այն բարի ոգին շարունակվի այս թեմի մեջ։

Երկրորդ. մեր թեմի մեծագործությունը և ամենեն պատվաբեր գործը պիտի ըլլա՝ Մայր Տաճարի և մշակութային կեդրոնի կառուցումը, ու ես ուրախ եմ և երջանիկ, որ իմ պաշտոնավարության շրջանին սկսավ։ Այսպիսի մեծ գործեր շուտ չեն ավարտիր, բայց իմ փափագս և խնդրանքս պիտի ըլլա, որ այդ գործը կիսկատար չմնա, շուտով ավարտի իբրև պատվաբեր, դարերու պարծանք եղող մեր ժողովուրդին, իբրև հայ ժողովուրդի միլիոնավոր նահատակներու մեծագույն կոթող և մեծագույն հուշարձանը մեր մշակույթին։

Երրորդ թելադրությունը կվերաբերի մեր հոգևոր եղբայրներուն, եկեղեցվո պատասխանատու պաշտոնյաներուն, մասնավորաբար անոնց, որ բարձր ղեկավարի դեր կկատարեն։ Մեր թելադրությունը պիտի ըլլա, որ հակառակ դժվարություններուն, պետք է որ մենք հավատարիմ մնանք մեր աղգային ավանդությանց, հայ եկեղեցվո առաքելական հավատքին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, մեր մշակույթին և մեր աղգային արժեքներուն։

Սրբազան հայրը, շնորհակալություն հայտնելով Թեմական խորհուրդի կողմից իրեն նվիրված եպիսկոպոսական մատանու և երախտագիտություն՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից իրեն որպես հիշատակ ուղարկված հայկական մարմարյա խաչի համար ասաց. «Տ. Տ. Վաղղեն Ա. կաթողիկոսը մեծ առաջնորդ մըն է, մեծ Հայրապետ մը՝ սրբազան նկարագիրով և իդեալներով։

«Կորհնեմ և սրտագին գնահատանքս կը հայտնեմ իմ բոլոր պաշտոնակիցներուս՝ Թեմական խորհուրդին, Էրեսփոխաններուն, հոգևոր պաշտոնյաներուն և աշխարհական պաշտոնակիցներուն։ Մենք ամենքս ալ ժամանակավոր ենք, պիտի անցնինք, բայց պիտի ապրին հայ եկեղեցին, հայ ժողովուրդը, մեր աղգային ոգին և հավատքն ու մշակույթը»։

Ընդունելությունը վերջացավ «Տէր, կենցող»-ով և Սրբազան Հոր աղոթքով։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐ. Տ. ԹՈՐԳՈՄ ԵՊՍ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 24-ին Նյու-Յորքի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում կատարվել է ԱՄՆ-ի հայոց նորընտիր առաջնորդ Տ. Թորգոմ եպիսկոպոս Մանուկյանի պաշտոնակալության հանդիսությունը։

Նույն օրը՝ առավոտյան, Սրբազանը Կալիֆոռնիայից ժամանել է Նյու-Յորք՝ ընկերակցությամբ թեմական խորհրդի անդամ գոկա. Արա Ավագյանի։

Սրբազանը առաջնորդվել է օգանավակայանի սպասման դահլիճը՝ ուր ողջունել և օրհնել է իրեն դիմավորելու եկած հոգևորականության դասը և մեծ թվով հավատացյալների։

Այնուհետև՝ Սրբազանը «Հրաշափառ»-ով մուտք է գործել Նյու-Յորքի հայոց Ս. Լուսավորիչ եկեղեցին։ Հանդիսության ժամանակ արժ. Տ. Ասնակ քահ. Գասպարյանը եկեղեցու բեմից ընթերցել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հունիսի 2-ի սրբատառ կոնդակը, որով հաստատվում էր առաջնորդի ընտրությունը։

Հանուն Ամերիկայի հայոց թեմական խորհրդի, հոգևորականության և եկեղեցական մարմինների՝ առաջնորդ Սրբազանի ժամանումը ողջունում է թեմական խորհրդի անդամ հոգ. Տ. Գարեգին ծ. վրդ. Գաղանճյանը։

Հանդիսության ավարտին խոսք է առնում առաջնորդ Սրբազանը և տալիս իր առաջին օրհնությունն ու պատգամը։

Առաջնորդ Սրբազանը մասնավորաբար իր խոսքի մեջ ասաց. «Նախ փառք կու տամ Աստուծո, որ ապահով և առողջ հասա այս թեմը, և Իր ողորմության միայն կապավինիմ, որպեսզի այն բոլոր հույսերը և ծանր պարտականությունները, որոնք դրված են իմ վրա, կարենամ նվազագույն չափով իսկ իրագործել։

«Երախտագիտության խոսք ունիմ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ Տ. Տ. Վազգեն Ա. Սրբազնագույն կաթողիկոսին, որուն հովանին կաղոթեմ, որ Աստված անպակաս ընե Հայաստանյայց եկեղեցվո վրայենն։ Իբրև ղլուխ Հայաստանյայց եկեղեցվո, իբրև ղեկավարը ընդհանրական Հայաստանյայց եկեղեցվո՝ աշխարհի մեջ ցրված, վստահ եմ, որ Անիկա կակնկալե, որ Իր հոգևոր ղավակները ընթանան ուղիղ ճամփայեն, որպեսզի Հայաստանյայց եկեղեցին իր առաքելությունը իրագործե աշխարհի մեջ։ Այս պատճառով հայ եկեղեցվո ամեն հոգևորական առաջնորդ և կամ ծխատեր քահանա, պարտականություն ունի հավատարիմ մնալու այն ուխտին, որով իր պաշտոնը կստանձնե ձեռնադրությամբ»։

Հանդիսությունն ավարտվում է առաջնորդ Սրբազանի «Պահպանիչ»-ով և միաձայն երգված տերունական աղոթքով։ Ապա Սրբազանը բարձրանում է առաջնորդարան, ուր համախմբվել էր ժողովուրդը։ Տ. Բարգեն եպիսկոպոս Վարժապետյանը, հանուն բոլոր ներկաների, բարիգալուստ է մագթում Սրբազան Հորը։ Սրբազանին ողջունում է նաև հանուն պաշտոնական մարմինների, արժ. Տ. Առնակ քահ. Գասպարյանը։

Ամերիկայի հայոց արևելյան թեմի թեմական Պատգամավորական ժողովի ատենապետ Տիգրան Բոյաջյանը իր բուրի գալստյան խոսքերի մեջ ասում է.

«Ամերիկայի Թեմի Պատգամավորական ժողովի պատգամավորները, Սրբազան Հայր. համոզված են, որ Դուք պիտի հանդիսանաք իրենց ակնկալած, իրենց փափագած ճշմարիտ Առաջնորդը։ Եվ անոնք, գոնե իմ միջոցով, կխոստանան ամեն գնով, ամեն առիթով բերել Ձեզի իրենց աջակցությունն ու օգնությունը, երբ Դուք պետք ունենաք այդ օգնության և աջակցության։ Ուրեմն՝ բարի

գալուստ կմաղթեմ Ձեզի և կհուսամ, թե Հայաստանյայց եկեղեցին Ձեր ծառայությունով պիտի փառավորվի, պիտի պայծառանա ու առավել ևս զարգանա»։

Վերջում շնորհակալության, երախտագիտության և օրհնության խոսք է ասում առաջնորդ Սրբազանը։ Նա շեշտում է հետևյալը.

«Թեմական խորհրդին հետ կհավատամ, որ պիտի կարենանք ծրագրել այն բոլոր գործերը, որոնք կակնկալվին, որ ծրագրվին։ Հայաստանյայց եկեղեցիին և այս թեմին ծառայելու ոգին բավական է հուսալու, որ ինչ դժվարություններ որ մեր առջև գան, այդ դժվարությունները պարզապես առիթներ պիտի ըլլան ապացուցելու համար, որ ամեն դժվարություն կարելի է հաղթել գիտակցությամբ, նվիրումով, իմաստուն ծրագրումներով։

Ամերիկյան այս կյանքին մեջ գիտակից եմ, թե ի՛նչ են մեր հարցերը, ի՛նչ են մեր նպատակները, ի՛նչ են մեզմե ակնկալված գործերը։ Եվ կհուսամ, որ մենք՝ ներկա սերունդը, այսօր ամեն ոք, ինչ տարիքի ալ որ պատկանի, իր բաժինը պիտի բերե, որպեսզի հայ եկեղեցվո հիմերը մնան այս ամերիկյան հողին վրա, և բարձրացող պատերը տոկուն մնան ապագային համար։ Մենք պիտի աշխատինք ոչ թե մեր փառքին և մեր հանգիստին համար, այլ պիտի աշխատինք մեր դավակներուն համար, մեր ապագա սերունդներուն համար, որպեսզի անոնք մեր թափած քրտինքը և աշխատանքը օրհնեն, և մենք անոնց մեջ մեր գոյությունը տևականացած տեսնենք։

Աստված բոլորս օրհնե, բոլորիս ալ Իր շնորհքը տա առատորեն, և մենք բոլորս հավատարիմ զավակները մնանք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և Հայաստանյայց ընդհանրական եկեղեցիին, որպեսզի այս պզտիկ միությունը ամերիկյան հողին վրա ինքզինքը մասը նկատե Ընդհանրական Հայց. եկեղեցիին և իր կամքը, կորովը, հաջողությունը, ուժը և հարստությունը արամադրե թե ինքզինքին և թե ընդհանրական Հայց. Եկեղեցվո բարդավտճման։ Աստված օրհնե մեր ջանքերը և հաջողցնե մեր բոլոր բարի ծրագիրները»։

Նորընտիր առաջնորդի պաշտոնակալության հանդիսությունը վերջանում է աղոթքով և «Պահպանիչ»-ով։

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 23-ին, կիրակի օր, «Գիւտ խաչ»-ի տոնին, Մ. Տաճարում տեղի ունեցավ եպիսկոպոսական ձեռնադրություն։

Վեհափառ Հայրապետը եպիսկոպոս ձեռնադրեց Վաշինգտոնի նախկին Հայոց Հոգևոր հովիվ Տ. Գարեգին ծ. վրդ. Գալանճյանին, որը Ն. Ս. Օծության բարեհաճ կարգադրությամբ նշանակվել էր Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի հայրապետական պատվիրակի փոխանորդ։

Առավոտյան ժամերգությունից հետո Մ. Տաճարում կատարվում է Նորընծայի «ընտրութիւն և ուխտադրութիւն՝ ըստ սահմանի Հայաստանեայց եկեղեցւոյ»։ Իշման Ս. Սեղանի առաջ Տ. Գարեգին ծ. վարդապետը ուխտում է՝ անխոտոր և տնօրինաբար բնթանալ Հայց. Առաք. Եկեղեցու ուղղափառ վարդապետության շավղով և «Հավատարիմ լինել Սրբոյ Էջմիածնի մինչև ցվախճան կենաց իմոց կալ մնալ հլու հոլատակութեամբ ի ներքոյ իշխանութեան և հրամանաց Սրբոյ Կաթուղիկէ Մայր Աթոռոյս ծառայել երկիւղիւ Տեառն յոդուտ և ի փառս անուան Սրբոյ Էջմիածնի»։ Երդումնագրի ընթերցումից հետո Նորընծան այն ստորագրում է։ Մ. Տաճարի Լուսարարապետ Տ. Հայկազուն արք. Աբրահամյանը վկայում է ուխտադրությանը։ «Պահպանիչ»-ով ավարտվում է երդման արարողությունը։

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը, հանդիսավորապես և ամպհովանու տակ, հայրապետական լրիվ զգեստավորման մեջ, առաջնորդվում է Մ. Տաճար՝ օրվա հանդիսության խարտավիլակ Լուսարարապետ սրբազան հոր գլխավորությամբ։ Եպիսկոպոսական զգեստավորման մեջ առընթերակա Տ. Կոմիտաս և Տ. Տիրայր եպիսկոպոսները ուղեկցում են Հայոց Հայրապետին։ Քահանայական պարզ զգեստավորման մեջ Նորընծան հետևում է թափորին։

Մ. Տաճարում Ս. Ստեփանոսի սեղանի առաջ Վեհափառ Հայրապետը բազմում է Աթոռի վրա, և սկսվում է ձեռնադրության խորհուրդը։ Ամենայն Հայոց Հայրապետը աղոթքով և օրհնությամբ շնորհում է յոթը աստիճաններ։

Այնուհետև ս. պատարագը շարունակվում է Ավագ Սեղանի վրա, մինչև ճաշու գրքի ընթերցումը, որից հետո սկսվում է ձեռնադրության կարգը։

Հանդիսության ներկա են եթովպական քույր եկեղեցու պատվիրակության անդամները՝ գլխավորությամբ Աքսումի դեր. Տ. Հովհաննես արքեպիսկոպոսի, ինչպես նաև՝ պատվիրակության ուղեկցող Մինսկի դեր. Տ. Անտոնի արքեպիսկոպոսը։

Ձեռնադրության խորհրդի կատարման ներկա են նաև ուխտավորարար Մ. Աթոռում և Մայր Հայրենիքում գտնվող բազմաթիվ ուխտավորներ՝ շուրջ 90 հոգի միայն ԱՄՆ-ից, ինչպես նաև Կանադայից, Ֆրանսիայից, Բուլղարիայից, Ռումինիայից։

Ավագ Սեղանի առաջ Վեհափառ Հայրապետը նստած իր առաքելական Աթոռի վրա ընթերցում է ձեռնադրության մեծ աղոթքը Նորընծան ծնկաչոք, գլխքը դարձրած դեպի հավատացյալները, հրաժարվում է աշխարհից և նրա ունայնություններից, մինչ Մայր Տաճարի կամարների տակ հնչում է կոչման խորիմաստ շարականը՝ «Աստուածային և երկնաւոր Շնորհ, որ միշտ լնու զպէտս ողջասուրսութեան Առաքելական եկեղեցւոյ, կոչէ զԳարեգին վարդապետն ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն»։ Օրհներգությունը կրկ-

ՕԾՄԱՆ ՊԱՀԸ

կընվում է երեք անգամ, որից հետո Հայրապետը կատարում է ձեռնադրության և օծման կարգը։

Ապա համապատասխան աղոթքներով նորօծ եպիսկոպոսին տրվում են եպիսկոպոսական պավաղան և մատանի։

Կարդացվում է վերջին Ավետարանը, որից հետո Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է օծման հանդիսությունը։

Վեհափառ Հայրապետը համբուրում է ճակատը նորապսակ եպիսկոպոսի և տալիս հայրապետական իր ներշնչված պատգամն ու հորդորները, «Նախախնամողն Աստուած Հարցն մերոց առաջնորդում է մեր ազգը բազում դարերից ի վեր, սկսյալ այն օրվանից, երբ Ս. Գրիգոր Լուսավորչի աղոթքներով հայ ժողովուրդը իր սիրտը բացեց սուրբ Ավետարանի լույսին։ Աստվածային լույսն իջավ Հայաստան աշխարհը և լուսավորվեց մեր ժողովրդի կյանքի ճանապարհը։

Դարեր շարունակ Աստված օգնական եղավ մեզ, որպեսզի կարողանանք լույսի այդ ճանապարհով առաջ ընթանալ և ստեղծել հոգևոր, մշակութային, բարոյական և նյութական արժեքներ, որոնցմով արդարորեն պարծենում ենք այսօր։

Մենք հավատում ենք աստվածային լուսին և Նախախնամության առաջնորդության։ Այսօր էլ մեր եկեղեցին և մեր ազգը աստվածային Նախախնամության տնօրինությամբ կոչված է շարունակելու իր առաքելությունը։

Մենք հավատում ենք աստվածային օգնականության, որ Սուրբ Հոգու միջոցով բաշխում է մեր ժողովրդին և մեր եկեղեցուն՝ երկնային շնորհները կենարար ու ստեղծարար։

Այդ շնորհները բաշխվում են մեզ մեր տանուտերերի Ս. Սեղանների, ոգեշնչում են մեզ և պայծառակերպում մեր էությունը, մեր միտքն ու հոգին։

Ահա այդպիսի ներշնչող մի պահ ենք ապրում նաև այսօր, երբ Ս. պատարագի ընթացքում, քահանայք և ժողովուրդ միասին, աղոթեցինք, որ Աստված իր շնորհները առատի մեր եկեղեցու մի սպասավորի վրա, որ Մեր ձեռքով օծվեց եպիսկոպոս։ Մենք հավատում ենք, որ այսօր էլ Մեր ձեռնադրությամբ Ս. Հոգին իջավ այս սուրբ Տաճարի մեջ, և Աստված իր շնորհներով զարդարեց նորապսակ Գարեգին Եպիսկոպոսի միտքն ու հոգին, որպեսզի նա առավել զորանա և ամրանա սուրբ առաքելության գիտակցությամբ՝ ծառայելու մեր եկեղեցուն, մեր ժողովրդին՝ մնալով միշտ հավատարիմ զավակը և ծառան Ս. Էջմիածնին և վերածնած մեր Մայր Հայրենիքին»։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, խոսքն ուղղելով նորապսակ Տ. Գարեգին եպիսկոպոսին, ասաց.

«Այսօր, սիրելի սրբազան, քեզ նոր առաքելության ենք կանչում՝ հովվելու հեռավոր Ավստրալիայում ապրող մեր հավատավոր և հայրենասեր ժողովրդի բեկորներին, հավերժական Ս. Էջմիածնի օրհնության և հովանու ներքո։

Լուրջ և պատասխանատու գործ է հանձնվում քեզ։ Հոգեպես ուրախ ես, որ արժանացար Մեր ձեռնադրությամբ աստվածային այս մեծ շնորհին։ Բայց դժվարություններ շատ կան, որոնց պիտի հանդիպես քո կյանքի հանապարհին։ Երբ տկարանաս, քո հոգու աչքերով, հայվածքդ ուղղիր դեպի Ս. Էջմիածին և Մայրենի հող, ու քեզ զորացրու նրանց խորհուրդով, նրանց լույսով, նրանց պատգամով։ Աստված քեզ օգնական բող լինի և մարտակից։ Մեր սերը, Մեր գնահատանքը և Մեր օրհնությունը քեզ հետ։ Աստուծո ողորմությամբ հաջողություն քեզ»։

Հավարտ Ս. պատարագի, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, ուր օրհնում է բոլոր ներկաներին։

ԳԵՐ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԶԱՆՃՅԱՆ

Գեր. Տ. Գարեգին եպիսկ. Գազանճյանը, ավազանի անունով Պետրոս, ծնվել է Կ. Պոլսում՝ 1927 թվականի մայիսի 18-ին։ Հայրը՝ Վաղարշակ, մայրը՝ Շողակաթ, եղել են բնիկ երզնկացիներ։ 1933 թվականին կանխահաս մահով կորցնում է հորը և տոյրում է որբի զառնությունը։

1940 թվականին ընդունվում է Երուսաղեմի հայոց վանքի Ժառանգավորաց վարժարանը։ 1945 թվականին ավարտում է Ժառանգավորաց վարժարանը և հոկտեմբերին սարկավագ է ձեռնադրվում Տ. Կյուրեղ պատրիարքից և դառնում Ս. Հակոբյանց վանքի միաբանության անդամ։ 1948 թվականին ավարտում է ընծայարանը փայլուն հաջողությամբ։

1950 թվականի հունվարին կուսակրոն քահանա է ձեռնադրվում։

Այնուհետև վանքում խոստումնալից ե երիտասարդ հոգևորականի առաջ բացվում է վանական, կրթական գործունեության ասպարեզը։

1946—1949 թվականներին վարում է Ժառանգավորաց վարժարանի փոխտեսչի պատասխանատու պաշտոնը, 1950—1951 թվականներին դիվանապետի պաշտոնը։ Նույն տարվա մեջ վերադառնում է իր ծննդավայրը՝ Կ. Պոլիս, Գարեգին պատրիարք Խաչատրյանի հրավերով՝ ստանձնելու նորաբաց Ս. Խաչ դպրեվանքի տեսչական պաշտոնը մինչև 1953 թվականը։ 1954 թվականին Գարեգին պատրիարքից ստանում է ծայրագույն վարդապետական աստիճան։

1952 թվականին Կ. Պոլսի հայոց պատրիարքության պաշտոնաթերթ «Շողակաթ» ամսագրի խմբագիր է նշանակվում միաժամանակ դասավանդելով Կենտրոնական բարձրագույն և Պեղճյան միջնակարգ դպրոցներում։

1953—1959 թվականներին եղել է Կ. Պոլսի պատրիարքության կրոնական ժողովի ատենապետ։

1959 թվականին հովվական պաշտոնով մեկնել է Ամերիկա և ստանձնել Վաշինգտոնի հայ էկեղեցու հովվությունը։ Նույն պաշտոնի վրա մնացել է մինչև 1966 թվականի սեպտեմբերը, ծավալելով եկեղեցական, մշակութային, կրթական, վարչական բեղուն գործունեություն։ Նույն տարիներին աշխատակցել է «Հայաստանյայց եկեղեցի» առաջնորդարանի պաշտոնաթերթին և «Նոր աշխարհ» շաբաթաթերթին։

1963 թվականին ընտրվել է Ամերիկայի հայոց թեմական խորհրդի անդամ։

1966 թվականի սեպտեմբերին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ նշանակվել է Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի Հայրապետական Պատվիրակի փոխանորդ, և այդ հանգամանքով հոկտեմբերի 23-ին եպիսկոպոս է ձեռնադրվել Մ. Տաճարում՝ Ն. Ս. Օծության ձեռքով։

Նորապսակ Տ. Գարեգին եպիսկոպոս Գազանճյանը հայ եկեղեցու պատրաստված, հավատավոր և նվիրյալ հոգևորականներից է։ Միշտ ծառայասեր, պատրաստակամ, անվարան գնացել է այնտեղ, ուր իր կոչումը նրան առաջնորդել է։

Տ. Գարեգին Եպիսկոպոսը գտնվում է իր ուժերի հասության շրջանում։ Ամենայն Հայոց Հայրապետը նրան կոչել է լուրջ ու պատասխանատու աշխատանքի։ Վստահ ենք, որ Տ. Գարեգին սրբազանը իր նոր պաշտոնավարության մեջ, կարդարացնի Հայրապետական բարձր վստահությունը, բարի արդյունավետությամբ, ի պայծառություն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի։

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 15-ին, հինգշաբթի օր, առավոտյան ժամը 11-ին, տեղի ունեցավ Հոգևոր Ճեմարանի 1966—67 ուսումնական տարվա հանդիսավոր բացումը։

Հանդիսությանը նախագահում էր Վեհափառ Հայրապետը։

Ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր խորհրդի անդամները, Ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ։

Հանդիսությունը բացվեց Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագով։ Ապա՝ Հոգևոր Ճեմարանի երգչախումբը կատարեց «Որք զարդարեցին» թարգմանչաց երգը։ Այնուհետև՝ Հոգևոր Ճեմարանի ավագ վերակացու արժ. Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը ընթերցում է «Սերմնացանի առակ»-ը։

Հոգևոր Ճեմարանի տեսուչ Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը հանդեսի բացումը կատարում է ոգևորիչ և խանդավառ ճառով՝ շեշտելով Հոգևոր Ճեմարանի գերը մեր օրերում ևս հայ եկեղեցու պայծառության և մեր ժողովրդի հոգևոր, հայրենասիրական դաստիարակության շնորհակալ գործում։ Տեսուչ Հայր Սուրբը կոչ է անում ուսանողությանը՝ այս տարի ևս աշխատել է՛լ ավելի արդյունավետ կերպով գիտություն ամբարել մեղուների փութաջանությամբ և պատրաստվել գալիք օրերի ծառայության սուրբ գործին, որին անհամբեր սպասում են մեր եկեղեցին և մեր ժողովուրդը։ Հայր Սուրբն իր խոսքը վերջացնում է այն սրտագին բարեմաղթությամբ, որ այս տարի էլ Հոգևոր Ճեմարանի նվիրական կամարների տակ, ձեռք-ձեռքի տված՝ տեսուչ, դասախոս և ուսանողություն, հավատքով, սիրով՝ աշխատեն միակամ՝ մեծ տեսիլքի ճանապարհի վրա։

Իր բացման խոսքի վերջում տեսուչ Հայր Սուրբը հայցում է Աստուծո օգնականությունը և Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ կրթական այս հարկի բոլոր մշակների, աշխատավորների և ուսանողության վրա։

Ճեմարանի երգչախումբը խանդավառորեն կատարում է «Աշակերտը Քրիստոսի» շարականը։

Այնուհետև՝ ընդհանուր լռության մեջ խոսք է առնում Վեհափառ Հայրապետը՝ տալու հայրական իր խրատներն ու օրհնությունները՝ տեսչության, դասախոսական կազմին և աշակերտության։

Հանդիսությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Տերունական աղոթք»-ով։

Ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը և ուսանողությունը աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունը։

Սեպտեմբերի 15-ին, ուրախ ու տոնական հնչում է Ճեմարանի հարկի տակ, 1966—67 ուսումնական նոր տարվա առաջին զանգը։

Ավելի ուշ՝ Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Վեհարանում ընդունել դասախոսական կազմին, շնորհավորում ուսումնական նոր տարին, օրհնում նրանց աշխատանքը՝ անելով նաև մի շարք թելադրություններ՝ Ճեմարանում ուսումնա-դաստիարակչական աշխատանքների է՛լ ավելի արդյունավետության համար։

Այս տարի Ճեմարանում սովորում է 31 ուսանող՝ բաժանված հինգ դասարանների վրա. 1-ին՝ Ա, Բ, Գ դասարանական բաժիններում և 2-րդ՝ Ա, Բ լսարաններում։

Ճեմարանի դասախոսական կազմը համալրվել է նոր ուժերով։ Ճեմարանի նախկին վերատեսուչ գեր. Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը ևս սիրով ստանձնել է մի շարք կրոնական մասնագիտական կարևոր առարկաների դասավանդումը Հոգևոր Ճեմարանում։



ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՔՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԵՎ ԲՈՒԽԱՐԵՍՏՈՒՄ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Բուխարեստում Հայոց Առաջնորդարանի ընդարձակ նոր շենքում կազմակերպվել է տալ Եկեղեցական արվեստի թանգարան։ Թեմական խորհուրդը այդ նպատակով դիմել է Բուխարեստում կրոնական պաշտամունքի պետական գերատեսչությանը, որն իր համաձայնություն տալուց բացի, բարոյական և նյութական աջակցություն է ընձեռել Թեմական խորհրդին՝ այդ կարևոր գործը հաջողությամբ գլուխ բերելու համար։

Այնուհետև՝ առաջնորդ գեր. Տ. Տիրայր եպիսկոպոսի գլխավորությամբ, Թեմական խորհուրդը անցել է աշխատանքի և, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, կարողացել է գլուխ բերել այդ շատ կարևոր գործը։ Այսպիսով՝ Բուխարեստում հիմնադրվել է հայոց թեմի եկեղեցական թանգարանը, որտեղ ցուցադրվում են հայ եկեղեցական արվեստի ընտիր ցուցանմուշներ՝ վարագույրներ, պաշտամունքի սրբազան իրեր, ձեռագրեր, հնատիպ գրքեր, պատմական արժեք ներկայացնող բազմաթիվ արխիվային նյութեր և նկարներ։

Թանգարանի բացման հանդիսավոր արարողությունը կատարվել է հունիսի 30-ին, Ս. Սահակ և Ս. Մեսրոպ մեծ Լուսավորիչների տոնի օրը։ Հանդիսության ներկա է եղել Ռումին Օրթոդոքս եկեղեցու սրբազան պատրիարքի փոխանորդ գեր. Տ. Վիսարիոն եպիսկոպոսը։ Հանդիսության ներկա է եղել նաև Կրոնական պաշտամունքների պետական գերատեսչության քարտուղար Նենչուն։ Հանդիսության մասնակցել են նաև Բուլղար օրթոդոքս, կաթոլիկ եկեղեցիների, ավետարանական և հրեական համայնքների, ինչպես նաև՝ Ռումին Աստվածաբանական ինստիտուտի, Բուխարեստի մի շարք թանգարանների ներկայացուցիչներ և բազմաթիվ հրավիրյալներ։

Հանդիսության բացումը կատարել է առաջնորդ Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը։ Թեմական խորհրդի փոխ-նախագահ դոկտ. Գր. Բամբուկչյանը ընթերցել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այս առթիվ ուղարկած շնորհավորական հետևյալ հեռագիրը.

«Սրտանց հղում ենք Մեր օրհնությունը առաջնորդարանիդ՝ թանգարանի բացման սուրբիվ։ Թող Աստված օգնական լինի Ձեզ և հաջողությամբ սլաստկի Ձեր եկեղեցաշեն բոլոր գործերը։ Թող Աստված Իր հովանու ներքո պահպանի Ձեր Թեմը և հավատացյալ Մեր զավակները։ Թող Աստված խաղաղության ու բարորության մեջ ծաղկյալ պահի Ռումեն ազնիվ ժողովուրդն ու նրա սքանչելի երկիրը»։

Այնուհետև՝ հայ եկեղեցական արվեստի նշանակության և արժեքի մասին գիտական լուրջ դասախոսությամբ հանդես է եկել պրոֆ Դ. Ի. Շտեֆրնեսկուն։

Թանղարանի կազմավորման աշխատանքներին իրենց թանկագին աջակցությունն են բերել Հ. Ռ. Սիրունին, Դ. Ի. Շտեֆրնեսկուն և տիկին Գորինա Նիկուլեսկուն։

Թեմական խորհուրդը թանգարանում կազմակերպել է մի շարք դասախոսություններ՝ հայ մշակույթի և հայ եկեղեցական արվեստի և նորակազմ թանղարանի ցուցանմուշների մասին։ Այդ դասախոսությունները կարդացել են հայ և ռումին մասնագետները։

Բուխարեստում Հայոց թեմի եկեղեցական թանգարանի բացման հանդիսությունը

Բանախոսությունների շարքը բացել է ռումինահայ ծանոթ մտավորական և վաստակավոր պատմաբան-բանասեր Հ. Ճ. Սիրունին, դասախոսելով հունիսի 3-ին հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության 300-ամյակի մասին։ Հանդիսության ընթացքում խոսել է նաև թեմական առաջնորդ Տ. Տիրայր եպիսկոպոսը, շեշտելով՝ հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության պատմական մեծ նշանակությունը հայ մշակույթի համար։

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԵԹՈՎՊԻԱՅՈՒՄ

1966 թվականի անցած ամիսների ընթացքում մեր ազգային-եկեղեցական կյանքը Եթովպիայում ընթացել է խաղաղ և համերաշխ մթնոլորտում, հուսալից արդյունավորությամբ։

«Էջմիածին» ամսագրի ընթերցողներին ներկայացնում ենք Եթովպիայի Հայոց հոգեվոր հովիվ՝ հոգ. Տ. Կորյուն ծ. վրդ. Մանվելյանի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուղարկած 1965 թվականի հունիս 19-ի զեկուցագրից։

1966 թվականի ապրիլին եկեղեցում պատշաճ հանդիսությամբ Ս. պատարագի մատուցմամբ քարոզով նշվել է Ապրիլյան եղեռնի 51-րդ տարեդարձը։

Այնուհետև՝ տեղի հայկական «Արարատ» ակումբում տեղի է ունեցել մասնավոր հանդիսություն՝ գաղութի բոլոր կազմակերպությունների մասնակցությամբ, ոգեկոչելու համար հիշատակը Ապրիլյան եղեռնի մեր նահատակների։

Հանդիսության վերջավորության ժողովրդական թափորը ուղղվել է դեպի Ադդիս-Աբեբայի՝ Եթովպական Անծանոթ Զինվորի հուշարձանը՝ գեղեցիկ ծաղկեպսակ դնելու հայրենիքի համար զոհված եթովպացի հայրենասերների հուշարձանի առաջ։ Հանդիսությանը ներկա են եղել նաև բազմաթիվ եթովպացիներ։

Ադդիս-Աբեբա հայ գաղութի մեջ կազմակերպվել է հանգանակություն՝ Որբերի դպրոցի համար, որին ղեկավարում է Եթովպիո կայսր Հայլե Սելասիե անունով կազմված հիմնարկությունը։ Այս առթիվ այդ նպատակով հավաքվել է 2500 եթովպական դոլար, որը հանձնվել է հիմնարկության։

Մայիսի 12-ին հանդիսությամբ նշվել է «Մայրերի օրը» տեղի Հայ Տիկնանց Բարեսիրաց Միության կազմակերպությամբ։ Այս առթիվ նվերներ են տրվել գաղութի ազգային-եկեղեցական, մշակութային կյանքում երկար ծառայություններ ունեցած մի շարք պատվական հայ կանանց։

Այս տարի ազգային Գևորգով վարժարանը բոլորել է ուսումնական արդյունավոր մի տարի։ Աշակերտության թիվը 150 է եղել, որից 100-ը՝ նախակրթականի բաժնում և 50-ը՝ մանկապարտեզի բաժնում։ Դպրոցում պաշտոնավարում են 12 հայ և օտար ուսուցիչ-ուսուցչուհիներ՝ նվիրումով և սիրով։ Դպրոցի հոգաբարձությանը ղեկավարել է տիկ. Աննա Մարսրուն։ Դպրոցի ամավերջի հանդիսությունը տեղի է ունեցել հուլիսի 3-ին, որին ներկա է եղել ամբողջ գաղութը։ Գործադրության է դրվել աշակերտության ուժերով կազմակերպված գեղարվեստական ճոխ հայտագիր՝ երգերից, պարերից և արտասանություններից կազմված։ Վարժարանի նախակրթական բաժնից շրջանավարտ են եղել 10 աշակերտ-աշակերտուհիներ, իսկ մանկապարտեզի բաժնից՝ 11 շրջանավարտներ, որոնցից Օնիկ Փյուրզադյանը և Վահան Վարժապետյանը բախտ են ունեցել իրենց

Ադդիս-Արեբայի Հայոց ազգային Գևորգով վարժարանի ուսուցչական կազմը և շրջանավարտները

ամառային արձակուրդը անցկացնել հայրենի աշխարհում։

Դպրոցի տարեկան ընդհանուր բյուջեն է 160000 եթովպական դոլար։ Դպրոցը իր բոլոր ծախսերը փակելուց հետո սնդուկում ունեցել է 3000 եթովպական դոլար։ Ամավերջի հանդիսության ժամանակ միայն հանգանակվել է, նպաստ դպրոցի, 19000 եթովպական դոլար։

Հունիսի 30-ին Ադդիս-Արեբայում Պապական նվիրակը կազմակերպել է մասնավոր հանդիսություն՝ Նորին Սրբություն Պողոս 6-րդ Պապի գահակալության 3-րդ տարեդարձի առիթով, որին ներկա է եղել նաև Տ. Կորյուն ծ. վարդապետը՝ հանուն հայ համայնքի և հայ եկեղեցու։

Հայ եկեղեցին Ադդիս-Աբեբայում անցնող 6 ամիսների ընթացքում սրտագին հարաբերություններ է պահել եթովպական քույր եկեղեցու և հոգևորականության հետ։

Գևորգ և Գրիգոր Սվտճյանների նվիրատվությամբ Ադդիս-Աբեբայում, հայ եկեղեցուն կից, կառուցվել է 2 սենյակներից բաղկացած մի հոգետուն, որի շինության համար երկու եղբայրները նվիրել են 10000 եթովպական դոլար։

Ծրագրվում է Ադդիս-Աբեբայում հայ եկեղեցու կից աղգասյաական հողի վրա շուտով կառուցել մի մեծ հասութաբեր շենք։ Այդ առթիվ ծանոթ աղգային Ամվել Բեհեսնելյանը նվիրել է 100000 եթովպական դոլար։

ՀԱՆԳԻՍ
ԳԵՐ. Տ. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆԻ
(1891—1966)

Երկարատև հիվանդությունից հետո, հոկտեմբերի 9-ին, կիրակի, Կահիրեում, ի Տեր հանգչում Եգիպտոսի հայոց առաջնորդ, դեր. Տ. Մամբրե արքեպ. Սիրունյանը։

Լուսահոգի Տ. Մամբրե Սրբազանը, ավազանի անունով Արշամ, ծնվել է 1891 թվականին, Կարին քաղաքում։ Նախնական կրթությունը ստացել է տեղի նախակրթարանում, ապա ընդունվել է Արմաշի դպրեվանքը, որի դասընթացն ավարտելով 1913 թվականին սարկավագ է և 1916 թվականին կուսակրոն քահանա է ձեռնադրվել Տ. Մեսրոպ եպս. Նարսյանից։

Երիտասարդ վարդապետը այնուհետև կոչվում է թեմական, վարչական, կրթական պատասխանատու պաշտոնների։

1918 թվականին նշանակվում է առաջնորդական փոխանորդ Պորտ-Սաիդի վրանաքաղաքի, և տեսուչ՝ Հ. Բ. Ը. Միության որբանոցի։

1920 թվականին Մերսին քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Տ. Սահակ կաթողիկոս Խապայանից ստանում է ծայրագույն վարդապետական աստիճան։ 1923 թվականին, Եգիպտոսի հայոց առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Գուշակյանի օրոք, նշանակվում է Աղեքսանդրիայի հայոց առաջնորդական փոխանորդ, պաշտոն, որը կատարում է մեծ արդյունավորությամբ։

1931 թվականին ընտրվում է եղիպտահայ թեմի առաջնորդական փոխանորդ, և այդ դաշտոնի վրա եպիսկոպոսանում է 1933 թվականին, լուսահոգի Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսի շնորհաբաշխությամբ։

1936 թվականին Մամբրե Սրբազանը, իր եկեղեցանվեր և ազգօգուտ գործունեության համար, արժանանում է հայրապետական բարձր գնահատության՝ Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանին։

1945 թվականին ընտրվում է Եղիպտոսի հայոց թեմի առաջնորդ, ուր ծավալում է թեմական, վարչական, կրթական, հասարակական բեղուն գործունեություն մինչև իր մահը։

Տ. Մամբրե արքեպիսկոպոսի մահով Հա.յ. առաք. եկեղեցին կորցնում է հավատավոր, նվիրյալ, իր կոչման ու առաքելության բարձ-

րութեան վրա դանվող հոգևորականներից մեկին։

Վեհափառ Հայրապետը Տ. Մամբրե արքեպիսկոպոսի մահվան առթիվ խորապես վշտահար, հոկտեմբերի 12-ին հետևյալ հեռագիրն ուղարկեց մեր նվիրապետական Աթոռներին և թեմերին.

«Վշտով կծանուցտնենք, որ Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյան՝ բարեջան և բազմավաստակ առաջնորդ Եգիպտոսի հայոց, հանգյտվ ի Տեր։ Կհրահանգենք՝ բոլոր եկեղեցիներու մեջ կատարել հոգեհանգիստ, կիրակի օր՝ հոկտեմբերի 16-ին՝ խոսելով անոր անբասիր կյանքի և նվիրյալ հոգևոր գործունեութեան մասին։ Թող Տերը լուսավորե հանգուցյալի հոգին և անսասան պահե Հայաստանյայց եկեղեցին»։

Վեհափառ Հայրապետի հրահանգով Տ. Մամբրե Սրբազանի թաղման ներկա են եղել հանուն Մ. Աթոռի, գեր. Տ. Շահն եպս. Աճեմյանը և Տ. Ներսեհ վրդ. Բապուճյանը։

Հոկտեմբերի 16-ին, Մ. Տաճարում, հավարտ Ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան մասնավոր պաշտոն, նորոգ հանգուցյալ Տ. Մամբրե արքեպիսկոպոսի հիշատակին։

Արարողությունից առաջ հոգ. Տ. Գարեգին ծ. վրդ. Գազանճյանը հուզիչ զամբանական խոսեց, վեր հանելով հանգուցյալ Տ. Մամբրե Սրբազանի կյանքի ուսանելի կողմերը։

Թող Աստված իր անթառամ փառքին արժանացնի հանգուցյալ Տ. Մամբրե արքեպիսկոպոսի հոգին, դասելով նրան հայ եկեղեցու բարի ու նվիրյալ քաջ հովիվների շարքին։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 18-ին, կիրակի.— *Մ. Տաճարում պատարագեց հոգ. Տ. Գևորգ վրդ. Սերայգարյանը և քարոզեց «Հաւատք քո կեցուցին զքեզ» բնաբանով։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Այսօր ուխտավորարար Մ. Աթոռ ժամանեցի Ն Բեյրութից հոգ. Տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանը և Եկեղեցասեր Տիկնանց Վարչության անդամները, ինչպես նաև՝ տեր ու տիկին Կ. Ալթունյանները։

❖❖❖

Սեպտեմբերի 25-ին, կիրակի.— *«Տօն Վարագայ Սրբոյ Խաչի», Մ. Տաճարում պատարաղեց և քարոզեց հոգ. Տ. Նարեկ վրդ. Շաքարյանը՝ «Ս. Խաչն օգնական հաւատացելոց» բնաբանով։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

❖❖❖

Սեպտեմբերի 26-ին և 27-ին երկուշաբթի և երեքշաբթի.— *Ուխտավորարար Մ. Աթոռ ժամանեցին պրոֆ. Հ. Ճ. Սիրունին (Բուխարեստ), «Սիոն» ամսագրի խմբագիր Ա. Գալայճյանը (Երուսաղեմ), հոգ. Տ. Գարեգին ծ. վրդ. Գաղանճյանը (ԱՄՆ), հոգ. Տ. Գյուտ ծ. վրդ. Նագգաշյանը (Փարիզ), հոգ. Տ. Վազգեն վրդ. Քեշիշյանը (Մարսել) և Տիգրան Բոյաջյանը (ԱՄՆ)։*

❖❖❖

Հոկտեմբերի 8-ին, շաբաթ.— *Այսօր առավոտյան ուխտավորարար Մ. Աթոռ է ժամանում Հր. Նասիպյանը։*

❖❖❖

Հոկտեմբերի 9-ին, կիրակի.— *Մ. Տաճարում Ս. պատարագ է մատուցում հոգ. Տ. Գյուտ ծ. վրդ. Նագգաշյանը։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հոկտեմբերի 10-ին, երկուշաբթի.— *Այսօր Բուխարեստ մեկնեց հայոց թեմի թեմական ժողովի փոխ-նախագահ գոկտ. Գր. Բամբուկչյանը, որը Մ. Աթոռ էր ժամանել Տ. Ժուստինիան սրբազան պատրիարքի հետ, սեպտեմբերի 30-ին։*

❖❖❖

Հոկտեմբերի 12-ին, շաբաթ.— *Մ. Աթոռ ժամանեց ֆրանսահայ նշանավոր գեղանկարիչ Գառգուն (Գառնիկ Զուլումյան)՝ իր հարգելի տիկնոջ հետ։*

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել տաղանդավոր արվեստագետին և զրույց ունեցավ նրա հետ։

❖❖❖

Հոկտեմբերի 16-ին, կիրակի.— *Մ. Տաճարում պատարագեց հոգ. Տ. Գարեգին աբեղա Բեկճյանը, որը ուխտավորաբար Մ. Աթոռում էր գտնվում հոկտեմբերի 9-ից։*

Ս. պատարագի ընթացքում քարոզեց հոգ. Տ. Գարեղին ծ. վրդ. Գագանճյանը՝ «Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս որպէս ես սիրեցի ձեզ» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Այսօր Մ. Աթոռ ժամանեց Դամասկոսի առաջնորդ գեր. Տ. Շավարշ եպս. Գույումճյանը։

❖❖❖

Հոկտեմբերի 17-ին, երկուշաբթի.— *Այսօր Մ. Աթոռից իրենց պաշտոնատեղիները վերադարձան հոգ. Տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանը, Տ. Գյուտ ծ. վրդ. Նագգաշյանը և Տ. Վազգեն վրդ. Քեշիշյանը։ Այսօր Մ. Աթոռից մեկնեց նաև պ. Հր. Նասիպյանը։*

❖❖❖

Հոկտեմբերի 19-ին, շաբաթ.— *Այսօր Հողեոր Ճեմարանի ուսանողությունը սեսուլ Տ. Ներսես ծ. վրդ. Պոլատյանի առաջնոր-*

գությամբ ուխտի գնաց Աշտարակի շրջանի պատմական վանքերը։

°°°

Հոկտեմբերի 22-ին, շաբաթ.— Երեկոյան ժամը 6-ին Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահության տակ, գումարվեց Գեր. Հոգ. Խորհրդի հերթական նիստը։

°°°

Հոկտեմբերի 24-ին, երկուշաբթի.— Մ. Տաճարում եպիսկոպոսական իր անդրանիկ պատարագը մատուցեց գեր. Տ. Գարեգին եպս. Գազանճյանը։ Կեսօրից հետո ժամը 2-ին, Վեհարան այցելեց Մ. Հայրենիքում գտնվող ամերիկահայ ուխտավորների շուրջ իննսուն հոգուց բաղկացած խումբը։ Հյուրերին ընդունեցին Մ. Աթոռի միաբանները։ Ուխտավորները այցելեցին Գահասրահը, հանդիսության դահլիճը։

Վերջում Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել ուխտավորներին և զրուցել նրանց հետ։ Ն. Ս. Օծությունը հայրական իր պատգամը տալով նրանց, թելադրեց պահել հայրենի մեր հավատքը, ազգային ավանդությունները, մեր Մայրենին և այդ սրբությունների ոգով դաստիարակել նոր սերնդին, ներշնչելով նրանց պաշտամունքը Ս. Էջմիածնի և սերը Հայրենյաց։

Ուխտավորները վերջում հյուրասիրվեցին պատմական հերիսայով և մրգերով։

°°°

Հոկտեմբերի 25-ին, երեքշաբթի.— Այսօր Մ. Աթոռից իր նոր պաշտոնատեղին մեկնեց գեր. Տ. Գարեգին եպս. Գազանճյանը։

Հոկտեմբերի 26-ին, չորեքշաբթի.— Երեկոյան ժամերգության ավարտին լուսարարապետ Տ. Հայկազուն Սրբազտնը ուրար կրելու իրավունք շնորհեց Հոգևոր Ճեմարանի լսարանական բաժնի ուսանողներ Ս. Վարդանյանին, Ա. Գալստյանին, Հով. Գվրգյանին, Հ. Նալբանդյանին, Հ. Ժամկոչյանին, Գ. Մխիթարյանին, իսկ Ա և Բ դասարանի աշակերտները ստացան դպրության 4 աստիճաններ։

°°°

Հոկտեմբերի 30-ին, կիրակի.— Մ. Տաճարում պատարագեց Հոգ. Տ. Գրիգոր վրդ. Եղիայանը և քարոզեց «Ի դատաստան եկի յաշխարհ» բնաբանով։

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։



Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԵՏ *

XX.— Դարձյալ դեպի տուն

Երկու տարվան տքնաջան աշխատանքը չէր կրնար չհոգնեցնել Կոմիտասը։ Հոգեկան նոր կաղդույրի մը պեսք ուներ ան։ Ու ան անգամ մը ևս ուզեց այցի երթալ իր հայրենի օջախին, ուր թողած էր իր դժբախտ մանկությունը և որ ուխտի կկանչեր զինքը դարձյալ։ 1892-ի և 1910-ի իր այցերեն հետո 1912-ի իր այս այցելությունը երրորդն էր, հորմե հետո ան բաժնվեր էր Կուտինայեն, բայց նույնքան բուռն էր իր մեջ կարոտը, որքան առջի երկու անգամին։

Այս անգամ Թերլեմեզյանն ալ հետն էր։ Ան ևս ուխտի կերթար իր բարեկամին մանկության։

Թեբլեմեզյան ինքն իսկ կգատմե իր հուշերուն մեջ.

«1912 թվի ամառը Կոմիտասի հետ իր հայրենիք՝ Քյոթահիա ուղևորվեցինք։ Մի միջոց Քյոթահիան և շրջակայքը ման գալուց հետո քաղաքից բավական հեռու գտնված հանքային ջրերը գնացինք, որոնք իրենց բուժիչ հատկության համար հնում կանոնավորվել էին հռոմայեցիների կողմից։ Հայ և թուրք հասարակությունը ապրում էր վրանների տակ հանքային ջրերի շրջապատում, բայց մենք մեր վրանը խփեցինք բլուրի ծայրին եղած անտառում և մեկ ու կես ամսվա չափ ապրեցինք այդ առանձնության մեջ։ Կոմիտասին ես այնտեղ նկարեցի։ Հանքային ջրերից վերադարձանք Քյոթահիա։ Կոմիտասը անմիջապես մեկնեց Պոլիս, իսկ ես մի ժամանակ էլ մնացի՝ նկարելու համար գեղեցիկ տեսարաններով վայրերը»[35]։

Առնակ իր հուշերուն մեջ կգրե այդ այցի մասին.

«Բայց մտավոր, չարաչար աշխատանքը, բազմամբոխ քաղաքին ճնշիչ կենցաղը և քաղաքակիրթ մարդոց մակերեսային վերաբերումները կդառնացնեին ու կջդայնոտեին իր հոգին՝ ապաստան որոնել տալու աստիճան պարզ ու բնական անկյուններու մեջ։ Ու աչքերը կսևեռեր կրկին իր ծննդավայրին։

«Այդ գալը 1913-ին էր։ Իր այցը այն ատեն հատկացուցեր էր էլբճային, վիմափոր ջերմուկ մը, որ Կուտինայեն վեց ժամ հեռու է, դալարագեղ լեռներեն անդին, որոնք թրթընջուկով ու ծաթրինով են բուրումնավետ։

«Այդ ջերմուկը ուշագրավ է իր հորդառատ ջուրով՝ քովը ունենալով արվեստական ձագուկ մը և Հաստաս կոչվող եռամաս քառասնակ ավազան մը, կծկված այդ լեռներեն մեկուն ձորակին մեջ, ուրկե վեր բլուրները իրենց մայրիներով կցցվին օդին մեջ։ Հոն օդափոխ ժողովուրդը կբնակի ջերմուկին առընթեր, վրաններու և հաստատուն խցիկներու մեջ։ Բայց Կոմիտաս իր վրանը նետեր էր վերը, բլրակին մայրիներև մեկուն շուքին։

---

* *Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի № № Ա-ից, Ե—Զ—է-ից, Ը—Թ-ից, Ժ-ից և 1966 թվականի № № Ա-ից, Բ-ից, Գ-ից, Դ-ից, Ե-ից, Զ-ից և Է-ից։*

35 *«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 192—193։*

«... Կենթադրեմ, թե ատ եղավ բնության ծոցին մեջ անցուցած իր վերջին կյանքը և այդ հիշատակելի պիտի մնա իր անբաժան ընկեր վրանակից Թերլեմեզյանի գծած այն նկարովը, ուր համակրելի երաժիշտը կուտինական գորգի մը վրա և մայրիին հենած՝ գիրք մը կկարդա խորամուխ։ Այնտեղ սաղարթին մեջեն կերևի բրգաձև սպիտակ վրանը, ուր շնչեց իր պաշտած ծննդավայրին անմահական օդը»[36]։

Կոմիտասի երկրորդ անգամ Քեոթահիա տված այցին մասին՝ իր մեկ ուրիշ հայրենակիցը՝ Գ. Ուշագլյան կգրե մեզի.

«Վարդապետը երկրորդ անգամ Կուտինա եկավ 1912-ին, բայց առանց քաղաքը հանդիպելու, մոտակա ջերմուկները մեկնեցավ նկարիչ Փանոս Թերլեմեզյանի, ինչպես նաև ուսուցիչ Լևոն Երամյանին հետ, զոր էջմիածինեն հետը բերեր էր։ Ամիս մը մնացին հոն, անտառի մը մեջ, վրանի տակ։ Ծառի մը կրթնած իր նկարը, զոր Թերլեմեզյան գծած է և որ ներկայիս Երևանի թանգարանը կգտնվի, պատրաստված է նույն այդ անտառին մեջ։ Ամեն առտու կերթայինք դիտելու Թերլեմեզյանի նկարած ատենը։ Վարդապետը ուղղակի մեկնեցավ Պոլիս, իսկ Թերլեմեզյան դեռ երկու ամիսի չափ Քեոթահիա մնաց»։

Այս այցը այլևս վերջինն էր։ Կուտինան անգամ մըն ալ իր զավակը չտեսավ։ Շուտով պիտի հասներ մեծ փոթորիկը ու պիտի խորտակեր ամեն բան։ Կուտինան տեղահան պիտի չըլլար, բայց իր ծոցեն պիտի անցնեին այնքան քարավաններ դեպի չարչարանք և սպանդ իրենց ճամփուն վրա։ Ողջ աղատեցավ ան Թալեաթի ճանկեն, բայց քիչ հետո Քեմալ զայն պիտի ցրվեր աշխարհի չորս հովերուն, անոր հետ հովին հանձնելով նաև վերջին բեկորները արվեստի մը՝ որով դարեր սոնքացեր էր թուրքը. և որ, սակայն, հայուն ստեղծագործությունն էր եղեր առավելապես։ Հայկական «Կուտինան տարագրության ցուպը ձեռք առավ՝ տարագիր ընելով իր հետ նաև հայ հախճապակին, ինչպես տարագիր պիտի դառնար հայ երգը։

Կուտինան իր մեծ զավկին պիտի հանդիպեր օտար ափերու վրա՝ տարագիր հայ երգին մեջ։

XXI. — Հայ հոգին շունչը

Կոմիտաս դժբախտ կը սեպեր ինքզինք։ Ան լրիվ չէր կրցած պրպտել հայ հոգին իր երգերուն մեջ։ Գեղջուկ երգերը, զորս հավաքեր էր, չէին ներկայացներ բոլոր հայ գավառները։ Ճիշտ է՝ Արարատյան դաշտը ծանոթ էր իրեն՝ իր հոգեկան գանձով, և Արևմտյան Հայաստանեն ևս կրցեր էր նմուշներ հավաքել տարիներու ընթացքին, բայց այդ աշխարհը դեռ շատ բան կծածկեր իրմե։

Կոմիտասին համար տեսակ մը բարեբախտություն եղավ, որ իր Պոլիս ապրած տարիներուն հոն հաստատված էր նաև վանեցի ծանոթ բանասեր Տիգրան Ջիթունին։ Ջիթունին մեկն էր եղեր մեր ամենեն անխոնջ պրպտողներեն, մանավանդ, երբ դեռ ան Վան էր։ Վասպուրական տշխարհը լրիվ ծանոթ էր իրեն իր հոգեկան գանձով,— անոր բարքերն ու սովորությունները, անոր բառն ու բարբառը, անոր պարերն ու երգերը։ Վարդապետին համար թանկագին աղբյուր մըն էր ուրեմն ան՝ Վասպուրականը ևս լրիվ ճանչնալու իր երգերուն մեջ։

Անգամ մը հանգիպեր էին արդեն անոնք իրարու, երբ 1909-ի աշնան, Իզմիրլյանի օծման օրերուն, Ջիթունին անցեր էր էջմիածինեն. իր գլխավոր նպատակն էր եղեր Կոմիտասը տեսնել հոն։ «Ազգագրական հարուստ քաղերուս մեջ Վասպուրականեն և շրջակա դավառներեն ես ունեի նաև հայ ժողովրդական երգեր, կալատմե Ջիթունին։ Անոնց բառերը միայն գրի առած ըլլալով՝ ազգագրի իմ գերը լրացած չէի ընդուներ։ Պետք էր նաև ձայնագրելով հավերժացնել տնոնց եղանակները, զոր տղա տարիքես լսած, երգած ու մտքիս ձայնական ծալքերուն մեջ ծծած էի և որ լեզուիս ու շրթներուս վրա կթրթռային։ Բայց խազերու լեզուն չէի գիտեր, որ ես ինքս ձայնագրեի։ Կմնար ձայնագրագետի մը տեսնել»[37]։

Բանասերին և երաժշտագետին էջմիածինի մեջ առաջին հանդիպումը բեղմնավոր եղեր էր, թեև կարճատև, որովհետև Ջիթունին հազիվ երկու օր տրամադրելի ունեցեր էր մնալու էջմիածինի մեջ։ Եվ, սակայն, կգրե Ջիթունին, «երկու գիշեր ետև ետևե, ետընթերքեն մինչև կեսգիշերն անց, վարդապետը տքնեցավ, պարտպեցավ ինձ հետ ձայնագրության խազերուն վրա՝ ապրեցնելով, կորուստե փրկելով հիսնյակ մը նոր ժողովրդական երգի եղանակներ՝ Վասպուրականի հայ հարազատ աշխարհեն»[38]։

Այդ երգերեն ոմանք՝ ինչպես «Իլիլին-տիլիլին», «Մոկաց Միրզեն», «Դեհե հընկ-ղընկ, դեհե ջան»,— Կոմիտաս մշակեց հետո, և իր հետագա հանրերգներու հայտագիրներուն մեջ տեղ գրավեցին՝ հայ ժողովրդական երգի դանձարանին մեջ քանի մը զմայլելի նմուշներ ավելցնելով։

[36] «Հայրենիք» ամսագիր, 1936, հունվար, էջ 77։

[37] Ջիթունի, Կոմիտասին հետ, «Հայրենիք» ամսագիր, 1936, XII, էջ 80։

[38] Անդ, էջ 82։

Չիթունի հետո Վան դարձավ նորեն, և հավաքեց ու ամբարեց անընդհատ, իսկ 1913-ի աշնան, երբ կուդար Պոլիս հաստատվիլ, Կոմիտասի հետ նոր աշխատակցության մը առիթը կստեղծվեր ինքնին, բայց այդ առիթը ուշացավ, ավա՜ղ։ Չիթունի ինքը կպատմե, թե կյանքի տյլազան հոգեր հնարավոր չըրին անմիջական աշխատակցություն մը Կոմիտասին հետ, և թե 1914-ի նոյեմբերին էր միայն, որ իրենք՝ Կոմիտաս և ինք, վերսկսան 1909-ին էջմիածինի մեջ կես ձգված աշխատանքը։ Ամբողջ ամիս մը, երբ թնդանոթը կգոռար դուրսը, անոնք աշխատած են միասին՝ ընթրիքեն մինչև կեսգիշեր, ինք երգելով և Կոմիտաս ձայնագրելով՝ դաշնակին առջև նստած։ Այս կերպով ձայնագրած են Վասպուրականի ժողովրդական երգերեն նոր հիսնյակ մը, որոնց մեկ մասը մանկական երգեր[39]։

Չիթունի իր հոդվածին կկցե ցանկ մը ժողովրդական երգերու, զորս ինք երգած է Կոմիտասին, և ան գրի առած է։ Այդ երգերը, որոնց ցանկը կուտանք ստորև, 48 են թիվով։ Անոնք մեծ մասամբ 1909-ին էջմիածինի մեջ ձայնագրվածներն են. Չիթունի կըսե, սակայն, թե «կրնա ըլլալ, որ հիշյալ երգերեն մեկ քանին էջմիածնի մեջ երգված ու ձայնագրված երգերու խումբին չեն պատկանիր, այլ 1914-ին Պոլիս երգածներուս ցանկեն ըլլան»[40]։

1. Խամբարձում էրկեն գիշեր—ջա՛ն վիճակ, ջա՛ն, ջա՛ն։
2. Մարիամ գնաց գուռնը ձերին։
3. Ածին մածածին, Զրնկլիկ։
4. Էգ, բարև, հա՜յ, էգ բարև։
5. Թագվոր, ինչ բերեմ քո նման։
6. Խաչն էր խաչ, խաչկալն էր խաչումաչ։
7. Ծովուն խավք իմ կեր, անունն էր Արոր։
8. Հո՛յնար է, Ոստանա բալաք սարեր։
9. Հա՛մ դյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարդիդ։
10. Պեռպիկ մի քելե, Լալուխան։
11. Տուն մ՚եմ շինե գետի բերան։
12. Էյա տանիս՝ թավ քելիցի։
13. Էսօր ես երագ մ՚եմ տեսեր, հա՛ տեսեր։
14. Ափսոս, ու հազար ափսոս, հա՛ ւ՚ ափսոս։
15. Զեռնիկ, դու կոտոր կենե՜ր, հա՛ կեներ։
16. Հիշամ գ՚Աստված, խա՛ ւ՚Աստված։
17. Լաճոր մոր՝ շարբաթ բերեք։
18. Ինչրվինչ տամ լոզվորին, որ խանտ ծամ-թելն ի ծովեն։
19. Պուտկով փլավ եմ եփե,— հո՜յ։
20. Տո լավո,— մեկ օր մենք՝ ժողվանք գացինք՝ որոշված տեղ՝ ուրախութեն։
21. Սոխոթան չէր, պինթան էր։
22. Բեռշ բաղրկեան իկեր ի։
23. Քա՛ սև՜-սև՜—սե՜ւավոր մարե։
24. Ելնք տեսնք՝ կովն ա կերեր մեր թուփ։
25. Հա՜յ աղվըսիկ, վրսիկ, վրսիկ.— Հոյ նար-ջանըմ նար։
26. Լուն ու ճանճ, ոչի՜ն ու անիծ։
27. Եէլը նել՝ եելիե, ել կայնի խաղա։
28. Եօ՜ օ, Տալակո։
29. Հա՛յ լրվեր, մադա՛թ լրվեր, կարակընդուգ կարմի՜ր լրվեր։
30. Լելե յաման, սարեր ձյուն ի, մալուլեր եմ։
31. Սանդ կը՜ ծեծեմ, խե՛հան-շեհան։
32. Էսօր մեր երեց զիկ ասաց։
33. Ռեհա՜ն եմ ցաներ խողներով,—ջա՛նիման, ջանիման։
34. Յարրմյար, մեկ յար կրդեր Վանա խետ։
35. Խատ ու կես կորեկ ունեմ՝ ցանելու խամար։
36. Մոկաց Սիբզեն.— Օրն էր ուրբաթ, լուս ի շաբաթ։
37. Մե՝ պրստրկիկ խտյիկ իմ կեր,— Հոյնար, ջանրմ նար։
38. Էսօր Փիրուզե՜ն տե՛սեր ե՜մ։
39. Ջան, մարալ ջան,— Ծառի արկի պաղ ախտյուր։
40. Փրթեր ի կու գա՛ պաղ ջուրը սարեն։
41. Կակրզմանա ձորեն եմ։
42. Դալիլո, զալիլո, սեյրանո,— Դու տնեն էլար՝ կայնար գուս։
43. Առվոտ խետ բարի լուսուն... Լորիկ... Լորիկ... Լորիկ...
44. Նարիկո, Նարիկո, Նարհեվանտ,— Դու կքելես յանտ-յանա։
45. Դեհե՜ զրնգ-գրնգ, գեհե՜ ջան։
46. Խինգ էծ ունեմ՝ իր էծեբով—Իլիլի-Տիլիլի։
47. Լաճու մոր.—Լա՜ճու, լա՜ճու. Ա՜խչկան, ա՜խչկան։
48. Կակո՛-մամո՛, կարգա զիս—Տաբլիլիլա, լարլիլա, տանձյուր ամեն։

Ձայնագրված եղանակները Կոմիտասի մոտ մնացած ըլլալով, իսկ Չիթունի իր անձնական նյութերը կորսնցուցած ըլլալով պատերազմի միջոցին, վերի ցանկը հիշողությամբ է, որ կազմված է։ Չիթունի հիշողությամբ վերակազմած է նույնպես ցանկը այն երգերուն, զորս թելադրած է Կոմիտասին՝ 1914-ի իրենց հանդիպումներուն ատեն։

Սհա նաև այդ ցանկը.

1. Քիո՛ւֆը քիո՜ւֆ՝ դարա-դարա։
2. Արի՛, արի՛, գուս էլի, քո խերը մեր իկեր են։

---

[39] Անդ, էջ 87։

[40] Անդ, էջ 83։

3. Ախչիկը թա՞նկ էր մերկան, սրտեն չէր խանե տեր իրկան։
4. Թե շի՞լ եմ՝ նը շիրի՞ն եմ։
5. Խողիկ քե բարձիկ, կանաչ քե լըխեֆ։
6. Դըզեզ թռավ սարերո՞ւն,— հո՞յ։
7. Ճը՞զլավրզիկ, թավ տու շրիկ։
8. Ջաղցպա՛ն, էլի՞, ջուրն ի իկե։
9. Ինչի՛ կուլաս կուց-կուց էրուն։
10. Էլեք էրթանք՝ սարնըսեյրան. բա՞ղըմի գիլ բա՞ղըմի։
11. Ճաշի՛կ, դու փըթա՞, տըղա՛, դու բաճի։
12. Եե՞լ, եե՞լ, եելի խորիկ։
13. Ճրնճրզի՞կն եմ, խըռվըռի՞կն եմ։
14. Անծի՛կ, արե՛, քե տանի՞մ բաղնիս։
15. Պուտկո՞վ փլավ իփի՞ցի,— ատ տնավեր Ավանցի։
16. Էն դիզա՞ն, պե՞տ-պե՛տ դիզան, տեսեք էն որն ի։
17. Օ՛ն, ցնծացե՛ք, ուրախացե՛ք,—Ալելո՛ւ։
18. Գեղի բոլոր կամիշ էր, թո՞յ Նուբար, Նուբար, Նուբար։
19. Լորկե՛, լորկե՛, լորկե՛, խա՛թունե լորկն։
20. Յարս տեսա մրշեցի,— նար հոյնար։
21. Սարեն կու գեր նազարու ձեն,— յար, չինա՞ր յար։
22. Տուտուղան բախչեն նստեր էր։
23. Աղա՞ լաճ, ամիրա՞ լաճ։
24. Նանամ փյուփյո՞ւլ, նանամ։
25. Ճր՛թ-ը-ճը՛թ՝ ճը՛թկե չըվան։
26. Առավի՞տուն՝ աղոթըրնին,— ամա՞ն։
27. Ասաց՝ Դիլբա՛ր, ի՞նչ ես կայնե մեեե՞չ բա՛կին.— Ասաց՝ քեռի՛, ես մահիլ եմ արեգա՛կին։
28. Նա՛նե՞ր, նանե՞ր, յանդրմ Շոխե։
29. Նա՞րհոյ, Նա՛րհոյ, Նա՛րհոյ ջան,— Հո՛ տրղա, տը՛ղա, շա՛ն տըղա։

Ու հիմա, քանի որ տեղն է, չտատամսինք ըսելու, թե հայ բանասիրությունը շատ բան պարտական է Ջիթունիին, բայց և չվարանենք նշելու, թե ան չկրցավ մտնել հետագային իր բուն դերին մեջ։ Միակն էր այն օրերուն, որ կրնար փրկել Վասպուրական աշխարհի հոգեկան գանձը։ Ու միակն էր, որուն համար Վանա ժողովրդական գոհարները գաղտնիք չունեին։ Հայ բանասիրությունը կսպասեր անկե, որ լույս աշխարհ հանե զանոնք, այնպես, ինչպես դարերը բերեր հասցուցեր էին մեզի, այնպես, ինչպես ժողովուրդը կը համառեր պահպանել զանոնք։ Ջիթունին, ճիշտ է, շատ բան տվավ մեզի այդ գանձեն. ան մեզ թողուց Վանա բարբառին հոյակապ մեկ բառարանը և թանկագին նմուշներ իր գավառին ֆոլկլորեն. բայց մոլորությունը ունեցավ անոնցմե շատերը մեզ տալ մշակած, իբրև թե գրականացուցած։ Այնպես որ՝ պատկառելի իր վաստակին մեջ էջեր կան, որոնց առջև կշվարիս ճշտելու ատեն, թե ո՞րն է իրը և ո՞րն է ժողովրդինը։

Կոմիտաս Արևմտյան Հայաստանը ճանչնալու համար չգոհացավ Ջիթունիով։ Ան երգել կու տար հանդիպած գավառացիին։ Եվ բարեբախտաբար իր խումբին մեջ շատ էին գավառացիները։ Երգել կու տար նաև իր այցելուներուն, եթե անոնք հայկական գավառներեն ըլլային։

Սոս-Վանի, այն ատեն սկսնակ գրող, հետևյալ կերպով կպատմե իր մեկ այցը վարդապետին։

«1912-ին, Կոմիտասը, Փանոս Թերլեմեզյանի հետ, կբնակեր Բանկալթի։ Նոր հրատարակված Հայկական սյուրեզներեն օրինակ մը առած՝ կմտնեմ Կոմիտաս վարդապետի սենյակը, վախվխելով իրեն կու տամ գիրքը, վրան կնայի. ոմանք իրեն ծանոթ են, կերգե ու իրեն իրեն կխնդա ինձի, բայց հանկարծ կկենա Բոպիկ մի ֆելե, լալուխան պարերգին վրա։

«— Տո՛, վանեցի՛, երգե՛ այս պարերգը։

«Ա՜խ, երանի թե երգած չըլլայի. հազար անգամ զղջացի երգելուս համար։ Պիտի ձայնագրեր, և ձայնագրեց. բայց երաժշտական դարձվածք մը չէր հպատակեր ձայնագրին. փորձեց ու փորձեց. չեղավ։ Երաժշտութենե չէի հասկնար. ինչ գիտնամ, որ կոկորդս երաժշտագետին պիտի տար անդաանելի գանձ մը, սակայն ըմբոստ ու վայրի, դոր սանձել կուզեր վարդապետը՝ իրեն օգնության կանչելով եվրոպական ու ասիական ձայնագրությունը։

«— Տո՛ տղա, այստեղ Շատախի լեռներուն վրա արածող «այծ» մը կա. նորեն երգե, կամաց երգե, որ կոտոշեն բռնեմ։

«Այծը իմ երգած պարերգին մեկ խաղն էր։ Ժամ մը վերջ բռնեց «այծ»-ը, բայց ոչ թե ձայնագրով, այլ հովվական սրինգով. «այծ»-ը չմտավ թուղթեն ներս, ընդվզեցավ ձայնագրի բռնադատության դեմ. բայց կերևի, թե գթալով ինձի կոկորդես փոխադրվեցավ Կոմիտասի սրինգին մեջ...

«Հիմա, որ Կոմիտասն ու իր սրինգը չկան, ի՞նչ եղավ արդյոք Շատախու լեռներեն Պոլիս բերած իմ խև «այծ»-ը...»[41]։

Կոմիտաս մասամբ ծանոթ էր Ակնա երդերուն։ Ան բախտն ունեցեր էր 1890-ական թվականներու սկիզբներուն էջմիածնի մեջ հանդիպելու Հովսեփ Ջանիկյանին, հեղինակի մը, որ հայ ազգագրության պատմության մեջ իր պատվո տեղը պիտի ունենար իր «Հնություն Ակնա» երկով, և որ լրիվ կր-

[41] Սոս-վանի, Կաղնիին համար, որ ասպայեցավ, «նոր օր», Աթենք, 1935 դեկա. 15։

ճանչնար Ակնը։ Կոմիտաս անկե էր, որ լսեր և ձայնագրեր էր Ակնա ժողովրդական երգերն ու անտունիները, և լույս ընծայեր 1895-ին՝ «Շար Ակնա ժողովրդական երգերի» խորագրով։ Պոլսո մեջ առիթ չունեցավ հանդիպելու Ակնա։ Այդ օրերուն դիպվածը Պոլիս էր բերեր գավառացի ուսուցիչ մը՝ Վահան Գույումճյանը, Սանասարյանի նախկին շրջանավարտ, որ կենդանի շեմարանն էր Ակնա երգերուն և որ երբեմն անոնցմե կարտասաներ մեզ։ Շատ չարչարվեցանք գրի առնել տալու համար իր գիտցածները, և Վարուժանին հետ հաղիվ հաջողեցանք անկե կորզել հատված մը, որ լույս տեսավ «Նամասարդ»-ի մեջ՝ «Անտունի» խորագրին ներքև[42]։ Կոմիտաս, որ տպավորվեր էր այդ հոդվածեն, առիթ փնտրեց անկե լսել և գրի առնել նոր անտունիներ։ Այդ առիթը չեկավ։ Գույումճյան ես աքսորը գնաց ճաշակել, և դինադարին ան ալ դարձավ ետ, ու իր արտասանությունները հաճախ համեմեցին մեր հավաքույթները։ Անկե հետո իր հետքը ալ կորսնցուցի։ Չեմ դիտեր, թե ինչ ճակատագիր ունեցան Ակնը Վանք ու Զորակ անուն իր Հայ-Հոռոմ գյուղերով, Կինճն ու իր գյուղերը զորս ամբարած էր իր հիշողության մեջ։ Վա՜յ իրեն, եթե առավ հետը տարավ...

Կոմիտասին չտրվեցավ, ավա՜ղ, հայ ժողովուրդի հոգեկան գանձը լրիվ պատմել աշխարհին։ Ի՜նչ գոհարներ չքացան անդարձ հայ գավառին հետ. հայաջինջ սպանդին մեջ խեղդվեցան հուսկ վանկերը հայ աննման անուունիներուն, վերջին անուշ օրորները հայ մորկան։

Ամայի է Հայոց Աշխարհը հիմա, ուր լռած են ցմիշտ ավերակները։ Ա՜լ չի շնչեր հայ հոգը։

XXII.— Հայ մանուկներուն համար

Կոմիտաս մտնուկները շատ կսիրեր։ Եթե ան կգուրգուրար առհասարակ նոր սերունդին վրա, մանուկները բացառապես իր խանդաղատանքին առարկա էին։ Երբ կմտներ հարկե մը ներս՝ մանուկներով կհափշտակվեր իսկույն. նույնն էր դպրոցի մը սեմեն ներս ոտք կոխած ատեն ալ։

Մանուկներու աշխարհը կարծես հոգեկան կաղդույր կբերեր իրեն։

Ու մանուկներն ալ դինքը կսիրեին։ Ու անոնց ցնծությունը ավելի ևս կաճեր, երբ գվարթ բացականչություններով, սիրուն խոսքերով ու կատակներով կողողեր զանոնք։

Բոլոր անոնք, որ Կոմիտասի մասին հուշեր գրած են՝ չեն մոռցած հիշել անոր ցույց տված աղապատանքը դեպի մանուկները։ Կպատմեն, օրինակ, թե ինչ սիրով կշոյեր մանկապտրտեդի փոքրիկները, երբ դպրոց մը մտներ, կամ թե ինչ բերկրանքով կընդունեին դայն երախաները իր այցելած տուներուն մեջ։ Տեսանք, իր տեղին, Արշալույս Սարդիսյանի պատմածները փոքրիկներու բերկրանքին մասին՝ անոր երևցած ատեն իրենց հարկեն ներս։

Մանուկներու նկատմամբ տածած գորովին մասին՝ վկայություններ ստեպ կգտնենք Աղավնի Մեսրոպյանի հուշերուն մեջ ալ։

Ու հիմա փակագիծ մը հոս՝ եթե ընթերցողը թույլ կու տա։

Աղավնի Մեսրոպյան, համակրելի արվեստագետուհին, որ առաջին օրեն մեկն էր եղած Կոմիտասով կախարդվածներեն, վարդապետին եղերական վախճանեն հետո գուրգուրանքով ղեղուն էջեր հաճախ նվիրեց անոր հիշատակին։ Հուզումով էր, որ կարդացվեցան բնականաբար անոր զանազան գրությունները «Էջմիածին»-ի մեջ, իբրև հուշերը մեկու մը, որ ճանչցած էր Կոմիտասը իր գործունեության ամենեն խանդավառ տարիներուն։

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին» ժողովածուին մեջ ավելի քան 100 էջ (227—330) հատկացված է Աղավնի Մեսրոպյանի հուշերուն։ Մեր ողբացյալ բարեկամուհին անշուշտ որ ճանչցած է Կոմիտասը և հանդիպումներ ալ ունեցած է հետը. իր հուշերուն մեջ էջեր կան, զորս հետաքրքրությամբ ու հուզմունքով կկարդաս։ Բայց Կոմիտասի անձին ու գործին հանդեպ իր պաշտամունքը այնքան բուռն մնացած է իր հուշերը պատմելու ատեն, և ինչ-ինչ անձերու մասին այնքան շեշտված է գեռ իր համակրանքը, որ հաճախ դեպքերն ու դեմքերը կխառնե իրարու, թվականներ ու վայրեր կշփոթե հաճախ ու կուզե անձամբ ինք ալ մասնակցած ըլլալ իր շուրջ անցած-դարձածին։

Դժվար է, նույնիսկ մեզ համար, որ այդ օրերը նույնպես ապրած ենք, աղբյուր առնել անոր հուշերը այս կամ այն դեպքը ճշտելու համար։ Շատ բան է պատմած ան Կոմիտասի կյանքին ու գործունեության վրա, ու շատ բան կա անշուշտ ճշգրիտ՝ անոր պատմածներուն մեջ։ Բայց այնքան շատ են անոնց մեջ սպրդած վրեպները, որ բաղմաթիվ էջեր անհրաժեշտ պիտի ըլլան ճշտումներու և լրացումներու համար։ Պարագան ավելի կբարդանա, երբ զանոնք կթգթատեն այդ օրերու կյանքին տեղյակ չեղողներ, և մանավանդ, երբ այդ էջերը հիմ ուզե առնել Կոմիտասի վաղվան կենսագիրը։

---

[42] Դ. Վարուժան և Հ. Ճ. Պիրուեի, «Նամասարդ», 1914, էջ 232—243։

Որքան ալ ուզենք, սակայն, զգույշ ըլլալ հատվածներ քաղած ատեն Աղավնի Մեսրոպյանի հուշերեն, ստիպված ենք, սակայն, երբեմն անոնց ալ դիմել, գոնե պահեր տալու համար մթնոլորտեն, զոր Կոմիտաս ստեղծեց իր շուրջը, և ուրկե այնքան գինովցած է Աղավնին՝ մանրամասնությանց մեջ շփոթելով հանդերձ։ Այդ պահերեն են այն դրվագները, ուր Կոմիտասի աղապատանքը կպատմվի դեպի մանուկները։

Աղավնի Մեսրոպյան կհիշե արդարև բազմաթիվ դրվագներ Կոմիտասի շփումներեն մանուկներու հետ, և անոր ցույց տված բացառիկ գուրգուրանքներեն դեպի երախանները։ Այդ գուրգուրանքը վայելած են, օրինակ, Համազգյաց վարժարանի, Էսայանի և, հետագային ալ՝ Նիկողոսյան վարժարանի փոքրիկները, որոնց կհանդիպեր Կոմիտաս այդ դպրոցներուն մեջ։

Աղավնի Մեսրոպյանի հուշերեն կքաղենք.

«1914 թվի դպրոցական վերամուտին Կոմիտասը Բերա-Բանկալթի Նիկողոսյան երկսեռ գիշերօթիկ և ցերեկօթիկ ազգային վարժարանի[43] կողմե հրավիրվեցավ իբրև երաժշտության դասատու։

«Շատ մեծ եղավ վարժարանի ուսուցչական կազմի և աշակերտության զարմանքը, երբ տեսան, որ հակառակ իր բազմազբաղ վիճակին, Կոմիտաս ոչ միայն համաձայնեցավ իրենց վարժարանին մեջ դասեր ընդունիլ, այլև շերմ փափագ հայտնեց՝ գոնե շաբաթը երկու ժամ զբաղվիլ նաև մանկապարտեզի 6—8 տարեկան երախաներու երգի ու պարի դասերով։

«Քույրս՝ Արաքսի Մեսրոպյանը, որ Լոնդոնի Կիլբերնի Ֆրոպելյան ինստիտուտեն վկայված ըլլալով, այդ օրերուն կապված էր Նիկողոսյան վարժարանին՝ իբրև մանկապարտեզի խորհրդատու, կպատմեր, որ մանկապարտեզի դասի օրերը Կոմիտաս շատ ուրախ տրամադրության մեջ կըլլար։ Ան միշտ դասի ժամեն առաջ կու գար, և օգտագործելով մանուկներու զբոսանքի ազատ ժամերը, կհավաքեր զանոնք իր շուրջը և կերգեր ու կպարեր անոնց հետ։ Իսկ երբ դասարան կմտնեին այդ երախաները, այլևս նախորդ դասերու չարաճճի և անզուսպ երախաները չէին, կարծես ուրիշ երախաներ ըլլային։ Բավական էր, որ Կոմիտաս ըսեր. «Ուշադրություն, մանուկներ», և անոնք, կարծես մագնիսացած, կհետևեին անոր ամեն մեկ ցուցմունքին։ Զվարթ տրամադրությունը Կոմիտաս կնկատեր երախաներու մտային և հոգեկան ընդունակություններու նախապայմանը, իսկ երեխաներուն մեջ այդ տրամադրությունը արթնցնելու համար անիկա օժտված էր բնական և մեթոդոլոգիական բոլոր տվյալներով»։

Իր հուշերու շարունակության մեջ Աղավնի Մեսրոպյան, տարված մանուկներու հանդեպ Կոմիտասի գուրգուրանքը պատմելու խանդավառութենեն, արդեն իսկ կխտացնե գույները։

«Կոմիտաս այդ վարժարանը մտնելու առաջին իսկ օրերուն մանկապարտեզի 6—8 տարեկան երախաներեն կազմակերպեց երկսեռ երկձայն խումբ մը և համերգներ տվավ ծնողական հավաքույթներուն։

«Բոլորիս հիացումի և գուրգուրանքին առարկա դարձած այդ երկձայն խումբի առաջին երգը եղավ «Իմ չինարի յարը», իսկ հաջորդ համերգներուն համար Կոմիտաս և իր հայտնի սաները գրեցին մանկական հատուկ երգեր։

«Նիկողոսյան վարժարանի այդ երգերը, Կոմիտասի մյուս գեղջուկ երգերուն հետ, տարածվեցան Պոլսո բոլոր կենտրոնական և թաղային վարժարաններուն մեջ։

«Հայ ժողովրդական երգի թարմ ու հարազատ շունչն ու ազգային պարերու կենդանի ռիթմը մեծ աշխուժություն մտցուցին ամբողջ ուսումնական հաստատություններեն ներս, և անկե տարածվեցան ամեն մեկ հայ տուներեն ներս։

«Հայ տունն ու դպրոցը այդ երգերով ու պարերով ավելի մոտեցան իրարու, բազմապատկվեցան ծնողական հավաքույթները, և այդ հավաքույթներու առթիվ՝ դպրոցական հանդիսությունները։ Բոլորովին փոխվեր էր այդ հանդեսներու հայաագրերու բովանդակությունը։

«Կոմիտասյան երգերը դարձան անոնց առանցքը»։

Այսքանն արդեն գերադրականն է գույներ խտացումին...

* * *

Հայ մանուկը, սերունդներ ամբողջ արհամարհված է եղեր։ Ցանցառ են եղած անով զբաղողները։ Ֆրեոբել շատ ուշ մուտք գործեց Պոլիս, և ան ալ շնորհիվ Կովկասեն եկող բացառիկ հայուհիի մը, որ Գայանե Մատակյանն էր եղեր։ Պատկառելի և նույնիսկ վաստակավոր ուսուցիչներ շատ ուներ, անշուշտ, Պոլիս, բայց անոր պակսեցան իսկական մանկավարժները։ Հովհաննես Հինտլյանները բացառություն եղան, և շատ համեցան անոնց ձեռնասունները՝ հայ դաս աիարակությունը հեղաշրջելու համար իր մեթոդներուն մեջ, և զայն մոտեցնելու նոր օրերու պահանջներուն։ Ցանցառ եղան նույն-

[43] Նիկողոսյան վարժարանը, որ թե ազգային, այլ անհատական վարժարան էր։

պես մանկավարժական դասընթացքներր Պոլսո մեջ՝ որպեսզի կարենային գոնե մասնակի թարմություն բերել։ Անոնք պատահական ընույթ միայն կրեցին, ատեն-ատեն կազմված ուսուցչական միություններու կամ զանազան ուրիշ միությանց բարյացակամության հանձնված։

Երբ որ Էսայան Ստնուց Միության անունով ամառնային դասընթացքներ կկազմակերպեի 1912 և 1913 տարիներուն Բերայի Էսայան վարժարանին մեջ, մասնավորապես զավառեն արձակուրդով Պոլիս եկող հայ ուսուցիչներուն համար, Կոմիտասին ես դիմումրրի։ Չեմ հիշեր այժմ ճշտիվ, թե ե՞ս առաջարկեցի նյութը, թե ինքն ընտրեց ուղղակի։ Ամեն պարագայի շատ սիրով հանձն առավ խոսիլ՝ նյութ ունենալով «Պարն ու մանուկը», որ ամենեն ուշադրավներեն մեկն էր դասախոսության շարքին մեջ։ Նրախտապարտ ըլլանք Առնակին (Համբարձում Զորթյան), որ սղագրեր էր Կոմիտասի այդ դասախոսությունը և դայն տպագրության հանձնեց տարիներ հետո[14]։ Երգի ու պարի մասին գործնական հրահանգներու կարգին, որոնք հավիշտակությամբ ունկնդրվեցան, Կոմիտաս խոսեցավ նաև մանուկներու դաստիարակության մասին, և իր արտահայտած մտքերը մեյմեկ պատգամներ էին, փորձ մանկավարժի մը շրթունքներեն բխած։

«Մեր մեջ,— ասավ Կոմիտաս,— փոքրիկ մանուկներու կսկսին սորվեցնել բարոյախոսական, խրատական, փիլիսոփայական երգեր, որոնց իմաստն ան չի հասկնար, ու չաղգվիր այնպես, ինչպես պետք էր։ Մենք մանուկներու հոգեկան պահանջներուն հարմարված գասագիրքեր չունինք. մեր դասագիրքերը լեցուն են փիլիսոփայական, բայց ոչ ճիշտ մանկական նյութերով։ Անոնց, որ տակավին կյանքի հասկացողությունը չունին, դուք տված եք կենդանի փիլիսոփայության դասեր. ասիկա իր մտավոր ստամոքսը չի կրնար մարսել. ծո՛ւռ, ծո՛ւռ դաստիարակություն է. իսկական վարժապետներ չկան. եթե մանուկը չի հասկնար ձեր դասավանդությունը, հանցանքը ձերն է, որովհետև չեք կրցած հասկնալ անոր հոգին. պետք է վար իջնել մինչև անոր հոգեկան աստիճանը, և դայն առնելով ձեզի հետ բարձրացնել։

«... Ուսուցիչ պարոննե՛ր և քույրե՛ր, զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին. խիստ փափուկ դաշտոն մրն է ձերը. դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է. սխալ ուղղությամբ՝ տղղ մը կկորտակեք վերջը»։

Հայ մանուկով պտհ մը զբաղեցավ Կոմիտաս ևս։ Թեև կաշկանդված այլազան հոգերու մեջ, ան այնուամենայնիվ ժամանակ գտավ դայն ալ ներմուծելու իր այնքան հոգերու շարքին։

Կոմիտաս լրջորեն զբաղեցավ, օրինակ, մանուկներու համար երգեր ևս գրի առնելով։ Տիգրան Չիթունին այս առթիվ ևս թանկագին աջակից մը եղավ իրեն։ Արդարև ան միակ մարդն էր, որ օգտակար կրնար դառնալ։ Զբաղած էր մանկական խաղերով, ու մանկական շատ մը երգեր ալ գիտեր։

Այնպես որ 1914 նոյեմբերի իրենց Պոլսո հանդիպումներուն ատեն գրի առին մանկական երգեր ալ, զորս կպահպաներ Չիթունի ուշագրավ հիշողությունը։

Բացի այդ՝ մանկական ժողովրդական երգերեն, անոնք իրենք իսկ մշակեցին քանի մը տասնյակ մանկապարտեզի երգեր։

Չիթունի կգրե այդ մասին.

«Այս երկրորդ մասին ձայնագրումի ընթացքին էր, որ Կոմիտաս ու ես խորհեցանք կազմել մանկապարտեզի հատուկ երգեր՝ ժողովրդական նյութերե քաղելով ու մշակելով։

«... Կոմիտասի հետ լծվեցանք այդ տքնության։ Եվ նույն տարվան 1914-ի դեկտեմբեր ամսուն գիշերաջան նվիրումներով մեջտեղ դրինք մառասունի չափ մանկական երգեր։ Անոնց ամբողջին նյութերը ես հանած էի իմ և մասամբ ուրիշներու գրի առած ժողովրդական մանկական երգա-խաղերեն։ Ապա՝ թե՛ խոսքերը և թե՛ եղանակները Կոմիտասի հետ հղկեցինք ու մշակեցինք՝ հարկ եղած տեղը նյութն ընդլայնելով կամ կրճատելով։ Բառերը բացատրված են ինձմե։

«Մեր նպատակն էր՝ տպել զանոնք տետրակներով, գունավոր, պատկերազարդ, եղանակները ձայնագրված, որպեսզի ծառայեն մեր մանկապտրտեզպանուհիներուն ձեռքին իբր դասատետր»[15]։

Չիթունի կավելցնե, թե այդ ձայնագրված եղանակներուն ձեռագիրները կորսված նկատելով, 1922-ին Փարիզի մեջ եղանակները Կրգած է կրկին Կոմիտասի սաներեն Միհրան Թումաճանի, որ ձայնագրած է զանոնք։ Այդ ուսթիվ քանի մը տասնյակ նոր երգեր ավելցուցած է անոնց վրա և Սպարկերտի ժողովրդական ֆոլկլորի անտիպ էջերեն։

Չիթունի կազմած է ցանկը մանկապարտեզի այն երգերուն, զորս մշակած էր 1914-ին՝ Կոմիտասին հետ՝ ավելցնելով ա-

---

[14] «Ամենուն տարեցույցը», 1928, էջ 478—484։

[15] Չիթունի, Կոմիտասին հետ, «Հայրենիք» ամսագիր, 1936 XII, էջ 87։

նոնց վրա Միհրան Թումաճանի թելադրածները եւ.

1. Արեւի երգ։
2. Հարսիկ։
3. Երաիւայիկ։
4. Հարսնիքի խաղ։
5. Ննջերգ։
6. Բգեղի երգ։
7. Պիծակի երգ։
8. Լողանքի երգ։
9. Դինիի երգ։
10. Քաղի-հունձքի երգ։
11. Քայլի ելնող երեխան։
12. Ճնճուղի երգ։
13. Ծաղկաքաղ։
14. Պարոնը կրսե։
15. Ճիկ-րու։
16. Դալար-թաթիկ։
17. Հոփինա։
18. Աքլորի երգ։
19. Արագիլի երգ։
20. Զրձումի երգ։
21. Ճրվի-ճրվի։
22. Ուլիկ։
23. Պրճինկու։
24. Պուպու։
25. Թուխ-մանուկ։
26. Փիսիկի երգ։
27. Կորսված իր մը գտնելու երգ։
28. Բամբակ գզելու երգ։
29. Արտ ջրելու երգ։
30. Պուպրիկի երգ։
31. Սկրտացող երախայի երգ։
32. Արտուտիկ։
33. Այգեկութին։
34. Ճղոր երգ։
35. Միու-միու։
36. Մարմնախաղ։
37. Քարափոսիկ։
38. Հա՛վ, քնի՞ր։
39. Արևին դեմ։

Կոմիտաս թշվառ մանկություն մը ապրած էր, և թերևս ատկե կբխեր իր բացառիկ գուրգուրանքը դեպի մանուկը։ Ինք շատ չէր խոսեր իր մանկության այդ դժնդակ օրերուն մասին, բայց բոլոր անոնք, որ Կոմիտասը ճանչցած են մանկության իր տարիներուն, պատմած են այն ահավոր շրջանին մասին, գոր ապրած է որբ Սողոմոնը Կուտինայի փողոցներուն մեջ։ Ինքը՝ Կոմիտաս, հաղվադեպորեն անդրադարձած է իր տխուր մանկությանը։

Հրանտ Հրահան, որ 1913 թվականի գարնան, Կոմիտասի Ադաբազար այցելած միջոցին աշակերտ էր տեղվույն կեդրոնական վարժարանին մեջ, կնկարագրե վարգապետին այցը դպրոց, աշակերության մեջ ունոր ստեղծած հուզումն ու խանդավառությունը իր զրույցով ու երգերով, և կհիշե անոր պատմածը իրենց՝ իր հեռավոր մանկությանը մասին.

«— Բալիկնե՛ր, գիտե՞ք, որ ես հորից ու մորից որբ եմ եղել և դրա համար էլ էջմիածին եմ ուղարկվել սովորելու...

«Ապա կուլ տալով իր կոկորդը սեղմող արցունքները, շարունակեց, մինչ մենք հուզված ու հետաքրքիր և սրտատրոփ լսում էինք նրան.

«—Իմ հորից առաջին անգամ սովորած երգի խոսքն ահավասիկ այս է.

Շագանակ բաղեցի օճաիր
Ցատկեց գնաց պուճաիր

(Հրահան, այլուր[46]), իրենց թուրքերեն ձևին մեջ կու տա այդ երկու տողը.— Քեռբանե կեուլմեյում օճաղա, ֆրոլատը կիբտի պուճաղա):

«Նա հուզմունքով պատմեց իր անցյալ որբ ու թշվառ մանկության մասին, թե ինչպես թափառում էր իր ծննդավայր Քեռթահիայի փողոցներում և մերկ ու քաղցած գիշերում հանրային լվացարաններում՝ լքված ու անպաշտպան։ Նա հիշում էր երբեմնի փոքրիկ, անտեր ու որբ Սողոմոնին՝ այն պատանի թշվառ երգչին, որ երգում էր իր տխուր, աստանդական ճակատագիրը»[47]։

Կոմիտաս որևէ մեկեն ավելի գիտեր, թե փողոցներու սալահատակներուն վրա իրենց թշվառությունը մաղ ածող հեզ երեխաներու մեջ երբեմն ինչ գանձեր կթաքցնե նախախնամությունը։

46 «Ապագայ», 1935, էջ 5։
47 «Էջմիածին», 1950, I—II, էջ 42։

(Շարունակելի)

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈՒՆԱՎԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (ՎԱՐՔ)

Թարգմանություն հունարեն բնագրից՝ Հ. ԲԱՐԹԼԿՅԱՆԻ
Առաջաբան և ծանոթագրութ. Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆԻ

98. Հրավերի համաձայն ներկայացան երեք թագավորները, այն է Լազերի, Վրաց և Աղվանից, ապա հերթականությամբ թագավորներից հետո առաջին տեղում գտնվող Անգեղտան և Անձիտի կուսակալը, երկրորդ՝ Ադենիքի մեծ բդեշխը, երրորդ՝ Մազդերի կուսակալը, չորրորդ՝ ասպետության իշխանը, որը պաշտպանում էր Կովկասյան լեռների կողմերը և Ճանիքը[13], հինգերորդ՝ Մամիկոնյանների նախարարը՝ սպարապետը, որին էին ենթարկվում Հայոց ամբողջ հեծելազորն ու հետևակը և միշտ Հայոց թագավորի հետ էր լինում և պատերազմում նրա զորավարության էին ենթարկվում բոլոր վերոհիշյալները և նրանք, որոնց մասին խոսք կլինի ստորև. վեցերորդ՝ կուսակալը այսպես կոչված Կորդվաց աշխարհի, որը գտնվում է Անդրիոկոդրիտների[14] մոտ, յոթերորդ՝ իշխանը, Մեծ Ոստիքի, որը Միջագետքի մոտ է գտնվում, ութերորդ՝ Գուգարացվոց աշխարհի առաջնորդը, որը ևս բդեշխի աստիճան ունի։ Իններորդ՝ Ռշտունյաց կուսակալը, տասներորդ՝ Մոկաց շահապը, տասնմեկերորդ՝ Սյունյաց ցեղապետը, տասներկուերորդ՝ Ծավդեից զորավարը, տասներեքերորդ՝ [Իշխանն Ուտիացվոց աշխարհի, տասներչորսերորդ][15] շահապը Զարավանդի և Հեր գավառի. սրանք ևս գտնվում են Կոդրիտների մոտ. տասնհինգերորդ՝ Խորխոռունյաց նախարարը, որը որպես առաջնորդ ունի Մազխազության իշխանությունը, տասնվեցերորդ՝ Արծրունյաց իշխանը։ Մնացած նախարարներն էլ հավաքվեցին՝ ըստ իրենց գրված հերթականության։

99. Այս տասնվեց մեծամեծները, որոնք մեկ առ մեկ թվարկվեցին և հիշատակվեցին իրենց ունեցած աստիճաններով, հրաման ստացան պատրաստ լինել ճանապարհորդության համար։

100. Երբ բոլորը հավաքվեցին, Տրդատ թագավորն ասաց նրանց. «Ո՞վ թագավորներ, կուսակալներ, իշխաններ, նախարարներ. դուք իմացել եք այս սուրբ մարդու և սուրբ կույսերի հանդեպ մեր գործած արարքների մասին։ Մենք խաբված էինք կորսյան մոլորությամբ, անլեզու կուռքեր էինք պաշտում և շայտարում էինք կենդանի Աստուծո սպասավորներին։ Աստված ցանկացավ շարշարել և պատժել մեզ՝ մեր իսկ կողմից պաշտվող դևերի միջոցով, իսկ մեր կողմից մահվան վտանգներին ենթարկված մարդուն փրկեց, նա մեզ ուղղեց դեպի ճշմարտության ճանապարհը։

101. Նա մեկ առ մեկ պատմեց բոլոր տեղի ունեցածի մասին և հարցրեց թագավորներին՝ ինչ անեն։ Բոլորը երկյուղով և հրճվանքով լի զոչում էին պատրաստակամությամբ հպատակվել Գրիգորին, հետևել նրա

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1966 թվականի է-ից և Ը-ից։

[13] Բնագրում Ճանիք։

[14] Անդրիոկոդրիտ (Ἀνδριακοδρίτων) և Կոդրիտ (Κοδρίτων) տեղանունները մնում են ստուգման կարոտ։ Հավանարար պետք է կապ ունենան Կոդրիք, Կորճայք, Կորդուք տեղանունների հետ (Documeots, p. 219—220)։

[15] Փակագծերի մեջ եղած բառերը հայկական Ագաթանգեղոսից են վերցված, քանի որ հունական Վարքը այս տեղում անընթեռնելի է։ Արաբական Վարքը նույնպես ունի «երեքտասաներորդ՝ իշխանն Ուտեաց, չորեքտասաներորդ...» (Մկրտութիւն, էջ 49)։

դավանանքին և վարդապետություններ, լսել, հնազանդ լինել և կատարել սրբի հրամանները, հրաժարվելով կռապաշտությունից։

102. Բոլորը իրենց հայացքը հառեցին սուրբ Գրիգորին, իսկ նա դիմեց նրանց աստվածաշունչ գրքերի մեկնության ամենաճշմարիտ վարդապետությամբ և բոլորին ամրապնդեց սուրբ երրորդության հավատքին։ Նա ամրապնդեց նրանց հավատքը՝ Տեր Հոր ամենակալին, միածին Որդուն՝ Ճշմարիտ Աստծուն, որ ծնվեց Ճշմարիտ Աստծուց, և Սուրբ Հոգուն և նրանցից պահանջում էր իրենց հավատացյալ լինելու ապացույցներ։ Նա նրանց հետ միասին շտապում էր կուռքերը կործանելու։

103. Նախ և առաջ Տրդատ թագավորը հրամայեց կործանել նախնյաց (կուռքերի) տաճարները[16]։ Այնուհետև սուրբ Գրիգորի հետ, թագավորներով և բոլոր մեծամեծներով նա գնաց Արտաշատ քաղաքը և հրամայեց կործանել Արտեմիսի տաճարը, նմանապես և այսպես կոչված Ապոլոնի պատգամարանը[17]։ Նա ջարդ ու փշուր արեց ոսկե և արծաթե սպասները ու հրամայեց պահել, որպեսզի (դրանցով) հետագայում զարդարեն կառուցվելիք վկայարանները։

104. Դևերը, տեսնելով տեղի ունեցածը, ինչպես և թագավորների և ամբողջ ժողովրդի ջերմեռանդությունը, մարդու կերպարանք ստանալով դարձան հեծյալ և հետևակ ռազմիկներ և փորձում էին նիզակներով դիմագրել։ Նրանք տաճարների միջից նետեր, նիզակներ և քարեր էին արձակում, բայց դրանք անզոր էին և ոչ ոքի վնաս չէին հասցնում։ Իսկ սուրբ Գրիգորը պատվական և կենարար խաչի նշանն անելով, դինվեց ընդդեմ երևացող զորքի և բոլորը աներևութացան։ Լսվում էր նրանց ձայնը, որ ասում էր. «Վա՜յ մեզ, Քրիստոսը մեզ ամեն տեղից հալածեց և այդ մեզ արեց մարդկային արարածի դուստր Մարիամից ծնվածը։ Ահա, մենք այստեղից էլ ենք դուրս քշվում կապյալ մարդու կողմից։ Մենք բազում փորձանքներ բերեցինք [նրանց գլխին], բայց ապարդյուն։ Ուստի հեռանանք լեռները»։

105. Սուրբ Գրիգորը կործանելով տաճարները, առաջարկեց Տրդատ թագավորին քրիստոնյա դարձնել քրմերին, իսկ տաճարական սպասները տալ՝ մի մասը չքավորներին, իսկ մնացածը պահել թագավորական գանձարանում, (Քրմերը) միաբան լինելով, փութացին կատարյալ (հավատքն) ընդունել, փրկվելով կռապաշտության մոլորությունից, ամուր կանգնել Քրիստոսի հավատքի մեջ։

106. Թագավորը փութաց կործանել նաև Ջևսի տաճարը և ոսկե ու արծաթե սպասները գանձարան տեղափոխել։ Նա հրամայեց պատպանել [տաճարներին պատկանող] գյուղերը մինչև որ կառուցվեն եկեղեցիները և նա, ում կրնկին քահանայության վիճակը, թող տիրություն անի նրանց, ըստ իր ցանկության։

107. Սուրբ Գրիգորը կառուցվելիք տաճարների տեղերում խաչեր կանգնեցրեց և ցանկապատներ կառուցեց, ապա Մազավորի և մնացած ժողովրդի հետ գնաց մի այլ վայր, բայց զոհասեղան նա չկառուցեց, որովհետև չուներ քահանայության պատիվը։ Նա ասաց, որ քաղաքներում, գյուղերում, ագարակներում կանգնեցնեն խաչի նշաններ, որպեսզի դևերը ամենուրեք փախուստի մատնվեն։ Նա ամեն տեղ բարոզում էր խոսքն Աստուծո, լինելով շատ ուսյալ և իր ջերմեռանդության մեջ գորավիգ ունենալով Սուրբ Հոգին։

108. Նա թագավորի հետ հասավ Դարանաղյաց գավառի Բորդան գյուղը, որտեղ էր գտնվում Հռևայի տաճարը. ահա այն ևս կործանելով, եղած գույքը տվեցին չքավորներին։ Ինչ վերաբերում է կուռքերին, ոսկե և արծաթե և թանկագին քարերով զարդարված սրբազան սպասներին և նվիրատվություններին, ապա դրանք ջարդ ու փշուր անելով պահեցին, ապագայում կառուցվելիք սուրբ տաճարների համար, իսկ Բորդան գյուղը դարձրին Քրիստոսի եկեղեցուն ենթակա։

109. Նրանք այնտեղ կանգնեցրին պատվական խաչը և շարժվեցին դեպի այլ շրջաններ. թագավորը մեծ ջերմեռանդություն էր ցուցաբերում տիրանալու կռապաշտության մոլորության մեջ (ապավինած) բոլոր մարդկանց և սուրբ Գրիգորի վարդապետության միջոցով բերելու Քրիստոս Աստծուն։

110. Նրանք եկան նաև Անի ամրոցը, որի միջնաբերդում էին գտնվում նախկին թագավորների դամբարանները։ Հայոց թագավորը որտեղ էլ որ վախճանվեր, բերվում էր (թաղվելու) Անիի միջնաբերդը։ Այնտեղ էր գտնվում նաև թագավորների թանկագին նվիրատվություններով լի Ջևսի տաճարը։ Նրանք այնտեղ ևս նույն բանն արեցին, կանգնեցրին Քրիստոսի նշանը և շարժվեցին դեպի այլ գավառ։

111. Նրանք հասան Երիդա մեծ գյուղում գտնվող Արտեմիսի տաճարը, որտեղ սովորության համաձայն թագավորները տոնակատարություններ էին կազմակերպում և որտեղից Գրիգորը սկսեց իր մարտիրոսությունը՝ ենթարկվելով սարսափելի պատիժների։ Երբ նրանք, այսինքն թագավորը իր ամբողջ զորքով ու սուրբ այրով եկան, դևերը, դինվորների կերպարանք ստացած ուղեցին վախեցնել նրանց։ Բայց սուրբը խաչի նշանով հալածեց նրանց և դրանով իսկ ավելի բորբոքեց ժողովրդի սերը դեպի կենդանի Աստվածը։ Նամանավանդ, երբ տաճարի պատերը ինքնարերաբար տապալվեցին։

112. Թագավորը բոլոր իր ենթականերով անցավ Եփրատ գետը և հասավ Թիլ ավանը։ Այնտեղ ևս նա կործանեց Աթենայի տաճարը, իսկ սրբազան սպասները նույնպես հրամայեց պահել Թիլ ավանում՝ նվիրելով այն կառուցվելիք եկեղեցուն։

---

16 Բնագրում՝ հայոց նախնյաց տաճարներն, որոշ մտքեր է արթնացնում։ Սրանք կարող են լինել նախնիների կառուցած տաճարները, միաժամանակ նաև նախնիների պաշտամունքին նվիրված մեհյաններ, քանի որ հայկական լեռնաշխարհում այդպիսի երևույթ գոյություն է ունեցել։

17 Սրան համապատասխան տեղում Ագաթանգեղոսն ունի «Սրբազացոյց, երազահան պաշտաման Տրի դիր» (էջ 404)։

113. Այսպես, ամեն տեղ շրջելով, նրանք քրիստոնեական հավատքի հիմքն էին դնում։ Բոլորը շտապում էին նրանց մոտ, և՛ որովհետև վախենում էին թագավորից, և՛ տեսնելով Գրիգորի գործած հրաշքները։ Քանզի նա ճառով և աղոթքով կործանում էր կուռքերի տաճարները, բուժում էր երկարամյա արատներով տառապող և իր մոտ բերվող հիվանդներին։

114. Իսկ Տրդատ թագավորը չէր դադարում յուրաքանչյուր շրջանում անձամբ քարոզելուց, նախկին ամբարշտությունն ու դավանանքը պիղծ և անսուրբ անվանելով։ [Պատմում էր] իր և իր մեծամեծների ստացած պատժի մասին, ապա նաև թունավոր և ամենասարսափելի օձերով լի վիրապից Աստուծո կողմից փրկված Գրիգորից բուժվելու մասին։

115. Նրանք հասան նաև Դերջան դավառի Բաղայատիճ գյուղը, որտեղ [Գրիգորը] կործանեց Դիոնիսոսի տաճարը և հողեր վարդապետությամբ բոլորին համոզեց հրաժարվել կռապաշտության մոլորությունից և դիմել ճշմարիտ աստվածածանոթությունը։

116. Այնուհետև Տրդատը շտապեց դեպի Այրարատ նահանգը, թագուհու, քրոջ և մնացած մեծամեծների հետ՝ քահանայի հարցի շուրջը խորհրդակցելու համար, ո՛վ պետք է հովվություն անի և իրենց մկրտի։ Նա սուրբ Գրիգորի հետ հասավ վերոհիշյալ Այրարատ նահանգի Վաղարշապատ քաղաքը և խորհրդակցելով բոլորի հետ, ասաց.

117. «Եկե՛ք ուրեմն առաջադրենք նրան, ով մեզ առաջնորդեց դեպի կենաց ճանապարհը, ցույց տվեց ճշմարտության լուսատուն և փրկեց մեզ մութ ու խավար ստրկությունից։ Շտապենք նրան տալու պատիվը քահանայության, որպեսզի արժանանք Քրիստոսի մկրտության և սուրբ հաղորդության, քանզի վասում են հոգիները մեր, ունկնդրած լինելով Գրիգորի վարդապետությունը, բայց մենք հուզմունքի մեջ ենք, քանզի դեռ չենք արժանացել կատարյալին։

118. Սուրբ Գրիգորն ասում է նրանց. «Ես ի վիճակի չեմ նման բան կրելու և միջնորդ դառնալու կենդանի Աստուծո և մարդկանց միջև»։

119. Նրանք պատասխանեցին նրան. «Դու, ով այսքա՞ն և նման հրաշքներ գործեցիր, ով քո սուրբ վարդապետությամբ և իմաստուն ու քաղցրաղույն խոսքերով մեզ ճշմարիտ հավատքի մեջ ամրապնդեցիր, ինչպե՛ս չես կարող լինել միջնորդը Աստուծո և մարդկանց։ Մենք արդեն փորձով դիտենք՝ ինչ որ դու խնդրում ես կենդանի Աստծուց, կատարվում է»։

120. Նա շարունակ մերժում էր, երբ վրա հասավ երեկոն և թագավորական ընթրիքից հետո ամեն մեկը գնաց իր տեղը։ Եվ ահա փայլակի նման մի հրեշտակ երևաց թագավորին, ասելով այսպես. «Դու բարի և ճշմարիտ ճանապարհի վրա ես, Տրդատ. փութա՛ ուրեմն կատարելու քո մտադրությունը։ Նա, ով ամրապնդեց ձեզ (հավատքի մեջ), նա՛ էլ ձեր վրա կկատարի երրորդության խորհուրդը։ Շտապ կարգով Գրիգորին տվեք քահանայության վիճակը, ուղարկելով նրան Կեսարիա, որտեղ որ ուսանել էր խոսքը ճշմարտության և ստացել իր ամբողջ կրթությունը։ Ես Գրիգորին էլ կհայտնվեմ, որպեսզի չմերժի քո առաջարկը։

121. Թագավորը շատ վախեցած հրամայեց բոլորին հավաքվել։ Նույն հրեշտակը Գրիգորին հայտնվեց և ասաց. «Զհամտրձակվե՛ս հակաճառել Տրդատին, ո՞վ Գրիգոր, երբ նա ասաջարկի քեզ հովվել ժողովրդին, որ քո՛ կողմից և քո՛ համբերությամբ փրկվեց»։

122. Առավոտյան բոլորը հավաքվեցին թագավորի մոտ. կանչվեց նաև սուրբ Գրիգորը։ Թագավորը բոլորին պատմեց սարսափելի տեսիլքի մասին, այն մասին, որ ինքը արժանի դարձավ երազում տեսնել հրեշտակի. ժողովուրդը ուրախացավ, նաև սարսափեց, երբ թագավորն ասաց, թե հրեշտակը Գրիգորին ասաց համաձայնվել և իր՝ Տրդատի խոսքերին չհակաճառել։ Նա շտապում էր վերջնականապես ի կատար ածել իր մտադրությունը։ Սուրբ Գրիգորը ևս պատմեց իր տեսիլքի մասին և հաստատեց թագավորի պատմած տեսիլքն ու ասաց. «Թող լինի այնպես, ինչպես Տերն է կամենում և դուք»։

123. Մեծամեծները պատրաստվեցին սուրբ Գրիգորի հետ գնալ Կեսարիա, իսկ թագավորը նրան տրամադրեց բազում նվերներ և դրամական միջոցներ, նվերները հայրապետի և սուրբ եկեղեցու մյուս սպասավորներին հանձնելու համար, ինչպես նաև իշխանավորներին, իսկ դրամը՝ իրենց ճանապարհածախսի և Կեսարիայում ապրելու համար։ Մեծամեծները ևս իրենց հետ վերցրին բազում դրամ և նվերներ։

124. Վերոհիշյալ մեծամեծները սուրբ Գրիգորին նստեցրին թանկագին քարերով զարդարված արքունական ոսկեպատ կառքի վրա և սրբի հետ ճանապարհ դրեցին դեպի Կեսարիա։ Խումբը ղեկավարում էր Մամիկոնեից նախարարը, ամբողջ Հայաստանի սպարապետը։ Նա ոմանց առանձնացրել էր և նախօրոք ուղարկել տարբեր տեղեր և վայրեր՝ անհրաժեշտ նախապատրաստությունը տեսնելու, քանզի մեծամեծներին հետևում էին երեք բյուր հեծյալներ, բացի դրանից նաև բազում հետևակներ, որոնք սպասարկում էին նրանց։

125. Բոլոր գյուղերի տղամարդիկ, կանայք, երեխաներ, լսելով Քրիստոսի վկա Գրիգորի Կեսարիա դնալու մասին՝ աստվածածանոթության եկած հայոց ժողովրդին հովվելու հարցի կապակցությամբ, դիմավորելու էին դնում մոմերով։ Նույնպես և քահանաները դուրս էին գալիս սրբին ընդառաջ, օրհնելով և փառաբանելով Աստծուն։

126. Սեբաստացվոց եպիսկոպոսը իր ամբողջ սրբասեր հոգևորականությամբ խնդրում էր սրբին (և ուղեկցողներին), որ բազում օրեր մնան իրենց քաղաքում։ Նրանք խոստացան այդ անել իրենց վերադարձին և ընդամենը երկու օր մնալով այնտեղ, շարժվեցին դեպի Կեսարիա։

127. Համբավը ավելի շուտ էր տեղ հասնում, քան այն մարդիկ, որոնք առաջից էին գնում պետք եղածը նախապատրաստելու համար. գյուղերի ու տղարակների մարդի՝ դուրս էին գալիս ընդդեմ հանդիման, դարմանում եղելության վրա ու զոհություն էին հայտնում Աստծուն, որ իրենց փրկեց ամբարիշտ դավանանքից։

128. Հասնելով Կեսարիայի մոտակայքը, մարդ ուղարկեցին հայտնելու Ղևոնդիոս արքեպիսկոպոսին, ինչպես և քաղաքի իշխանին, հարցնելով նաև, թե ուր

պետք է իրենք իշխանեն և իրենց ծախսերի համար ուղարկեցին բաղում ոսկի։

129. Սուրբ հայրապետը, ապա նրա հետ նաև քաղաքի իշխանը և մնացած քաղաքացիք, իմանալով այդ մասին, շատ ուրախացան և ամեն ինչ նախապատրաստեցին նրանց սպասարկելու համար. նրանք կարդարեցին, որ մեծամեծներից յուրաքանչյուրը բնակվի մեծ տներից մեկում, իսկ սուրբ Գրիգորին հատկացվեց եպիսկոպոսարանի շենքը։

130. Բոլոր քաղաքացիք մեծ ու փոքր իրենց կանանցով ու երեխաներով քաղաքի իշխանի հետ միասին նրանց դիմավորեցին քաղաքից դուրս չորս մղոն հեռավորության վրա, ողջունեցին սրբին, երբ նա իջավ թաղավորական կառքից։ Այդ ամենը նրանք մեծ ուրախությամբ արեցին, և այնուհետև մտան քաղաք։

131. Երբ բոլորը հասան եկեղեցու մոտ, նրանց դիմավորեց Ղևոնդիոս արքեպիսկոպոսը՝ բոլոր քահանայապետներով և ողջագուրվելով սուրբ Գրիգորի և բոլոր տասնվեց մեծամեծների հետ, քաղաքացիներով և մեծամեծներով մտավ եկեղեցի և եպիսկոպոսարանում աղոթելուց հետո (...)։ Նա նրանցից ամեն ինչ իմացավ, վարդապետեց նրանց աստվածածանոթության ճանապարհը, այնուհետև մեծամեծներին և վկա Գրիգորին ընթրիքի հրավիրեց, իսկ մյուսներին արձակեց գնալ յուրաքանչյուրն իրեն հատկացված բնակարանը։

132. Ամբողջ քաղաքում սրբի դալստյան և այնքան ժողովրդի փրկության առթիվ ուրախություն էր, հրավառություն, (Գրիգորի) կնոջ մերձավորները ու բարեկամները, բացի դրանից (որդիների) դաստիարակները շատ ուրախացան և միշտ սրբի հետ էին։

133. Արքեպիսկոպոս Ղևոնդիոսը ոմանց ուղարկեց մինչև Բյութանիայի Քաղկեդոն (քաղաքը) իրեն ենթակա եպիսկոպոսներին և մետրապոլիտներին հրավիրելու. երբ եպիսկոպոսները ու մետրապոլիտները հավաքվեցին՝ թվով քսանչ հոգի, նրանց տրվեց Տրդատ թագավորի նամակը, որն ուներ հետևյալ բովանդակությունը.

134. «Տրդատ թագավորը Հայոց Մեծաց, իմ կենդանի Աշխեն թագուհի, քույր խոսրովիդուխտ և համայն Հայաստան աշխարհի Կապադովկիայի հովվապետ արքեպիսկոպոսն, ամբողջ սուրբ կղերն, մեծափառ իշխանները և համայն քրիստոնյաներին։ Դիմում եմ մեծ սիրով ու խոնարհամտությամբ. ով երեելագույններ, դուք, որ կենդանի Աստուծո միջոցով բուժում եք հիվանդներին, պետք է քարոզեք, վարդապետեք և հանդամանորեն շարադրեք Աստուծո մարդասիրական ուսմունքը, որ մեզ է հասել։

135. «Անցյալում մեզ պատել էր մթին և խավար մշուշը և ի վիճակի չէինք ճանաչել կենդանի Աստուծուն, հայացքը հարել արեգակին արդարության. մենք դտնվում էինք կռապաշտության մոլորության մեջ, որ ավանդ էինք ստացել մեր հայրերից, որի պատճառով խորշում էինք յուրաքանչյուրից, ով մեր դավանակիցը չէր և՝ չարչարում նրան։ Իսկ մարդասեր Աստվածը, ցանկանալով մեզ տանել ճշմարիտ ճանապարհով, մեզ ուղարկեց սուրբ վկաներ, որպեսզի նրանք ևս ենթարկվելով մեր պատճառած չարչարանքներին, դառնան Քրիստոսի մարտիրոսներ։ Իսկ մենք՝ ճանաչեցինք միակ Աստուծուն։

136. «Այս Գրիգորին, այն պատճառով, որ նա չուզեց հաղորդվել ամենապիղծ խորհրդին՝ դոհ մատուցել կուռքերին, մենք ամեն տեսակի չարչարանքների ենթարկեցինք, բայց ի վերջո չկարողանալով դիմանալ նրա համբերությանը, ամենադաժան մահապատժի դատապարտեցինք, ենթադրելով այն վիրապը, որտեղ դտնվում էին թունավոր սողուններ և օձեր. վիրապը այլ չարադործներ էին նետվել և դեռ հատակին չհասած մեռել, տեղն ու տեղը իրենց հոգին ավանդել, չկարողանալով դիմանալ օձերի սուլոցին։ Բայց նա շնորհիվ Աստուծո տասնհինգ տարի անվնաս մնաց, սրբեսզի նրա վարդապետության միջոցով մենք փրկվենք։

137. «Հռոմայեցիների կայսր Դիոկլետիանոսի մոտից, Հռոմ մեծ քաղաքից փախուստի դիմեցին սուրբ կույսեր, որոնց մասին Դիոկլետիանոսը մեզ նամակով հայտնեց։ Մենք նրանց բռնեցինք, բայց երբ չկարողացանք ընդունել տալ մեր մոլորությունը, բազում չարչարանքների ենթարկելով, սպանեցինք։

138. «Բայց ի վերջո Քրիստոսը որոշեց իր ցասումով մեզ մարդասեր դարձնել, ինձ, թագավորիս հանձնեց մեր կողմից պաշտվող դևերին, և վայրի դազանի կերպարանափոխեց։ Մեր մեծամեծներն ու սպասավորները պատառոտում էին իրենց հանդերձները, իրենց միսն էին ուտում։

139. «Այդ մասին մեկ առ մեկ կպատմեն մի, կողմից ուղարկված մեծամեծները, որոնք պետք է ուղեկցեն մարտիրոս Գրիգորին, ով իմ քրոջ տեսած տեսիլքի պատճառով ազատվեց վիրապից և դուրս գալով բուժեց մեր արատները, վարդապետեց ամուր կանգնել ուղղափառ հավատքի մեջ, ճանաչել կենդանի Աստուծուն, Որդուն և Սուրբ Հոգուն։

140. «Մենք նպատակահարմար դտանք նրան հովիվ նշանակել, բայց այդ ոչ մի կերպ չարեցինք։ Ինձ՝ անարժանիս փայլատակող մի հրեշտակ երևաց, փութացրեց այդ անել, ասաց նաև, որ (Գրիգորին) ես, կհայտնվի որպեսզի նա չմերժի, ավելացնելով, որ ձեռնադրվելու համար պետք է դնա այնտեղ, որտեղ նա սովորել է սուրբ Գիրքը։

141. «Մենք խնդրում ենք, որ քո սուրբ ձեռնադրությամբ նա դառնա քահանա ու հովիվ և ուղարկված մեծամեծներով նրան արձակիր։ Մենք դարձանք այնքան չերմեռանդ, որ չարդեցինք կուռքերը, կործանեցինք տաճարները. վկա Գրիգորն ամենուրեք խաչեր է կանգնեցնում՝ կառուցվելիք եկեղեցիների տեղերը նշանակելով։

142. «Քո սրբազնությունը՝ սուրբ հոգևորականներով և ձեր ամբողջ քրիստոսասեր ժողովրդով, աղոթեցեք մեզ համար, շտապ կարդով ի կատար ածեք մեր խնդրանքը, որպեսզի մենք ևս կատարելության արժանանանք, և ստանալով բարի է փրկիչ Քրիստոսի մկրտությունն ու շնորհքը ձեր բանավոր հոտին մաս կազմենք։ Ո՜ղջ լերուք սրբազնագույններ՝ ձեր սրբազան կղերով, մեծափառ իշխանավորներով և ամբողջ ժողովրդով»։

143. Սուրբ Ղեոնդիոսը Կեսարիա քաղաքի բոլոր բնակիչների հետ շատ ուրախացավ և շտապեց հոգալ ու հյուրընկալել վկա Գրիգորին և մեծամեծներին, որոնք սրբազնագույն եկեղեցիներին նվիրաբերում էին ոսկյա և արծաթյա սպասներ։ Մեծամեծները նման նվերներ բերել էին նաև իրենց տներից և սեփական հայրենիքի ամենաթանկագին իրերը նվիրաբերում էին ոչ միայն սուրբ տներին, այլև քաղաքի իշխաններին։

144. Կեսարիա քաղաքը մեծ երանության մեջ էր, որովհետև ընդունել էր մի վկայի, որովհետև այսքան և այսպիսի մարդիկ հարեցին Աստուծո սուրբ եկեղեցուն, ազատվեցին մոլորությունից և կործանումից, վերադարձան կենդանի Աստծուն, քանզի այսքան հեթանոսներ սուրբ Գրիգորի համբերությամբ և վարդապետությամբ փրկվեցին։

145. Սրբազնագույն եպիսկոպոսները սրբազնագույն հայրապետ Ղեոնդիոսի հետ հավաքվեցին, մտան սուրբ եկեղեցին, սրբին բեմ բարձրացրին և բացելով սուրբ ավետարանը դրին վկա և խոստովանող Գրիգորի վրա, նրանք բոլորը իրենց սուրբ ձեռքերը դրին նրա վրա և կարդացին ընդունված աղոթքը, ապա նրա ուսին դցեցին եմփորոնը և ասացին. «Արժանի, արժանի, արժանի»։ Նրանք պատարագեցին, ընթերցելով սուրբ ավետարանի ընթերցվածը. «Ես եմ հովիվը բարի» և շարունակությունը։ Աղոթքներությունից հետո բոլորը ողջունում էին վկային։

146. Բոլոր եպիսկոպոսները և իշխանավորները, Կեսարիայի երևելացուն մարդիկ և մնացած ժողովուրդը՝ տղամարդիկ, կանայք և երեխաները, նրանց բաղում օրեր հյուրընկալելուց հետո, ջահերով և մոմերով, փառավորելով (Աստծուն) ճանապարհեցին մինչև քաղաքից դուրս։

147. Արքեպիսկոպոս սուրբ Ղեոնդիոսը սուրբ Գրիգորի խնդրանքը տվեց սուրբ Կարապետ և Մկրտիչ Հովհաննեսի մասունքներից, ինչպես նաև պատասխան նամակ և մյուս եպիսկոպոսների հետ համբուրեց նրան։ Ապա նստեցնելով թաղավորական կառքը, հրաժեշտ տվին, իսկ իրենք վերադարձան քաղաք, կատարված իրողության վրա դարմացած և ընդհանրական եկեղեցուն միացած ժողովրդի համար ուրախացած։

148. Հայրապետի կողմից գրված նամակի բովանդակությունը հետևյալն էր. «Առ Տրդատ թագավոր Հայոց Մեծաց, Աշխեն թագուհի, եռորովիղությամբ և համայն ժողովուրդ. խաղաղություն կենդանի Աստծուց, Տեր Հիսուս Քրիստոսից և Սուրբ Հոգուց։ Ղեոնդիոս արքեպիսկոպոս Մեծ Կեսարիայի, ողջույն։ (Դուք) տանջվածներդ ու (ճշմարտության) իմացության եկողներդ, մոլորյալներդ, որ դտնվեցիք, մեռածներդ, որ կյանք ստացաք, միշտ ուրախ և երջանիկ եղեք, որ մարտիրոսներին ձեր կողմից պատճառած չարչարանքներով և անցյալում ձեր ստացած պատժով եկաք ճշմարտության իմացությանը։

149. «Մենք ձեր նամակներից և ուղարկված մարդկանցից ամեն ինչ իմացանք, փառավորեցինք շնորհքը Քրիստոսի, որ փայլատակեց սուրբ կույսերի միջոցով, կույսեր, որոնց դուք սպանեցիք, երբ դեռ մոլորության մեջ էիք. և որոնք ժառանգեցին կյանքը հավիտենական։ Նաև սուրբ Գրիգորի միջոցով, որ ենթարկվեց այնքան և այնպիսի չարչարանքների, Գրիգորի, որ մանուկ հասակից դաստիարակվելով աստվածանության ոգով, բարվո իմացությունն ստացավ, սովորեց Աստվածաշունչ գրքերը։ Ձեր մեջ լինելով, նա հավատարիմ մնաց Քրիստոսի հավաքին, և ըստ Առաքյալի[18], ընթացքը կատարելով, հաղթանակներ տարավ, իր վարդապետությամբ ձեր մեջ տարածեց շնորհքն Աստուծո և դասվեց Աստուծո ընտրյալների դասը։

150. «Մեր խոնարհությունը ձեր խնդրանքի համաձայն նրան շնորհեց քահանայության պատիվը, նրան, ում նախապես դիմել էր Սուրբ Հոգին ձեզ [հավատքի մեջ] ամրապնդելու համար և նա կարծես բահանա լիներ ամեն ինչ արեց ձեզ համար։ Ընդունեք ուրեմն հովիվն բարի և ուսուցչին իմաստուն՝ քահանայապետին։

151. «Իսկ մենք անվերջ կաղոթենք, որպեսզի դուք անսասան մնաք ուղիղ հավատքի մեջ, սիրեք Աստծուն, ենթարկվեք քահանայապետին, որ ձեզ է պարգևել շնորհով Քրիստոսի։ Այդպիսով դուք սիրելի կլինեք մեզ ոգի ևս թեպետ և մարմնով մեկուսի եմ, սակայն հոգով մերձ եմ»[19]. Աստված բարի և միածին Որդին՝ Սուրբ Հոգու միջոցով անխոով պահի ձեր միտքը, առողջ հոգով և մարմնով իր խաղաղության մեջ։

152. Նրանք հրճվանքով դուրս եկան (Կեսարիայից) և հասնելով սերաստացվոց գավառը, Տրիոդիա կոչված վայրը, վրաններ խփեցին և հանգստացան, քանզի չուզեցին որևէ մեկին ձանձրույթ պատճառել՝ դյուղում կամ ադարակում։ Իսկ բոլոր սերաստացիք իրենց սրբազան եպիսկոպոս Պետրոսի[20] և իշխանի հետ միասին դիմավորեցին նրանց և մեծ ուրախությամբ քաղաք մտցրին։

153. Քաղաքացիների խնդրանքով նրանք այնտեղ մնացին վեց օր և ապա շարժվեցին դեպի իրենց երկիրը։ Սուրբ Գրիգորը իր հետ վերցրեց երեցներ և մենակյացներ, որպեսզի վիճակեցուցացն նրանց հայոց եկեղեցում։ Նա հայրապետ Ղեոնդիոսի կողմից ուներ նաև ընդհանրական թղթեր, հասցեագրված սրբազան եպիսկոպոս Պետրոսին, որպեսզի սուրբ կանոնների համաձայն իրեն սիրոտակալ նշանակեն։

154. Երբ բոլորը հասան Մեծ Հայք երկիրը, ամեն տեղից շտապում էին նրանց դիմավորելու (Գրիգորը) յուրաքանչյուր քաղաքում, որտեղ խուզեր էր կանգնեցրել նորակառույց եկեղեցիներ դտան։ Պատարագ մատուցելով նրանք շարժվեցին դեպի Տաւոն երկիրը։

155. Հասնելով Աշտիշատ դյուղը, թաղավորական կառքը, որի վրա էին նստած սուրբ Գրիգորը և սրբազան Պետրոսը իրենց հետ ուղեկցելով փառավորյալ մկրտիչ Հովհաննեսի և սուրբ Աթանագինեսի սուրբ մասունքները, մի վայրում կանգ առավ։ Իմանալով, որ սրբերը (Մկրտիչն ու Աթանագինեսը) ուղում են այդ

---

[18] Բ Տիմ. Դ 7։

[19] Ա Կորնթ. Ե 3։

[20] Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսը հիշվում է նաև այլ տեղերում։ Պետք է տարբերել այս Պետրոսին նույնպես Սեբաստիայում ապրած մյուս Պետրոսից Documenst, 229—230)։

վայրում բնակվել։ (Գրիգորը) մեծամեծներին հրաման տվեց կառուցել սուրբ Հովհաննեսի եկեղեցին։ Երբ սկսվեց մարդարանոցի կառուցումը, նրանք իշան կառքից և Աշտիշատ գյուղում հաստատվեցին։

156. Մի բարձր տեղում էր գտնվում Ափրոդիտեի տաճարը։ [Գրիգորն ու Պետրոսը] հրամայեցին մեծամեծներին իրենց թիկնապահներով և կացիններ կրող գյուղացիների բազմությամբ գնան ու կործանեն այն։ Բայց նրանք գնալով այնտեղ, չկարողացան ոչ մուտքերը գտնել, ոչ էլ պատերը քանդել։

157. Սուրբ Գրիգորը լսելով այդ, վերցրեց պատվական և կենարար խաչը և ըստ իր սովորության շտապեց տաճարի դիմաց գտնվող վայրը, որտեղ ծունր դնելով սկսեց աղոթել։ Քամիներ բարձրացան, քարերն ու տանիքի գերանները, սպասքը ու տաճարի սպասավորները օդ բարձրացան և մի հեռավոր ձորում թափվեցին։

158. Սրբազան Պետրոսը, որ սուրբ Գրիգորի հետ էր, տեսնելով այդ ապշեց։ Իսկ մեծամեծները ուրախությամբ վերադարձան և խնդրում էին մկրտվել։ (Գրիգորը) այնտեղ թաղեց սրբերի, այն է կարապետ ու մկրտիչ (Հովհաննեսի) և վկա Աթանագինեսի (մասունքները), նստավ առաքելական աթոռին և բոլոր մեծամեծներին՝ կանանցով և երեխաներով մկրտեց։

159. Տրդատ թագավորը, թագուհի Աշխենի և իր քույր խոսրովիդուխտի, ապա նաև վրաց, լազերի և աղվանից թագավորների, ցեղապետների և նախարարների հետ, դիմավորեց սուրբ Գրիգորին։ Նա ողջունեց նրան, ինչպես և սրբազան Պետրոսին, ընդունեց բոլոր մեծամեծներին. նա ընդունեց նաև սրբազնագույն հայրապետ Ղեոնդիոսի սրբազան նամակը ու ընթերցեց. նա հունական և հռոմեական շատ բարձր կրթություն էր ստացել, եղել էր փիլիսոփայական դպրոցներում, երբ ծառայում էր հռոմայեցվոց զորավար և հյուպատոս Լիկիանոսի մոտ։ Նա Ղեոնդիոսի նամակը հունարենից հայերեն թարգմանեց։ Բոլոր ունկնդիրները մեծ ցանկություն ունեցան արժանանալու սուրբ մկրտության և մասնակից դառնալ անարատ հաղորդության։

160. Սուրբ Գրիգորը և թագավորը բազում նվերներ տվեցին սրբազան Պետրոսին և ճանապարհեցին։

161. Իսկ սուրբ Գրիգորը նորից սկսեց հոգևոր վարդապետությունը և ուսուցանում էր ժողովրդին ճշմարիտ խոսքը։ Նա նրանց առաջարկեց երեսուն օր պաս պահել, պարապել հավատքի ուսմամբ և ահա այդ սահմանված օրերը լրանալուց հետո խոստացավ մկրտել։

162. Թագավորն ու մեծամեծները արեցին այն, ինչ որ նա ասաց և իրենց հարաբերություններում այլևս չէին վարվում համաձայն իրենց գրված դիրքի. հասարակ մարդիկ և թագավորները իրար էին հարաբերվում ինչպես հավասարը հավասարի հետ։

163. Իսկ սուրբ Գրիգորը փութաց Բագավանուշ եկեղեցի կառուցել. նա իրեն նվիրեց աղոթքների և (Աստծուն) պաղատելուն, մաղթելով, որ ժողովուրդը (ամուր) մնա նրա ավանդված հավատքի մեջ։ Նա ամենաբարեպաշտ երեցների և մենակյացների հետ եկեղեցիներ էր հիմնադրում, սուրբ Գրքին քաջածանոթ մարդկանց քահանա էր նշանակում, ոմանց ուղարկում էր Վրաց և Լազերի երկիրը, իսկ ուրիշներին՝ Աղվանք։

164. Երբ երեսուն օրը լրացավ. (Գրիգորը). երեցները և ամբողջ կղերը ողջ ժողովրդին բերեցին Արածանի գետը, թագավորական Բագավան գյուղին մոտ։ Նրանք շուրջ երեսուն յոթ բյուր մարդ էին. նրանց թվում նաև Տրդատ թագավորը, Լազերի, Վրաց և Աղվանից թագավորները և մեծամեծները, կուսակալներ նախարարներ և ցեղապետներ. նրանց ամբողջ դորքը, մեծաթիվ սպասավորությունը, կանայք, տղամարդիկ և երեխաներ։

165. Այնուհետև գետի մեջտեղում երկարացրին վարագույրներ և ծածկույթներ, որպեսզի թագուհիները և բոլոր կանայք ծածկույթների տակ իջնեն մկրտության ավազանը։ (Տրդատը) հրամայեց անցյալում մկրտված մեծամեծներին ու նրանց կանանց սրբի և նրա հետ եղող քահանաների մոտ բերվող մարդկանց սպասարկեն, տղամարդիկ՝ տղամարդկանց, իսկ կանայք՝ կանանց։

166. Երբ բոլորը գետի ափին հանեցին իրենց հանդերձները նախ և առաջ թաղավորը, ապա մնացած մեծամեծները, (Գրիգորը) մյուռոն քսեց նրանց և յուրաքանչյուրին խաչակնքեց։

167. Նա վերցրեց մյուռոն ու յուղ և գետը թափվեց. խաչի նշանն անելով։ Տեղի ունեցավ սքանչելի հրաշք. գետը ետ դարձավ ու խաղաղվեց, հոսանքը կանգ առավ։ (Գրիգորը) մարդկանց իջեցնում էր սրբացված ջուրը յուրաքանչյուրի վրա դնելով իր ձեռքերը և մկրտելով հանուն Հոր և Որդվո և Հոգվույն Սրբու։ Բոլոր մարդկանց նկատմամբ նույն բանն էին անում նաև մյուս քահանաները։ Ջրի մեջտեղում երեսաց խաչաձև սյուն հրեղեն։ Բոլորը տեսնելով ջրերի սանձահարումը և հրեղեն սյունը, ապշեցին և մեծ երկյուղի մեջ էին ու առավել ևս ամրապնդվեցին ուղղափառ հավատքի մեջ։

168. Ջրից դուրս գալով, ամեն մեկը պայծառ հանդերձներ հագավ. նրանք մեծ ուրախությամբ պատմում էին սկզբից կատարված հրաշքների մասին և այն մասին, ինչ ջրի վրա տեղի ունեցավ։ Այնուհետև բոլորը սրբի և քահանաների հետ Աստծուն փառաբանելով, մոմերով և ջահերով գնացին Բագավանում կառուցված եկեղեցին։ Այնտեղ նրանք պատարագ մատուցեցին և սուրբ հաղորդություն ստացան։ Ամեն մեկը խնդրում էր սուրբ հաղորդության (մասնակից լինել)։

169. Այնուհետև թագավորն ու սուրբը փութացին քրիստոնյաների հավատքին բերել նախկին կռապաշտ քրմերին։ Սրանք անցյալում Հունաստանից էին բեր-

[21] Հետաքրքրական է Հայաստանի քրմերի Հունաստանից բերված լինելու փաստը։ Այս մասին հայկական Ագաթանգեղոսը չունի, իսկ արաբական Վարքը նշում է, որ «ենքա եկեալ էին յաշխարհէն Ադիթ (ալ-Ադիա) ի սպասաւորել տաճարաց կռոց...»։ Նորահայտ հունական Վարքը հնարավորություն է տալիս արաբական ձևը ճիշտ ընթեռնելու՝ Ալադիա, որպես Ἀλάδια (Հունաց, Հունաստանի) բառի աղավաղումը։ Documents, p. 212)։

վել սպասարկելու տաճարներում[21], և դաստիարակված էին հեթանոսական հավատքի ոգով. պարտվելով սուրբ վարդապետությունից, նրանք բոլորից հետո ընդունեցին քրիստոնեական հավատքը։ (Գրիգորը) սուրբ գիրքը սովորեցրեց նաև քրմերի երեխաներին։

170. Սուրբ Գրիգորը եպիսկոպոսներ և երեցներ ձեռնադրեց և ուղարկեց Մեծ Հայքի բոլոր շրջանները։ Սեբաստացվոց երկիրը ուղարկեց Իրինարքոս անվամբ երեցին և վանահորը։ Այս Իրինարքոսը շատ համեստ մարդ էր և զովելի կյանք էր վարում։ Նա քաջատեղյակ էր սուրբ Գրոց։ Քառասուն (մարտիրոսաց) մասունքների գյուտի ժամանակ Սեբաստիայի եպիսկոպոսի պաշտոնն ունեցողի սարկավագն էր և (այժմ արդեն) ալեհեր էր։ Լագերի երկիրն (ուղարկվեց) Սոփրոնիոսը. սա ես երեց էր՝ կապադովկացի և սրբին հարազատներից։ Նրան (Գրիգորը) եպիսկոպոս ձեռնադրեց և ուղարկեց։ Իսկ Ազվանք ուղարկվեց մի սրբազան մարդ՝ Թովման, որը ծագումով Սատաղ փոքր քաղաքից էր։ Սուրբ Գրոց քաջածանոթ նման շատ մարդիկ էին հարել [Գրիգորին]։

171. Այդ նույն ձևով նաև Անդեղտուն, Աղձնիք, Մեծ Ծոփք, Փոքր Ծոփք, Հաշտյանք, Սյունիք, Արծն, Մոկաց երկիր և Մարդպետական, բոլոր իշխանություններում և նահանգներում եպիսկոպոսներ նշանակեց և ուղարկեց այնտեղ իրենց իշխանների հետ։ Բոլոր թագավորներն ու կուսակալները մեծ ուրախությամբ իրենց վիճակված քահանաներով շտապում էին դեպի իրենց երկիրը՝ եկեղեցիներ հիմնադրելու և վկայարաններ կառուցելու համար։

172. (Գրիգորը) շտապում էր Մեծ Հայքի այլ շրջաններում ևս եպիսկոպոսներ նշանակել, Ադրիանոսին՝ Բագրևանդում և Արածանի գետի մոտ ապրող բնակիչների համար. սա նախկինում քուրմ էր, բայց անցնելով ճշմարիտ հավատքի և աստվածածանոթության կողմը, իր մեծ առաքինությամբ և համեստությամբ արժանացավ առաքելական աթոռին։ (Գրիգորը) որպես եպիսկոպոս Բասեն ուղարկեց Եվթաղիոսին, Բասիոսին՝ Կոտայք, Մովսեսին՝ Եկեղյաց գավառ և Դերջան, Եվսեբիոսին՝ Դարանաղյաց գավառը, Հովհաննեսին՝ Կարնո գավառ, Ադապիոսին՝ Սպեր, նահանգի իշխան սպարապետի-[2] հետ միասին, Ադրիոսին՝ սպարապետական տուն, որը պատկանում էր Մամիկոնյանների տոհմին։ Սրանք իրենց նախարարի՝ մեծ զորավարի և սպարապետի հետ միասին միշտ թագավորի հետ էին, դրա համար էլ սուրբ Գրիգորը հրամայեց, որ Ադրիոսը միշտ թագավորի մոտ լինի և իր, [Գրիգորի] տեղը դրավի մշտական քարոզչության և վարդապետության, դրավի մշտական քարոզչության և վարդապետության, կրթություն էր ստացել և քաջածանոթ էր Աստվածաշունչ գրքերին։ Նա Տարոնի և Տայքի եպիսկոպոսն էր։ Արտիթանին (Գրիգորը) եպիսկոպոս ձեռնադրեց և Խորխոռունյաց նախարարի հետ Մադխազաց (գավառն) ուղարկեց, Արսուկանին՝ Շիրակ, Անտիոքոսին՝ Կորդվաց աշխարհը, Տիրիկիոսին՝ Վանանդացվոց, Աբեղյանց և Գարեղյանց (Երկիրը)։ Մի ուրիշին Կիրակոսին՝ Արշամունյաց գավառ։ Ահա այսպես ճշմարտության խոսքը քարոզելու ընդունակ բազմաթիվ մարդկանց եպիսկոպոս և քորեպիսկոպոս ձեռնադրելով ուղարկեց դանազան վայրեր և շրջաններ։

173. Իսկ սուրբը ինքը մշտական եպիսկոպոսարաններ կառուցեց Այրարատում՝ Վաղարշապատում, Արտաշատում և Թիլենում և հիշյալ քաղաքները իր աթոռին ենթարկեց։ Մեծ Հայքի թագավոր Տրդատը իր ժամանակի մեծ մասը հենց այդ քաղաքներում էր անցկացնում։ Սուրբ Գրիգորը ամեն ինչ կատարելուց և բոլորին քրիստոնեական հավատքի մեջ ամրապնդելուց հետո, սրբազան Ադրիոսին թողեց իրեն պատկանող վայրում տեղապահելու, իսկ ինքը ամբողջ երկրով մեկ եպիսկոպոսներ էր հաստատում, շարունակ հսկում և ամրապնդում նրանց, որից հետո նա բնակվեց Դարանաղյաց գավառի Մանյա այրք կոչված քարայրում, իրեն նվիրելով աղոթքների, պաղատանքի և պասի։

174. Մեծ Հռոմում Կոստանդին կայսրը, լսելով Տրդատ թագավորի հետ կատարվածի, վկա Գրիգորի գործած հրաշքների մասին, փութաց դեսպաններ ուղարկել երկու բան ձեռք բերելու նկատառումով, այն է՝ իր մոտ ընդունելու վկային և քահանայապետին, ապա նաև հայոց թագավորին զրկելու դաշինք կնքել և բարեկամություն հաստատել։

175. Նա գրեց հետևյալ նամակը. «Բարեպաշտ ինքնակալ կեսար Կոստանդին առ Տրդատ թագավոր Հայոց մեծաց՝ ի Տեր խնդալ։ Մեր սիրելիներին և եղբայրներին պատահած բարիքների առթիվ մենք զղացված ենք և շատ ուրախացած։ Մենք լսել ենք քո մասին, ով աղնվազույնդ, որ դու, երբ դեռ մոլորության մեջ էիր, սպանեցիր մեր Հռոմ բաղաքից, Դիոկլետիանոսի ձեռքից փախած կույսերին, որ ոմն սուրբ Գրիգորի չարչարեցիր, որ կերպարանափոխվեցիր և այնուհետև պիղծ դավանանքից փրկվեցիր քո կողմից մահապատժի դատապարտվածի կողմից, որ բուժվելով նրա կողմից հշմարիտ աստվածածանոթությունը սովորեցիր, իսկ նույն վկա Գրիգորին միանդամայն իրավացի կեսարիա ուղարկեցիր՝ սրբազան Ղեոնդիոսի մոտ քահանայության պատիվն ստանալու համար, որի մասին վերջինս նամակով մեկ առ մեկ ձեզ հայտնեց։

176. «Անցյալում մենք էլ մոլորյալ էինք, մենք էլ հիվանդացանք ու երկյուղի մեջ ընկանք, ցանկացանք [փրկվել] և սուրբ ավազանի միջոցով արժանացանք բուժման։ Մեզ վերածնության սուրբ ավազանն առաջնորդեց սրբազնագույն եպիսկոպոս Սիդրեստրոսը։ Պատվական խաչը դանելու համար մենք երուսաղեմ սուրբ քաղաքն ուղարկեցինք մեր ամենաբարեպաշտ և քրիստոսասեր մորը։

177. «Մենք ուզում ենք ձեզ, ձեզ հետ միասին նաև սուրբ Գրիգորին տեսնել և ողջագուրել։ Թող նույն բանը ցանկանաս և դու՝ եղբայր իմ, որպեսզի մեր փափագն իրականանա։ Քանի հազար մեծամեծներով և իշխաններով, թիկնապահներով և քո բարությանն անհրաժեշտ սպասավորությամբ, որ ցանկանաս, շտապիր մեզ մոտ։ Մենք մեր նահանգներն ուղարկեցինք ձեր

---

[22] Բնագրում ՀՀՊՀՊՀՈՒՐ։ Ըստ Գարիստի պետք է լինի ՀՀԷՐ; ասպետի Documents՝ p. 164, 227—228, 429)։

ծախսերը հոգացողներին։ Ո՛ղջ լեր, ամենասիրելի եղբայր։

178. Այս կայսերական նամակն ստանալով և մեծ պատվով ու լափորով ընդունելով ուղարկված դեսպաններին, (Տրդատն) հրամայեց իր հետ Հռոմ դնացողներին պատրաստվել։ Հայոց երկրում թողնելով սպարապետին, Տրդատ թագավորը ուրախությամբ և մեծ հաճույքով շտապեց Դարանաղի, սուրբ Գրիգորի մոտ։ Մտնելով քարայրը նա ցույց տվեց նրան ստացված նամակը։ Նրան հրավիրում էին և՛ Հռոմի դեսպանները, և՛ Տրդատ թագավորը։ (Գրիգորը) համոզվելով նրանց խոսքերին, թագավորի հետ ճամփա ընկավ։

179. Նրանք պարդեցին թագավորական դրոշակները ինչպես և (թագավորին) հետևող կուսակալների և մեծամեծների (դրոշակները), հնչեցրին փողերը և դորաշարք կազմեցին՝ թագավորի ճանապարհորդելու առթիվ։ Գնացողների ընդհանուր թիվը շուրջ տասը հազար հոգի էր։ Նա չուզեց ավելի շատ մարդ իր հետ վերցնել, քանզի գնում էր մեծ կայսր մոտ՝ նրա հրավերով, բայց ոչ էլ պակաս՝ իր թագավոր լինելու հանգամանքի պատճառով։

180. Ցուրաքանչյուր քաղաքում և գյուղում նրան դիմավորում և ուղեկցում էին։ Նրանք շատ ուրախացան, երբ հասան Կեսարիա քաղաքը, երկրպագեցին սուրբ հայրապետ Ղևոնդիոսին, հայտնեցին իրենց ճանապարհորդության նպատակը։ Նրանց երեք օր չթողեցին գնալ և երեք օր անց դուրս եկան, փութալով Հռոմի կեսար Կոստանդինի մոտ։

181. Հասնելով Իտալիա, նրանց դիմավորեցին Հռոմի պատրիկները և հյուպատոսները և քաղում սպասավորությամբ քաղաք մտցրին։ Կոստանդին կայսրն էլ ընդունեց (պատվիրակությունը), ողջագուրեց սուրբ Գրիգորին և Տրդատ թագավորին և երկուսին էլ հրավիրեց նստել կայսերական կառքի վրա։

182. Նրանք նախ և առաջ Հռոմի պատրիարք Եվսեբիոսի դլխավորությամբ աղոթեցին Պետրոս առաքյալի սուրբ եկեղեցում, որից հետո գնացին արքունիք։ Այդ օրը նրանք տոնախմբության մասնակցեցին, իսկ հաջորդ օրը Գրիգորն ու Տրդատը կեսարին նվերներ մատուցեցին, այն է՝ թագավորական բազմաթիվ երիվարներ, մարդարիտներ, սպասներ, թանկագին քարեր, և մետաքսաթել բազմաթիվ հանդերձներ։ Նրանք նվերներ մատուցեցին ոչ միայն կայսեր, այլև բոլոր պատրիկներին և մեծ իշխաններին, յուրաքանչյուրին պատվելով իրենց սեփական ամենաթանկագին (առարկաներով)։

183. Կեսարը այնուհետև ցանկացավ իմանալ դեպքերի մասին։ Պատմում էր Տրդատ թագավորը հռոմեական և հունարեն լեզվով, սկիզբ առնելով նրանց դորավար Լիկիանոսի մոտ իր ստացած կրթությունից, ապա թե ինչպես ժառանգելով հոր թագավորությունը Հռոմից եկավ հայրենիք, թե ինչպես դաշնակցելով հռոմայեցիների հետ հալածական արեց պարսից արքային և տիրեց Մեծ Հայքին, ինչպես սին աստվածներին զոհ էր մատուցում, ինչպես Գրիգորը չէր ուզում հալորդակից լինել իրենց պիղծ դավանանքին, որ բազում պատիժներ կրելով, հաստատուն մնաց քրիստոնեական հավատքի մեջ, որ այդպիսով նա ստացավ ամենադաժան մահավճիռ՝ վիրապը նետվել, որտեղ այլ չարագործներ նետվելով, վիրապում դտնվող թունավոր օձերի սարսափից մի ժամ անդամ չապրեցին։ «Սրան, որ դուք տեսնում եք, տասնհինդ տարի պահպանեց Քրիստոս, որպեսզի մենք փրկվենք։

184. «Այնուհետև Հռիփսիմեն և Գայանեն ուրիշ կույսերի հետ փախան Հայոց երկիրը։ Մենք այդ մասին չդիտեինք, այդ մեզ հայտնեց կեսար Դիոկլետիանոսը։ Մենք նրանց ձերբակալեցինք, բայց որովհետև չենթարկվեցին մեզ, սպանեցինք նրանց։

185. «Բայց այնուհետև մենք պատժվեցինք դևերի ձեռքով. ես կորցրի իմ մարդկային կերպարանքը և վայրի տեղերում ու եղեղնուտներում էի բնակվում, փախչելով իմ թագավորական ապարանքից։ Ուրիշները պատառոտում էին իրենց հանդերձները և ատամներով իրենց մարմինն էին կծոտում։

186. «Բայց ճշմարիտ Աստվածը, որի մասին իմացանք, որ վերջ ի վերջո չի դայրանում, այլ ուզում է, որ իր ձեռքերի ստեղծագործությունը փրկվի, երևաց իմ հարազատ քրոջս երազում լուսե հրեշտակի միջոցով և ասաց նրան, թե մինչև որ Գրիգորին վիրապից չհանեք և՛ թագավորը, և՛ մյուսները չեն փրկվի։ Բոլորն անհավանական դտան, որ (Գրիգորը) կարող է դեռ ողջ լինել, դրա համար երկրորդ անդամ տեսիլքը երևաց և մենք հավատացինք և նրան (վիրապից) հանելով, մեզ մոտ բերեցինք։

187. «Նա աղոթքով, պասով և (Աստծուն) պաղատելով բուժեց մեզ հանուն սուրբ Երրորդության և կապաշտության մոլորությունից մեզ ճշմարիտ աստվածածանոթության բերեց։ Նա կործանեց մեր տաճարները։ Սուրբը բազում հրաշքներ գործեց։ Երբ կործանվում էին կուռքերը, դևերը մարտի դուրս եկան, իսկ սուրբը խաչի նշանով պարտության էր մատնում նրանց թույլ ուժը։

188. «Նա մեզ բոլորիս առաջնորդեց և մենք փափագ ունեցանք, որ նա մեր հովիվը դառնա։ Նա հրաժարվեց, երբ ինձ անարժանիս երևաց հրեշտակը լուսե, ասելով ետ չկանգնել իմ մտադրությունից։ Հրեշտակը նրան էլ երևաց և ասաց չմերժել մեր խնդրանքը։ Ահա, արժանանալով այդ բանին ձեր հրամանի համաձայն մենք ժամանեցինք այստեղ։ Մեծ կայսր Կոստանդինը լսելով այդ և շատ այլ բաներ ապշեց, ինչպես և մեծ Հռոմի ամբողջ ժողովուրդը։

189. Մեծ Կոստանդինը ևս իր հերթին պատմեց իր նախկին վիճակի մասին, ապա տեսիլքի, պատկական խաչի հաղթանակի մասին և սիրալիր կերպով բազում օրեր հյուրընկալեց սուրբ Գրիգորին և Մեծ Հայքի թագավորին։ Նա բազում նվերներ տվեց նրանց, թագավորին՝ ոսկե սպասներ, հանդերձներ, ոսկեթել կտորից պատրաստած թագավորական պատմուճան, իսկ սուրբ Գրիգորին՝ եկեղեցիների և վկայարանների ոսկե և արծաթե սպասք, նմանապես և մեծամեծներին՝ արծաթե սպասներ և մետաքսե կերպասներ։

190. Նա առավել ևս ամրապնդեց նախկինում կնքված պայմանագիրը և ճանապարհեց, շատ մեծ դժվարու-

թյամբ բաժանվելով երկուսից։ Ամեն ինչ կատարվեց այն կարգով ինչպես եղել էր դայսության ժամանակ։ Անցնելով մեծ ծովը նրանք պոնտանցվոց երկրի վրայով հասան Մեծ Հայք։ Բոլոր եկեղեցիներում տոնակատարություններ կատարվեցին և յուրաքանչյուր դիպտիրոնի[23] մեջ տային էին մեծ կայսր Կոստանդինի, նրա քրիստոսասեր մոր Հեղինեի անունը, որպեսզի անարատ հաղորդության սուրբ խորհրդում նրանց հիշատակը հավերժ լինի։ Յուրաքանչյուր քաղաքում և գյուղում տոնակատարություններ կատարելուց հետո, նրանք եկեղեցիներին բաժանեցին Հռոմից բերած սպասքը։

191. Տրդատ թագավորը անընդհատ պարապում էր ասավածաշունչ գրքերով, աշակերտելով սուրբ Գրիգորին։ Նա միշտ բարեպաշտ կյանք էր վարում։ Յուրաքանչյուր մեծ գյուղում առանձնացնում էր հինգ այսպես կոչված հոգ երդ[24], փոքր (գյուղերում) երեք, որպեսզի նշանակված քահանաները (միջոցներ) ունենան եկեղեցիների վերականգնման և իրենց ապրուստի համար։

192. Մեծ Հայքի արքեպիսկոպոս սուրբ Գրիգորը տեսնելով, որ բոլորը համանուն դարձան՝ ամրապնդվելով քրիստոնյաների հավատքի մեջ, նորից հեռացավ Մանյա այրքը և շարունակեց աղոթել ու աղերսել։

193. Որոշ ժամանակ թագավորը իր մոտ ունենալով սրբազան Ագրիոսին ոչ մի բանի չէր դիմում։ Ապա նա նորից փնտրեց վկա և հայրապետ Գրիգորին, փափագեց իմանալ և իմացավ նրա տեղը և հասնելով այնտեղ խնդրեց նրան իր հետ լինել։ Նա մերժեց այդ, ասելով. «Ո՞վ թագավոր, երբ ես դեռ երկյուղի մեջ էի, քե հանկարծ դուք կհեսանաք ձեզ ավանդված հավատից, լավ է որ ես ձեզ հետ էի, բայց այժմ շնորհով Քրիստոսի դուք կատարյալ քրիստոնյաներ եք, բարեպաշտ, սովորել եք քրիստոնյաների բարի ուսմունքը, դու էլ շատ առաքինի կյանք ես վարում, դրա համար հիշեն այն է, որ ես այժմ ինձնով դրաղվեմ, քանդի ձեր եմ և հիվանդ»։

194. Թագավորը շատ աղաչեց, բայց երբ իրեն չհաջողվեց համոզել նրան, խնդրեց որ իր մոտ դան նրա որդիները՝ Արիստակեսն ու Վրթանեսը։ (Գրիգորը) թույլ տվեց այդ անել. նա նամակ գրեց ու հրամայեց (որդիներին) գալ, որից հետո թողեց թագավորին գնալ՝ բազմիցս աղոթելով նրա և ամբողջ ժողովրդի համար։

195. Թագավորը մեծ շտապողականությամբ իր մեծամեծներից երեք հոգու ուղարկեց Կեսարիա քաղաքը՝ սրբազաններ Արիստակեսի և Վրթանեսի հետևից, նամակ գրելով նաև կապադովկացվոց հայրապետ սուրբ Ղևոնդիոսին։

196. Մեծամեծները, գալով Կեսարիա քաղաքը և ներկայացնելով թագավորի նամակը, իրենց հետ մի քանի մարդ վերցրին սրբազան այրերին փնտրելու համար։ Նրանք գտան կրտսերին՝ Վրթանեսին և հարցրեցին Արիստակեսի մասին։ Նա ասաց, որ անապատում ճգնում է։ Նրանք հասան այդ վայրը, բայց (Արիստակեսը) չէր ուզում այնտեղից հեռանալ։

197. Կեսարիայի բազմաթիվ քաղաքացիք և հայրապետի կողմից ուղարկված մարդիկ խոհեմ խոսքերով համոզեցին և իրենց հետ վերցրին սրբազան Արիստակեսին։ Վերցնելով (Ղևոնդիոսի) պատասխան նամակը, մեծամեծները սրբազան այրեր Արիստակեսի և Վրթանեսի հետ ճամփա ընկան։

198. Նրանց Դարանաղյաց գավառը հասնելը թագավորն իմացավ և մեծ ուրախությամբ ընդունեց, նամանավանդ, երբ լսեց նրանց կենցաղավարության մասին, և փութաց դեպի [Արիստակեսի և Վրթանեսի] սուրբ հայրը և իր ուսուցիչն ու հայրապետը (Թագավորը Գրիգորին) խնդրեց, որ Արիստակեսը ըստ ժառանգության կարգի գրավի իր տեղը առաքելական աթոռի վրա։ Արիստակեսը իր առաքինությամբ և վարդապետությամբ զերազանցեց հորը։ Նա անդադար քարոզում էր ժողովրդին (. . . .)։

199. Իմ այս ամբողջ շարադրանքը ճշմարիտ է, քանզի ես դեպքերի մի մասի մասնակիցն եմ և ականատեսը[25]։ Մյուսների մասին լսել եմ վստահելի մարդկանցից։ (Շարադրեցի), որպեսզի մեղանից հետո եկողները տեղի ունեցած բարի և առաքինի գործերով սովորեն բարեպաշտություն, որպեսզի մենք կենդանի Աստծուն հաճելի լինենք։ Քանզի նրան է փառքն ու իշխանությունը՝ հավիտյանս հավիտենից. ամեն։

---

[23] Բնագրում ՇԱՐԱՆ ԳՐՈՒՅՑ Հայկական պատարագում սարկավագը հիշում է «Թագաւորաց հաստատելոց սրբոց Արդարու Կոստանդիանոսի Տրդատայ և Թեոդոսի և ամենայն սուրբ և բարեպաշտ թագաւորաց և աստուածասէր իշխանաց եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք»։ Սա հայկական պատարագի «յիշատակաց»-ն է (Տես՝ Գաթրճեան, Սրբազան պատարագամատոյցք Հայոց, Վիեննա, 1897, էջ 102), որն արտասանվում էր որպես «Յիշատակք կենդանեաց և մեռելոց» Documents, p. 139)։

[24] Բնագրում ՇԱՐԱՇՅԱՆ «տանուտերություն»։ Արաբական Վարքի մեջ այս բառը աղավաղված է։

[25] Նման վերջաբան ունի նաև հայկական Ագաթանգեղոսը, որի խմբագիրը իրեն համարում է բոլոր դեպքերի ականատես. «այլ որոց մեզ են իսկ ականատեսք եղեալ...», այնինչ Վարքի խմբագիրը ինքն իրեն համարում է մի մասի մասնակից և ականատես Documents, p. 332)։ Նույնը կրկնում է նաև արաբական Վարքը. «Գրեցի և դայս ստուգիւ է զի ես ինքն վկայ և ականատես եղէ և է զի լուայ ի հաւատարիմ արանց» (Մկրտուիչեան, էջ 82)։



Ա. ՔՈԼԱՆՋՅԱՆ

ՄԵՐ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ*

Կեսարիան իր շրջակայքով հարուստ էր վանքերով ու եկեղեցիներով և գրչագրերով։ Կեսարիայի Ս. Դանիելի վանքը հնուց ունեցել է թանկագին սպասներ, արժեքավոր անոթներ և մագաղաթյա ձեռագրեր, սակայն դարերի ընթացքում տեղի ունեցած իրարհաջորդ արհավիրքներին նրանք ոչնչացել են[154]։ Բացի դրանից, Կեսարիայից ևս որոշ թվով ձեռագրեր դեռ 19-րդ դարի վերջերից սկսած տեղափոխվել են արտասահմանյան ղանաղան մատենադարաններ։ Օրինակ՝ Վիեննայի Մխիթարյան մատենադարան 1895 և 1896 թվականներին Կեսարիայից մուտք են գործել 6 ձեռագրեր, մեծ մասամբ բանասեր Հ. Գր. Գալեմքյարյանի ջանքերի շնորհիվ[155]։

Կեսարիայի և շրջակա վայրերի ձեռագրերի ուսումնասիրությամբ զբաղվել է ժրաջան ձեռագրագետ Տրդատ եպիսկոպոս Պալյանը, որը Կեսարիայի իր առաջնորդության շրջանում (1887—1911 թթ.) խնամքով ցուցակագրել էր մեծ թվով ձեռագրեր։ Սակայն ցավով պետք է նշել, որ նրա հիշյալ նկարագրությունների միայն փոքր մասը հաջողվեց հանձնել տպագրության։ Եվ այսպես, Տրդատ եպիսկոպոս Պալյանը իր կենդանության օրոք հնարավորություն ունեցավ հրատարակելու Կեսարիայի և նրա շրջակայքին վերաբերող իր կողմից կազմված հետևյալ ձեռագրացուցակները. Կեսարիայի Ս. Սարդիս վանքի ձեռագրացուցակը (12 ձեռագրերի նկարագրությամբ)[156], Կեսարիայի Ս. Աստվածածին և Գըրշեհիրի Ս. Գևորգ եկեղեցիների ձեռագրացուցակը (27 ձեռագրերի նկարագրությամբ)[157], Թալասի (3 ձեռագիր)[158], ինչպես նաև Կեսարիայի վիճակի՝ Էվերեկի, Թալասի, Թավլուսունի, Պալակասիի, Նիրղեի, Տարսիախի և Մունճուսունի ձեռագրացուցակը (37 ձեռագրերի նկարագրությամբ)[159]։ Միայն վերջերս է, որ Վիեննայի «Հանդես ամսօրեայ»-ում և ապա առանձին, լույս տեսավ նույն հեղինակի կազմած Կեսարիայի Ս. Կարապետ վանքի և մասամբ Ս. Դանիել վանքի ձեռագրացուցակը (48 (44+4) ձեռագրերի նկարագրու-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի Բ—Գ—Դ-ից, Ե—Զ—Է-ից և 1966 թ. Ը-ից։

154 Կր. ա. քհն. Դավթյան (Հովիվ Եղեմի հայոց), Գիրք Նլից Հայոց, Բեյրութ, 1955, էջ 110։

155 Տե՛ս Հ. Հ. Տաշյան, Ցուցակ.... № 465, Հ. Հ. Ոսկյան, Ցուցակ... № 696, 700, 704, 790, 901։

156 Ցուցակ հայերեն ձեռագրաց ի Թուրքիա։ Հատոր Ա. Կեսարիո վիճակ։ Տետր Ա. Ցուցակ հայերեն ձեռագրաց Սուրբ Սարդսի վանուց ի Կեսարիա, կազմեց Տրդատ վրդ. Պալյան, առաջնորդ հայոց Կեսարիո, Կ Պոլիս, 1892։

157 Ցուցակ հայերեն ձեռագրաց ի Թուրքիա։ Հատոր Ա. Կեսարիո վիճակ։ Տետր Բ. Ցուցակ հայերեն ձեռագրաց Սուրբ Աստվածածնա եկեղեցվույն Կեսարիո և Սուրբ Գեորգ եկեղեցվույն Գըրշեհիրի։ Կազմեց Տրդատ վրդ. Պալյան, առաջնորդ հայոց Կեսարիու։ Կ. Պոլիս 1893։

158 Տրդատ վրդ. (Պալյան), Ցուցակ հայերեն ձեռագրաց ի Թալաս (Թեմ Կեսարիո), «Արևելյան մամուլ», Զմյուռնիա, 1897, էջ 615—619, 745—747։

159 Տրդատ եպս. Պալյան, Ձեռագիրք Կեսարիո վիճակին վանօրէից։ սուրբ եկեղեցաց և անհատից սեփական։ «Լոյս», Կ. Պոլիս, 1905, էջ 286—288, 516—519, 661—664, 776—778, 827—828, 967—971, 1138—1140, 1249—1251, 1906, էջ 143—144, 333—336, 479—480, 645—648, 910—911, 934—936, 1030—1032, 1101—1103, 1127—1128, 1200։

թյամբ)[160]։ Այսպիսով մինչև այժմ լույս են տեսել Պալյան եպիսկոպոսի գրչին պատկանող և Կեսարիային ու նրա շրջանին վերաբերող միայն 127 ձեռագրերի նկարագրություն։

Կեսարիայի մեր ձեռագրական ժառանգության քանակի վերաբերյալ ևս դժբախտաբար ճշգրիտ տեղեկություններ չենն պահպանվել։ Սակայն եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ Տ. Եպ. Պալյանը 1892 թվականին նախաձեռնելով կազմել Թուրքիայի հայերեն ձեռագրերի ցուցակը, նրա առաջին հատորը տրամադրել էր Կեսարիայի վիճակի ձեռագրերին և այն կարծիքն էր հայտնել, որ այդ հատորը բաղկանալու է 15 տետրերից, այսինքն. «Կեսարիո վիճակին ամբողջ ձեռագիրք Ա. հատորն պիտի կազմեն 15 տետրներե բաղկացյալ»[161], ապա մեզ մոտավոր չափով պարզ կլինի, թե հեղինակը ինչպիսի ուշագրավելի թվով ձեռագրեր էր նպատակ ունեցել նկարագրել Կեսարիայից։ Հիշյալ տետրերից Պալյանին վիճակվեց հրատարակել միայն երկուսը, ուր նկարագրված է մի վանքում և երկու եկեղեցիներում պահված 39 ձեռագիր, այն ինչ նախատեսված հաջորդ 13 տետրերի հետ Կեսարիայում և նրա շրջակայքում նկարագրելի ձեռագրերի ընդհանուր թիվը ամենայն հավանականությամբ պետք է կազմեր առնվազն շուրջ 700 ձեռագիր։ Մեր ասածը ապացուցող կարևոր կովաններ են հանդիսանում հետևյալ փաստերը։ Պալյանը երբ 1888 թվականին բացեց Կեսարիայի Ս. Կարապետ վանքի վարժարանը, նրան կից հաստատեց նաև մատենադարան,թանգարան, ուր հավաքեց 160 ձեռագիր մատյան և բազմաթիվ հնություններ, մասամբ վանքից առնելով և մասամբ յուր սեփական աշխատությամբ ձեռք բերելով[162]։ Պալյանը, ինչպես տեսանք, իր հատորի յուրաքանչյուր տետրը հատկացնում էր որևէ մի վանքի և կամ եկեղեցու ձեռագրական ժառանգության նկարագրությանը, ուստի իր նախատեսած տետրերից մեկն էլ պիտի նվիրեր Ս. Կարապետի մեծ թվով ձեռագրերին։ Այսպիսով պետք է հետևցնել, որ Կեսարիայում և նրա շրջանում գտնված ձեռագրերի թիվը կարող էր նույնիսկ ավել լինել, քան մեր վերևում ենթադրած 700-ը։ Այդ անվիճելի կերպով ապացուցվում է նաև Տ. Եպ. Պալյանի կողմից գրված հետագա տողերով. նա գրում է, որ բացի Ս. Կարապետի 160 ձեռագրերի նկարագրությունը բովանդակող իր կազմած ցուցակից, ինքը կազմել է նաև մյուս վանքերի և վիճակի բոլոր եկեղեցիների և անհատների մոտ գտնված ձեռագրերինը, որոնք իր ասելով. «500 հատե ավելի են...»[163]։

Այսպիսով, 1921 թվականին, երբ Պալյանը վերոհիշյալ տողերն էր գրում, իր մոտ դեռևս անտիպ վիճակում կային Կեսարիային վերաբերող 660-ից ավելի ձեռագրերի նկարագրություններ, և որին եթե գումարելու լիներ մինչ այդ նրա կողմից հրատարակված և դարձյալ Կեսարիային և նրա շրջակայքին վերաբերող 79 ձեռագրերի նկարագրությունները, ապա պարզ կդառնա մեզ համար, որ հեղինակը մինչև եղեռնը հիշյալ վայրերում տեսել և նկարագրել էր ավելի քան 700 ձեռագրեր։

Ահա մեծ թիվ կազմող Կեսարիայի այդ ձեռագրական հարստությանը 1915 թվականին վիճակված ճակատագրի մասին է, որ մենք ոչինչ չգիտենք։ Պալյանը, Կեսարիայի առաջնորդական պաշտոնից հետո, 1911—1922 թթ. անց էր կացրել Զմյուռնիայի մոտ գտնվող Մանիսա քաղաքում՝ մի տեսակ մենության մեջ, սակայն անխոնջ կերպով միշտ աշխատել էր ծառայել հայ բանասիրությանը։ Ահա այդտեղ է, որ նա սրտի մեծ կսկիծով սև լուրեր էր ստացել Կեսարիայից, և իր բարեկամներից մեկին գրած նամակում նա հայտնում էր դառնությամբ հետևյալը. «Կեսարիո չորս վանքերն ալ ավերակի վերածված են, այժմ չեմ գիտեր, որ այդ ամեն վանորեից ու եկեղեցյաց ձեռադիրներն ի՞նչ եղած են, փճացա՞ծ են, թե այլուր փոխադրված են»[164]։

Գարեգին Ա. կաթողիկոս Հովսեփյանցը Կեսարիայի ձեռագրերը ևս համարում է ոչնչացած Անկյուրիայի և Արմաշի մեր ձեռագրական ժառանգությունների նման, և այդ բոլորի մասին նշում է իբրև հաղարավոր հատորներից կազմված մեծ ժողովածուներ[165]։

Կեսարիայի պատմության բազմահմուտ և բազմավաստակ հեղինակ Արշակ Ալպոյաճյանը ևս գրում է, որ վերջին աղետի ժամա-

---

[160] Տրդատ Եպս. Պալյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վանուց Ս. Կարապետի և Ս. Դանիելի ի Կեսարիա, Վիեննա, 1963։ Տե՛ս նաև «Հանդէս ամսօրեայ», 1959, էջ 253—274, 421—443, 540—551, 1960, էջ 81—99, 241—267, 416—435, 537—550։

[161] Ցուցակ հայերեն ձեռագրաց ի Թուրքիա, հտ. Ա. Տետր Ա....էջ 7։

[162] Հ. Ն. Ակինյան, Տրդատ եպիսկոպոս Պալյան..., «Հանդէս ամսօրեայ», 1923, էջ 550։

[163] Նույն տեղում, էջ 555։

[164] Նույն տեղում։

[165] Գարեգին Ա. կաթողիկոս. Դեպի լույս և կյանք... էջ 319։

նակ ղոչ են գնացել նաև Կեսարիայի ձեռագիրների մեծ մասը[166]։ Սակայն Կեսարիան միայն իր ձեռագրական ժառանգությունը չկորցրեց...։

Եթե Անկյուրիայի և Արմաշի ձեռագրերի մեծ մասի կորուստը ամենադույզն չափով մեղմվում է նրանց գիտական նկարագրությունները պարունակող ձեռագրացուցակների փրկությամբ և վերջերս էլ նրանց հրատարակությամբ, ապա ցավով պետք է նշել, որ Կեսարիային բոլորովին այլ բախտ վիճակվեց։ Ինչպես նշվեց, Կեսարիայի ավելի քան 700 ձեռագրերից միայն 127 գրչագրերի նկարագրությունն է, որ հրատարակված լինելու շնորհիվ, մատչելի դարձավ բանասիրությանը, իսկ ձեռագրերի ճնշող մասի նկարագրությունները, որոնք դարձյալ կազմվել էին Տրդատ եպս. Պալյանի կողմից, 1922 թվականին Զմյուռնիայի աղետի ժամանակ բախտակից եղան իրենց մայր ձեռագրերին և անցան անէության գիրկը...։

Դիպվածի բերմամբ է, որ փրկվեց Պալյանի անտիպ գործերից միայն Կեսարիայի Ս. Կարապետի վանքի ձեռագրացուցակի փոքր մասը, քանի որ հեղինակը հիշյալ ձեռագրացուցակի միայն 44 ձեռագրերի նկարագրությունն էր կարողացել ուղարկել 1922 թվականին Զմյուռնիայից Հ. Ն. Ակինյանին, «Հանդես ամսօրեայ»-ում տպագրելու համար, և առաջիկայի համար խոստացել էր ուղարկել ոչ միայն սույն ցուցակի հաջորդ մասերը, այլև Կեսարիայի և շրջակայքից իր նկարագրած ավելի քան 500 գրչագրերի ձեռագրացուցակները[167]։ Սակայն տարաբախտաբար շատ շուտով նույն Զմյուռնիայում ձեռագրերի անխոնջ խուզարկուի հարուստ վաստակը իր բոլոր անտիպ ձեռագրացուցակների հետ քեմալական ղորքերի կողմից կորսայան մատնվեցին։

Վերջերս «Հանդես ամսօրեայ»-ում և ապա առանձին գրքով Տրդատ եպս. Պալյանի կազմած Կեսարիայի Ս. Կարապետ վանքի հիշյալ ցուցակի փրկված մասի հրատարակումը, ոչ միայն հարգանքի մի տուրք է մատուցված այն կազմող ժրաջան հոգևորականի հիշատակին, այլև կարևոր մի նվաստ Կեսարիայում մեր կորցրած ձեռագիր մեծ թվով գանձերի գեթ մի մասի արժեքը ճանաչելու առումով։

Ի դեպ, պետք է նշել, որ հիշյալ ձեռագրացուցակում Ս. Կարապետի վանքից նկարագրված է 44 գրչագիր, իսկ Ս. Դանիելի վանքից՝ 4 ձեռագիր, սակայն իրականում նրանցից առաջին ժողովածուի թիվը եղել է 160 և կամ նույն Պալյանի մի այլ հոդվածի համաձայն, գրված դեռևս 1894 թ. նույն Ս. Կարապետ վանքում նա դեռ այն ժամանակ հավաքել էր մոտ 180 կտոր հայերեն ձեռագիր[168], իսկ Ս. Դանիել վանքի ժողովածուն, որի ձեռագրերը ևս 1895 թվականին ցուցակագրված էին նույն Պալյանի կողմից, դարձյալ այն ժամանակ ուներ 85 գրչագիր[169]։ Պետք է դիտել, որ հիշյալ ժողովածուները մինչև 1915 թվականը կարող էին և առնել։ Այսպիսով, հիշյալ ձեռագրացուցակի լույս ընծայումը միայն մի փոքր նմուշ է հանդիսանում Կեսարիայի ձեռագրերով հարուստ երկու վանքերում երբեմն պահպանված մեր ձեռագրական հարուստ ժողովածուներից։ Նույն ժամանակ անհրաժեշտ ենք գտնում ասելու, որ անգամ մինչև 1915 թ. Պալյանի կողմից զանազան առիթներով հրատարակված ձեռագրացուցակներում կան այնպիսիները, որոնք շատ հեռու են խնդրո առարկա եղող ժողովածուի լրիվ պատկերը արտահայտելուց։ Այդպիսիներից է, օրինակ, Կեսարիայի Մունճուսուն գյուղի Եկեղեցու ձեռագրերի նկարագրությունը։ Եթե 1906 թ. Պալյանը Մունճուսունի եկեղեցուց նկարագրել է միայն 7 գրչագիր, ապա դեռ 1895 թվականին նույն Պալյանը նշում էր, որ նույն գյուղի Եկեղեցու զրաղարանը ուներ «Սրբեսնի չափ հայերեն հին ձեռագիրներ»[170]։ Ընդհանրապես Կեսարիային և նրա շրջակայքին վերաբերող հրատարակված ձեռագրացուցակները և այդ վայրերում երբեմն պահված ձեռագրերի մասին մեր ունեցած տեղեկությունները մեզ պատկերացում են տալիս, թե ինչպիսի մեծ թվով արժեքավոր ձեռագրեր ենք կորցրել նաև Կեսարիայում։ Մեր հոդվածի սահմանները մեզ թույլ չեն տալիս նկարագրություններով հայտնի ձեռագրերի նշանակության մասին խոսելու, սակայն եթե անգամ նկատի ունենանք նրանց միայն հնությունը, դարձյալ նրանք կարող են խոր ակնածանք ազդել մեզ։

Երբեմն Կեսարիայի Ս. Սարգիս վանքում էր պահվում 1187 թվականին Հռոմոսի վանքում Հովհաննես երեցի կողմից ընդօրինակված Բարսեղ Կեսարացու «Ճառք յաղագս վեցաւրէից» գործը, որը գրված էր յուրահատուկ մի բոլորագրով[171] և անկասկած կարող էր մեծ արժեք ներկայացնել հայ հնագրության համար։ Այս ձեռագիրը, սակայն

[166] Ա. Այգուանեան, Պատմություն Հայ Կեսարիոյ, Բ, Կահիրե, 1937, էջ 1837։

[167] Հ. Ն. Ակինյան, Նույն տեղում։

[168] «Հանդէս ամսօրեայ», 1894, էջ 357։

[169] Նույն տեղում, 1895, էջ 65։

[170] Նույն տեղում, էջ 316։

[171] Գարեգին Ա կաթողիկոս, Հիշատակարան... էջ 515—520։

բացակայում է Տ. Եպս. Պալյանի կողմից 1892 թվականին հրատարակված համանուն վանքի ձեռագրացուցակից, հավանաբար այդ ժամանակ այդ ձեռագիրը կամ տեղափոխված էր Կեսարիայի մի այլ վանք և կամ տարված էր այլուր։ Ս. Կարապետի վանքում էր պահվում 1203 թվականին Վարգան գրչի կողմից Դրաղարկում ընդօրինակված մի ավետարան։ Ս. Սարգսի վանքում էր գտնվում մի այլ ավետարան՝ գրված 1206 թվականին Ս. Հովհաննու Կարապետի վանքում, Գրիգոր քահանայի կողմից։ Դարձյալ Ս. Կարապետի սեփականությունն էր Գեորգ Լամբրոնացու՝ Մեկնություն Գործոց Առաքելոց աշխատության 1292 թվականի ընդօրինակություններ կատարված Հովհաննես գրչի կողմից Խորին անապատում։ Կեսարիայում երբեմն գտնվող մեծարժեք ձեռագրերից էր 1274 թվականին Սսում, Կոստանդին գրչի կողմից Օշին մարաջախտի համար գրված ավետարանը, որի հիշատակարանները հրատարակված Պալյանի կողմից մեզ ծանոթացնում են այնպիսի անձնավորություններ և պարագաների հետ, որոնք բացակայում են բազմահմուտ Հ. Ղ. Ալիշանի «Սիսուան»-ից[172]։ Եվ վերջապես, կրկնագիր հազվագյուտ մի գրչագիր, որը երկրորդ անգամ գրվել էր ԺԴ—ԺԵ դդ. իսկ հնագույն մասը՝ երկու տեսակի հայերեն մեսրոպյան երկաթագրերով և հունարենով[173], և այլ բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր։ Սակայն, ինչպիսի արժեքներ էլ դեռ կային, որոնց անգամ նկարագրությունն իսկ չհասավ մեզ։

Կեսարիայից ոչ հեռու գտնվող Թոմարզան ևս մինչև 1915 թ. ունեցել է իր ղրադարանը, ուր պահվում էին 40 ձեռագրեր ու բազմաթիվ տպագիր մատյաններ և մանր գրքեր[174]։ Տարագրության ժամանակ Դանիել վարդապետը այդ բոլորը արժեք ներկայացնող վավերագրերի հետ սնդուկով թաղել էր, 1915 թվականի արհավիրքներից փրկելու հույսով[175]։ Եվ այսպես ո՞վ գիտի ինչքան թանկարժեք հնություններ մոխրացան հողի տակ, թաղվեցին ու թաղված էլ մնացին...։

1915 թվականին գրքերի ջարդ կազմակերպվեց նաև Կեսարիայի մոտակա Էվերեկում։ Զենքի չափ վտանգավոր էին համարվում գրքերն ու պատկերները, հայերից շատերը թուրքերից զգուշանալով այրում էին մինչև իսկ ձեռագիր հիշատակարանները, գպրոցի գրադարանը, որոնք տարիների դոհողությամբ էին ճոխացած։ Թաղում էին նկուղներում բացված մասնավոր փոսերի և խոնավ պատերի մեջ։ Աղբանոցների մեջ նետված էին էջեր Ահարոնյանից, Վարուժանից, Սիամանթոյից։ Մեծ զուրգուրանքով ընդօրինակված ու բարձերի տակ խնամքով պահված ոգևորող բանաստեղծություններ այժմ թուրք երեխաների ձեռքին թռուցիկի էին փոխված[176]։ Տ. Եպ. Պալյանը Էվերեկի Ս. Թորոս եկեղեցում իր ժամանակին տեսել և նկարագրել էր 4 ձեռագրեր, բոլորն էլ ավետարաններ, որոնցից հնագույնը գրված էր 1291 թվականին Սսում, Թորոս Կայենցի գրչի կողմից[177]։

Մուսեռուսուն գյուղում գտնվող երեսուն ձեռագրերի մեջ կար ուշագրավ մի ձեռագիր։ Ուր գտնվում էր նաև ձեռագրերի մանրանկարչության գույների բաղադրության վերաբերյալ կարևոր մի գրվածք։ Բացի ձեռագրերից Կեսարիայի շրջանը հարուստ էր նաև հնատիպ բացառիկ արժեք ներկայացնող մատյաններով։ Կեսարիայի Ս. Կարապետ վանքում Պալյանը դեռ 1894 թվականին, բացի ձեռագրերից, հավաքել էր նաև 1000 կտոր տպագիր գրքեր[178]։ Պալակասի գյուղի ծերունի քահանայի մոտ և Ս. Կարապետ վանքում Պալյանը գտել էր հայ տպագրության երախայրիքներից և Հակոբ Մեղապարտի կողմից Վենետիկում 1512—1513 թթ. տպագրված Աղթարքը, Պատարագամատույցը, Ուրբաթագիրքը և Տաղարանը[179], որոնք մրցում են մեր թանկարժեք ձեռագրերի արժեքի հետ, քանի որ աշխարհով մեկ հազիվ մի քանի օրինակ կարելի է այժմ ճարել այդ հնագույն տպագիր գրքերից։

Եվ այսպես Կեսարիան իր շրջանակներով կորցրեց ավելի քան 700 արժեքավոր ձեռագրեր և հազարների հասնող հնատիպ և հազվագյուտ տպագիր մատյաններ։ Սակայն Կեսարիան մեր ձեռագրական կենտրոնների մեջ 1915 թ. կրեց կրկնակի կորուստ։ Նա ոչ միայն կորցրեց իր ձեռագրական հարուստ գանձերը, այլև լռության մատնվեցին անգամ նրանց հաշվեմատյանները հանդիսացող ձեռագրացուցակները։

Մենք շատ չնչին տեղեկություններ ունենք Մալաթիայի ձեռագրերի մասին։ Ինչպես

---

172 «Հանդէս ամսօրեայ», 1898, էջ 244—248։

173 Նույն անդում, 1899, էջ 14—15։

174 Թորոս Մ. Մատաղնյան, Հուշամատյան Թոմարզայի, Բեյրութ, 1959, էջ 86։

175 Նույն տեղում, էջ 98։

176 Ալեքս Գրիգորյան, Անդրանիկ Կարապետյան, Հիշատակարան Էվերեկի-Ֆենեսեի, Փարիզ, 1963, էջ 589—590։

177 Տրված եպս. Պալյան, Զեռագիրք Կեսարիա վիճակին... Ա. Էվերեկի Ս. Թորոս եկեղեցին, «Լոյս», Կ. Պոլիս, 1905, էջ 286—288, 516—519։

178 «Հանդէս ամսօրեայ», 1894, էջ 357։

179 Նույն տեղում։

հայտնի է սլատմական Մելիտինեն հայ գրչության հնագույն կենտրոններից էր. այդտեղ է, որ դեռևս 1057 թվականին ընդօրինակվել է մի ավետարան, որն այժմ պահվում է Երևանի Մաշտոցի անվան մատենադարանում։

Սրվանձտյանցը իր ժամանակին չնայած որ միայն երկու ձեռագրեր է նկարագրել Մալաթիայից, սակայն ինչպես բազմաթիվ այլ վայրերի, այնպես էլ Մալաթիայի մասին նրա հաղորդումները շատ հեռու են ամբողջական լինելուց։ Դժբախտաբար Մալաթիայի մեր ձեռագրերի մասին ոչ մի ձեռագրացուցակ մեզ չի հասել. ուստի բացի կցկտուր մի քանի տեղեկություններից շատ վայրերի նման այս քաղաքի մասին ևս մեզ շատ քիչ բան է հայտնի։

Մալաթիայի Ս. Փրկիչ վանքի մասին դարձյալ Տրդատ եպս. Պալյանը գրում է, որ անցյալում ունեցել է բազմաթիվ գրչագրեր, սակայն նրա հնագույն մատյանները սրա ու նրա ձեռքը անցնելով 1906 թվականին այնտեղ մնացել էր միայն մի Ավետարան, Հայսմավուրք, Շարական և ժամագիրք, այսինքն ընդամենը 4 կտոր գրչագիր[180]։ Պրոֆ. Մկրտիչ Որբերյանը 1900 թվականին գրում էր, որ «Եկեղեցական պահարանին մեջ կը գտնվեին բավական թիվով ձեռագիր եկեղեցական դիրքեր, որոնց մեջեն հինը ԺԱ դար կերթար, ոմանց կողքերուն քով դրված թերթերը մագաղաթյա Ավետարանի թերթեր էին, կը հիշեմ նաև որոշ թերթ մը, որ կրկնագիր գրչություն մըն էր, հին դիրերուն հետքերը զգալի էին»[181]։

Մալաթիայի Ս. Լուսավորիչ վանքում ևս ձեռագրեր են եղել, սակայն շատ բան թալանվել է՝ 1895 թվականին վանքի բոլոր գույքերի հետ։ Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանը գրում է, որ վանքի հնություններից ոչինչ չէր մնացել, բացի մի քանի ձեռագրերից, այդ թվում մագաղաթյա մի մեծարժեք Ավետարան, որին վիճակվել է ծանր մի ոդիսական։ «Այս թանկարժեք մագաղաթյան 1895-ի օրերուն կապուտ կողոպուտ կըլլա ու այլ ազգերի ձեռքով Ադանա կտարվի վաճառվելու ժամանակ Առաջնորդարանեն կառնվի։ Մենք Ադանայի Առաջնորդարանեն կվերադարձնենք և ահա 1915-ին կրկին կը-դերիանա, հետո կառավարության միջոցով կվերադարձվի և կդրվի Խարբերդ Օսմանյան դրամատունը, ուրկեց այլ թանկարժեք մագաղաթներու և սուրբ սպասներու հետ Պոլիս բերել կուտանք. ուր կհանձնվի ու կդրվի ապահովության մեջ»[182]։

Մալաթիայում հայ անուն հիշեցնող վերջին բեկորների ոչնչացումը հատկապես մեծ թափ ստացավ դահճապետ Թալյաթ փաշայի սույն քաղաքում կատարած իր այցելության ընթացքում (3 նոյեմբերի 1916 թ.), ուր նա Մալաթիայում հյուր եղավ Հաշիմ բեյի տանը։ Նա օգտվելով առիթից հրամայեց անխնա ոչնչացնել հայերեն բոլոր արձանագրությունները և կոտորածի բոլոր հետքերը։ Սույն հրամանի համաձայն հայոց գերեզմանատան բոլոր քարերը գործածվեցին ղորանոցի շինության համար[183]։ Անշուշտ հայերին հիշեցնող այս վերջին հետքերի հետ պետք է որ իսպառ ոչնչացվեին նաև մեր մագաղաթյա բազմաթիվ գանձերը։

Մալաթիայում ձեռագրեր էին գտնվում ոչ միայն վանքերում, այլև անհատ մարդկանց մոտ։ Վերջերս մահացած ազգագրագետ և գրող Գ. Հալաջյանը (Թափառական), որ 1925 թվականին երկու օրով կանգ էր առել Խարբերդից Սեբաստիա գնալու ճանապարհին Մալաթիայի բանտում, միանգամայն խիստ ուշագրավ տեղեկություններ էր քաղել, որոնք արժեքավոր են ինչպես Մալաթիայի մեր ձեռագրական գանձերի վախճանի, այնպես էլ ընդհանրապես մեր ձեռագրերին վիճակված տխուր ճակատագիրը ճանաչելու առումով։ Տեղացի Մրխճի Սուլեյման անունով թուրքացած մի հայի (Սարդիս Աբրահամյան) պատմածը, որը ցարդ անտիպ է մնացել, իր ջահեկանության համար մեջ ենք բերում ամբողջությամբ։ «Հայրս Կարապետ Աբրահամյան Երուսաղեմ երթալու և հաճի դառնալու ցանկություն ուներ. բայց այդ ցանկությունը ուզում էր իրականացնել տարբեր ձևով, այն է հավաքել և կորստից փրկել Իզուլիի շրջանի քրդերի մոտ պահված հայերեն ձեռագրերը։

Հայրս՝ դարբին էր, իսկ ընկերը՝ Կարո Օհանյան վարպետ հյուսն, որպես անբաժան ընկերներ շրջում էին այդ շրջանի գյուղերը քրդերի հրավերով շենքեր կառուցելու և այդ առիթով կարողացել էին հայտնաբերել հայերեն մագաղաթներ, գրչագիր ավետարաններ, երկու Հայսմավուրք և զանազան ձեռագիրների հավաքածուներ, որոնք ձեռք բերե էին Դերսիմի շրջանից Մալաթիայի լեռնային շրջաններ փոխադրված Իզուլիի աշիրեթի անդամներից, որոնց նախնիները հայեր են եղել։ Այս ձեռագրերը ձեռք են բերված իրենց աշխատանքի դիմաց և տեղ-տեղ վճարումներով և սրրությամբ պահոյտնվում էին Կա-

[180] «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1906, № 2975, հմմտ. Արշակ Ալպոյաճյան, Պատմություն Մալաթիո Հայոց... 1961, Բեյրութ, էջ 594—595։

[181] «Բիւրակն», 1900, էջ 147։

[182] «Բագմավէպ», 1938, էջ 109։

[183] Ա. Ալպոյաճյան, Նույն տեղում, էջ 956։

որ Օհանյանի բարաշեն տան ներքնահարկում մասնավոր շինված ապահով թաքստոցի մեջ, որպեսզի մի օր երկուսը միասին փոխադրեն Երուսաղեմ՝ հաճիության արժանանալու համար։

Ես և Միքայելը (Կարոյի տղան) որպես երկու ընկերների անդրանիկ զավակներ տեղյակ պահված էինք այդ բոլորի մասին, բայց ընդհանուր տեղահանությունը և հայկական ջարդերը ի դերև հանեցին մեր ծնողների հույսերը։ Հայրս և Կարոն սպանվեցին Եփրատի վրա ձգված Իգոլիի կամուրջի առջև և դիակները նետվեցին դետը իրրև աչքառու հայրենասերների։ Ես և Միքայելը թրքացանք փրկելու համար այն սրբազան պահեստը, որ մեր ծնողները ավանդ էին թողել մեզ։

Անցան տարիները, մեզ մոտ հայտնվեցին Բուլգարիայից և Հունաստանից եկած թուրք գաղթականներ, որոնք տեղավորվեցին հայերի լքած բնակարանների մեջ, ի միջի այլոց գրավեցին նաև ընկերոջս բնակարանը, փողոց նետելով թրքացած Օսմանի (Միքայել) կինն ու երեխաները։

Պատուհասի մի նոր շրջան սկիզբ առավ թուրք գաղթականների դործած զուլումների իբր հետևանք. փայտի չդոյության ղաստաճառով քանդում էին բնակարանների դռները, պատուհանները, տախտակամածները և կտրում էին այգիների պտղատու ծառերը։

Ընդհանուր ողբերգության այդ օրերին թուրք գաղթականները փայտ փնտրելու առիթով, հայտնաբերեցին մեր մագաղաթների թաքստոցը և հայտնեցին դինվորական իշխանություններին։ Բայրամի առաջին օրն էր, երբ կալերի մեջ հավաքված թուրք ժողովուրդի ներկայությամբ հանդիսավոր խարույկի բոցերին հանձնեցին նաև մեր մագաղաթների հավաքածուն։ Միքայելի տասներկու տարեկան տղան, որ այդ միջոցին ներկա էր խարույկի բոցավառության, փորձում է կրակից աղատել այն գրչագիր ավետարանը, որի առջև գաղտնաբար իրենք ամեն երեկո ծնրադրում էին։ Վայրենի ամբոխը բռնելով տղային ավետարանի հետ միասին հանձնում են կրակի բոցերին, աղաղակելով՝ «Ձեր Աստվածը թող փրկի քեզ այս կրակից» և այս տեղի ունեցավ 1923 թվականին»[184]։

Ահա ինչպիսի ողբերգական վախճան վիճակվեց Մալաթիայի մեր ողջակիզված վերջին մարդկային ու ձեռագրային բեկորներին, որոնք գեռ կարողացել էին իրենց գոյությունը պահպանել անգամ սադայելական Թալյադի այստեղ գալուց հետո իսկ...։

Հայերեն գրչագիրը փրկելու ճանապարհին խուժանի կողմից խարույկի բոցերին հանձնված հիշյալ անվեհեր պատանին, արժանի է, որ իր տեղն ունենա դեռևս չդրված մեր նոր վկաների պատմության հաջորդ հատորում...։

Մալաթիայից փրկված ձեռագրերի մասին մեզ ոչինչ հայտնի չէ բացի մեկից, որն այժմ պահվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանի 3627 համարի տակ։ Այդ ձեռագիրը հայ գրչության և մանրանկարչության գլուխ գործոցներից մեկն է և ընդօրինակված և նկարված է Կիլիկյան Հայաստանի հանճարեղ մանրանկարիչ Թորոս Ռոսլինի կողմից, Հռոմկլայում։ Այս լսա Գարեգին կաթողիկոս Հովսեփյանցի Ռոսլինի յոթերորդ մեզ հայտնի գործն է և Կոստանդին կաթողիկոսի ժամանակի տասներեքերորդ գրչագիրը, որը պատվիրել է նույն կաթողիկոսը Լևոն Գ.-ի ժառանգ պատանի Հեթում Բ-ին նվիրելու համար և գրված է 1268 թվականին։ Ունի արծաթապատ կազմ[185]։ Ձեռագիրը Մալաթիայից Երուսաղեմ է բերվել 1929 թվականին.

Ծնթ.— Հայտնի բանասեր Հ. Քյուրտյանը վերջերս դրում է, որ Կեսարիայի դանադան հաստատություններից ձեռագրեր բերված և վաճառված են Կ. Պոլսում և այդ միջոցով է, որ իմ հավաքածուից էլ մաս են կազմած ինչ-ինչ ձեռագրեր։ Սակայն Կեսարիայի ձեռագրերի մեծ մասի ճակատագիրը անհայտ է[186]։

---

[184] *Հանգուցյալ ազգագրագետ Գ. Հալաջյանի մեր տրամադրության տակ դրած անտիպ նյութերից։*

[185] *Դարեգին արքեպս. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ... պրակ Ի. Նյու-Յորք, 1913, էջ 40։*

[186] *«Բազմավէպ», 1966, էջ 154։*

(Շարունակելի)

Հ. Ս. ՆՂԻՍԱՁԱՐՅԱՆ

ԱՇՏԱՐԱԿ

(Բնակավայրը և պատմական հուշարձանները և վերջիններիս վիմագրությունները)

Ինչ վերաբերում է հյուրատան և մյուս տների կառուցմանը, ապա անվիճելի է, որ դրանք հանդիսացած պետք է լինեն վանքի միաբանության անդամների համար որպես բնակարաններ, որոնցից այժմ ոչ մի հետք չի պահպանվել։

Եկեղեցու շուրջը, պարսպի ներսում տարածվում է վանքի դերեզմանատունը՝ ավերակ վիճակում։ Ամբողջական վիճակում պահպանված գերեզմանների տապանաքարերը տուֆից են, որոնք մշակված են հարթատափակ երես ունեցող ձևով. ոմանք ունեն տապանագրություններ։

Այդ դերեզմանատանը, եկեղեցու հարավային կողմում կա մի մահարձան՝ բաղկացած պատվանդանից ու խաչքարից։ Պատվանդանը երկու կարգից է. ստորինը՝ ցածր, իսկ վերինը՝ բարձրադիր ու քիվավոր։ Խաչքարը սովորականի պես գեղեցիկ քանդակազարդված է։ Մահարձանն ունի տապանագրություն՝ խիստ եղծված ու անընթեռնելի վիճակում. կարդացվում է միայն տարեթիվը՝ ՉԽ (1291) թվականով։

4. Սպիտակավոր.— *Այդ եկեղեցու մասին պատմական ոչ մի հիշատակություն չկա. բացակայում են նաև վիմագիր արձանագրությունները, այնպես որ՝ նրա կառուցման ժամանակը ստույգ հայտնի չէ, միայն կառուցողական ձևերը բնորոշ են ԺԳ—ԺԴ դարերին (նկ. 4)։*

Այդ հուշարձանը, բացի իր կառուցողական հետաքրքիր ձևերով, առավել ուշագրավ է իր բնական դիրքով. բազմած լինելով Քասախ գետի խորունկ ձորի բարձր քարափի գլխին՝ արևելյան և հարավային պատերը հենած նրա անմատչելի ժայռոտ եզրերին, իր վրա է գրավում հեռվից դիտողի և այցելուի ուշադրությունը։

Սա ուղիղ քառանկյունի հատակագիծ ունեցող փոքր կառուցվածք է, որի ծածկը չնայած քանդված է, բայց որոշակի նկատվում է, որ այն եղել է թաղակապ։ Արևելյան ծայրում ունի կիսակլոր աբսիդ՝ ցածրիկ բեմով։ Գլխավոր մուտքը արևմտյան կողմից է. մի ուրիշ փոքր մուտք էլ բացվում է հարավային կողմից՝ անմիջապես ձորաեզրին։ Ավերակ վիճակում է՝ քանդված է ծածկը և պատերի վերի քարաշարերը և սալահատակը։ Պահպանված մասերը շարված են կարմրագույն տուֆի մաքուր տաշված քարերով՝ կրաշաղախով։ Պատերի վրա փորված են խաչքանդակներ։

Ե. Ս. Կիրակի.— *Այդ եկեղեցին այժմ գոյություն չունի, նույնիսկ որոշակի կերպով*

---

* *Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1966 թվականի № Ը-ից։*

հայտնի չէ նրա գտնվելու տեղը։ Անցյալ դարի տեղագիրները նրա ավերակների մնացորդները նշում են Շուխյանների այգիներում, ուստի նրա կանգուն ժամանակ կոչվելիս է եղել նաև «Շուխենց» եկեղեցի։ Մինչև այսօր էլ Աշտարակի հարավ-արևելյան թաղամասում, մի նեղ փողոցի վրա, որի երկու կողմերում գտնվում են Շուխյանց տոհմին պատկանող մարդկանց տները՝ ընկած է նշված եկեղեցու զմբեթի վեղարի մի մասը։ Թե երբ է կառուցվել այդ եկեղեցին, կամ երբ է ավերվել ու բոլորովին անհետացել դեմքի երեսից, ոչինչ հայտնի չէ այդ մասին։

6. Ամենափրկիչ.— Այս եկեղեցին նույնպես այժմ գոյություն չունի. գյուղի մեծահասակ մարդկանց պատմելով, նա պետք է գտնվելիս լիներ այժմյան շուկայի վայրում և մինչև սույն դարի սկզբները գեռ կանգուն ու գործելիս է եղել։

Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանի նկարագրության համաձայն այդ եկեղեցու արևելյան արսիդի մասը շարված է եղել սրբատաշ քարերով՝ կրաշաղախով, իսկ ժողովարանը՝ անմշակ մանր քարերով, ցեխով, սրի ծածկը եղել է փայտից։

Շահխաթունյանի այդ նկարագրությունից միանգամայն պարզ ե հասկանալի է դառնում, որ այդտեղ գոյություն է ունեցել մի հին եկեղեցի, որը քանդվել ե հետագայում վերակառուցվել է։

Թե երբ է հիմնադրվել այդ եկեղեցու նախնական շենքը, երբ է այն ավերվել ու նորից վերակառուցվել՝ բոլորովին անհայտ է։ Վերը մեջբերված՝ Բջնու վանքում 1478 թվականին գրած ավետարանի հիշատակարանում նշված այն տեղեկությունը, թե «... ես՝ Պատրոնս ե ամուսին իմ Մելիք-խաթուն ստացաք զսուրբ Աւետարանս ի յարդար վաստակոց մերոց, և տուաք դա ընծայ ի դուռն սուրբ Ամենափրկչին Աշտարակու և սուրբ Մարիանին, ե սուրբ Կարմրաւորին, ի վայելումն մանկանց սոցա...», ինքնին հաստատում է, որ այդ ժամանակ, այսինքն՝ 1478 թվականին, դեռ կանգուն էր Ամենափրկիչ կոչվող եկեղեցու նախնական շենքը և որ նա, բացի սովորական գյուղական եկեղեցի լինելուց, հանդիսանում էր նաև որպես մենաստան. ճիշտ նույնպես նաև Մարիանէ և Կարմրավոր եկեղեցիները։

7. Ս. Կարապետ.— Այդ եկեղեցին նույնպես այժմ գոյություն չունի. հայտնի չէ նաև նրա գտնվելու տեղը, ինչպես և կառուցման ու ավերման ժամանակը։ Դրա մասին հիշատակում է Ղ. Ալիշանը[7], նշելով, որ այն օգտագործվում էր որպես մարագ։

Աշտարակ.—Սպիտակավոր եկեղեցին հարավ-արևելքից։

Աշտարակում, բացի վերը նշված եկեղեցիներից, կան նաև մի շարք ուշագրավ այլ հուշարձաններ, որոնք մեջ ենք բերում ստորև։

Գերեզմանատուն.— Բավականին ընդարձակ գերեզմանատուն է. տարածվում է Աշտարակի հյուսիս-արևելյան կողմում՝ բարձրավանդակ-սարահարթի վրա։ Գերեզմանաքարերը տարբեր գույնի տուֆից են՝ իրենց դարաշրջանին համապատասխան ձևով մշակված՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, ուր մինչև այժմ էլ շարունակվում են թաղումները։ Այստեղ, որպես տապանաքար միաժամանակ օգտագործված են հին շենքի սրբատաշ քարեր, գեղաքանդակ խաչքարեր, քառակող կոթողներ և այլ բեկորներ։ Գերեզմանատանը կան նաև զանազան ձևով մշակված բազմաթիվ մահարձաններ, որոնցից մեջ ենք բերում առավել կարևորները։

Գրիգոր և Վարդոսան ամուսինների մահարձանը.— Գտնվում է գերեզմանատան հարավ-արևմտյան ծայրամասում, Կարմրա-

6 Հովհաննես Եպիսկ. Շահխաթունեան, Պատրաստութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ դաւառաց Արարատեան. Հատ. երկրորդ։

7 Ղևոնդ Ալիշան, Այրարատ, Վենետիկ 1890 թվ։

Աշտարակ.—Ս. Նշան կամ «Ծակ խաչ» մահարձան։

վոր եկեղեցուց դեպի արևելք։ Բաղկացած է պատվանդանից և խաչքարից։ Կառուցված է շատ ողորկ մշակված սև տուֆ քարից՝ 1225 թվականին, ինչպես այդ ցույց է տալիս նրա վրա փորագրված արձանագրությունը (արձան. ի)։

Պատվանդանը քառակարգ է, ստորին երկու կարգերը ցածր են, երրորդը բարձրադիր է, քիվավոր, իսկ ամենավերի կարգը մի ամբողջական մեծ քարից է, որը հանդիսանում է խաչքարի հիմքը։ Խաչքարը շատ մեծ է, շքեղ քանդակազարդված, որի երեսը ներկված է վառ կարմիր գույնի ներկով։

Կառուցման վերաբերյալ արձանագրությունը փորագրված է խաչքարի հիմքը կազմող ամբողջական քարի արևմտյան երեսի վրա՝ հետևյալ ձևով, մասամբ եղծված վիճակում։

Ի. 1. ի թուիս ՈՀԴ։ (1225) սուրբ նշան տէր-
2. ունական Գրիգորոյ, Վարդոսանայ լեր
3. քաւարան յո..ա տարին ղաւրքն
4. տողան ի գոչել փողոյն....
5. ականե ոչ եղեր կիրակի դատաստ-
6. անդ.. ....։

Գրիգոր և Նազան ամուսինների մահարձան.— Այս մահարձանը, որը գտնվում է նախորդ մահարձանից դեպի հյուսիս, կառուցված է այդ վերջինիս նմանությամբ՝ 1273 թվականին։ Սա նույնպես սև տուֆ քարից է, պատվանդանը համեմատաբար մեծ է, իսկ խաչքարը փոքր, որի երեսի կողմը նույնպես ներկված է կարմրագույն ներկով։ Կառուցման վերաբերյալ արձանագրությունը գտնվում է պատվանդանի արևմտյան երեսի վրա, որը հետևյալն է.

ԻԱ 1. Ի թվիս ՉԻԲ։ (1273).
2. Ողորմութեամբն Աստուծոյ ես Սարդիս
քահանա և Աստուածատուր
3. եւ մահանց քույր իմ կանգնեցաք գխաչս
4. ի բարեխաւսութեան հաւր իմո Գրիգորո
և մոտ իմո
5. Նազանի և քվեր իմո Սետաին որ հան-
գուցեալ են
6. այսմ (տապանի) .....(Քրիստո)սի դա-
տաստանի
7. անուն ականաւոր Եղելութեան....

Այս վերջին տողը հետագայում է ավելացված Հ. Ե.)։

Հաջորդ մահարձանը գտնվում է նախորդից դեպի արևմուտք, գերեզմանատան արևմտյան եզրամասում՝ բնակելի շենքերին կից։ Սա նույնպես կառուցված է սև տուֆ քարից։ Սրա եռակարգ ցածրադիր պատվանդանը ընդհանուր է, հիմքում երկարավուն ուղիղ քառանկյունի՝ պարզ ձևով մշակված։

Խաչքարերը երեք հատ են՝ իրար կից մի շարքով կանգնեցրած։ Տարբեր մեծության են՝ կենտրոնի խաչքարը համեմատաբար մեծ է մյուսներից և մշակված են տարբեր ձևերով, որպիսի հանգամանքը վկայություն է այն բանի, որ դրանք կանգնեցրած են տարբեր ժամանակներում։ Երկու եզրերի խաչքարերի ճակատամասում կան գրավոր հիշատակություններ՝ բարելյեֆ ձևով քանդակագրված։ Հյուսիսային կողմի խաչքարի վրա գրված է.— ՔԻՐԱՍ ԿԱՏԱՐՈՂ, իսկ հարավայինի վրա՝ Թվ. ՌՄԱ. (1602)։

Ս. Նշան կամ «Ծակ-խաչ» մահարձան.— Իր կառուցման ձևով այնքան հետաքրքիր և ուշագրավ այդ մահարձանը գտնվում է գերեզմանատան կենտրոնական մասում՝ բարձր դիրքով և ինչպես երևում է նրա վրա փորագրված արձանագրությունից (արձանագրություն ԻԲ), այն կառուցել է Թովմաս քահանան՝ պարոն Սաղունի և նրա որդիների երկարակեցության և իր ու իր ծնողների հիշատակի համար՝ 1268 թվականին (նկ. 5)։

Այդ մահարձանը նույնպես սև տուֆ քարից է, պատվանդանը նստվածքում ուղիղ քառանկյունի է և եռակարգ, ստորին կարգը շատ ցածր է՝ յուրահատուկ ձևով մշակված քիվերով. միջին կարգը բարձրադիր է՝ արևմտյան երեսից խորանաձև փորվածքով, որի «մուտքը» այդ նույն կողմից է, իսկ փորվածքի ներսում, արևելյան «պատին» կից



Աշտարակ.—Երեք խաչքար—մահարձանը մինչև վերանորոգումը։

հարդարված է փոքրիկ սեղանիկ։ Հենց այդ խորանաձև փորվածքի պատճառով էլ նրան «Ծակ-խաչ» անունն են տալիս։

Պատվանդանի վերի կարգը կամ խաչքարի հիմքը մի ամբողջական քարից է, որի վրա հենած է շքեղ քանդակազարդված մեծ խաչքարը՝ ճակատի մասում մարդկանց ու կենդանիների բարձրաքանդակներով, իսկ եզրերին բարելիֆ ձևով դրված հիշատակագրություններ և ամբողջ երեսի մասը կարմրագույն ներկով ներկած։

Կառուցման վերաբերյալ արձանագրություն փորագրված է պատվանդանի միջին մասի արևմտյան երեսի վրա, խորանաձև փորվածքի երեք կողմերում, այնպես, որ 1—3 տողերը գտնվում են նրա վերևում, 4—7 տողերը՝ հյուսիսային կողմում և 8—13 տողերը՝ հարավային կողմում, որը հետևյալն է՝

ԻԲ. 1. Ի թվ. ՉԺԷ։ (1268) ի թագաւորութեան
2. յուսով ամենակալին Աստուծոյ ես Թում-
3. մաս կանգնեցի զսուրբ նշա-
4. ն վասն երկար կենաց պարոն Սատու-
5. նին և գաւակաց իւրոց
6. և յիշատ-
7. ակ հոգո ի-
8. մ ե ծն-
9. ագեք կենս-
10. աբեր նշա-
11. նիս զմեզ
12. յիշեցեք
13. ի Քրիստոս։

Վարդան եպիսկոպոսի մահարձանը.— Գտնվում է «Ծակ-խաչ» մահարձանից դեպի արևմուտք, բարձրավանդակի եզրին և կառուցված է սև տուֆ քարից՝ 1349 թվականին։ Մահարձանի պատվանդանը քառակարգ է, ստորին երկու կարգերը ցածր են, երրորդը՝ բարձրադիր, բիմավոր, իսկ ամենավերին կամ չորրորդ կարգը մի ամբողջական փոքր քարից է։ Սրա վրա հենած խաչքարը նույնպես փոքր է ու պարզ ձևով քանդակազարդված։ Արևմտյան երեսի վրա փորագրված է.—

ԻԳ. ՏԷՐ ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ. ԹՎ. ՉՂԸ. (1349)։

Նրեմ խաչքար-մահարձան.— Առավել ուշադրության արժանի արվեստի այդ հիասքանչ կոթողը գտնվում է գերեզմանատան հյուսիս-արևմտյան եզրին, բարձրավանդակի լանջամասում և, մի խումբ գերեզմանների հետ, մի տեսակ առանձնացած է ընդհանուր գերեզմանոցից։ Խմբական խոշոր մահարձան է՝ երկարավուն, ուղիղ քառանկյունի նստվածքով (նկ. նկ. 6, 7), շարված սև ու կարմիր տուֆի սրբատաշ քարերով։ Արևել-

Աշտարակ.—Երեք խաչքար—մահարձանը վերանորոգումից հետո։

յան և ծայրերի կողերի երեսները հարթ են, իսկ արևմտյան երեսը գոգավոր է, ուր իրար կից դրված են երեք մեծ խաչքարեր, որոնց շքեղ զարդաքանդակները մշակված են շատ գեղեցիկ ու վերին աստիճանի նուրբ ձևով։ Խաչքարերի միացման տեղերից ձգվում են գլանաձև կիսասյուներ, իսկ կոթողի վերևում որպես ճակատամաս դրված են կիսակլոր քանդակազարդ քարեր։

Խաչքարերը և մահարձանի ճակատամասը կազմող կիսակլոր քարերը կարմիր տուֆից են, խաչքարերի երեսները վառ կարմրագույն ներկով ներկած, իսկ պատվանդանը սև ու կարմիր տուֆ քարից է՝ ստորին մասում շախմատաձև դասավորությամբ։

Հուշարձանի վրա գրավոր հիշատակություններ չի նկատվում, ուստի ստույգ հայտնի չէ, թե երբ է այն կառուցված, ովքեր են եղել նրա կառուցողները և ում հիշատակին է նվիրված։ Նրա քանդակագործության ձևերը խիստ բնորոշ են ԺԲ—ԺԳ դարերին։

Այս մահարձանի հարավային կողմում, նրան կից պահպանվել է մի այլ մահարձանի պատվանդանի մասը, որի արևմտյան երեսը պատած է զույգ գլանաձև որմնասյունաշարերով՝ կիսախոյակների վրա հենված որմնանկարներով։

Այս կարգի վերջին մանուրաանը.—Գտնվում է նախորդ մահարձանից դեղի արևմուտք, մի բնակելի տան (Կարապետ Զաքարյանի) բակում։ Ըստ երևույթին հնում գերեզմանատուն տարածվելիս է եղել մինչև այդ մահարձանը և մինչև վերը նշված երեք խաչքար-մահարձանը, սակայն գյուղի ընդարձակման հետևանքով գերեզմանատան արևմտյան որոշ մասը բանգել են՝ նոր բնակարաններ կառուցելու համար, անվնաս թողնելով այդ մահարձանը։

Վերջինս կառուցված է կարմրագույն տուֆ քարից, որի ուղիղ բառանկյունի նստվածք ունեցող պատվանդանը հնգակարգ է, ըստ որի ստորին երեք կարգերը ցածր են, չորրորդը՝ բարձրադիր, քիվավոր, իսկ վերջին հինգերորդ կամ ամենավերի կարգը մի ամբողջական մեծ քարից է։

Խաչքարը շատ մեծ է, բարձ և շքեղ քանդակազարդված։ Գրավոր հիշատակություններ չի նկատվում, ուստի հայտնի չէ, թե երբ է այն կառուցված, ովքեր են եղել նրա կառուցողները և ում հիշատակին է նվիրված։

Այդ մահարձանի առջևում կա մի գերեզման՝ սուր եռանկյունաձև գագաթ ունեցող մեծ տապանաքարով։ Դրան մոտիկ, պատին հենած կա նաև մի այլ գեղաքանդակ մեծ խաչքար՝ նույն կարմրագույն տուֆից։

Ամրոց.— Անցյալ դարի տեղագիրներն ու ճանապարհորդները ամրոցի մնացորդներ են նշում Աշտարակում։ Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի վկայությամբ[8], այդ ամրոցը գտնվելիս է եղել գյուղի արևելյան եզրին, Քասախի աջ ձորափին, ուր ձորի անմատչելի քարափները հանդիսացել են որպես բնական ամրոցապատեր, իսկ գյուղի կողմից կառուցված են եղել բերդապարիսպներ՝ իրենց մեջ առնելով Միրանավոր և Սպիտակավոր կոչվող եկեղեցիները և, որ նրա այցելության ժամանակ, այսինքն՝ նշված դարի երկրորդ քառորդի սկզբներին, դեռ նկատելի էին այդ բերդապարիսպների մնացորդները։

Գերմանացի ճանապարհորդ, հռչակավոր բժիշկ ու բուսաբան Կոխը 1837 թվականի ապրիլի 18-ին Աշտարակ կատարած իր այցելության ժամանակ նույնպես նշում է այդ ամրոցապատերի մնացորդների մասին։

Այժմ այդ ամրոցապատերից ոչ մի հետք չի պահպանվել՝ այնտեղ բնակելի տներ կառուցելու հետևանքով։ Միայն ձորի քարափի որոշ տեղերում նկատվում են քարուկիր շարվածքի մնացորդներ, որից իմացվում է, որ

[8] Հ. Շահխաթունյան, վերը նշված աշխատությունը։

Աշտարակ.—Կամուրջ Քասախ գետի վրա։

քարափի խոցելի աեղերը ամրացված են եղել արհեստական ամբոցապատերով։ Մինչև այսօր էլ հին գյուղի այդ թաղամասը «Բերդի թաղ» անունով են կոչում։

Երկու կամուրջներ.— Գտնվում են Քասախ գետի վրա, քաղաքի արևելյան կողմում՝ կողք-կողքի։ Դրանցից ստորին կողմինի ծայրերի փոքրիկ մասերն են մնացել՝ գետի երկու ափերին՝ քարուկիր շարվածքով։ Ենթադրվում է, որ այն կառուցված ոլետք է լինի ԺԲ—ԺԳ դարերում։ Այդ կամուրջի վրայով է անցնելիս եղել միջազգային տարանցիկ առևտրի գլխավոր ճանապարհների՝ Հայաստանի սահմաններով անցնող այն ուղեգիծը, որը գուրս գալով Դվին մայրաքաղաքից անցել է Երևան քաղաքի, Արադածոտն, Նիգ ու Շիրակ գավառների վրայով և գնացել դեպի արևմուտք։

Մյուս կամուրջը, որը գտնվում է նախորդի վերի կողմում, կանգուն է և, ինչպես ցույց են տալիս պատմական աղբյուրները, կառուցված է 1664 թվականին։ Եռաթռիչք մեծ կամուրջ է, ձախակողմյան ափին կից թռիչքը անհամեմատ լայն բացվածքով, մյուսները՝ շատ նեղ ու փոքր։ Կամուրջի մի ծայրը հենած է գետի ձախափնյա բարձր քարափին, իսկ մյուս ծայրը՝ պատի ձևով ձգվում է ոչ-փնյա հարթության վրա (նկ. 8)։

Ամբողջ կամուրջն ավարտված է կարմրագույն տուֆի մաքուր տաշված քարերով, կրաշաղախով։ Ունեցել է կառուցման վերաբերյալ արձանագրություն, փորագրված արևմտահայաց կողմի երեսում եղած մի փոքր խորշաձև տարածության մեջ՝ եղծված վիճակում, որի մասին տեղեկացնում են անցյալ դարի աեգագիրները։ Ներկայումս այդ արձանագրությունը՝ վերանորոգման հետևանքով ծածկված է սվաղով։

Այդ կամուրջների՝ հնի դրության և նորի կառուցման հանգամանքների, մասին հետևյալ կերպ է պատմում Առաքել վարդապետ Դավրիժեցի պատմիչը..

«Իսկ կամուրջն որ է ի վերայ Քասախ գետոյն ի մեջ խորադոյն ձորոյն, որ մերձ է ի գիղն Աշտարակ, որ էր մեծակն և բարձրաշէն, կրով և գործուն քարիւ շինեալ, սա հնացեալ էր և խախտեալ և ակն կէսն ևս փլուղեալ. Բայց կարի հարկաւոր էր, քանզի բաղում գաւառաց և բաղում ճանապարհաց անցուրդ է։ Վասն որոյ բարեպաշտ և քրիստոսասէր այրն՝ մահտեսի խոջայ Գրիգորն՝ զոր մականուամբ մոծակենց Գրիգոր ասէին. որ է բուն տեղացի յԵրեան քաղաքէն։ Սա զհին

կամուրջն՝ որ մերձեալ էր ի փլանիլ, քակեաց և ապա փոխեաց դտեղն և սկսաւ հիմանել նոր շինել, ամուր և հաստատուն կրով և գործուն քարիւ՝ ըստ պատշաճի և բարեվայելուչ, յօրինեալ ի հիմանէ մինչև ցկատարումն՝ վասն հոգւոյ իւրոյ փրկութեան և վասն սուրբ Աստուած յուսոյն, բազում աշխատունս կրեալ և բազում գանձս ծախեալ մինչև ցկատարումն հասուցեալ, ի թուականիս մերում ՌՃԺԳ. (1664), ի փառս Աստուծոյ»[9]։

Սոլեաական իշխանության տարիներին խոշոր աշխատանքներ են կատարվել Աշտարակի՝ վերը նկարագրված հուշարձանների վերանորոգման և բարեկարգման ուղղությամբ.— վերականգնված են Մարիանէ և Կարմրավոր եկեղեցիների թափված երեսապատման քարերը, բիվերը, տանիքների և գմբեթի վեղարի սալ քարերը. մարրված և բարեկարգված են շրջապատերը։ Վերականգնված են նաև կամուրջի բանդված մասերն ու եզրապատերը, ինչպես և երեք խաչքար-մահարձանի կոդերի ու ճակատի բանդված մասերը և թափված երեսպատման քարերը։ Լրացված ու կարգավորված է՝ փողոցից դեպի Կարմրավոր հուշարձանը տանող քարե աստիճանները։

Մաքրված է Միրանավոր կոչվող հուշարձանի ներսը փլատակներից, վերականգնված են հարավային նավի երկու բանդված մույթերը և դրանց կամարները ու թաղակապ ծածկը, ինչպես և արևելյան արսիդի ու կոնխի ու կամարի բանդված մասերն ու արևելյան ճակատը։ Մուտքն ամրացված է երկաթյա դռնով։

[9] Պատմություն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ, Վաղարշապատ, 1884 թ., էջ 271—272։

Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆ

ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Բալուի գյուղերից նույնիսկ Հավավի մասին (որ մտավորական աշքի ընկնող կենտրոն է եղել իր Ս. Կաթողիկե և Ս. Աստվածածին մեծ եկեղեցիներով, ազգային մեծ դպրոցով և ուսումնասիրաց ընկերությունով), սա միայն հայտնի է, թե այնտեղ նահատակվել են առնվազն չորս հայ ձայնագրագետ-երաժիշտ-ուսուցիչներ՝ Ղազարոս Մանկունին և Մարտիրոս Արոյանը՝ 1895-ին, ու Կիրակոս Կատարիկյանը (1908-ից՝ Մուշեղ քահանա Կատարյան) և Պետրոս Ոսկանյանը՝ 1915-ին[193]։ Բայց Բալուի շուրջ եղել են մոտ 50 հայաբնակ գյուղեր, Պիտի բավականանալ նրանով, որ՝ բուն Բալուին նվիրված աշխատության հեղինակ Հ. Սարգիսյանը (Ալեոր), ինչպես և այդ աշխատության մեջ երաժշտագիտական բանիմաց մի հոդվածով հանդես եկած Պ. Ա. Գոլոյանը, նկատի են ունեցել նույնանուն գավառակի հայ գյուղացուն ևս՝ ընդհանրապես, ու մի քանի գյուղեր էլ, ներառյալ նաև Հավավը՝ մասնավորապես։ Գոլոյանը, որը Ալեորի խոսքերով՝ Բալուի «արժանավոր գավակներեն մին» է, «արևելյան արվեստին հմուտ և գավառին գեղարվեստական ճաշակին ու պայմաններուն շատ մոտեն ծանոթ անձ մը»[194], նախ հետևյալ ընդհանուր տեղեկությունն է տալիս Բալուի մասին։ «Բալուի հայ գյուղացին,— հավաստիացնում է նա,— թերևս տմենեն ավելի հակում ու ընդունակություն ցույց տված է դեպի գեղարվեստ, դեպի երաժշտություն մասնավորապես։ 1870 թվականներեն ասդին, լսած ենք ավանդություններ, մտեն իրազեկ եղած ենք հայանություններու, որոնք լրջորեն մեր ուշադրությունը դրաված են, ու մեզի տված են այն համոզումը թե՝ այդ հայտնությունները, հակառակ այդ գավառին վարչական ու աշխարհագրական ժլատ պայմաններուն, բավական դիտի բլլային՝ գավառներու երաժշտական պատմության մեջ՝ անոր ուշադրավ դիրք մը սահմանելու»։ Այնուհետև հեղինակը վկայում է Բալուի հայոց երաժշտական «առույգ հիշողությունը», «վառ երևակայությունը» և «բնախոսական հարմարությունները» ու շարունակում։ «Պիտի կրնայինք ըսել թե՝ այդ գյուղացիները արդեն վարժապետ, ճարտարապետ և երաժիշտ կծնին. ժառանգականությունն իրենց իրրև ուսուցիչ ունենալով»[195], խիստ կարևոր է և այն, որ ըստ Գոլոյանի՝ «Բալուի հայ գյուղացին բնութենեն օժտված է քաղցրալուր ձայնով մը, որ ունի երաժշտական ամեն հատկություն։ Անիկա սովորապես երեք ութնյակ բալձրություն կունենա ու շատ ճկուն է»[196]։ Անցնելով բուն երգ-երաժշտությանը, Գոլոյանը կատարում է հետևյալ բաժանումը, որը, մեր կարծիքով, ընդհանուր առմամբ ընդունելի է։ «Բալուի երաժշտությունը երկու դլխավոր բաժանումներով կրնանք ներկայացնել»— գրում է նա.

---

* Շարունակված «էջմիածին» ամսագրի 1965 թվականի № № Բ—Գ—Դ-ից, Ե—Զ—Է-ից և 1966 Բ. Ը-ից։

193 Պ. Կատարիկյան, Մարած ճրագներ (Հավավ գյուղին եղեռնը), Նյու-Յորք, 1950, էջ 8—12։

194 Հ. Սարգիսյան (Ալեոր), Բալու, իր սովորություններ, կրթական և իմացական վիճակը և բարբառը, Կահիրե, 1932, էջ 276։

195 Հ. Սարգիսյան (Ալեոր), Բալու, իր սովորություններ, կրթական և իմացական վիճակը և բարբառը, Կահիրե, 1932, էջ 276։

196 Անդ, էջ 294։

«մին է կրոնականը. մյուսը՝ աշխարհիկը: Այս վերջինն ալ կրնանք երկու ճյուղերու վերածել, որոնցմե մեկն է՝ Հայրենասիրականը. իսկ մյուսը՝ Շինականը: Եվ վերջապես Շինականը կվերածենք երեք բաժանումներու. Հայկականի, Հայ Թրքականի և Հայ քրդականի»[198]։ Շինական երգից Հայկականի մասը հարկ է սկսել ծիսական և տոնական խաղերին վերաբերող այն հատվածներից, որոնք շարադրել է Ալևորը, և որոնցում տեղ գտած ձայնագրությունները, սակայն (հայկական ու եվրոպական նիշերով), դարձյալ Գոլոյանն է կատարել, բարձր մակարդակով։ Այստեղ ուշադրություն են գրավում պսակի արարողության նկարագրությունները, որոնց մեջ կարևոր տեղ է հատկացված հայ ժողովրդական փողհարների արվեստին։ «Պսակի արարողութենեն շաբաթ մը առաջ, եթե ունևոր են հարսնիքի տերերը, դավուլն ու զուռնան կբերևն, և կսկսին իրենց ավանդական հաճելի եղանակները հնչեցնել։ Ալ հոն էն գյուղին երիտասարդները, չափահաս կամ անչափահաս աղջիկները, մեծ պզտիկ հոն են...։ Գիշեր ու ցորեկ դավուլին ու զուռնային ձայնը չի դադրիր. ամեն մեկ անդամին երկու կամ երեք աղջիկներ կամ կիներ և կամ հարսներ կպարեն... ձեռքերնին մեկ մեկ թաշկինակ բռնած կխաղան վարժ ու ճկուն շարժումներով։ Նույնը՝ հարսին տունը, բայց ոչ ամեն օր, այլ միայն վերջին իրիկունն ու առավոտ։ Այդ իրիկունը հարսը հագցնելու, իր երեսին քողը ձգելու և ձեռքերը հինայելու կերթան դավուլով ու զուռնայով, այդ միջոցին ամենեն հուզիչ և արցունք խլող եղանակները կնվագվին զուռնաձիին վարժ մատներուն տակ. ան կլացնե հարսն ալ, անոր ծնողքն ալ և ազգականներն ալ։ Հետո հարսին թևերեն բռնած ոտքի կհանեն դայն... որպեսզի պարե... այդ հարկադրանքին տակ թե կուլա, թե կպարե հարսներներուն նէննիներուն և ծափերուն միջև. վերջը կարգը կարվի զուռնաձիին, որուն փչելու նոանդը կելեքտրականանա այդ պահուն, կարծես թե մեռելներուն անդամ պարել կուտա...։ Պսակը կատարվելեն հետո, նորեն հեծած, կուգան...։ Դավուլն ու զուռնան լեռ ու ձոր կթնդացնեն իրենց բամբ ու հնչեղ ձայներով, բայց այս անգամ ոչ թե հուզիչ ու տխուր եղանակներ կհնչեցնեն, այլ հաղթական բանակի մը քայլերգը կարծես։ Այդ միջոցին վարժ ու փորձ վահան խաղացողներ կխաղան այդ հին, բայց դյուցազնական հետաքրքրաշարժ խաղը»[199]։ Հարսանեկան երգերից երկու ձայնագրված նմուշներ՝ «Ընեք շնաֆոր» և «Էրիամ բերիմ»։ Հիանալի բերկոներ են՝ իրենց դարտուղի ձայնեղանակներով մոտիկ Ակնա մեղեդիներին։ Տոնական երգերին վերաբերող ձայնագրություններ չկան, այլ միայն դրական տեքստեր և ընդհանուր ծանոթագրություններ։ Հետաքրքրական են, համենայն դեպս, կաղանդի երգը («Բարի եկար Նոր Տարի»), Տեառնընդառաջի խարույկի շուրջ երգված «շերերի» մասին տեղեկությունը, այն էլ առաջ բերված որպես «հարավայնոց սովորություն», և այլն[200]։ Ալևորի այս նկարագրություններում նկատելիորեն շեշտված են նաև պարը, պարային նվագն ու պարերգը, որ զգալի է Բարեկենդանի ու Համբարձման կապակցությամբ նրա տված բացատրություններում ևս։ «Բուն Բարեկենդանի կիրակի օրվան պարը իր խելահեղ ոգևորությունը կստանա. դիանալով որ իր վերջին օրն է... Եղսոյ կամ Եղսա խաթունը իր ձայնին բոլոր ուժը թող կուտա իրրև ղեկավարը այդ ստվարացած պարին, այնպես որ մինչև մութ տակավին անոր մելոդնուշ երգերուն թրթռումները կլսեն անոնք, որ այլես պարը կամ այլազան խաղերը ձգած մտած են իրենց տուները»։ Այնուհետև՝ «վիճակի օրը, այսինքն հինգշաբթի, երկսեռ բազմություն մը կհավաքվի գյուղեն դուրս ընդարձակ հրապարակի մը վրա, ուր շատ մը խումբերու բաժնված այդ բազմությունը, դանազան խաղեր կխաղա... պարեր, կովանտներ (շուրջպար), թեխաղ...և այլն։ Այս խաղացողներեն ոմանք, դավուլ զուռնայի առջև կխաղան, ոմանք ալ անոնցմե քիչ մը հեռու սրնգածուներու քաղցրահնչյուն եղանակներու նախընտրություն ընելով իրենց սիրած խաղերը կխաղան»։ Վերջապես խիստ շահեկան են՝ նույն Համբարձման կապակցությամբ ասված Ալևորի այն խոսքերն ևս, որոնք ցույց են տալիս, թե վիճակի խաղերի ու պարերի մեջ եղել են, բացի մեր իմացած՝ մեներգի, խմբական երգի ու պարերգի ընդհանուր ձևերից, փոխեփոխ երգելու, ու նաև դուսիի մենանվագի տակ մենապարելու ձևերը[200]։ Գոլոյանը այս բոլորի վրա շատ բան չի ավելացնում։ Բերում է «Ելա կայնա տեներր» պարերգի ու «Ես վերեն կուգայի» խաղի ձայնագրությունները, և Բալուի նշանավոր «Ժարժառումի» մասին տալիս հետևյալ կարևոր ծանոթությունը, որը որոշակի վերաբերություն ունի Ակնա երգեցողությանն էլ։ «Կա նաև ժարժառումը, որ սրափոզի և թմբուկի ընկերակցությամբ կերգվի միայն...։ Ժարժառումը... հրաժեշտի ողբ մրն է, ու

---

[198] Անդ, էջ 286։

[199] Անդ, էջ 3, 7։

[199] Անդ, էջ 16, 18։

[200] Անդ, էջ 31, 39, 40։

կնվազվի ի դիմաց հարսին և իր ծնողին։ Ասիկա կհամապատասխանե թրքական Գուրչեզար եղանակին (իմա ձայնեղանակին— Ն. Թ.), Ակնա հայ երգեցողության դիպաւոր ելևէջը կկազմե, և ոչինչով կաարբերի՝ Ավագ Ուրբաթ գիշերը՝ Ասավածամոր անունով երգվող ողբերեն, իր երաժշտական հարինվածությամբ»[201]։ Շինական երգի Հայ բարական բաժանմունքի մասին Գոլոյանը խոսում է երկու տիպական և ընդհանրացած մեղեդիների օրինակով։ Դրանցից մեկն է՝ Հարֆա աղբրի կոչվող մեղեդին, որի ձայնագրությունը բերված չէ, և որը, Գոլոյանի ասելով, «մեղի համար օտար է, և նարագույն ժամանակներու հարինվածության մը ունի»։ Իսկ մյուսը՝ հայկական հնաձանդ, հուզաթաթավ ու լայնաշունչ մի մեղեդի՝ ասիթ է տալիս խոր մտորումների։ «Բալուի գյուղացիները,— գրում է Գոլոյանը,— հայ-թրքական երաժշտական ճյուղին պատկանող եղանակ մալ ունին. ուս է որ միշտ կերգեն իրենց պանդխտության օրերուն, կամ ուղևորության միջոցին, անոր հարմարեցնելով թուրքերեն լեզվով բանաստեղծության մը։ Ոչ միայն ամբողջ դավառին, այլև շրջակա ժողովուրդներուն ալ ծանոթ է ան, և, մասնավոր հարցարցումով մը Խարբուտ նավասի կանվանեն»։ Այսպես հեղինակը ասում է բերում հիշյալ եղանակի ձայնագրություն, տալիս է նրա երաժշտագիտական վերլուծությունը ու եզրակացնում։ «Երաժշտական այս կտորը՝ իր հնամոր վաղնջականությունն անփոփոխ կպահե. ոչ ոք կրցած է դայն բարեփոխել, և ոչ ոք պիտի կրնար անոր մեջ օտար արվեստի և օտար բնության ազդեցումներ բնել...։ Անոր շրջանառության զարգացումներ և դողարիկ գայթումները ոչ բյուզանդական երաժշտությունն ունի, և ոչ ալ թրքականը, այլ դայն պետք է փնտրել հայկականին մեջ. պիտի կրնանք ըսել թե՝ այդ եղանակը մեր եկեղեցական ՊՁ եղանակին եթե ոչ հարազատ մայրը, դանե անոր հարազատ քույրը կրնա համարվիլ...։ Թող մեր Արևելյան երաժշտության տաղանդավոր վարպետները դայն բաղդատեն՝ Ավագ Ուրբաթ գիշերը երգվող «Արծաթսիրությամբ» շարականին երաժշտական հարինվածության հետ. կտարակուսինք թե՝ անոնց հանդիպումներուն մասին տարբեր վճիռ մը պիտի կարենային տալ»[202]։ Գոլոյանի կատարած վերլուծությունն ու դրանից արտածած նրա եզրակացությունները ավելի քան համոզեցուցիչ են։ Ուրեմն՝ «Խարբուտ հավասին» տրվող «Հայ-թրքական» անվանումը պայմանավորված է սոսկ նրա թուրքերեն խոսքերով։ Նույնպես շահեկան են նաև Բրվանայ երաժշտության վերաբերյալ Գոլոյանի տված տեղեկությունները ու արված խորհրդածությունները։ «Քուրդ կամ Դերմանեն անվան տակ ապրող և մասնավորապես Բալուի լեռներն ու հովիտներուն բարձունքները կրավող գյուղացիները, իրենց կյանքին վրա ներգործող արտաքին կամ օտար ազդակներն հավետ կերած ապրած են։ Իրենց հովիտներեն ու սարադաշտերեն բնավ հեռացած չեն. կխոսին քրդական բարբառ մը միայն, ունծանոթ են թուրքերեն լեզվին։ Ասոնք անվթար պահած են իրենց սովորությունները, բարքերը, տարազը, հավատարմորեն հետևելով իրենց ավանդություններուն. ասոնց կարգին, երաժշտությունն ու իբրև երաժշտական միակ գործիք սրինգը, իրենց վաղնջական ու հարազատ ժառանգությունն են։ Լավուզները (շեր) նույնությամբ, սերունդ սերունդ ավանդված են տոնից գոյի փոփոխություններու։ Պարզությունը՝ անոնց հարազատության գլխավոր ապացույցներեն մեկը կրնա համարվիլ։ Այս լավուզները, կամ՝ ինչպես դայն կանվանեն հայ գյուղացիները, շերերը, քուրդ և լեռնաբնակ հայը միանգամայն կերգեն՝ քրդերեն բերթուածներով, որոնք գյուղատնական կամ հովվերգական քնարերգություններ են ընդհանրապես։ Անոնք, ըլլան հայ թե քուրդ, կերգեն նույն ավյունով, նույն զգացումով և հոգեկան նույն խոսվքներով։ Երաժշտական այս բաժնին մեջ, տես, երկու ժողովուրդներու հայտնած հոգեկան հանկությունը իրենց ազգագրական ապերոր երևան կրերեն»։ Առավել կարևորն այն է, սակայն,— և դրանով է բացատրվում բնարկվող երաժշտության «քրդահայ» անվանումը,— որ Գոլոյանի համոզմամբ՝ «այսօրվան բազմաթիվ քրդաբնակ գյուղերու բնակչության նախահայրերը հայ եղած են։ Այս ենթադրությունը ստույգ վարկած մը ըլլալու կմտանեա, երբ նկատի առնվի թե՝ այսօրվան շատ մը քուրդ գյուղերու անունները, պետական տրձանագրությամբ իսկ հավերժացած, հայերեն անուններ են ինչպես՝ Սարաջոր=Սարաջուր, Քարար=Քարեր, Վարդենիկ—Վարդենիք, Գոմ, Նորշրնակ, Դոգրդ=Դոգիկ և այլն, որոնք այսօր միայն քրդաբնակ գյուղեր են»։ Մեր հեղինակը նաև նշում է, որ «սովորապես երգվող լավուզներ կան, որոնց կազմությունն ու ճաշակը շատ կնմանի մեր եկեղեցական ԴՁ եղանակին», և որ դրանք կարող են բխած լինել այն ազբյուրից, որտեղից է՝ «քրիստոնեական մկրտությամբ մը նվիրագործված մեհենական «Լույս, Արարիչ լուսոյ» փառաբանական երգը» ու եզրակացնում, թե «Բա-

[201] Անդ, էջ 288—290։

[202] Անդ, էջ 291—292։

լուի քրդահայ երաժշտությունը, ուրեմն, տարակույս չկա թե՝ այն հնագույն երաժշտությունն է, որ մեզի պիտի կրնա տալ նախաքրիստոնեական հայ երաժշտության մերձավոր պատկերը»[203]։ Խիստ ու համարձակ միտք՝ որը, սակայն, դեռևս կարոտ է առավել բազմակողմանի հիմնավորման։ Ցավալին այն է, որ հիշյալ «լավուգներին» ձայնագրությունները չկան։ Բալուցիներին կրոնասեր և կրթասեր են ցույց տալիս ե Ալևորը և Գոլոյանը։ «Սրբավայրերու շատությունը, ուխտագնացությանց հաճախությունը՝ անոր կրոնասիրությունը կապացուցեն»— գրում է Ալևորը։ Հետո հիշատակում է նշանավոր ուխտատեղիները՝ Քաղքրահայաց Ս. Աստվածածինը կամ Հավավու վանքը... Խաչա կամ Թլա վանքը... Հայպատը... Սուրբ Մարսուպը, «ուր գավառին մեջ ապրող ավանդության մը համաձայն, Սուրբ Մեսբոպ աղօթած, ճգնած և հայ տառերը դտած է» և ավելացնում։ «Ամառնային եղանակին գավառին ամեն կողմերեն խուռներամ ուխտի կերթան այդ վանքերը... յուրաքանչյուրին՝ իր անվան տոնակատարության օրը»[204]։ Բուն քաղաքում բալուցիները ունեցել են հինգ եկեղեցի, երկու դպրոց և կրթական տարբեր կազմակերպություններ։ Բալուցիների կրթական շարժումն սկսվել է անցած հարյուրամյակի վաթսունական թվականներից։ Երկու տասնամյակ անց՝ կրթական լուրջ բարենորոգումներ են եղել, որոնք տարածվել են դպրոցներում երգ-երաժշտության ուսուցման վրա ևս։ Հոգևոր երաժշտության բնագավառում մի ոգալի առաջընթաց կատարվում է նախ նույնիսկ տարերայնորեն՝ Պոլսո աղդեցությամբ։ «Քանի մը կարևոր գյուղեր,— տեղեկացնում է Գոլոյանը, խոսելով եկեղեցական երաժշտության մասին,— Հավավ, Ձեթ, Սղամ, Սադրաթ, Խոշմաթ, շատ կանուխեն Պոլսո հետ անընդհատ շփման մեջ գտնված են, տնտեսական պայմաններու հարկադրությամբ։ Ջուքուր-Ձեշմեի պանդոկին բոլոր մեծ ու փոքր սենյակները, որոնց թիվը վաթսունեն պակաս ըլլալու չէ, միշտ շեն մնացին մեր գյուղացիներուն ընակությամբ։ Այդ պանդոկը անոնց երկրորդ տունը, երկրորդ հայրենիքը դարձած էր։ Հոն ապրեցան, բագմությամբ, ու ապրեցուցին իրենց գավառին կենցաղը, սովորույթը, երգերը, պարերը։ Այդ կյանքին մեջ, հակառակ իրենց հանապազօրյա տաժանելի հոգնություններուն և իրենց երևակայությունը տանջող կարոտի և հայրենաբաղձության բռնկումներուն, չմոռցան իրենց երաժշտական հակումը. միշտ սիրեցին զայն, և հետևեցան անոր։ Կում-կափուի Մայր Եկեղեցին ու Դպրանոցը իր ներշնչարանը կդառնան։ Կիրակի առտուները, արշալույսեն առաջ, երբ մայր եկեղեցվո ժամկոչները, պանդոկին բակին մեջ կեցած, քաղցր ձայնով երգելու կսկսին աղոթքի հրավերը, գյուղացիները իսկույն կպատրաստվին եկեղեցի հասնելու ժամանակին և քաղցրալուր օրհներգությանց մայքը վայելելու։ Մայր Եկեղեցին, իր Դպրանոցով, իր Արիստակես Հովհաննեսյանի և Նիկողայոս Թաշճյանի պես երաժշտապետներով, իր մեծ ու փոքր դպիրներով, իր պատրիարքով և մանավանդ շողշողուն արարողություններով, անոնց համար արվեստի ու մեծ վայելչության կեդրոն մրն էր։ Հոն կհաճախեին, կունկնդրեին, և, շնորհիվ իրենց արագ ըմբռնումին և սուր հիշողության, շատ բան կսորվեին. դարձին, պանոնք հայրենիք կտանեին ու կսորվեցնեին անոնց՝ որոնք դեռ Պոլիսը տեսնելու բախտը ունեցած չէին»։ Այս ձևով, Բալուի գավառակում, եկեղեցական երաժշտության բնագավառում մի նոր աստիճանի են բարձրանում «հիշողության վարպետները»։ Բայց շուտով գործը գրվում է ավելի լուրջ հիմքերի վրա։ 1880-ական թվականներին Հավավից Ղազարոս Ուլովճյանը և Կիրակոս Վարժապետյանը, իսկ Ձեթ գյուղից՝ Ձեթ Գյուղացի անվամբ հայտնի մի երիտասարդ ևս, Պոլսի Մայր Դպրանոցում Նիկողայոս Թաշճյանի հսկողության տակ մի քանի տարի հայկական ձայնագրության կատարելապես տիրապետելուց հետո, եկեղեցական ձայնագրված երգերի մի մեծ պաշարով վերադառնում են հայրենիք։ Նրանց ավելի քան օգտակար ծառայություններից հիանալիորեն օգտվում են՝ նախ Բալուի քաղաքը, իր անմիջական շրջապատով, որտեղ տարածվում է ձայնագրագիտությունը և պատշաճ մակարդակի վրա է դրվում եկեղեցական երգեցողությունը, ապա Խարբերդը, իր մոտակա գյուղերով ,և նույնիսկ ավելի հեռավոր քաղաքներ ու շեներ[205]։ Բալուի մեջ գրեթե նույնպիսի մի զարգացում է ապրել նաև Հայրենասիրական երաժշտության ճյուղը։ «Հայրենասիրական երգերը, ամենամեծ մասամբ Պոլսո հայերեն երգերն եղած են, որոնց եղանակները արևմտահայկական են։ Երբ տակավին գյուղացին ձայնագրության ծանոթ չէր, Պոլիս երգված երգերը հիշողությամբ կսորվեր ու իր գավառը կտեղափոխեր։ Այս երգերեն գլխավորներն են. «Ժամ է, հայեր, արիք ձեր բախտն ողջունել», «Ով քաջպունք», «Ազնիվ ընկեր»,

[203] Անդ, էջ 293—294։

[204] Անդ, էջ 263—264։

[205] Անդ, էջ 277—286։

«Ես հարիս պերճ», «Իմ սիրելի զավակունքս», «Ո՞րն է աշխարհ Հայաստան», «Ռուսական դեռտություն», և այլն, որոնց մեջ կան որ արևելահայ դրոշմ մը ունին։ Գյուղացին այս երգերը կերգեր չափական ճշտությամբ մը, կամ անկարևոր աղավաղումներով. բայց կերգեր ան զանոնք իր հողվույն բովանդակ թափովը. անոր այնպես կթվեր, թե ատոնց ետև կյանքի նոր արշալույս մը կծագի։ Իրեն համար զանձեր էին անոնք, կդուրդուրար անոնց վրա, և իր ձեռագիր երգատետրին մեջ ծաղկագիր վերտառություններով կդրոշմեր անոնց գլխագիրերը»։ Բայց հայրենասիրական երգի ճակատագիրը բոլորովին այլ եղավ, քան եկեղեցականինը։ «Հոս պարտուղում չենք ըներ,— եղրակացնում է Գոլոյանը,— բացատրելու համար գյուղացիին հողվույն վրա այս երգերուն առաջ բերած խոր տղդեցությունը...։ Այս դրությունը կտևէ մինչև 1888—1895 թվականները՝ գավառներու մեջ, և 1895-ին վերջնականապես կլսեն հայրենասիրական երաժշտությունը, պետական խիստ արգելքներու պատճառով, տալով իր տեղը զլրոցական երգերու...»[20]։

[20] Անդ. էջ 286—287։

(Շարունակելի)

Ա. Խ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՎԱՆՔԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՆ ՈՒ ԹԱՔՐԻՐՆԵՐԸ*

ԲՐՈՒՍԱ

6. Խուդավենդիգյար վիլայեթի Ջերահ գյուղում հայոց եկեղեցին, հնուց։
7. Խուդավենդիգյար վիլայեթի Ենիշե գյուղում հայոց եկեղեցին, հնուց։
8. Խուդավենդիգյար վիլայեթի Քեմլիք կազայում Բեյլի գյուղում հայոց եկեղեցին, 1217 թ.։
9. Խուդավենդիգյար վիլայեթի Քեմլիք կազայում Ներքին գյուղում հայոց եկեղեցին, 1386 թ.։
10. Խուդավենդիգյար վիլայեթի Քեմլիր կազայում հայոց եկեղեցին, 1294 թ.։
11. Խուդավենդիգյար վիլայեթի Ենի-Շեհիր կազայում Բալի-փաշա թաղում հայոց եկեղեցին, 1269 թ.։

ԲՈԼԻ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի Ա-ը	Կարգի Ա-ը	Ինչի մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Պետը	Սեպտեմբերյան թվականը	Մարտերորդ թվականը
1611	2093					1931 թ. մայիս 30	1931 թ. մայիս 30

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Բոլիի սանջաքում և հարակից վայրերում դանվող և կայսերական հրամանով չհաստատված երեք եկեղեցիների[3] անունները ու կայսերական հրամանի թվականները, ինչպես նաև կայսերական հրամանով չհաստատված երկու եկեղեցիների վայրերը, ա-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի № № Ա-ից, Բ—Գ—Դ-ից և Ե—Զ—Է-ից և 1966 թվականի Բ—Գ-ից և Զ—Է—Ը-ից։

[3] Այս երեք եկեղեցիները սխալմամբ դույլ են տրված իբրև կայսերական հրամանով «չհաստատված». պետք է լինի՝ «հաստատված»։— Մանր. թարգմանչ։

նունները և կառուցման թվականները ցուցնող ցուցակը երկու օրինակով սրա հետ ներկայացվում է և խնդրվում այդ մասին անհրաժեշտ կարգադրություն։ Այդ մասին...

ԲՈՒԼԻ

1641

Ֆերմանով՝ 3։
Առանց ֆերմանի՝ 2։

Ֆերմանի բ. կառուցման բ.:

1. Բալիի սանջաքի Դյուզջե կաղայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1327 թ.։
2. Բալիի սանջաքի Դյուզջե կաղայում Ջեդիկին գյուղում Ս. Հարություն եկեղեցին, 1325 թ.։
3. Բալիի սանջաքի Էսկի-Մահալլեում Ս. Աստվածածին եկեղեցին, 1259 թ. ջեմազի-ուլ-էվվելի սկզբին։
4. Բալիի սանջաքի Էրմենի մահալլեում Ս. Կարապետ եկեղեցին, 1248 թ. շաբանի վերջին։
5. Բալիի սանջաքի Համիդիյե կաղայի կենտրոնում Դյորբ կաղայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1378 թ. ռեջեբի 20-ին։

Կցվում է 30 մայիսի 1331 թ. № 2093 թղթերին։

ՔՅՈՒԹԱՀԻԱ

Գրանցման №	Կարգի №	Ինչի մասին է գրված	Ինվենտարի համառոտագիր	Կազմող	Գնահ.	Սեպագրության թվականը	Մաքրագրության թվականը
			ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱՄԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ				
37	1999					1330 թ. փետրվարի 17	1330 թ. փետրվարի 17

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Քյութահիայի սանջաքում և հարակից մասերում գտնվող կայսերական հրամանով հաստատված երեք եկեղեցիների անունները և կայսերական հրամանի թվականները, ինչպես նաև կայսերական հրամանով չհաստատված չորս եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցուցնող երկու օրինակ ցուցակները սրա հետ ներկայացնում ենք Ձեր Բարձրությանը և խնդրում անհրաժեշտ կարգադրություն, համաձայն կանոնի։

ՔՅՈՒԹԱՀԻԱ

Ֆերմանով՝ 3։
Առանց ֆերմանի՝ 4։

Ֆերմանի բ. Կառուցման բ.

1. Բուն Քյութահիայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1327 թ.։
2. Բուն Քյութահիայում Ս. Թեոդորոս եկեղեցին, 1251 թ.։
3. Քյութահիայի սանջաքին կից Դավշանլուի նահիյեյում Ս. Ստեփանոս եկեղեցին, 1257 թ. վերջին։
4. Քյութահիայի սանջաքին կից Ալինջայի գյուղում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1299 թ.։
5. Քյութահիայի սանջաքին կից Արսլանիք-Յայլա գյուղում Ս. Հարություն եկեղեցին, 1300 թ.։
6. Քյութահիայի սանջաքին կից Վիրանջըքի նահիյեյում Ս. Խաչ եկեղեցին, 1310 թ.։
7. Քյութահիայի սանջաքին կից Էսքի-շեհիրի կաղայում Ս. Երրորդություն եկեղեցին, 1276 թ. ջեմազի-ուլ-էվվելի սկզբին։

ԿՈՆԻԱՅԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

գրասենյակի Ա-ը	կարգի Ա-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	կազմողը	պետը	Սեպագրության թվականը	Մաքրագրության թվականը
188 403 187	1998					1330 թ. փետրվարի 17	1930 փետրվարի 17

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Կոնիայի վիլայեթի Անթալիա սանջաքում գտնվող Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցին կայսերական հրամանով հաստատված չլինելով, 1268 թվականին է կառուցվել, բուն Կոնիայում և նրան հարակից մասերում գտնվող և կայսերական հրամանով հաստատված այլ չորս եկեղեցիների անունները և կայսերական հրամանի թվականները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է և խնդրվում անհրաժեշտ կարգադրություն, համաձայն ընդունված կարգի։ Այդ մասին...

ԿՈՆԻԱ

Ֆերմանով՝ 4։
Առանց ֆերմանի՝ 1։
Կցված է 330 թ. փետրվար 17-ի և № 1998 թաքրիրին։

Ֆերմանի թ. Կառուցման թ.

1. Բուն Կոնիայում Իշ-կալայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1258 թ. ջեմազիուլ-էվվելի 1։
2. Կոնիայի վիլայեթի Բող կաղայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1250 թ. շաբանի վերջին։
3. Կոնիայի վիլայեթի Բուրդուր կաղայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1252 թ. ռեջեբի վերջին։
4. Կոնիայի վիլայեթի Նեվ-շեհիր կաղայում հայոց Ս. Աստվածածին եկեղեցին, 1276 թ. զիլհիջջե։

ԿԱՍԹԵՄՈՒՆԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի Ա-ը	կարգի Ա-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	կազմողը	պետը	Սեպագրության թվականը	Մաքրագրության թվականը
252 290	1990					1330 թ. փետրվարի 16	1930 թ. փետրվարի 16

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Կասթեմունիի վիլայեթում և հարակից վայրերում գտնվող և կայսերական հրամանով հաստատված երկու եկեղեցիների անունները ու կայսերական հրամանի թվականները, ինչպես նաև կայսերական հրամանով չհաստատված հինգ վիլայեթների վայրերը, անուններն ու կառուցման թվականները ցուցնող երկու օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է և խնդրվում անհրաժեշտ կարգադրություն, համաձայն ընդունված կանոնի։

ԿԱՍԹԵՄՈՒՆԻ

382. 290

Ֆեբրուարի՝ 2։
Առաջ ֆեբրուարի՝ 5։

Ֆեբրուարի թ. Կառուցման թ.

1. *Կասթեմունի կայազում հայոց եկեղեցին, 1289 թ. սեպտեմբեր 16։*
2. *Կասթեմունի վիլայեթի Քենդրիի կայազում հայոց եկեղեցին, 1287 թ. սեպտեմբեր 27։*
3. *Կասթեմունի վիլայեթի Դաշ-քյոփրիի կայազում էսքի-Աթֆա գյուղում Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, 1236 թ.։*
4. *Կասթեմունի վիլայեթի Բոյ-Արապի կայազում Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, 1325 թ.։*
5. *Կասթեմունի վիլայեթի Ինեբոլիի կայազում հայոց եկեղեցին, 1307 թ.։*
6. *Կասթեմունի վիլայեթի Մալտրի գյուղում Ս. Սահակաանոս եկեղեցին, 1325 թ.։*
7. *Կասթեմունի վիլայեթի Բարթինում Ս. Աստվածածին եկեղեցին, 1289 թ.։*

Կրված է 1330 թ. փետրվար 16-ի № 1990 թղթերին։

ԲԱՆԴԸՐՄԱ—ԲԱԼԻՔԵՍԻՐ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի մասին է գրված	Ժամանակության համառոտագիր	Կազմող	Պետ	Սեպտեմբերյան թվականը	Մարտերյան թվականը
1131	2017					1331 թ. ապրիլի 4	1331 թ. ապրիլի 4

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Կարասիի սանջաքում Բանդրրմայի կազայում գտնվող Ս. Աստվածածին եկեղեցին հաստատված է 1251 թ. սեպտեմբերի-ուլ-էվվելի թվակիր կայսերական հրամանով, իսկ բուն Բալիքեսերում Ալի-ֆակիյեի թաղում գտնվող և կայսերական հրամանով չհաստատված Ս. Աստվածածին եկեղեցին կառուցված է 1247 թվականին, որի մասին տեղից հայտնված լինելով, խնդրում ենք, համաձայն կանոնի, Ձեր անհրաժեշտ կարգադրությունը։

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի մասին է գրված	Ժամանակության համառոտագիրը	Կազմող	Պետ	Սեպտեմբերյան թվականը	Մարտերյան թվականը
580	2093		-			1330 թ. փետրվարի 17	1930 թ. փետրվարի 17

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Կարահիսարի-Սահիրի սանջաքում Աղիդիե կազայում գտնվող Ս. Լուսավորիչ եկեղեցին կայսերական հրամանով հաստատված չէ և կառուցված է 1329 թ. հոկտեմբերի 1-ին։ Այդ մասին տեղից նշված լինելով, խնդրում ենք Ձեր անհրաժեշտ կարգադրությունը, համաձայն կանոնի։

ԷԴԻՐՆԵՐԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Պետը	Սեպագրության թվականը	Մարգարդության թվականը
39	2000					1330 թ. փետրվարի 17	1330 թ. փետրվարի 17

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Էդիրնեի վիլայեթում և հարակից վայրերում գտնվող և կայսերական հրամանով հաստատված երեք եկեղեցիների անուններն ու կայսերական հրամանի թվականները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է։ Բացի այդ, Էդիրնեի բերդից դուրս Փափաս-օղլի թաղում գտնվող Ս. Կարապետ եկեղեցին կայսերական հրամանով հաստատված չլինելով, 1262 թվականին կառուցված լինելը պարզված է, որի համար խնդրում ենք Ձեր անհրաժեշտ կարգադրությունը, համաձայն կանոնի։

ԷԴԻՐՆ

39

Ֆերմանով՝ 3։
Առանց ֆերմանի՝ 1։

Ֆերմանի թ. Կառուցման թ.

1. Էդիրնեի վիլայեթի Փենայիե թաղում Ս. Թորոս եկեղեցին, 1320 թ. շեվվալ 21։
2. Էդիրնեում բերդից դուրս Փափաս-օղլի թաղում Ս. Կարապետ եկեղեցին, 1262 թ. (ջնջված է)։
3. Էդիրնեի Կարա-Աջաջ գյուղում երկաթուղու կայարանին կից Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1327 թ. ջեմալի-էվվելի 3-ին։
4. Էդիրնեի վիլայեթի Դիմաթիքա կազայի Ս. Գևորգ եկեղեցին, 1143 թ. զիլհիջջեի վերջին։

Կցված է 331 թ. փետրվար 17-ի № 2000 թաքրիրին։

ՄՈՒՍՈՒԼ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	գարկի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Պետը	Սեպագրության թվականը	Մարգարդության թվականը
469	1991					1930 թ. փետրվարի 16	1930 թ. փետրվարի 16

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Բուն Մուսուլում Ասորական (սուրիանի) եկեղեցուն մոտիկ հայկական եկեղեցին 1273 թ. զիլգաղեի սկզբի թվականով կայսերական հրամանով հաստատված է։ Այդ մասին հայտնում ենք ի տեղեկություն, ում որ անհրաժեշտ է։

ԲԱՂԴԱՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի Ն-ը	Կարգի Ն-ը	Ինչի մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Գնահատ.	Սկսելու թվականը	Մարելու թվականը
631	2010					1930 թ. փետրվարի 24	1930 թ. փետրվարի 24

Արդարադատության և դավանանքների Մինիստրության

Բաղդադում Կարիյե-բաշիում գտնվող Ս. Երրորդություն եկեղեցին 1208 թ. և Քիլիսեի թաղում գտնվող Ս. Աստվածածին եկեղեցին 1047 թվականին կառուցված լինելու և կայսերական հրամանով հաստատված չլինելու մասին տեղից տեղեկություն ստացված է։ Հայտնելով այդ մասին, խնդրում ենք Ձեր կարողությունը, համաձայն կանոնի։

(Հայերեն լեզվով ծանոթություն)

Գրվեցավ 1915 փետրվար 26 (ստորագրություն)

ԲԻԼԵՋԻՔ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի Ն-ը	Կարգի Ն-ը	Ինչի մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Գնահատ.	Սկսելու թվականը	Մարելու թվականը
1623	2082					1931 թ. մայիսի 19	1930 թ. մայիսի 19

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Էրթուղրուլի սանջաքի կենտրոնում՝ Բիլեջիքում և հիշյալ լիվային հարակից գյուղերում գտնվող և կայսերական հրամանով հաստատված 5 եկեղեցիների անունները և կայսերական հրամանի թվականները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է։ Բացի այդ, հիշյալ լիվային կից Գյուլփաղարի նահիյեյին ենթակա Թիմուրխանլար գյուղի հայոց եկեղեցին 1326 թ. Կրրկա Յենիփազար գյուղում գտնվող հայոց եկեղեցին 1307 թ. Գյուլգաղի գյուղի Ս. Թորոս եկեղեցին 1294 թ. կառուցված են։ Սրանցից Գյուլգաղի գյուղի եկեղեցու համար 1330 թ. հոկտեմբերի 3-ին և Կրրկա Յենիփազարի եկեղեցու համար 1320 թ. դեկտեմբերի 20-ին, տեղական կառավարությանը դիմած լինելը սրանով հայտնում ենք Ձեզ։ Այդ մասին...

ԲԻԼԵՋԻՔ

Ֆերմանով՝ 5։
Առանց ֆերմանի՝ 3։

Ֆերմանի թ. Կառուցման թ.

1. Էրթուղրուլի սանջաքի կենտրոնի՝ Բիլեջիքի Ս. Թորոս եկեղեցին, 1250 թ. ռեբիուլ-էվվելի կեսին։
2. Էրթուղրուլի սանջաքի Սյոկյուղ կազային կից Միխյալ-ղազի նահիյեյի Մուրադջա գյուղում հայոց եկեղեցին, 1322 թ. ջեմազի-ուլ-էվվելի 6-ին։
3. Էրթուղրուլի սանջաքի Կյուլ-փաղարի նահիյեյին կից Թերքմալ գյուղում հայոց եկեղեցին, 1257 թ. սեֆերի վերջին։

4. Էրթուղրուլի սանջաքի Կյուլ-փազարի նահիյեի Ջետիր գյուղում հայոց եկեղեցին, 1255 թ. շաբանի վերջին։

5. Էրթուղրուլի սանջարի Չալկարա գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1258 թ. զիլ-ղաղեի կեսին։

Կցված է 1331 թ. մայիս 19-ի № 2082 թաղթիրին։

ԲԵՅՐՈՒԹԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Գները	Անագրության թվականը	Մաքրագրության թվականը
822	2031					1931 թ. մայիս 10	1931 թ. մայիս 10

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Բեյրութի վիլայեթի Սահիյունի և կաղայի գյուղերում գտնվող և կայսերական հրամանով չհաստատված և վաղուց կառուցված երեք եկեղեցիների վայրերն ու անունները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացնում ենք Ձեզ և խնդրում, համաձայն կանոնի, Ձեր անհրաժեշտ կարգադրությունը։ Այդ մասին...

(Հայերենով գրված է)՝ ԼԱՒՈՏԻԿԵ

822

Առանց ֆերմանի՝ 3։

Կցված է 1331 թ. մարտ 10-ի № 2031 թաղթիրին։

Կառուցման թ.

1. Բեյրութի վիլայեթի Սահիյուն կաղային կից Ղանիմե գյուղում Ս. Գեորգ եկեղեցին, հնուց։
2. Բեյրութի վիլայեթի Սահիյուն կաղային կից Արամո գյուղում գտնվող հայկական վանքում հայոց եկեղեցին, հնուց։
3. Բեյրութի վիլայեթի Սահիյուն կաղային կից Արամո գյուղում Ս. Ստեփանոս եկեղեցին, հնուց։

ԱՅՆԹԱՊ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի մասին է գրված	Բովանդակության համառոտագիր	Կազմողը	Գները	Անագրության թվականը	Մաքրագրության թվականը
304 305	1988					1930 թ. փետրվարի 16	1930 թ. փետրվարի 16

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Բուն Այնթապում գտնվող հայոց եկեղեցին հաստատված է 15 շաբան 1242 թ. կայսերական հրամանով, իսկ հարակից գյուղերում գտնվող և կայսերական հրամանով չհաստատված երեք եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացնում ենք Ձեր Բարձրության և խնդրում ենք անհրաժեշտ կարգադրություն, համաձայն կանոնի։

ԱՅՆԹԱՊ (ԱՆԿԱԽ)

304, 305

Ֆերմանով՝ 1։

Առանց ֆերմանի՝ 3։

Ֆրեմանի թ. Կառուցման թ.

1. Այնթապի կաղայում հայոց եկեղեցին, 1292 թ. շաբանի 15։
2. Այնթապի սանջաքի Օրոլ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1288 թ.։

3. Այնթապի սանջաքի Ռեջի նահիյեյին կից Էհնիշ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։

4. Այնթապի սանջաքի Բիգիկի նահիյեյում Ջիրեն գյուղում Ս. Նիկողայոս եկեղեցին, 1214 թ.։

Կցվում է 1330 թ. փետրվար 16-ի № 1988 թաքրիրին։

ՀԱԼԵՊԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Պետը	Սեպտեմբերյան թվականը	Մարտերյան թվականը
						1330 թ. մարտի 10	1930 թ. մարտի 10
892	2932						

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Հալեպի վիլայեթի Ջրսրբ-Շուղուրի կաղային կից գյուղերում գտնվող կայսերական հրամանով չհաստատված և հնուց կառուցված 9 եկեղեցիների վայրերը և անունները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է և խնդրվում անհրաժեշտ կարգադրություններ, համաձայն ընդունված կարգի։ Այդ մասին...

Առանց ֆերմանի՝ 9։
Կցված է մարտի 10-ի № 2032 թաքրիրին։

1. Հալեպի վիլայեթի Ջրսրբ-Շուղուրի կաղայի էրֆելու գյուղում Ս. Սահակ եկեղեցին, 1326 թ.։
2. Հալեպի վիլայեթի Ջրսրբ-Շուղուրի Քեսար գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
3. Հալեպի վիլայեթի Ջրսրբ-Շուղուրի Կայշրք գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։
4. Հալեպի վիլայեթի Ջրսրբ-Շուղուրի Ջինարջրք գյուղում Ս. Պողոս եկեղեցին, հնուց։
5. Հալեպի վիլայեթի Ջրսրբ-Շուղուրի Էսքի-օրեն գյուղում Ս. Ստեփանոս եկեղեցին, հնուց։
6. Հալեպի վիլայեթի Ջրսրբ-Շուղուրի Յակուրիյե գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1320 թ.։
7. Հալեպի վիլայեթի Ջրսրբ-Շուղուրի Յակուրիյե գյուղում Ս. Մորոս եկեղեցին, հնուց։
8. Հալեպի վիլայեթի Ջրսրբ-Շուղուրի Կարաղուրան գյուղում Ներքին թաղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
9. Հալեպի վիլայեթի Ջրսրբ-Շուղուրի Կարիղուրան գյուղում Վերին թաղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։

ՀԱԼԵՊԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Պետը	Սեպտեմբերյան թվականը	Մարտերյան թվականը
						1930 թ. փետրվարի	1930 թ. փետրվարի
376	1981						

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Հալեպ քաղաքում հնուց կառուցված և կայսերական հրամանով չհաստատված երկու եկեղեցիների վայրերը, անունները, ինչպես նաև Քիլիսի և Բեյլանի կաղաներում գտնվող և կայսերական հրամանով հաստատված երկու եկեղեցիների անունները և

կայսերական հրամանի թվականները ցուցնող ցուցակը երկու օրինակով սրա հետ ներկայացվում է և խնդրվում անհրաժեշտ կարդադրություն։

ՀԱԼԵՊ

376

Ֆերմանով՝ 2։
Առանց ֆերմանի՝ 2։

Ֆերմանի բ. Կառուցման բ.

1. Հալեպի վիլայեթի Քիլիս կաղայում հայոց եկեղեցին, 1275 թ. մուհարրեմի կնսին։
2. Հալեպի վիլայեթի Բիլոն կաղայում Քինիստ թաղում Ս. Սարգիս եկեղեցին, 1274 թ. ռեբի-ուլ-էվվելի վերջին։
3. Բուն Հալեպում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
4. Բուն Հալեպում Ս. Քառասուն մանկանց եկեղեցին; հնուց։

Կցված է 1333 թ. փետրվար 16-ի № 1981 թաղթիին։

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱՄԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կաղդի №-ը	Ինչի մասին է գրված	Ժամանակվա թյան համառոտագիրը	Կաղմուղ	Պետք	Սեղադրության թվականը	Մարդադրության թվականը
48	1987					1330 թ. փետրվարի 16	1930 թ. փետրվարի 16

Արդարադատության և դավանանքների մինիստրության

Հալեպի վիլայեթի Անթաքիոյի կաղայում և նրան հարակից գյուղերում գտնվող և կայսերական հրամանով չհաստատված 7 եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է և խնդրվում, համաձայն կանոնի, անհրաժեշտ կարդադրությունը։

ԱՆԹԱՔԻԱ[4]

48

Ֆերմանով՝
Առանց ֆերմանի՝ 7։
Կցված է 1333 թ. փետրվար 16-ի № 1981 թաղթիին։

Ֆերմանի բ. Կառուցման բ.

1. Բուն Անթաքիայում Ս. Աստվածածին եկեղեցին, 1298 թ.։
2. Անթաքիայի կաղայի Քեբուսիե գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1294 թ.։
3. Անթաքիայի կաղայի Խրդրրբեկ գյուղում Ս. Փրկիչ եկեղեցին, 1266 թ.։
4. Անթաքիայի կաղայի Յողուն-օլուք գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1206 թ.։
5. Անթաքիայի կաղայի Հաչի-Հաբիբլի գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1236 թ.։
6. Անթաքիայի կաղայի Բիթիաս գյուղում Ս. Միլիտոս եկեղեցին, 1327 թ.։
7. Անթաքիայի կաղայի Վաքրֆ գյուղում Ս. Թադեոս եկեղեցին, 1326 թ.։

---

[4] Անթաքիայի (Անտիոքի) հայկական գյուղական եկեղեցիները հերոսական Մուսա-լեռան գյուղական եկեղեցիներն են։—Ծանոթ. թարգմանչի։



ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Ծոթա Ռուսթավելու ծննդյան 800-ամյակը.— Հայաստանի գրականության և արվեստի աշխատողները ամենայն ջերմությամբ նշեցին վրաց միջնադարյան հանճարեղ բանաստեղծ Ծոթա Ռուսթավելու ծննդյան 800-ամյակը:

Այդ առթիվ Երևանում, ֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում, տեղի ունեցավ հոբելյանական հանդես, որին մասնակցում էին Վրաստանից հրավիրված գրողներ ու արվեստագետներ: Ծ. Ռուսթավելու մասին բովանդակալից զեկուցումով հանդես եկավ գրող Նաիրի Զարյանը: Հանդեսի վերջում տեղի ունեցավ ճոխ համերգ՝ Հայաստանի և Վրաստանի արտիստական ուժերի մասնակցությամբ:

Ծ. Ռուսթավելու «Ընձեռնավոր»-ը թարգմանված է բազմաթիվ լեզուներով: Այդ պոեմից առանձին գլուխներ հայերեն առաջին անգամ թարգմանվել են 1860-ական թվականներին՝ Ս. Բաստամյանի կողմից, Թիֆլիսի հայոց բարբառով և տպագրվել «Կռունկ հայոց աշխարհի» ամսագրում: 1896 թվականին Թիֆլիսում լույս է տեսնում «Ընձեռնավոր»-ի արձակ, համատոտ թարգմանությունը, որը կատարված էր Հ. Միրիմանյանի կողմից: Թարգմանիչը գրել է նաև ընդարձակ ուսումնասիրություն Ռուսթավելու և նրա գործի մասին:

Ծ. Ռուսթավելու «Ընձեռնավոր»-ը հայերեն լրիվ և չափածո ոճով թարգմանվել է պրոֆ. Գևորգ Ասատուրի կողմից 1937 թվականին: Հոբելյանի կապակցությամբ Հայաստանի Գիտությունների ակադեմիան վերահրատարակել է այդ թարգմանությունը:

Մարտիրոս Սարյանի կյանքի գիրքը:.— Լույս է տեսել Մարտիրոս Սարյանի «Հիշատումներ իմ կյանքից» գրքի առաջին հատորը, որը բովանդակում է մեծատաղանդ նկարչի կյանքը՝ մանկությունից մինչև 1928 թվականը:

Նույն թվականին Մ. Սարյանը արտասահմանից վերադառնում է հայրենիք և բնակություն հաստատում Երևանում: Սկսվում է նրա կյանքի երկրորդ, ավելի բեղուն ստեղծագործության շրջանը, և նկարիչը անսահման եռանդով ու սիրով նվիրվում է հայրենի մշակույթի ու արվեստի զարգացման գործին:

Բացի կենսագրական տեղեկություններից, գիրքը հետաքրքիր նյութեր է պարունակում ժամանակի հայ հասարակական կյանքի և հայ արվեստի մասին: Վաստակավոր արվեստագետը մեծ սիրով ու ջերմությամբ պատմում է իր գրքում հայ մշակույթի նշանավոր գործիչների հետ ունեցած իր կապերի և ստեղծագործական կյանքի մասին:

Երևանի հանրային գրադարանը.— Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանը Սովետական Միության առաջնակարգ գրադարաններից մեկն է: Այն հիմնվել է 1921 թվականին, ունենալով ընդամենը 40000 կտոր գիրք:

Այժմ գրադարանի գրքերի քանակը հասնում է 1 մի քանի միլիոնի: Բավական է ասել, որ գրադարանը տարեկան ստանում է 260000 օրինակ զանազան հրատարակություններ՝ 30 տարբեր լեզուներով: Դրանցից 1500-ը հանդեսներ են և 300 անուն թերթեր: Գրադարանն ունի 25000 մշտական ընթերցողներ: Միջազգային գրքափոխանակություն է կատարվում 35 երկրների ավելի քան 100 տարբեր կազմակերպությունների հետ:

Գրադարանը մեծ հոգատարությամբ հավաքում ու խնամքով պահում է աշխարհի տարբեր վայրերում լույս տեսած հայկական հրատարակությունները: Առանձին գործադրանով են պահվում հնատիպ գրքերը, որոնց թվում 1512 թ. Վենետիկում Հակոբ Մեղապարտի կողմից ապված «Պատարագատետր»-ը, «Մեղբաթագիրք»-ը, «Տաղարան»-ը, ինչ-

պես նաև՝ Նոր-Զուղայում 1641 թ. տպված «Հարանց վարք»-ը, առաջին հայկական քարտեզը՝ «Աշխարհացույց»-ը (1695 թ. Ամստերդամ), Սիմեոն Երևանցու աղոթագիրքը՝ «Զբոսարան հոգևոր» (Էջմիածին, 1772 թ.) և շատ այլ գրքեր:

Հանրային գրադարանի աճող պահանջները բավարարելու համար, կառավարության որոշմամբ սկսվել է հարակից նոր շենքերի կառուցումը:

Պատմական հուշարձանների վերականգնում.— Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի տվյալներով, Սովետական Հայաստանի սահմաններում գոյություն ունեն 2469 ճարտարապետական և հնագիտական հուշարձաններ: Նրանց պահպանության և նորոգման համար պետությունը ամեն տարի բաց է թողնում մեծ գումարներ: Այս տարի այդ նպատակների համար հատկացված է 130000 ռուբլի:

Ներկայիս վերականգնվում կամ նորոգվում են մի քանի պատմական հուշարձաններ, Գնդեվանքը, որը գտնվում է Գնդևազ գյուղից ոչ հեռու (Վայոց Ձոր, Եղեգնաձորի շրջան): Վանքը կառուցված է 936 թվականին:

Ամրացվում է Թալինի շրջանի Ռինդ գյուղի եկեղեցին (17-րդ դար), որը շատ բացառիկ ու հետաքրքիր կլորաձև կառուցվածք է: Ուրարտական Էրեբունի ամրոցի Սուսի մեհյանի շենքի վրա կառուցվում է թիթեղյա ծածկ, պահպանելու համար շենքը հողմերից ու անձրևներից:

Շուտով կավարտվեն Գոշավանքի նորոգման աշխատանքները: Նորոգվել են ս. Աստվածածին և Լուսավորիչ եկեղեցիները, գրատունը և կենտրոնական զանգակատունը:

Զգալի աշխատանքներ են կատարվել Հաղպատի վանքի դպրոցի շենքն ամրացնելու համար:

Երևանի ջերմաէլեկտրակայանի կառուցումը.— Ավարտվեց Երևանի ջերմային էլեկտրակայանի կառուցումը: Գործարկվեց վերջին՝ 7-րդ ագրեգատը, որով կայանի ընդհանուր հզորությունը հասավ նախատեսված կարողության, այսինքն 550 հազար կիլովատի: Այսպիսով ջերմային էլեկտրակայանի հզորությունը ավելի է, քան Սևան—Հրազդան կասկադի բոլոր վեց ջրային էլեկտրակայանների հզորությունը միասին վերցրած:

Կայանի կառուցումը սկսվեց 1960—1961 թվականներին և 1963 թվականին շահագործման հանձնվեց առաջին ագրեգատը՝ 50000 կիլովատ կարողությամբ: Հետագա երեք տարիների ընթացքում կառուցվեցին և գործի դրվեցին մյուս վեց ագրեգատները: Պատկերացնելու համար կայանի մեծությունը, բավական է ասել, որ այն գրավում է 35 հեկտար տարածություն, կայանի բոլոր մեքենաների ու սարքերի ընդհանուր քաշը կազմում է 50000 տոննա մետաղ:

Ջերմաէլեկտրակայանն աշխատում է գազով: Անհրաժեշտության դեպքում կարող է աշխատել նաև մազութով, որի համար ստեղծված են պահեստային հարմարություններ 40000 տոննա մազութի տարողությամբ: Կայանը ոչ միայն էլեկտրականություն, այլև ջերմություն և տաք ջուր է տալիս շրջակա գործարաններին ու բնակելի շենքերին:

Կայանի առաջին ագրեգատի գործարկման օրից (1963 թվականի մարտ) մինչև 1966 թվականի սեպտեմբերը ջերմակայանը արտադրել է 3.7 միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրականություն: Հետաքրքիր է նշել, որ վերոհիշյալ քանակի էլեկտրականություն ստանալու համար անհրաժեշտ կլիներ գործածել ավելի քան 2 միլիարդ խոր. մետր ջուր և կամ թե Սևանի լճի ջրերի մակերեսը իջեցնել 1 մետր 65 սանտիմետրով:

Ջերմային էլեկտրակայաններ են կառուցվում նաև Հրազդանում և Կիրովականում: Վերջինիս կայանի մի մասն արդեն աշխատում է: Հետագայում ջերմաէլեկտրակայաններ են կառուցվելու Լենինականում և Ալավերդում:

Ջերմուկ քաղաքի զարգացման հեռանկարները.— Ջերմուկը Հայաստանի ամենանշանավոր առողջարանն է: Նոր սանատորիաների հետ միասին, կառուցապատվում է նաև այս երիտասարդ լեռնային քաղաքը, որն այժմ ունի 5000 բնակիչ: Նախատեսվում է, որ մոտ ապագայում այդ թիվը կքառապատկվի և կհասնի 20000-ի: Քաղաքը հիմնականում տարածվելու է արհեստական այն լճի ափին, որի կառուցումն սկսված է արդեն և որից սկիզբ է առնելու Արփա—Սևան ջրատար թունելը:

Ջերմուկ հանքային բուժիչ ջրերի պաշարը անսպառ է: Այդ ջրերի միայն մեկ քառորդ մասն է օգտագործվում բուժման նպատակների համար, հաշվելով նաև «Ջերմուկ» գործարանի թողարկածը: Ներկայումս գործող սանողջարանները տարեկան ապաքարկում են շուրջ 8000 մարդու: Բացի այդ, զգալի թվով հիվանդներ բուժվում են անկախ սանատորիաներից: Առաջիկա հինգ տարում, մինչև 1970 թվականը, սանատորիական մահճակալների թիվը եռապատկվելու է: Ներկայիս կառուցվում են մի քանի առողջարաններ և հանգստի տներ: Նախատեսված է առաջիկա տասը տարում սանատորիական մահճակալների թիվը հասցնել մինչև 60000-ի:

Խոշոր չափով կընդարձակվի նաև «Ջերմուկ» հանքային ջրերի գործարանը, որի արտադրական կարողությունը կավելանա երեք անգամ, և գործարանը տարեկան կկթողարկի 60000000 շիշ հանքային ջուր:

Նոր ջրմուղ արդյունաբերության կարիքների համար.— Երևանի գործարաններն ու ֆաբրիկաները իրենց արտադրական կարիքների համար օգտվում են մայրաքաղաքի ջրմուղի ցանցից: Այս դրությունը մեղմացնելու համար անցյալ՝ 1965 թվականի սկզբներին ձեռնարկվեց մի առանձին ջրմուղի կառուցման: Ջրմուղը սկիզբ է առնում Էջմիածնի շրջանում գտնվող Կապույտ Լճից, որը գոյանում է ստորերկրյա ջրերի կուտակումից և ունի շուրջ տասնվեց կիլոմետր երկարություն:

Լճի ափին դրված երեք հզոր ջրամղիչ մեքենաներից յուրաքանչյուրը վայրկյանում կարող է մղել 750 լիտր ջուր: Օգոստոսի վերջերին ավարտվեցին բոլոր մեքենաների տեղադրման ու սարքավորման

աշխատանքները։ Այժմ մայրաքաղաքի այն գործարանները, որոնք մեծ քանակությամբ ջուր են սպառում, կարող են գործածել Կապույտ Լճի ջուրը։ Այսպիսով քաղաքի ջրմուղը հնարավորություն ունի վայրկյանում 1500—2000 լիտր լրացուցիչ ջուր հատկացնել բնակչության կենցաղային կարիքների համար։

Գիտնականների նոր ավանը.— Աշտարակից ոչ հեռու կառուցվում է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ավանը, որը գրավում է երեսուն հեկտար տարածություն։ Արդեն կառուցված են մի շարք բնակելի շենքեր, մանկապարտեզ, երկու լաբորատորիաներ, մեխանիկական արհեստանոցների շենք և այլն։ Վերջերս շահագործման հանձնվեց ինստիտուտի գլխավոր շենքը, ուր տեղավորված են գրասենյակները, աշխատասենյակները, գրադարանը, նիստերի դահլիճը։

Ավանի շինարարությունը շարունակվելու է 1967 և 1968 թվականների ընթացքում։ Այն կլինի մեր հանրապետության բարեկարգ ու նշանավոր գիտական կենտրոններից մեկը։

Նոր ուսումնարան.— Երևանում սկսեց գործել մի նոր ուսումնական հաստատություն՝ Գեղարվեստական-տեխնիկական ուսումնարանը։ Նախատեսված 180-ի փոխարեն ուսումնարան են ընդունվել 210 պատանիներ ու աղջիկներ։ Ուսումնարանը պատրաստելու է խեցեղեն իրեր պատրաստող մասնագետներ, հախճապակ ու ճենապակ նկարազարդողներ, քանդակադրոշմողներ, ոսկեկրիչներ, ապակու գեղարվեստական մշակման մասնագետներ։ Ուսանողներից շատերը ավարտելուց հետո աշխատելու են հուշանվերների ֆաբրիկայում։

Ուսումնարանի բացմանը ներկա էր մեծատաղանդ նկարիչ Մ. Սարյանը։ Նա հաջողություն մաղթեց ուսումնարանի դասատուներին և ուսանողներին ու վարեց առաջին դասը։

Աբովյան քաղաքը.— Այս քաղաքը կառուցվում է Երևանից տասնհինգ կիլոմետր դեպի հյուսիս, Սևանի ճանապարհին։ Մի քանի տարի առաջ այստեղ ամայի տարածություն էր։ Այժմ հիացմունք են պատճառում բազմահարկ տուֆակերտ շենքերը։ Միայն այս տարվա ընթացքում այստեղ կառուցվել է շուրջ 15000 քառ. մետր բնակարան։ Կառուցվում է հիվանդանոց և կինոթատրոն։

Քաղաքից ոչ հեռու գտնվում է Երևան—Սևան երկաթգծի կայարանը, այնուհետև շարքով ձգված են արդյունաբերական ձեռնարկությունների նորակառույց շենքերը, որոնց մեջ ամենից խոշորը սարքաշինական գործարանն է։ Գործարանների բանվորների համար կառուցվում են հարմարավետ հանրակացարաններ։